Պետական իշխանության մարմինների համակարգում Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ տեղի վերաբերյալ տեսական գրականությունում միասնական մոտեցումներ չկան: Որոշ հեղինակներ՝ Վ. Չիրկինը, Ջ. Օմեյեսը, Յու. Շուլժենկոն Սահմանադրական դատարանը դիտարկում են որպես պետական իշխանության առանձին ճյուղ: Վ. Չիրկինն այն համարում է իշխանության առանձին ճյուղ, որն իրականացնում է սահմանադրական-վերահսկողական գործառույթները[1]: Ջ. Օմեյեսը Սահմանադրական դատարանը համարում է պետական իշխանության առանձին ճյուղ, որը հսկողություն է իրականացնում իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ[2], իսկ Յու. Շուլժենկոն նշում է, որ Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես հատուկ հսկող իշխանություն, որի հիմնական գործառույթն է իրականացնել սահմանադրական հսկողություն[3]:

Ի հակադրություն նշված տեսակետների՝ որոշ հեղինակների կողմից քննադատվել են Սահմանադրական դատարանի՝ որպես իշխանության առանձին ճյուղի վերաբերյալ գաղափարները: Բ. Ղազինյանը նշում է, որ սահմանադրական-վերահսկողական ճյուղի ստեղծումը կկրի արհեստական բնույթ, քանի որ պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղ, ինքնին օժտված լինելով որոշակի հսկողական և վերահսկողական բնույթի լիազորություններով, օժտված է մյուս իշխանությունների ոչ իրավաչափ գործողություններին հակազդելու հնարավորությամբ[4]:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական դատարանը համարվում է պետական իշխանության համակարգի մաս: Սահմանադրական դատարանի այդպիսի կարգավիճակի պարագայում հարց է առաջանում, թե

[1] Տե՛ս **Чиркин В.Е.** Государствоведение: Учебник. - Москва, "Юрист", 1999, էջեր 258-260:

[2] Տե՛ս **Omejes J.** Conference of constitutional control bodies of Central Asia, "The Role of the Constitutional Court in Safeguarding the Supremacy of the Constitution". Strasbourg, 28-29 October 2015, էջ 10:

[3] Տե՛ս **Шульженко Ю.** Конституционный контроль в России. - Москва, 1995, էջեր 16-17:

[4] Տե՛ս **Ղազինյան Բ.,** Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք: Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ հրատարակչություն, «21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդես, թիվ 3(43), 2012 թ., էջեր 75-76:

այն, գտնվելով դատական իշխանության համակարգում, կարո՞ղ է արդյոք իրականացնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման գործում իրեն վերապահված լիազորությունները, հատկապես լուծել սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջացած վեճերը: Այս կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տրված նախնական կարծիքում նշում է, որ հաշվի առնելով սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման Սահմանադրական դատարանի լիազորությունը՝ **անհրաժեշտ է Սահմանադրական դատարանն առանձնացնել այլ դատարաններից, քանի որ այն չի կարող լինել վեճի կողմ որպես դատական իշխանության բաղկացուցիչ մաս, հետևաբար անհրաժեշտ է նախատեսել Սահմանադրական դատարանին նվիրված առանձին բաժին կամ գլուխ, որը կհստակեցնի Սահմանադրական դատարանի հատուկ բնույթը**[1]: Սակայն այդ հարցի հետ կապված Սահմանադիրն այլ մոտեցում որդեգրեց: **Գտնում ենք, որ Սահմանադրական դատարանը, համարվելով սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական ատյան, տրամաբանական և հիմնավորված է, որ գտնվի դատական իշխանության համակարգում, սակայն, գտնվելով դատական իշխանության համակարգում՝ պետք է ունենա գործառութային անկախություն և գործունեության բավարար երաշխիքներ:**

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորումը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը արդարադատություն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորման տեսանկյունից հատկապես կարևորվում է հնարավոր քաղաքական ազդեցություններից Սահմանադրական դատարանի գործառութային անկախության ապահովումը: Քաղաքական ազդեցություններից Սահմանադրական դատարանի գործառութային անկախության ապահովումը բավականին բարդ է. դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանի գործունեությունում իրավունքը և քաղաքա-

[1] Տե՛ս European Commission for Democracy through Law, "Preliminary Opinion on the Draft Amendments to Chapters 1 to 7 and 10 of the Constitution of the Republic of Armenia": Նշված զեկույցի 146-147 կետեր:

կանությունը որոշ չափով «խաչաձևում» են, ինչն անուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ Սահմանադրական դատարանի անկախության երաշխավորվածության վրա: Սահմանադրական դատարանի գործունեությունում իրավունքի և քաղաքականության «խաչաձևումը» դրսևորվում է հետևյալ կերպ. Սահմանադրական դատարանը՝

ա) լայն առումով կազմավորվում է քաղաքական ինստիտուտների կողմից[1].

բ) իր գործառույթների շրջանակներում լուծում է նաև քաղաքական գործոնների ներազդեցության արդյունքում առաջացած իրավական վեճեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն քաղաքական տարրեր են պարունակում.

գ Սահմանադրական դատարանի ընդունած որոշումները որոշ դեպքերում ունեն քաղաքական բնույթի հետևանքներ՝ կուսակցական գործունեության դադարեցում, նոր ընտրությունների նշանակում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված գործառույթների և լիազորությունների բնույթը և ծավալը հիմք են պնդելու, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման գործում առանցքային դերակատարը Սահմանադրական դատարանն է, ինչը պայմանավորված է հետևյալով.

ա) Սահմանադրության մեկնաբանման միջոցով հաղթահարվում են Սահմանադրության խախտման հանգեցնող պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտում ի հայտ եկած բացեր, բացի այդ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին վերաբերող սահմանադրական դրույթները, ժամանակի ընթացքում նոր ընկալումների հիման վրա զարգանալով, ձեռք են բերում մեկնաբանման անհրաժեշտություն, որոնց իրականացումը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է:

բ) պետական իշխանության մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման առնչությամբ առաջանում են իրավական

[1] Միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ սահմանադրական դատարանները հիմնականում ձևավորվում են քաղաքական մարմինների կողմից: Որոշ պետություններում սահմանադրական դատարանը ձևավորում են Հանրապետության նախագահը և խորհրդարանը (**Ալբանիա, Ռումինիա**), մյուսներում՝ միայն խորհրդարանը **(Հունգարիա, Սլովակիա**): Կան նաև պետություններ, որտեղ սահմանադրական դատարանների ձևավորմանը, Հանրապետության նախագահից և խորհրդարանից բացի, մասնակցում է նաև դատական իշխանությունը **(Իտալիա, Թուրքիա**): Բավականին հետաքրքիր են **Սերբիայի** Սահմանադրական դատարանի ձևավորման մեխանիզմները:

(սահմանադրական) բնույթ ունեցող վեճեր, որոնց լուծումը նույնպես Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է:

Միևնույն ժամանակ, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի լուծման լիազորության հիմքով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանափակ է, որի արդյունքում որոշ սահմանադրական մարմինների լիազորություն չի վերապահվել սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հիմքով դիմել Սահմանադրական դատարան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սահմանադրական դատարանի դերը դատական իշխանության անկախության ամրապնդման գործում: Դոկտրինալ մոտեցումները և ժամանակակից մարտահրավերները: Երևանյան միջազգային 20-րդ խորհրդաժողով: Երևան, «ՆԺԱՐ», 2015 թ.:

2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014 թ.:

3. "Constitutional Review and Separation of Powers", Sixth Conference of Asian Constitutional Court judges. Singapore, "Konrad-Adenauer-Stiftung", 2009.

4. European Commission for Democracy through Law, Constitutional Review Design and Functions influenced the Separation of Powers.

5. European Commission for Democracy through Law. Opinion on the Fourth Amendment to the Fundamental Law of Hungary. Adopted by the Venice Commission at its 95th Plenary Session (Venice, 14-15 June, 2013), Opinion 720/2013, CDLAD(2013)012, Strasbourg, 17 June 2013.

6. European Commission for Democracy through Law, "Preliminary Opinion on the Draft Amendments to Chapters 1 to 7 and 10 of the Constitution of the Republic of Armenia".

7. European Commission for Democracy through Law, "Opinion on the Draft Amendments to the Constitution of Kyrgyzstan".

8. Հարությունյան Գ.Գ., Օրենսդրական բացերի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտի-

կայում: Զեկույց սահմանադրական դատարանների եվրոպական կոնֆերանսի XIV վեհաժողովում, Վիլնյուս, 2008 թ.:

9. Ղազինյան Բ., Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք: Երևան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ հրատարակչություն, «21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդես, թիվ 3(43), 2012 թ.:

10. Серегина С.Г. Конституционный контроль в аспекте формы правления // Международная научно-практическая конференция.

11. Sweet A.S. "The politics of constitutional review in France and in Europe", New York, Oxford University Press, International Journal of Constitutional Law, Volume 5, Issue 1, 2007.

12. Зорькин В.Д. Принцип разделения властей в деятельности Конституционного Суда Российской Федерации // Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии "Конституционное правосудие", Вып. 2(40)-3(41)2008.

13. Мамут Л.С. Публичная власть, государство и разделение властей. Конституционный Суд как гарант разделения властей // Сборник докладов. – Москва: Институт права и публичной политики, 2004.

14. Sydykova S. "The Constitutional Court of Kyrgyzstan"**.** Constitutional review and separation of powers. Sixth Conference of Asian Constitutional Court Judges, Singapore, **"**Konrad-Adenauer-Stiftung", 2009.

15. Курис Э. О Стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов. – Москва: Институт права и публичной политики, 2004.

16. Зорькин В.Д. Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации. - Москва, 2004.

17. Григорьев В.А. Текстуально-правовые конфликты в конституциях и проблемы их преоделения**.** - Москва, 2006.

18. Чиркин В.Е. Государствоведение: Учебник. – Москва: "Юрист", 1999.

19. Omejes J. Conference of constitutional control bodies of Central Asia, "The Role of the Constitutional Court in Safeguarding the Supremacy of the Constitution". Strasbourg, 28-29 October 2015.

20. Шульженко Ю. Конституционный контроль в России. - Москва, 1995.

РОЛЬ КОНСТИТУЦИОННОГО СУДА В ОБЕСПЕЧЕНИИ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ И БАЛАНСА ВЛАСТЕЙ

Аннотация

В статье анализируется, что характер и объем функций и полномочий, возложенных на Конституционный Суд поправками в Конституцию Республики Армения 2015 года, дают основания утверждать, что ключевая роль в обеспечении принципа разделения и баланса властей принадлежит именно Конституционному Суду. Это, в первую очередь, обусловлено тем, что посредством толкования Конституции преодолеваются возникшие в регулирующем отношения между государственными органами законодательстве пробелы, приводящие к нарушению Конституции. Это также обусловлено тем, что разрешение правовых (конституционных) споров, возникающих между органами государственной власти в связи с осуществлением ими своих конституционных полномочий, также относится к исключительной компетенции Конституционного Суда. Помимо ряда высказанных предложений, автор статьи также выразил мнение о том, что предусмотрение конституционных механизмов разрешения споров между органами государственной власти не следует рассматривать в контексте увеличения или уменьшения количества органов государственной власти.

Ключевые слова: Конституция РА, Конституционный Суд, конституционное правосудие, принцип разделения и баланса властей, законодательная база, правоприменительная практика, парламентское большинство, толкование Конституции.

ROLE OF THE CONSTITUTIONAL COURT IN ENSURING THE PRINCIPLE OF SEPARATION AND BALANCE OF POWERS

Annotation

The article analyzes how the nature and scope of the functions and powers assigned to the Constitutional Court by the 2015 amendments to the Constitution of the Republic of Armenia establish it as the key institution in ensuring the principle of separation and balance of powers. This role stems primarily from the Court's ability to address gaps in the legislative framework regulating relations between state bodies, which may lead to violations of the Constitution, through its interpretation. Additionally, the resolution of legal (constitutional) disputes arising between state authorities concerning the exercise of their constitutional

powers falls within the exclusive competence of the Constitutional Court. The author proposes several recommendations but disagrees with the notion that the provision of constitutional mechanisms for resolving disputes between state authorities should be viewed in the context of increasing or decreasing the number of state authorities.

Keywords: Constitution of the Republic of Armenia, Constitutional Court, constitutional justice, principle of separation and balance of powers, legislative framework, law enforcement practice, parliamentary majority, interpretation of the Constitution.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.09.2025 թ., տրվել է գրախոսության 10.09.2025 թ., ընդունվել է տպագրության 19.09.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.3-53

ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ռուս-Հայկական համալսարանի
ավագ դասախոս,
«Առողջապահական իրավունք»
մագիստրոսական ծրագրի
գիտական ղեկավար,
իրավաբանական գիտությունների
թեկնածու

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՈԴԵԼՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ (ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ)

Ամփոփագիր

Առողջության ապահովման և հիվանդությունների կանխարգելման գործոնները կարող են լինել կենսաբանական պայմանները, մարդու վարքագիծը, բնական, սոցիալական և մշակութային միջավայրը: Այդ գործոնները, որոնք բացասական ազդեցություն են ունենում մարդու և բնակչության առողջության վրա, մասնագիտական գրականության մեջ կոչվում են առողջության որոշիչներ կամ դետերմինանտներ: Այս ուսումնամեթոդական աշխատանքի նպատակն է աջակցել դասախոսներին բացատրելու առողջության որոշիչների հիմնական հասկացությունների բաժանման մեթոդաբանությունը և լուսաբանել կիրառվող մեթոդաբանության գիտական հիմքերն ու գործնական կարևորությունը: Հոդվածում դիտարկվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) առողջության սահմանումը, քննարկվում են դրա դրական և բացասական կողմերը: Բացի այդ, ներկայացվում են առողջության որոշիչների հիմնական մոդելները և յուրաքանչյուր գործոնի տեսակարար կշիռը: Հոդվածում ընդգծվում է, որ ԱՀԿ-ի սահմանումը չի կարող համընդհանուր լինել իրավունքի բոլոր ճյուղերի համար, ինչպես նաև վերլուծվում է հանրային առողջության մասին ՀՀ օրենքում «սոցիալական որոշիչներ» եզրույթի փոխարեն «սոցիալական բնորոշիչներ» ձևակերպման օգտագործման հետ կապված տերմինաբանական անճշտությունը:

Հիմնաբառեր. առողջության որոշիչներ, առողջության սոցիալական որոշիչներ, ռիսկի գործոնները, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, հանրային առողջություն, առողջապահության կազմակերպում:

Առողջության սահմանումը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) 1946 թ. Սահմանադրությունում տրվում է առողջության սահմանումը, որն ունի համընդհանուր ճանաչում: Ըստ այդ սահմանման՝ առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցիկ վիճակ է, այլ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացակայություն[1]: Առողջության ԱՀԿ-ի համապարփակ սահմանումը բառացիորեն արտացոլվել է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունում, ինչպես, օրինակ, «Բնակչության բժշկական օգնության ու սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանը, ի դեմս օրենսդիր մարմնի, ընդունել և ամրագրել է առողջությունը որպես ոչ միայն ֆիզիկական հիվանդության բացակայություն, այլև լիարժեք հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ՝ ապահովելով առողջության իրավունքի լայն մեկնաբանությունը:

Դասախոսությունների ընթացքում առողջության սահմանումը ուսանողների հետ քննարկելիս կարևոր է առանձնացնել դրա դրական և բացասական կողմերը:

Առողջության սահմանումը, չսահմանափակվելով կենսաբժշկական մոտեցումներով, ներկայացնում է ամբողջական հասկացություն՝ ենթադրելով բարեկեցության իդեալական վիճակը երեք հիմնական չափումներում՝ ֆիզիկական, հոգեկան, սոցիալական: Այն դրականորեն շեշտադրում է ոչ թե հիվանդությունների բացակայությունը, այլ բարեկեցության դրական վիճակը[2]: Մյուս կողմից, ԱՀԿ-ի առողջության սահմանումը՝ «ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար բարեկեցության վիճակ» լինելը, պատրանքային ու իդեալիստական, ուստիև անհնարին ու անիրականանալի չափանիշ է: Սա նշանակում է, որ բնակչության զգալի մասը, եթե ոչ բոլորը, իրենց կյանքի տարբեր փուլերում կարող են «անառողջ» համարվել՝ հաշվի առնելով քրոնիկ հիվանդությունների առկայությունը, ծերացման անխուսափելիությունը կամ

[1] Տե՛ս World Health Organization, "Constitution of the World Health Organization". American Journal of Public Health 36, no. 11 (November 1, 1946): 1315–23, https://doi.org/10.2105/AJPH.36.11.1315

[2] Տե՛ս **M. Huber** et al., "How Should We Define Health?" BMJ 343 (2011): d4163, https://doi.org/10.1136/bmj.d4163

քաղաքային կյանքում սթրեսային լարվածությունների առկայությունը: Վտանգ կա նաև, որ հասկացության չափազանց լայն շրջանակը կարող է հանգեցնել նորմալ մարդկային փորձառությունների և սոցիալական խնդիրների բժշկականացմանը: Օրինակ՝ տխրությունը կամ միայնությունը կարող են բուժման կարիք ունեցող վիճակներ դիտարկվել:

Առողջության վիճակը մեր ներքին՝ կենսաբանական կառուցվածքի (թե ինչպես է կառուցված մեր մարմինը, ինչ գեներ ունենք, ինչպիսին են մեր օրգանները) և արտաքին միջավայրի (որտեղ ենք ապրում, աշխատում, սովորում, ինչպիսի սնունդ ենք ուտում, ինչպիսի սոցիալական կապեր ունենք) միջև անընդհատ տեղի ունեցող փոխազդեցության արդյունքն է: Այս փոխազդեցության կարևորությունը նրանում է, որ այն թույլ է տալիս հասկանալ առողջությունը որպես դինամիկ և բազմագործոն երևույթ: Սա նշանակում է, որ առողջությունը միայն գեների կամ միայն շրջակա միջավայրի արդյունքը չէ, այլ այն, թե ինչպես են այդ երկու կողմերն ազդում և փոխազդում:

Փոխազդեցությունը հասկանալը կարևոր է առողջությունը խթանելու և հիվանդությունները կանխարգելելուն ուղղված արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար ինչպես անհատական, այնպես էլ բնակչության, այսինքն՝ հանրային մակարդակում: Այլ խոսքով՝ անհատի առողջությունը կարելի է ավելի լավ կառավարել, եթե հասկանում ենք, թե ինչպես են մարդու ներքին և արտաքին աշխարհները միմյանց փոխազդում՝ կա՛մ նպաստելով առողջությանը, կա՛մ հիվանդությունների պատճառ հանդիսանալով:

Մարդու կամ անհատի ներքին կենսաբանական գործոնների ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվում են կենսաբանությունը և գենետիկան, որոնք բացահայտում են հիվանդությունների մոլեկուլային և բջջային մեխանիզմները, ժառանգականությունը և մարմնի ներքին համակարգերի ֆունկցիոնալ առանձնահատկությունները[1]: Մինչդեռ, հիվանդությունների առաջացման և առողջության խթանման արտաքին գործոնները՝ կապված ապրելակերպի, աշխատանքային և կրթական պայմանների, շրջակա միջավայրի որակի և սոցիալական կապերի հետ, ուսումնասիրում է հանրային առողջությունը: Հանրային առողջությունում վերլուծում են, թե ինչպես են այս արտաքին գործոններն ազդում բնակչության առողջության վրա, մշակում կանխարգելիչ ռազմավարություններ, միջոցառումներ և միջամտություններ՝

[1] Տե՛ս **Bruce Alberts** et al., Molecular Biology of the Cell, 6th ed., New York: Garland Science, 2015:

ուղղված համայնքների առողջության բարելավմանը՝ հաշվի առնելով նաև սոցիալական որոշիչ գործոնների կարևորությունը:[1]

Առողջության սահմանումն ունի հիմնարար նշանակություն առողջապահության ոլորտի քաղաքականության և օրենսդրության համար: Առողջապահական ոլորտի բոլոր քաղաքականությունները, ռազմավարություններն ու իրավական ակտերը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն այս լայն սահմանման լույսի ներքո: Օրենսդրական և քաղաքականության կարգավորումները պետք է ուղղված լինեն ոչ միայն հիվանդությունների բացակայության ապահովմանը և չպետք է սահմանափակվեն միայն հիվանդությունների բուժմամբ կամ կանխարգելմամբ: Դրանք պետք է ընդգրկեն մարդու բարեկեցության բոլոր երեք ասպեկտները և ուղղված լինեն մարդկանց համար լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակի ստեղծմանն ու ապահովմանը: Սա նշանակում է, որ քաղաքականությունները ու ռազմավարությունները պետք է խթանեն առողջ ապրելակերպը, հոգեկան առողջության ծառայությունների հասանելիությունը, սոցիալական աջակցության համակարգերի զարգացումը և այլն: Առողջության սահմանումը, այսպիսով, վերջնանպատակ է առողջապահական համակարգի համար:

Այս ամենից բացի, կարևոր է ուշադրություն դարձնել մի հանգամանքի, որ ԱՀԿ-ի սահմանումը չի կարող համընդհանուր լինել իրավունքի բոլոր (են-թա)ճյուղերի համար: Օրինակ՝ պատասխանատվության հարաբերությունները կարգավորող իրավունքում առողջությունն իրավախախտմանը նախորդող անհատի ֆիզիկական ու հոգեկան վիճակն է: Սա թույլ է տալիս իրավական համակարգին օբյեկտիվորեն գնահատել և չափելի դարձնել պատճառված վնասը՝ համեմատելով անհատի առողջական վիճակը վնասը պատճառելուց առաջ և դրանից հետո, ինչն առանցքային է վնասի հատուցման դեպքում:

Առողջությունը, այսպիսով, ոչ միայն հիվանդությունների բացակայությունն է, այլ նաև մեր մարմնի (ներքին աշխարհ) և շրջակա միջավայրի (արտաքին աշխարհ) միջև տեղի ունեցող անընդհատ փոխազդեցության արդյունքը: Այսինքն՝ մարդու առողջության վրա ազդում են և՛ գեները, և՛ միջավայրը, որտեղ նա ապրում, աշխատում, և ստեղծում է սոցիալական կապերը: Այս ամենը հասկանալը շատ կարևոր է հիվանդությունները կանխարգելելու և առողջ ապրելակերպը խթանելու ռազմավարություններ մշակելու համար:

[1] Տե՛ս **Detels, R.,** et al., Oxford Textbook of Global Public Health, 6th ed. Oxford: Oxford University Press, 2015:

Առողջության պահպանման գործոնների հասկացությունը

Մարդու կյանքի և առողջության որակի վրա ազդող բոլոր գործոնները՝ լինի դա անհատի, թե ամբողջ բնակչության համար, մասնագիտական գրականությունում ընդհանրական կոչվում են առողջության որոշիչներ կամ դետերմինանտներ (անգլ.՝ determinants of health):

Ինչու՞ են դրանք կոչվում առողջության որոշիչներ, այլ ոչ հիվանդության որոշիչներ: Հիվանդության որոշիչների ներքո հասկանում են այն գործոնների բազմազանությունը (կենսաբանական, գենետիկական, կենսակերպ, սոցիալ-տնտեսական, բնապահպանական գործոններ և առողջապահական համակարգի մատչելիությունը), որոնք պատճառ են հիվանդությունների առաջացման, մինչդեռ առողջության որոշիչների պարագայում մասնագետները պետք է վեր հանեն ոչ միայն հիվանդությունների առաջացման, առողջությունն ու կյանքը վտանգող պայմաններն ու գործոնները, այլ նաև նրանք, որոնք նպաստում ու խթանում են բնակչության առողջության պահպանմանը: Այսինքն, **առողջության որոշիչներ հասկացության շրջանակն ավելի լայն է** հիվանդության որոշիչների համեմատ, իսկ քանի որ հանրային առողջության հիմնական նպատակը կանխարգելումն է, նախապատվությունը պետք է տրվի առողջության որոշիչներ եզրույթին:

Առողջության որոշիչները բաժանվում են տարաբնույթ տեսակների՝ ելնելով դրանց բնույթից և ազդեցության մակարդակից՝ սկսած անհատական մակարդակից մինչև համընդհանուր սոցիալական և շրջակա միջավայրի գործոններ: Առողջության որոշիչների հիմնական բաժանումը ներառում է հետևյալ տեսակները.

- կենսաբանական և գենետիկական որոշիչներ (օրինակ՝ ժառանգական հիվանդություններ, տարիք, սեռ),
- անհատական վարքագիծ և ապրելակերպ (օրինակ՝ սննդակարգ, ֆիզիկական ակտիվություն, ծխելու և ալկոհոլի օգտագործում),
- բնապահպանական և ֆիզիկական միջավայր (օրինակ՝ օդի և ջրի որակ, բնակարանային պայմաններ),
- առողջապահական ծառայությունների հասանելիություն և որակ (օրինակ՝ բժշկական օգնության մատչելիություն):

Կանադայի առողջապահության նախարարության 1974 թ. հրապարակած «Լալոնդի զեկույցում» (Lalonde Report), որը կոչվում էր «Կանադացիների առողջության նոր հեռանկար» (A New Perspective on the Health of Canadians)[1],

[1] Տե՛ս **Lalonde, Marc.** A New Perspective on the Health of Canadians: A Working Document. Ottawa: Government of Canada, 1974:

առողջության վրա ազդող գործոնները բաժանում են չորս հիմնական խմբի՝ մարդու կենսաբանություն (ներառյալ գենետիկան), շրջակա միջավայր, կենսակերպ, առողջապահական ծառայություններ:

Առողջության վրա ազդող գործոնների նշանակությունը ճիշտ պատկերացնելու համար կարելի է ուսանողների ուշադրությունը սևեռել առողջության ձևավորման գործում տարբեր գործոնների տեսակարար կշռին, որը գնահատելու համար առողջապահության ոլորտի մասնագետները հաճախ հիմնվում են ապացուցված մոդելների վրա, որոնք ցույց են տալիս, թե որքանով է յուրաքանչյուր գործոն ազդում մարդու առողջության վերջնական արդյունքի վրա: Չնայած գնահատումները կարող են տարբերվել՝ կախված հետազոտությունից, ընդհանուր պատկերը հետևյալն է.

Կյանքի պայմաններ և կենսակերպ՝ 50% և ավելի: Սա ամենակարևոր գործոնն է, քանի որ ներառում է մարդու ամենօրյա ընտրությունները և սովորությունները, ինչպիսիք են սնունդը, ֆիզիկական ակտիվությունը, վնասակար սովորույթների բացակայությունը (ծխել, ալկոհոլի չարաշահում), սթրեսի կառավարումը և քունը: Այս գործոնները ուղղակիորեն ազդում են բազմաթիվ հիվանդությունների զարգացման ռիսկի վրա:

Շրջակա միջավայրի վիճակ՝ 18-22%: Այս գործոնը ներառում է օդի և ջրի որակը, կլիմայական պայմանները, աշխատավայրի և բնակության վայրի անվտանգությունը: Օրինակ, աղտոտված միջավայրում ապրելը կարող է մեծացնել շնչառական և այլ հիվանդությունների ռիսկը:

Ժառանգական գործոններ՝ 20%: Գենետիկան կարևոր դեր է խաղում, քանի որ որոշում է մարդու նախատրամադրվածությունը որոշակի հիվանդությունների նկատմամբ (օրինակ՝ շաքարախտ, սրտանոթային հիվանդություններ, քաղցկեղ): Սակայն, այն հաճախ չի հանդիսանում հիվանդության անմիջական պատճառ, այլ ավելացնում է ռիսկը: Կենսակերպի ճիշտ ընտրությունը կարող է նվազեցնել կամ նույնիսկ կանխել գենետիկ նախատրամադրվածությամբ պայմանավորված հիվանդությունների դրսևորումը:

Բուժօգնության կազմակերպում և որակ՝ 8-10%: Թեև առողջապահական համակարգը կարևոր դեր ունի հիվանդությունների բուժման և կանխարգելման գործում, այն հաճախ ամենափոքր տեսակարար կշիռն ունի առողջության ընդհանուր ձևավորման մեջ: Սա ընդգծում է այն միտքը, որ առողջապահությունը հիմնականում զբաղվում է արդեն առաջացած խնդիրներով, ուստի և կոչվում է հիվանդապահություն, մինչդեռ մնացած գործոնները ձևավորում են առողջության հիմքը:

Այս թվերը ցույց են տալիս, որ առողջության պահպանման տեսակարար կշիռը բաժին է հասնում անհատի սեփական վերահսկողության տակ գտնվող գործոններին՝ կենսակերպին ու սոցիալական միջավայրին: Ճիշտ է՝ գեները փոխարինման ենթական չեն կամ հնարավոր չէ լիովին վերահսկել շրջակա միջավայրը, սակայն ամենօրյա ընտրությունները ամենամեծ ազդեցությունն ունեն անհատի առողջության և երկարակեցության վրա: Սա ընդգծում է կանխարգելիչ բժշկության և առողջ ապրելակերպի խթանման կարևորությունը՝ որպես առողջության պահպանման և բարելավման ամենաարդյունավետ միջոց:

Առողջության որոշիչների տարբեր տեսակները հասկանալը հիմնարար նշանակություն ունի դրա բովանդակությունն ու դերակատարությունն ավելի լավ ընկալելու համար, քանի որ դրանք թույլ են տալիս ամբողջականորեն դիտարկել առողջության վրա ազդող բոլոր գործոնները՝ սկսած մարդու կենսաբանական հատկանիշներից և ապրելակերպից, մինչև սոցիալական, տնտեսական և բնապահպանական համատեքստերը: Սրա գիտակցումն օգնում է հասկանալու, որ առողջության պահպանությունը պարզապես առողջապահական ոլորտի խնդիր չէ, այլ բազմաչափ երևույթ, որի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթությունը, եկամուտը, բնակարանային պայմանները, աշխատանքը և մշակույթը: Այս բազմազանությունը հասկանալը կարևոր է այնքանով, որ այն ուղղորդում է հանրային առողջության ոլորտի մասնագետներին՝ մշակելու համապարփակ և բազմոլորտային միջամտություններ՝ ուղղված ոչ միայն հիվանդությունների բուժմանը, այլև դրանց հիմքում ընկած պատճառների կառավարմանը՝ այդպիսով նպաստելով բնակչության ընդհանուր բարեկեցության ապահովմանը:

Առողջության որոշիչների տեսակները

Առողջության որոշիչները բաժանվում են հիմնական երկու խմբի՝ *բժշկական ու ոչ բժշկական որոշիչների*: Եթե բժշկական որոշիչները հիվանդության բժշկման հիմքն են, ապա ոչ բժշկական որոշիչները հիվանդությունները կանխարգելելու և առողջ ապրելու ամենակարևոր գործիքներն են: Դրանց ուսումնասիրությունը, ինչպես արդեն նշեն ենք, հանրային առողջության ու հանրային առողջության իրավունքի տիրույթում է, որտեղ ոչ բժշկական որոշիչները կոչվում են առողջության սոցիալական որոշիչներ:

Առողջության սոցիալական որոշիչները (ԱՍՈ, անգլ.՝ social determinants of health, SDOH) այն ոչ բժշկական գործոններն են, որոնք ձևավորում են այն պայմանները, որոնցում մարդիկ ծնվում, ապրում, աշխատում և մեծանում են: Դրանք ազդում են առողջության վրա՝ ստեղծելով տարբեր հնարավորություններ և ռիսկեր: Այս արտահայտության մեջ «սոցիալական» բառը գործածվում է լայն իմաստով՝ նկարագրելով ոչ միայն մարդկանց միջև փոխհարաբերությունները, այլև մարդու շրջապատող ողջ միջավայրը և պայմանները, որոնցում նա ապրում է: Հանրային առողջության գրականության մեջ սոցիալական աջակցության կապը՝ ընտանիքը, ընկերները, համայնքը, հասարակության մեջ ունեցած դիրքն ու կարգավիճակը, հասարակության մեջ ունեցած աջակցության մակարդակը բնորոշվում է «հասարակական» տերմինով, որը տնտեսական, կրթական գործոնների, բնակության պայմանների հետ կազմում են առողջության սոցիալական որոշիչների մասը:

Առողջության սոցիալական որոշիչները արտաքին գործոններ են: Արտաքին գործոնները կարող են ազդել մարդու օրգանիզմի վրա անկախ մարդու կենսաբանական հատկանիշներից: Ինչպես արդեն նշեցինք, ԱՀԿ-ի սահմանմամբ մեր առողջությունը մեծապես կախված է այն սոցիալական պայմաններից, որոնցում ծնվում, ապրում, աշխատում և տարիք ենք առնում: Պարզ ասած՝ անձի եկամուտը, կրթությունը, այն թաղամասը, որտեղ նա ապրում է, նույնիսկ այն, թե ինչպես է կազմակերպված հասարակությունը, մեծ ազդեցություն ունեն անհատի առողջության վրա, ուստի առողջապահության համակարգի նպատակը չի կարող սահմանափակվել բժշկական ծառայությունների ու դեղորայքի հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելով: Օրինակ, եթե մարդն ապրում է այնպիսի տարածքում, որտեղ մաքուր ջուրը հասանելի չէ, կամ որտեղ առողջ սնունդը թանկ է ու դժվար հասանելի, ապա նրա առողջության վիճակն արդեն իսկ վտանգված է՝ անկախ նրա ժառանգականությունից: Այս հասկացությունը հեղափոխական է հանրային առողջությունում, քանի որ այն մղում է մարդկանց չսահմանափակվել առկա, հասանելի բուժական մոտեցումներով և ուշադրություն դարձնել նաև հիվանդությունների հիմքում ընկած սոցիալական պատճառներին, անհավասարություններին[1]:

2024 թվականի փետրվարի 28-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հանրային առողջապահության մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի սեպտեմբերի 27-ին: Օրենքի հիմնական նպատակն է սահմանել

[1] Տե՛ս **World Health Organisation (WHO),** "Constitution of the World Health Organization". American Journal of Public Health 36, no. 11, November 1, 1946, IV:

հանրության առողջության պահպանման և ապահովման, առողջության պաշտպանության և խթանման, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման հիմնարար սկզբունքները: Այն կարգավորում է հանրային առողջապահական ծառայությունների համակարգի գործունեությունը և դրա իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

Օրենքով կարևորվում է պետության դերը հանրային առողջության ապահովման գործում՝ նախատեսելով, որ պետությունը պետք է ստեղծի բարենպաստ միջավայր և վերահսկի առողջության վրա ազդող բոլոր գործոնները, այդ թվում՝ շրջակա միջավայրի և սոցիալական դետերմինանտները: Թեև «Հանրային առողջապահության մասին» օրենքը ճիշտ է կարևորում առողջության վրա ազդող սոցիալական գործոնների կարգավորման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, օրենքում **սոցիալական որոշիչներ**ի փոխարեն օգտագործվող «սոցիալական բնորոշիչներ» ձևակերպումը կարող է շփոթություն առաջացնել՝ հատկապես գիտական և մասնագիտական շրջանակներում: Այս տերմինաբանական անճշտությունը նույնացնում է որոշիչ ու բնորոշիչ բառերը, այնինչ գիտական գրականության բնորոշիչն ունի զուտ նկարագրական նշանակություն և չի ենթադրում ուղղակի ազդեցություն կամ որոշիչ (դետերմինանտ) դերակատարություն:

Բնորոշիչը (characteristic) տերմին է, որը նկարագրում է երևույթի, վիճակի կամ անձի հատկանիշը: Այն օգտագործվում է հատկանիշները նշելու համար, բայց չի նշանակում, որ այդ հատկանիշն անպայմանորեն պատճառ է կամ ազդող գործոն: Օրինակ, որևէ հիվանդության բնորոշիչներ կարող են լինել դրա ախտանիշները, տարածվածությունը կամ այն խմբերը, որոնցում այն հանդիպում է: Կամ ջրով փոխանցվող հիվանդության բնորոշիչ կարող է լինել դրա տարածվածությունը որոշակի աշխարհագրական տարածքում՝ առանց անմիջականորեն նշելու, որ ջրի որակը հանդիսանում է պատճառը: Մինչդեռ, որոշիչը (determinant) վերաբերում է մի գործոնի կամ պայմանի, որն ազդում է մեկ այլ երևույթի առաջացմանը:

Առողջապահության համատեքստում առողջության սոցիալական որոշիչները (կրթական, հասարակական, շրջակա միջավայրի, տնտեսական և այլն) այն գործոններն են, որոնք ազդում են անհատների կամ բնակչության առողջական վիճակի վրա: Օրինակ, ջրի որակը որոշիչ է (դետերմինանտ) ջրով փոխանցվող հիվանդությունների առաջացման համար: Այլ կերպ ասած՝ բնորոշիչը պարզապես նկարագրում է մի երևույթ, մինչդեռ որոշիչը (դետերմինանտ) այն գործոնն է, որն անմիջականորեն պայմանավորում, որոշում է տվյալ

երևույթի արդյունքը: Թեև օրենքի նպատակը հստակ է, այնուամենայնիվ տերմինների շփոթումը օրենսդրական տեքստում կարող է թուլացնել իրավական կարգավորումների հստակությունն ու արդյունավետությունը:

Ուսանողների շրջանում ամենամեծ դժվարությունը առողջության սոցիալական որոշիչների (social determinants of health) ու ռիսկերի գործոնների (risk factors) միջև տարբերությունների ըմբռնումն է: Քանի որ այս երկու հասկացությունները հանրային առողջության իրավունքի ուսումնասիրության համար ունեն ելակետային նշանակություն, ուստի առանցքային հարց է նախևառաջ անդրադառնալ դրանց ընդհանրություններին ու տարբերություններին՝ օրինակների միջոցով ամրապնդելով ուսանողների շրջանում իմացությունը: Դրանք թեև փոխկապակցված են, սակայն չեն նույնանում և առողջության վրա ազդում են տարբեր մակարդակներում:

Առողջության սոցիալական որոշիչները անհատի կամ բնակչության առողջական վիճակը ձևավորող կամ պայմանավորող լայն, համապարփակ գործոններ են: Դրանք հաճախ արտացոլում են սոցիալական, տնտեսական, քաղաքական և բնապահպանական պայմանները, որոնցում, ինչպես արդեն նշել ենք, մարդիկ ապրում, աշխատում, սովորում և հասակ են առնում: Այսինքն, *առողջության սոցիալական որոշիչները մակրոմակարդակի գործոններ են*, որոնք ստեղծում են առողջ կամ անառողջ լինելու նախապայմաններ[1]: Օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտվածությունն ուղղակիորեն ազդում է առողջության վրա:

Ռիսկի գործոնները կոնկրետ վարքագծային, կենսաբանական կամ շրջակա միջավայրի ազդակներ են, որոնք ուղղակիորեն բարձրացնում են որոշակի հիվանդության կամ վնասվածքի առաջացման հավանականությունը անհատական մակարդակում: Դրանք հաճախ համարվում են որոշիչներով պայմանավորված «միջանկյալ» գործոններ[2]: Օրինակ՝ ծխելը ռիսկի գործոն է թոքերի քաղցկեղի, սրտանոթային հիվանդությունների համար, անառողջ սննդակարգը՝ շաքարային դիաբետի, սրտի հիվանդությունների և ճարպակալման համար, ֆիզիկական ոչ ակտիվ կենսակերպը՝ մի շարք քրոնիկ հիվանդությունների համար:

[1] Տե՛ս **World Health Organization,** "Social Determinants of Health". Accessed July 31, 2025. https://www.who.int/health-topics/social-determinants-of-health, **Michael Marmot,** "Social Determinants of Health Inequalities". The Lancet 365, no. 9464 (2005): 1099–1104. https://doi.org/10.1016/S0140-6736(05)71146-6, **Tarlov, Alvin R.** "Public Policy and the Social Determinants of Health". Health Affairs 18, no. 2 (1999): 195–204. https://doi.org/10.1377/hlthaff.18.2.195

[2] Տե՛ս **Leon Gordis,** Epidemiology. 5th ed. Philadelphia, PA: Elsevier Saunders, 2014:

Ուստի, դասախոսությունների և սեմինար պարապմունքների թիրախում կարևոր է զարգացնել առանցքային այն միտքը, որ որոշիչ գործոնները հաճախ ռիսկի գործոնների դրսևորման նախադրյալներ են. **որոշիչ գործոնները կարող են նպաստել ռիսկի գործոնների առաջացման հավանականությանը**:

Որոշիչ գործոնը ենթադրում է պատճառահետևանքային դեր, այսինքն՝ ավելի լայն գործոն է, որն ազդում է առողջության վրա՝ պարտադիր չլինելով հիվանդության առաջացման համար անհրաժեշտ կամ բավարար մեկուսացված *հնարավոր* պատճառ: Օրինակ, ցածր կրթական մակարդակը կամ աղքատությունը կարող են լինել որոշիչ գործոններ կամ դետերմինանտներ, որոնք ստեղծում են անառողջ պայմաններ: Իսկ ռիսկի գործոնը ավելի կոնկրետ է և վերաբերում է միայն ազդեցության ենթարկված անհատների մոտ որոշակի հիվանդության զարգացման ավելի մեծ *հավանականությանը*, առանց պարտադիր կերպով բացատրելու հիմքում ընկած պատճառները: Օրինակ, ծխելը ռիսկի գործոն է թոքերի քաղցկեղի համար, բայց մարդը կարող է ծխել ցածր կրթության կամ սոցիալական դժվարությունների պատճառով, որոնք արդեն դետերմինանտներ, որոշիչներ են: Այսինքն, որոշիչները կամ դետերմինանտները «ինչուներն» են, իսկ ռիսկի գործոնները՝ «ինչերն» են, որոնք բարձրացնում են հիվանդության հավանականությունը[1]:

Ավանդաբար, առողջության սոցիալական որոշիչները խմբավորում են երեք հիմնական մոդելների՝ մանրէաբանական (վերաբերում է վարակիչ հիվանդությունների տարածմանը, microbial), էկոլոգիական (կապված շրջակա միջավայրի հետ, ecological) և վարքագծային (կենտրոնանում է մարդու կենսակերպի և սոցիալական միջավայրի վրա, behavioural)»[2] :

Առողջության որոշիչների մանրէաբանական մոդելը

Երկար ժամանակ հիվանդությունների հիմնական պատճառներ դիտարկվում էին մանրէաբանական գործոնները, այսինքն՝ սնկերի, վիրուսների, բակտերիաների կամ պրիոնների ներթափանցումն օրգանիզմ՝ սննդի, ջրի կամ միջատների միջոցով: Այս մոդելը, որը նույնիսկ այսօր դիտարկվում է որպես առողջության կենսաբանական դետերմինանտների մի մաս, հիվանդությունների առաջացման անմիջական պատճառ էր համարում այդ

[1] Տե՛ս **Leclerc, Annette,** et al. “Dictionnaire, d'épidémiologie”. Éditions Frison-Roche, Paris, 1990, էջ 143:

[2] Տե՛ս **Gostin, Lawrence O.,** et al, “The Law and the Public's Health: A Study of Infectious Disease Law in the United States”. Columbia Law Review 99, no. 1 (1999), էջեր 59-128:

հարուցիչները՝ ընդունելով, որ արտաքին գործոններն ուղղակիորեն նպաստում են դրանց դրսևորմանը: Հենց այս մանրէաբանական պատկերացումների շրջանակում էլ մշակվեցին հարուցիչների դեմ պայքարի՝ դրանց վնասազերծման և վերացման միջամտությունների ձևեր: Այսպես առաջացավ մարդու մարմնի նկատմամբ պետական միջամտության թույլատրելի սահմանների՝ առողջության պահպանման նպատակով ընդլայնման անհրաժեշտությունը: Սակայն, ժամանակակից նյարդաբանությունում նեյրոգիտությունը լրացնում է այս պատկերը՝ պնդելով, որ մարդու մարմինը հանդիսանում է կենսաբանական նյութերից բաղկացած բարդ համակարգ. «կենսաբանական նյութերից բաղկացած պարկ է»՝ ներառելով հորմոնային, գենային և նեյրոհամակարգեր, որոնք պատասխանատու են անհատի որոշումների ընդունման համար: Այս մոտեցումը ենթադրում է, որ նույնիսկ մեր նախասիրությունները (օրինակ՝ գույնի, երաժշտության կամ ոճի) հիմնականում պայմանավորված են կենսաբանական նախադրյալներով, այլ ոչ թե արդյունք են բացառապես բանական կամ սոցիալական գործընթացների: Հետևաբար, չնայած տարիքի, սոցիալական պայմանների և կենսագործունեության ազդեցության տակ տեղի ունեցող կենսաբանական փոփոխություններին, առողջության պահպանման գործում շարունակում է կարևորվել անմիջական՝ ինչպես մանրէաբանական, այնպես էլ այլ կենսաբանական գործոնների հետ մասնագետների աշխատանքը:

Ուշ շրջանում այս մոդելը հանդիպում է նաև առողջության կենսաբանական դետերմինանտներ անվանումով:

Առողջության որոշիչների վարքագծային մոդելը

Մյուս մոդելի շրջանակում հիվանդությունների առաջացման հիմնական պատճառը անհատի վարքագիծն է: Լայնորեն տարածված մոտեցում է այն, որ վարքագիծը տարբեր հիվանդությունների առաջացման պատճառ է հանդիսանում, ինչպես, օրինակ, ծխելը, խմելը, խաղամոլությունը: Խնդիրն այն է՝ արդյո՞ք ծխելու պատճառը կամային է, ասել է թե՝ ընտրության հարց է (ինչպես համարում են այս մոդելի կողմնակիցները), թե սոցիալական միջավայրի ազդեցության արդյունք է:

Այս մոդելի կողմնակիցները չեն անտեսում, որ արտաքին գործոնների ազդեցության ներքո փոփոխություններ են տեղի ունենում մարդու կենսաբանական կառուցվածքում: Սակայն առողջության պահպանման ու հիվանդությունների կանխարգելման գործում կարևորում են վարքագծի փոփոխությանն ուղղված աշխատանքների իրականացումը: Ի վերջո, ցանկությունների,

նախասիրությունների, համոզմունքների, անհատական արժեքային համակարգի, սոցիալական նորմերի ու շրջապատող միջավայրի ընկալումների ձևավորման գործում ներքին՝ (ֆիզիոլոգիական), արտաքին (համայնք, ընտանիք, միջավայր, ավանդույթներ, ընկերներ, տեխնոլոգիա, մամուլ) գործոնների բաժանումը կարևոր է հանրային առողջության ապահովման նպատակով անհրաժեշտ միջամտության կամ միջոցառման ընտրության հարցում:

Վարքագծի ուսումնասիրության դեպքում հաշվարկվում է ոչ միայն հիվանդության դեպքերի քանակը, այլ նաև մշտադիտարկվում է անձանց կենսակերպը, գործունեությունն ու գործողությունները: Գիտական մեթոդներով ստացված արդյունքները կարող են օբյեկտիվ հիմք դառնալ պետական միջամտության համար: Դրա իրականացման անհրաժեշտությունը, մեթոդները, ձևերն ու միջոցները պետության հայեցողությունն է, որն իրականացվում է իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան: Երբ իշխանությունները միջամտում են անհատների վարքագծի ու ընտրության հետ կապված հարցերին, այդ միջամտությունը կարող է որակվել անթույլատրելի պատերնալիզմ: Ծխելու արգելքի համար օրենսդրության լայն շրջանակն ու դրա ընդունման ձևերը Եվրոպայում ու Հայաստանում հաճախ անթույլատրելի միջամտություն են որակվել: Մեր իրականությունում նման գնահատականի ևս հանդիպել ենք ծխախոտի դեմ պայքարում Առողջապահության նախարարության քաղաքականության իրականացման վերաբերյալ[1]:

Առողջության որոշիչների էկոլոգիական կամ միջավայրային մոդելը

Կենսաբանական մոտեցմանը զուգահեռ, մասնագետների մի մասը կարծում է, որ միայն կենսաբանական նախադրյալները բավարար չեն առողջությունը բացատրելու համար. կարևոր է նաև անձի կենսափորձն ու սոցիալական միջավայրը, ինչպես նաև դրանում նրա ձեռք բերած կարգավիճակը: Օրինակ, ծխելը, թեև վերագրվում է վարքագծային տեսակին և դիտարկվում որպես անձի ընտրության դրսևորում, իրականում կարող է լինել սոցիալական շփումների, ենթամշակույթի, եկամուտների կամ աղքատության, չկանոնակարգված ու լարված աշխատանքի, հոգեբանական կամ ֆիզիոլոգիական կախվածության և այլ հանգամանքների հետևանք: Այսինքն, թեև վարքագծի պատասխանատուն այն անձն է, ով հետևում է

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա.,** Ծխելու համապարփակ արգելքը (պետական հոգածություն, թե՞ մարդու ինքնավարություն): Երևան, 2019, էջեր 7-9:

տվյալ հասարակությունում ընդունված վարքագծին, նրա ընտրությունը միշտ չէ, որ կամքի ակտիվ դրսևորում է: Ամանորյա տոներին բնակչության անառողջ սննդակարգի օրինակը հստակ ցույց է տալիս, թե ինչպես է սոցիալական ճնշումը կամ «սոցիալական նորմատիվ ազդեցությունը» (ինչպես այն անվանում են սոցիալական հոգեբանությունում[1]) թելադրում ակնկալելի վարքագիծ, որին չհետևելը կարող է վտանգել սոցիալական կապերը, հեղինակությունը:

Բացի այդ, առողջության վրա զգալի ազդեցություն ունեն միջավայրային գործոնները, որոնք ընդգրկում են շրջապատող օբյեկտիվ իրականության բոլոր տարրերը՝ բնական, բնակավայրային, հասարակական, արդյունաբերական և այլն: Դրանք վարակները կամ անձի ընտրությունը չեն, այլ միջավայրային գործոնների և սոցիալական ընկալումների համախումբն են, ինչպիսիք են հողի, ջրի, օդի որակը, աղմուկը, շենքային պայմանները, աշխատանքի ու հանգստի կազմակերպումը, բնակության կամ աշխատանքի հաստատություններում տիրող մշակույթը և բարոյահոգեբանական մթնոլորտը: Բնական միջավայրը հատկապես կարևոր է առողջության պահպանման համար՝ հաշվի առնելով առողջության և բնության տարրերի կենսաբանական փոխկապակցվածությունը: Նուբարաշենի և Աղձքի վերաբերյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես նույն կենսաբանական տվյալներ և կենսակերպ ունեցող անձանց մոտ կյանքի որակն ու երկարակեցությունը կարող են տարբերվել՝ կախված բնակության միջավայրից: Հանրային առողջությունը ուսումնասիրում է այս գործոնները՝ հասկանալու համար, թե ինչպես են դրանք ազդում առողջության վրա և ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկել դրանց ազդեցությունը մեղմելու համար: Ներգաղթյալների առողջության խոցելիության հարցը ևս մեկ օրինակ է, թե ինչպես նոր միջավայրի (օդ, ջուր, սնունդ, կլիմա) փոփոխությունները և առողջապահական ծառայությունների հասանելիության իրազեկվածությունը կարող են բացասաբար անդրադառնալ օրգանիզմի հարմարվողական մեխանիզմների վրա: Պատմական ուսումնասիրությունները, ինչպես հնամարդաբանական հետազոտությունները, նույնպես ցույց են տալիս, որ օրգանիզմի դիմադրողականությունն ու երկարակեցությունը կարող են հատուկ լինել որոշակի տարածքում երկար ժամանակ բնակվող ազգերին՝ ինչպես դա ուսումնասիրվել է, օրինակ, Արցախահայ բնակչության երկարակեցության դեպքում սովետական տարիներին:

[1] Տե՛ս **Aronson, Eliot,** et al. "Conformity: Influencing Behavior". Social Psychology. Pearson. Retrieved 15 November 2013:

Ամփոփում

Դասախոսության ընթացքում առողջության վրա ազդող գործոնների հասկացությունը բացատրելու համար նախապես անհրաժեշտ է ուսանողներին ներկայացնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրված առողջության սահմանումը՝ անդրադառնալով դրա ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերին: Այնուհետև կարիք կա ներկայացնել առողջության որոշիչների հասկացությունը, դրանց տեսակները և բաժանման հիմքերը, հիվանդությունների որոշիչների նկատմամբ առողջության որոշիչների «առավելությունը», առողջության սոցիալական որոշիչների հասկացությունն ու կարևորությունը: Ընդ որում, առողջության որոշիչների հասկացությունը կարելի է բացատրել գործող օրենսդրության քննադատական վերլուծության միջոցով՝ բերելով որոշակի կարգավորումների օրինակներ և ներկայացնելով դրանց առավելություններն ու թերությունները: Այնուհետև, անհրաժեշտ է անդրադառնալ գործոնների (determinants) և ռիսկի գործոնների (risk factors) միջև տարբերակման հարցին, որտեղ տարբերակել որոշիչները՝ «ինչուները» որպես մակրոգործոններ, իսկ ռիսկի գործոնները՝ «ինչերը», որպես միկրոգործոններ: Սեմինար պարապմունքների ընթացքում կարևոր է օրինակներով լուսաբանել առողջության սոցիալական որոշիչների գաղափարը՝ բացատրելով, որ անհատի առողջությունը հիմնականում պայմանավորված է այն պայմաններով, որոնցում նա ծնվում, մեծանում, ապրում և աշխատում է, այլ ոչ թե միայն հասանելի ու մատչելի բժշկական ծառայությունների շահառու լինելով: Դասավանդման ընթացքում պետք է համադրել և վերլուծել առողջության սոցիալական որոշիչների երեք հիմնական մոդելները՝ մանրէաբանական (կենսաբանական), վարքագծային և էկոլոգիական (միջավայրային), յուրաքանչյուրի առանձնահատկությունները և սահմանափակումները ցույց տալով կոնկրետ օրինակներով (ինչպիսիք են ծխելը, բնակավայրի ազդեցությունը, սոցիալական ճնշումը), որպեսզի ուսանողները հասկանան հանրային առողջության բազմաչափ բնույթը և այն հանգամանքը, որ առողջության պահպանությունը միայն առողջապահական ոլորտի խնդիր չէ, այլ բազմագործոն երևույթ է:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ղամբարյան Ա.,** Ծխելու համապարփակ արգելքը (պետական հոգածություն, թե՞ մարդու ինքնավարություն): Երևան, 2019:
2. Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. խումբ.: Եր., ԵՊԲՀ հրատարակչություն, 2024:
3. **Alberts, Bruce, Alexander Johnson, Julian Lewis, David Morgan, Martin Raff, Keith Roberts, and Peter Walter.** Molecular Biology of the Cell. 6th ed. New York: Garland Science, 2015.
4. **Aronson, Eliot,** et al. "Conformity: Influencing Behavior". Social Psychology. Pearson. Retrieved 15 November 2013.
5. **Gostin, Lawrence O., Scott Burris, Zita Lazzarini, and Carole Roan Gresenz.** "The Law and the Public's Health: A Study of Infectious Disease Law in the United States". Columbia Law Review 99, no. 1 (1999): 59–128, https://doi.org/10.2307/1123597
6. **Huber, M., L.J. Knottnerus, L. Green, H. van der Horst, M. Diez-Ewald, J. W. M. van der Meer, and P. Schnabel.** "How Should We Define Health?" BMJ 343 (2011): d4163, https://doi.org/10.1136/bmj.d4163
7. **Lalonde, Marc.** A New Perspective on the Health of Canadians: A Working Document. Ottawa: Government of Canada, 1974.
8. **Leclerc, Annette,** et al. "Dictionnaire, d'épidémiologie". Éditions Frison-Roche, Paris, 1990.
9. **Marmot, Michael.** "Social Determinants of Health Inequalities". The Lancet 365, no. 9464 (2005): 1099–1104, https://doi.org/10.1016/S0140-6736(05)71146-6
10. **Tarlov, Alvin R.** "Public Policy and the Social Determinants of Health." Health Affairs 18, no. 2 (1999): 195–204, https://doi.org/10.1377/hlthaff.18.2.195
11. **WHO,** COVID-19 and the social determinants of health and health equity: evidence brief, 2021, https://www.who.int/health-topics/social-determinants-of-health#tab=tab_1
12. **World Health Organisation (WHO),** "Constitution of the World Health Organization", American Journal of Public Health 36, no. 11 (November 1, 1946).
13. **World Health Organization,** "Social Determinants of Health." Accessed July 31, 2025, https://www.who.int/health-topics/social-determinants-of-health

ПОНЯТИЕ И МОДЕЛИ ДЕТЕРМИНАНТОВ ЗДОРОВЬЯ В ПРАВЕ ОБЩЕСТВЕННОГО ЗДОРОВЬЯ (УЧЕБНО-МЕТОДИЧЕСКАЯ РАБОТА)

Аннотация

Факторы, обеспечивающие здоровье и предотвращающие заболевания, могут включать биологические условия, поведение человека и природную среду, а также социальную и культурную среду, в которой живет человек. Эти факторы, оказывающие негативное влияние на здоровье человека и населения, в профессиональной литературе называются детерминантами здоровья. Данная статья имеет учебно-методический характер, цель которой заключается в разъяснении преподавателям методологии разделения основных понятий детерминантов здоровья для работы со студентами во время лекций и семинарских занятий, а также в освещении научной основы и практической значимости применяемой методологии. В статье рассматривается определение здоровья, данное Всемирной организацией здравоохранения (ВОЗ), а также обсуждаются его положительные и отрицательные стороны. Кроме того, представлены основные модели детерминантов здоровья и удельный вес каждого фактора. В статье подчеркивается, что определение ВОЗ не может быть универсальным для всех отраслей права, а также анализируется терминологическая неточность, связанная с употреблением в Законе РА “Об общественном здоровье” вместо термина “социальные детерминанты” формулировки “социальные характеристики”.

Ключевые слова: детерминанты здоровья, социальные детерминанты здоровья, факторы риска, Всемирная организация здравоохранения, общественное здравоохранение, организация здравоохранения.

THE CONCEPT AND MODELS OF DETERMINANTS OF HEALTH IN PUBLIC HEALTH LAW (EDUCATIONAL AND METHODOLOGICAL WORK)

Annotation

The factors that ensure health and prevent diseases include biological conditions, human behavior, the natural environment, as well as the social and cultural environment in which a person lives. These factors, which negatively impact human and population health, are referred to as health determinants in

professional literature. This article pursues a didactic purpose, which is to assist lecturers in explaining to students the methodology for dividing the main concepts of health determinants during lectures and seminar classes, and to shed light on the scientific basis and practical importance of the applied methods. The article examines the definition of health given by the World Health Organization (WHO) and discusses its positive and negative aspects. In addition, the main models of Health Determinants and the specific weight of each factor are presented. The article emphasizes that the WHO definition cannot be universal for all branches of law, and the terminological inaccuracy related to the use of the wording “social characteristics” instead of the term “social determinants” in the RA Law “On Public Health” is also analyzed.

Keywords: health, illness/disease, public health, determinants of health, World Health Organization, health outcomes, causes of disease, social determinants.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.08.2025 թ., տրվել է գրախոսության 05.09.2025 թ., ընդունվել է տպագրության 19.09.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-71

ԱՐՏԱԿ ՂԱՋԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ԻՐԵՆՑ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ԱՅՑԵԼԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՈՒՄԸ՝ ԻԲՐԵՎ ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 2022 թ. շրջափակման և 2023 թ. սեպտեմբերյան ռազմական հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի շարունակական խախտմանը:

Խախտումը դիտարկվում է ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության՝ ԼՂ-ում գտնվող իրենց հարազատների գերեզմաններ այցելելու և այնտեղ կրոնական-ծիսական կարգեր անցկացնելու հնարավորության բացակայության համատեքստում: Հոդվածում շեշտվում է կրոնի առանցքային դերը մարդու՝ որպես անձի (սուբյեկտի) ձևավորման, բարոյական ընկալումների և ինքնագիտակցության զարգացման գործում:

Քննարկվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ ձևավորած իրավաբանությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրոնի ազատության ներքին (forum internum) և արտաքին (forum externum) դրսևորումներին: Ընդգծվում է, որ կրոնական ծեսերին և արարողություններին մասնակցությունը կրոնական հայացքների արտահայտման առանցքային միջոց է: Տարբերակվում են կրոնի արտահայտության առանցքային մաս հանդիսացող արարքները և կրոնից սոսկ ներշնչված

արարքները՝ հիմնվելով ՄԻԵԴ նախադեպային իրավական դիրքորոշումների վրա:

Շեշտադրվում է, որ ԼՂ հայ բնակչությունը, լինելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ, բռնի տեղահանության պատճառով զրկվել է իր մերձավորների գերեզմաններ այցելելու և այնտեղ կրոնական-ծիսական կարգեր իրականացնելու հնարավորությունից, ՄԻԵԴ իրավաբանության լույսի ներքո հիմնավորվում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքի շարունակական խախտումը:

Հիմնաբառեր. Լեռնային Ղարաբաղ, բռնի տեղահանված անձինք, մտքի, խղճի և կրոնի ազատություն, ՄԻԵԿ 9-րդ հոդված, գերեզմաններ այցելելու իրավունք, կրոնական ծեսեր, կրոնի արտահայտման ազատություն, forum internum, forum externum, մարդու արժանապատվություն, հոգևոր իրավունքներ:

Ներածություն

2022 թվականի դեկտեմբերին սկսված՝ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, իսկ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակումը և ագրեսիան հանգեցրին ԼՂ հայ բնակչության բռնի տեղահանմանը: Այս զարգացումները ուղեկցվեցին մարդու իրավունքների զանգվածային խախտումներով:

Այս համատեքստում, տեղահանված անձանց շրջանում մեր կողմից իրականացված հարցումների և խորքային հարցազրույցների արդյունքում արձանագրվել է, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք նյութական կորուստների բացի, եթե ոչ առավել, ապա առնվազն ոչ պակաս զրկանքներ են կրում ԼՂ-ում գտնվող իրենց հարազատների գերեզմաններ այցելելու անհնարինության պատճառով:

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակման և ագրեսիայի բերումով ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչությունը, ի թիվս այլնի, նաև զրկվեց իրենց մերձավորների գերեզմաններ այցելելու հնարավորությունից, ինչը ոչ միայն ցավի և որոշ դեպքերում նաև՝ հոգեկան տառապանքի աղբյուր է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար, այլև ինքնին նրանց հիմնական իրավունքի սահմանափակում է:

ԼՂ բնակչության մեծագույն մասը, լինելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ, բռնի տեղահանության բերումով զրկված է այնտեղ մնա-

ցած գերեզմաններում կրոնական-ծիսական արարողություններ հավուր պատշաճի իրականացման հնարավորություններից:

Սույն հոդվածի շրջանակներում կքննարկվեն ԼՂ-ում գտնվող գերեզմաններ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կողմից այցելելու անհնարինությամբ վերջիններիս մտքի, խղճի և կրոնի ազատության հիմնական իրավունքի շարունակական խախտման հարցերը:

1. Կրոնի դերը մարդու՝ իբրև անձ (սուբյեկտ) ձևավորման հարցում

Մարդու՝ իբրև բանական էակի ձևավորման գործընթացը պատմական սկզբնական շրջանից զուգորդվում է մարդու հոգևոր պահանջմունքներով. այս պահանջմունքների բավարարման կարևորագույն ուղիներից մեկը դարեր շարունակ եղել է կրոնը, որը, իբրև ուղեկից, «ուղեկցել է» անհատին և մարդկային հասարակությանը բանական մարդու ձևավորման պատմության ողջ ընթացքում:

Մարդու՝ իբրև անհատականության, իբրև անձի հիմնական հայեցակարգը, որը և զարգացրել է ժամանակների ականավոր տեսաբան Ռ. Ալեքսին, արտահայտվում է այսպես կոչված «անձի երկակի եռյակի» կառուցվածքային մոդելում: Ըստ այդմ, առաջարկվում է մարդու՝ իբրև անհատականության, անձի այնպիսի սահմանում, որը ներառում է երկու հարթությունում երեքական հատկանիշներ, որոնց բավարարում է անհատականությունը (անձը):

Առաջին հարթությունում են բանականության, զգացմունքի և (ինքնա)գիտակցության հատկանիշները, իսկ երկրորդում՝ ճանաչողական, կամային և նորմատիվ ռեֆլեքսիվության հատկանիշները[1]**:**

Միայն բանականությունը,- գրում է Ռ. Ալեքսին,- բավարար չէ, քանի որ համակարգիչներն, ինչ-որ իմաստով, ունեն բանականություն, բայց նրանք, առնվազն զարգացման ներկա փուլում, անհատականություններ (անձեր) չեն: Բանականության և զգացմունքի կապը նույնպես բավարար չէ: Կենդանիները կարող են ունենալ, առնվազն որոշակի աստիճանով ինտելեկտ և զգացմունք, բայց նրանք անհատականություններ (անձեր) չեն: Այդ պատճառով առաջին եռյակի երրորդ պայմանը՝ գիտակցությունը կամ, ավելի ճիշտ, **ինքնագիտակցությունը, առանցքային պայման է**[2]**:**

Ինքնագիտակցությունը սահմանվում է ռեֆլեքսիվությամբ, որն իր հերթին ունենում է **երեք տեսակ:**

[1] Տե՛ս **R. Alexy,** "Human Dignity and Proportionality Analysis". EJJL, v. 16, n. 3, 2015 թ., էջ 89:
[2] Տե՛ս նույն տեղում:

Ըստ այդմ՝ անհատականության (անձի) այս հիմնական հայեցակարգի համաձայն, ինքնություն, անձ դիտարկվելու համար անհրաժեշտ է, որ բավարարվեն նաև **երկրորդ «եռյակի» չափանիշները**:

Ուստիև պետք է անձն ունենա ճանաչողական (կոգնիտիվ) ռեֆլեքսիվություն, որը կայանում է էակի **«ինքնաճանաչողության» ռեֆլեքսիվությունում**՝ ինքն իրեն գիտելիքի առարկա դարձնելու հնարավորության մեջ:

Այս առումով Ռ. Ալեքսին շարունակում է գրել. «Ինքնաճանաչման ամենատարրական մասը այն փաստի իմացությունն է, որ մենք ծնվել ենք, և որ մենք կմեռնենք: Անհատականություն լինելու համար, սակայն, ճանաչողական ռեֆլեքսիվությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Դրան անհրաժեշտ է ավելացնել նաև կամային և նորմատիվային ռեֆլեքսիվությունները»[1]:

Ռեֆլեքսիվության երկրորդ տեսակը՝ կամային ռեֆլեքսիվությունը, կայանում է սեփական վարքագիծը և դրանով իսկ ինքն իրեն կամային արարքներով ուղղորդելու կարողության մեջ: Ռ. Ալեքսին այս առումով նշում է. «Ինչ վերաբերում է առանձին գործողություններին՝ սա ինքնաուղղորդում է (ինքնավարություն - self-direction): Իսկ ողջ կյանքի համատեքստում կարելի է խոսել «ինքնակազմավորման» (ինքնաձևավորման - self-formation) մասին»:

Նորմատիվ ռեֆլեքսիվությունն առնչվում է «ճշմարտության լույսի ներքո ինքնագնահատմանը», որի վերաբերությամբ Ռ. Ալեքսին գրում է. «Այստեղ հարցը վերաբերում է նրան, թե արդյոք այն գործողությունը, որը մարդը կատարել է կամ ցանկանում է կատարել, **ճիշտ է, թե սխալ**, և արդյոք այն **կյանքը**, որը նա ապրում է կամ ապրել է, **լավ կյանք է կամ եղել է այդպիսին**»[2] (ընդգծումներն իմն են՝ հեղ.):

Այդ երկրորդ եռյակի վերջին բաղադրիչը՝ նորմատիվ ինքնագնահատումը, հանդես է գալիս իբրև մարդկային սուբյեկտայնության՝ անձնավորության (ինքնության) բարձրագույն արտահայտություն, երբ մարդը գնահատում է իր գործողությունները՝ որպես լավ կամ վատ, ճիշտ կամ սխալ:

Հենց անձ-ինքնության հայեցակարգի երկրորդ եռյակի բարձրագույն այս մակարդակում է, որ կրոնը հանդես է գալիս իբրև անձի ինքնության ձևավորման գործոն: Հավատքի միջոցով մարդը ձևավորում է սեփական բարոյական ընկալումները, նպատակները, ինքնաճանաչողության խոր շերտերը, չարի և բարու, ճիշտ և սխալ գործելու վերաբերյալ սեփական մոտեցումները:

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Alexy R.** նշվ. աշխ., էջ 90:

Հենց այս համատեքստում է, որ կրոնը դիտարկվում է ոչ միայն որպես սոցիալական ինստիտուտ (երևույթ), այլ՝ որպես էակի՝ **անձ**-ինքնության ձևավորման վրա ազդող առանցքային տարր, որով **մարդ ձևավորում է իր անձնային ինքնության նորմատիվ ռեֆլեքսիվությունը**:

«Կրոնը բավարարում է անհատի հիմնական հոգեբանական կարիքները: Շատ մարդկանց համար այն նպաստում է գոյաբանական (էքզիստենցիալ) անորոշության նվազեցմանը, նշանակություն է հաղորդում իրադարձություններին (երևույթներին), ինչպես նաև անձնական և հավաքական (սոցիալական) նպատակներին և ինքնությանը: Այն ազդում է մարդկանց հոգեկան և սոցիալական կյանքի վրա(...)»[1],- գրում են սահմանադրագետներ Ա. Սայոն և Ռ. Ուիթսը:

Այսպիսով կրոնական դավանանքի միջոցով մարդը հնարավորություն է ունենում ոչ միայն գտնել կյանքի իմաստ, այլև «ինքն իրեն ուղղորդել», «ինքն իրեն ձևավորել», «ինքն իրեն գնահատել՝ հստակ չափանիշներով» այդպիսով իսկ **«(ինքն)անձնավորվել» (սուբյեկտայնացվել)**:

Հենց այս տեսանկյունից է, որ խղճի և կրոնի ազատությունը պետք է դիտարկել որպես մարդու՝ իբրև անձի **ինքնության, ինքնագիտակցության և մարդկային արժանապատվության էական բաղադրատարր, ինչպես նաև մարդու՝ իբրև անձի սուբյեկտայնության պահպանման ու արժանապատվության բաղադրիչ**[2]:

[1] Տե՛ս **Sajó A., Uitz R.** "Freedom of Religion", in The Oxford Handbook of Comparative Constitutional Law, edited by Michel Rosenfeld and András Sajó. Oxford: Oxford University Press, 2012, էջ 912:

[2] Մարդկային արժանապատվության և անձի սուբյեկտայնացման կապի հարաբերակցության վերաբերությամբ անհրաժեշտ է շեշտադրել, որ մարդու արժանապատվությունը պահանջում է առաջին հերթին այն, որ պետությունը բոլոր մարդկանց լուրջ վերաբերվի՝ իբրև անձերի (մանրամասն տե՛ս, օրինակ, **Alexy R.** "Human Dignity and Proportionality Analysis," EJJL, v. 16, n. 3, 2015 թ., էջ 90): Իսկ մարդկանց լուրջ վերաբերվել՝ իբրև անձեր ընդունվելուց բխում է, որ պետք է բացառվի (1) մարդու՝ իբրև *սուբյեկտ* հանդես գալու *որակական հնարավորության բացառումը և (2) մարդու բացարձակ (կատարյալ) օբյեկտի վերածումը (*տե՛ս **Alexy R.** նշվ. աշխ. էջ 93: Տե՛ս նաև՝ Չեխիայի Սահմանադրական դատարանի 2009/08/18 - I. ÚS 557/09, վճռի 18-19-րդ կետերը, հասանելի ըստ՝ https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud_www/Decisions/pdf/1-557-09.pdf (վերջին մուտքը՝ 18.06.2025 թ.):

Այս առնչությամբ, օրինակ, տեղին է մեջբերել սահմանադրագետ Ա. Մանասյանի հետևյալ դատողությունը. «...սահմանադրական կարգավորումները հանգեցրին մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների առնչությամբ սկզբունքորեն նոր ընկալման, որի շրջանակներում մարդը որևէ պարագայում չի կարող դիտարկվել որպես միջոց, գործիք պետական իշխանության ձեռքում, այլ հանդես է գալիս որպես իր անկրկնելի բնության մեջ ինքնանպատակ, ինքնարժեքություն», տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ն. Այվազյան,

Այս ելակետից է բխում նաև այն , որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը ճանաչվում է իբրև հիմնարար իրավունք, որը երաշխավորված է ինչպես տարբեր երկրների (այդ թվում՝ ՀՀ) ազգային սահմանադրություններով, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդված (ընդհանուր նկատառումներ)

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի առաջին մասում սահմանվում է.

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի առնչությամբ ևս շեշտադրել է վերը ասվածին համահունչ դիրքորոշումներ՝ ընդգծելով, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքն իր կրոնական հարթությամբ այն կարևորագույն տարրերից մեկն է, **որոնք ձևավորում են հավատացյալների ինքնությունը և նրանց կյանքի ընկալումը**, սակայն այն նաև մեծագույն արժեք է աթեիստների, ագնոստիկների, թերահավատների և անհավատ մարդկանց համար: Ժողովրդավարական հասարակության անքակտելի մաս կազմող բազմակարծությունը, որը դարեր շարունակ սերմանվել է, կախված է դրանից:

Ա.Ա. Մանասյան: Ընդհ. խմբ. Գ. Դանիելյանի, Եր., Հայրապետ հրատ., 2015, էջ 112: Այլ՝ համաչափության սկզբունքի համատեքստում, օրինակ, Ք. Ալեքսանյանը հարցի առնչությամբ նշել է. «...մարդկային արժանապատվությունը գործում է որպես «սահմանափակումների անհաղթահարելի սահմանափակում», որը համաչափության սկզբունքի համարժեքության գնահատման փուլում բացառում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների այնպիսի սահմանափակումները, **որոնց դեպքում մարդը պետության կողմից օգտագործվում է որպես միջոց, գործիք**» (ընդգծումը՝ հեղ.), տե՛ս Ալեքսանյան Ք., Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը: Պետություն և իրավունք, 92 No. 1 (2022), էջ 45:

Այդ ազատությունն առաջացնում է, *inter alia,* կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու և կրոն դավանելու կամ չդավանելու ազատություն[1]:

3. Խղճի և կրոնի ազատության ներքին (forum internum) և արտաքին (forum externum) դրսևորումները ՄԻԵԿ 9-րդ հոդվածի համատեքստում

ՄԻԵԿ 9-րդ հոդվածով սահմանված խղճի և կրոնի ազատությունն առաջին հերթին ենթադրում է, որ անձն ունենա *իր մտքում (ուղեղում) (իր ներսում) որոշակի կրոնի հարելու, կրոնական մոտեցումները կիսելու, իր մեջ, իր ներսում մարդու և աշխարհի գոյաբանական (էքզիստենցիալ) հարցերի առնչությամբ սեփական պատկերացումները ձևավորելու, ըստ այդմ՝ սեփական աշխարհայացքը ըստ իր կրոնական համոզմունքներին համապատասխան կազմավորելու իրավունք: Խղճի և կրոնի ազատության այս ասպեկտը, ելնելով այն հանգամանքից, որ իրականացվում է անձի ներսում (մտքում, ուղեղում) կարող է պայմանականորեն[2] դիտարկվել իբրև այս ազատության ներքին ասպեկտ (forum internum):*

Սակայն, որպեսզի անձը կարողանա իրացնել ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատությունը, միայն այդ ներքին ասպեկտն այդ ազատության իրացման համար **«բավարար չէ»:**

Անհրաժեշտ է, որ անձն ունենա նաև իր համոզմունքներն ու կրոնական հայացքներն ազատորեն **արտահայտելու ազատություն,** որն էլ հանդիսանում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի արդեն **արտաքին ասպեկտը (forum externum):**

Կրոնական տարատեսակ արարողություններին, ծեսերին մասնակցությունը, կրոնական տարատեսակ պաշտամունքները կրոններում ունենում են կենտրոնական և կարևորագույն նշանակություն ունեցող դեր[3]: Այս առնչությամբ է, որ անձի՝ իր դավանած կրոնական հայացքներն արտահայտելու ազատությունը ստանում է առանցքային կարևոր դեր, ուստիև պաշտպանվում

[1] Տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ][*S.A.S. v. France* [GC]], թիվ 43835/11, § 124, ՄԻԵԴ 2014 և *Իզեթին Դողանը և այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*İzzettin Doğan and Others v. Turkey* [GC]], թիվ 62649/10, § 103, ՄԻԵԴ 2016):

[2] Թեև կարող են գրականության մեջ տրվել որոշակի ոչ պայմանական սահմանումներ, սակայն, գործնականում այս ազատության թե՛ ներքին և թե՛ արտաքին ասպեկտների սահմանը շատ հաճախ կա՛մ դժվար է լինում, կա՛մ, ըստ էության, անհնար է լինում զանազանել, այդ իսկ պատճառով բաժանումն իրականցվում է պայմանականորեն:

[3] Այս առնչությամբ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ. «...«կրոնական ծեսերի կատարումը» կենտրոնական նշանակություն ունի յուրաքանչյուր հավատքի և յուրաքանչյուր համոզմունքի համար, ապա այս հասկացությունը՝ իր պատմական բովանդակության համատեքստում, **պահանջում է ընդլայնված մեկնաբանություն**» (ընդգծումը՝ հեղ.), մանրամասն տե՛ս Избранные решения Федерального Конституционного Суда Германии / Под ред. Ю. Швабе. - Москва: Инфотропик Медиа, 2018, էջ 238:

թե՛ ազգային, թե՛ միջազգային տարատեսակ փաստաթղթերով: Այսպես՝ անձի կողմից իր կրոնի **դավանանքի ազատության արտահայտությունը** կարող է իրացվել ՄԻԵԿ 9-րդ հոդվածում ամրագրված ձևերով՝ «**քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու**» ազատությամբ:

ՄԻԵԴ-ը, Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով կայացրած վճռում անդրադառնալով դավանանքի ներքին և արտաքին ասպեկտների վերը նշված հարցերին, շեշտել է, որ. «Թեև կրոնական ազատությունն առաջին հերթին անձնական խղճի հարց է, սակայն այն նաև ենթադրում է սեփական կրոնը ինչպես միանձնյա՝ մասնավոր կերպով, այնպես էլ այլոց հետ համատեղ՝ հրապարակավ և այն անձանց շրջանում, ով հավատը կիսում է, **դավանելու ազատություն**: 9-րդ հոդվածը թվարկում է **տարբեր ձևեր, որոնցով կրոնի կամ համոզմունքների դավանումը կարող է դրսևորվել, այն է՝ քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով**» (ընդգծումներն իմն են՝ հեղ.)[1]:

4. Կրոնի (և/կամ համոզմունքի) արտահայտության առանցքային մաս հանդիսացող արարք versus կրոնով կամ համոզմունքով ներշնչմամբ, այդ շարժառիթներով կատարված արարք

Ինչպես նշվեց, մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը ենթադրում է իր կրոնական համոզմունքները դավանելու, դրանք արտահայտելու ազատություն՝ որոշակի արարքների կատարման ձևով:

Սակայն, մյուս կողմից, սա ենթադրում է նաև որոշակի անհրաժեշտ հավասարակշռություն. ժողովրդավար հասարակությունում մտքի, խղճի, կրոնի ազատության հատկապես արտաքին կողմը՝ դավանանքի արտահայտման անձանց ազատությունը, ողջամտորեն կարող է որոշակի իրավաչափ սահմանափակման ենթարկվել և բացարձակ չէ :

ՄԻԵԴ-ը այս առնչությամբ բազմիցս է շեշտադրել է, որ ժողովրդավարական այն հասարակություններում, որտեղ մի շարք կրոններ գոյակցում են միևնույն բնակչության շրջանում, *կարող է անհրաժեշտ լինել սահմանափակել կրոնը կամ համոզմունքները դավանելու սեփական ազատությունը, որպեսզի հաշտեցվեն տարբեր խմբերի շահերը և ապահովվեն, որ յուրաքանչյուր անձի համոզմունքները լինեն հարգված* [2]:

[1] Տե՛ս *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ][*S.A.S. v. France* [GC]], թիվ 43835/11, §125, ՄԻԵԴ 2014:

[2] Տե՛ս, օրինակ, *Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի*, 25 մայիս 1993 թ., § 33:

Այս առումով խիստ **կարևոր է** (1) կրոնի կամ համոզմունքի արտահայտման համար **առանցքային, էական նշանակություն** ունեցող ակտերը (արարքները) տարբերակել (2) այն ակտերից (արարքներից), որոնք կրոնով կամ համոզմունքով սոսկ **ներշնչված** են եղել կամ կատարվել են՝ **սոսկ խրախուսված** լինելով կրոնից և/կամ համոզմունքից ակտերից (արարքներից):

Ս.Ա.Ս. ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ը նկատել է, որ արարքը, որը **ոգեշնչված է, մղված կամ ազդված է** որևէ կրոնից կամ համոզմունքից, 9-րդ հոդվածի իմաստով որպես **«արտահայտություն» դիտարկվելու** համար **պետք է սերտորեն կապ ունենա տվյալ կրոնի կամ համոզմունքի հետ:** Ըստ ՄԻԵԴ-ի՝ այդպիսի օրինակ կարող է ծառայել երկրպագության կամ նվիրվածության այն ակտը (արարքը), որը տվյալ կրոնի **պրակտիկայի ընդունված ձև է**: Սակայն կրոնի կամ համոզմունքի «դրսևորումը» չի սահմանափակվում միայն նման գործողություններով. տվյալ գործողության և հիմքում ընկած համոզմունքի միջև բավարար սերտ և անմիջական կապի առկայությունը **պետք է գնահատվի յուրաքանչյուր գործով առանձին՝ փաստերի հիման վրա**[1]:

Այս առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ունի կայացած նախադեպային պրակտիկա, ըստ որի՝ ՄԻԵԿ 9-րդ հոդվածը չի պաշտպանում ցանկացած գործողություն, **որի դրդապատճառը կամ ոգեշնչման աղբյուրն է եղել կրոնը կամ համոզմունքը և միշտ չէ, որ երաշխավորում է այնպիսի մի իրավունք, համաձայն որի անձը հնարավորություն ունենա հանրային տիրույթում իրեն այն կերպ դրսևորել, որը պայմանավորված լինի իր կրոնով կամ համոզմունքներով**[2]:

Եվ հակառակը, այն դեպքերում, երբ կոնկրետ ակտի (արարքի) և կրոնական դավանանքի միջև ուղղակի կապ կա **և** այդ ակտը (արարքը) **բխում է** դավանած կրոնից (կամ համոզմունքներից)՝ լինելով տվյալ կրոնի (համոզմունքի) առանցքային տարրը, ապա այդ դեպքերում արդեն **կարող է խոսք գնալ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման և/կամ դրա սահմանափակման կամ խախտման մասին:**

Այս առումով էլ, սակայն, հասկանալու համար՝ իրավունքի խախտում առկա է, թե ոչ, պետք է ելնել գործի կոնկրետ հանգամանքներից (in concreto):

[1] Մանրամասն տե՛ս *Ս.Ա.Ս.-ն ընդդեմ Ֆրանսիայի* վճիռը, § 55:

[2] Տե՛ս, օրինակ, ՄԻԵԴ՝ *Լեյլա Շահինը ընդդեմ Թուրքիայի* [Մ.Պ.], թիվ 44774/98, 10 նոյեմբերի 2005 թ. վճիռը, §§ 105, 121:

5. Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի versus Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի վճիռները (կրոնական վայր մուտքի արգելք՝ առանց փաստացի կապի, versus խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանափակում՝ բնակության վայրում):

Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի գործով Դիմումատուն՝ Ջոզեֆիդեսը, ՄԻԵԴ բողոք էր ներկայացրել, ի թիվս այլնի նաև նշելով, որ թուրքական իշխանությունների կողմից իրեն Կիպրոսի հյուսիսային օկուպացված մաս մուտք գործելու արգելումը խախտում է ՄԻԵԿ 9-րդ հոդվածով երաշխավորված «կրոնի ազատության իրավունքը», քանի որ դրա բերումով խոչընդոտվում է իր՝ «**կրոնական պրակտիկայի ավանդական վայրեր**՝ եկեղեցիներ, վանքեր այցելելու իրավունքը»:

ՄԻԵԴ-ը, սակայն, կասկածի տակ չդնելով այն հանգամանքը, որ վանքեր, եկեղեցիներ այցելությունը ընդգրկվում է կրոնի ազատության դրսևորման ընդունելի ձևերի մեջ, այնուամենայնիվ, ելնելով այս գործի *այն մասնավոր հանգամանքներից*, որ դիմողը **մշտապես ապրել է** կղզու հարավային հատվածում և որ հյուսիսային մասում ունի միայն մշակովի հողատարածքներ, **որոնք նա ժառանգել է իր ծնողներից**, ինչպես նաև այն, որ 1974 թվականի ռազմական գործողությունների հետևանքով ցանկացած հույն-կիպրացու համար է այդ տարածք մուտքն անհնար եղել, եզրակացրել է, որ թուրքական բանակի կողմից **դիմողին բաժանարար գիծը հատելու արգելքը չի խոչընդոտում նրան իրականացնելու 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները *կղզու հարավային մասում, որտեղ նա միշտ ապրել է***:

Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ը որևէ միջամտություն չի հայտնաբերել դիմողի կրոնի ազատության իրավունքին՝ դիմումն այդ մասով համարելով ակնհայտ անհիմն[1]:

Մեկ այլ դեպքում սակայն՝ եկեղեցիներ, վանքեր այցելելու իրավունքի սահմանափակման հետ կապված այլ հարցով, ելնելով գործի հանգամանքների առանձնահատկություններից, ՄԻԵԴ-ը կայացրել է տրամագծորեն այլ որոշում:

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի գործով[2] Դիմող կառավարությունը պնդել է, որ Կիպրոսի հյուսիսում՝ օկուպացված Կարպասի շրջանում բնակվող հույն-կիպրացիների ապրելու պայմանները և դրանց հետ կապված սահմանափա-

[1] Տե՛ս *Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 21887/93, (ՄԻԵԴ որոշում ընդունելիության վերաբերյալ), 24.08.1999 թ:

[2] Տե՛ս *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 25781/94, ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռ, 2001 թ. մայիսի 10, ԵԴՄԻ 2001-IV:

կումները խախտում են վերջիններիս կրոնի ազատության իրավունքը, ի մասնավորի այն, որ վերջիններիս վրա դրված **տեղաշարժի ազատության սահմանափակումները** խոչընդոտել են հույն-կիպրացիների մուտքը դեպի իրենց կրոնական պաշտամունքի վայրեր (այդ թվում՝ Ապոստոլոս Անդրեաս վանք)[1]:

Ըստ Դիմող կառավարության՝ նշյալ սահմանափակումները խոչընդոտել են հունական ուղղափառ կրոնական արարողությունների բնականոն և կանոնավոր կազմակերպմանը, ըստ այդմ՝ նաև խախտել օկուպացված Կարպասի շրջանում բնակվող հույն-կիպրացիների կրոնի ազատության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է, որ այդ սահմանափակումները (Ապոստոլոս Անդրեաս վանք մուտքի սահմանափակումը, գյուղերից դուրս կրոնական արարողությունների մասնակցության և լրացուցիչ քահանաների նշանակման մերժումը) հանդիսացել է ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը նաև նշել է, որ բողոքարկվող միջոցառումների վերաբերյալ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ գոյություն չեն ունեցել:

ՄԻԵԴ-ն ընդունել է հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը, նշելով, որ հույն-կիպրացի բնակչության՝ **տվյալ ժամանակահատվածում նրանց տեղաշարժի ազատության վրա դրված սահմանափակումները զգալիորեն սահմանափակել են նրանց կրոնական համոզմունքները պահպանելու կարողությունը, մասնավորապես՝ դեպի իրենց գյուղերից դուրս գտնվող երկրպագության վայրեր մուտք գործելու և կրոնական կյանքի այլ ասպեկտներին մասնակցելու հնարավորությունը**: Արդյունքում ՄԻԵԴ-ը արձանագրել է ՄԻԵԿ 9-րդ հոդվածի խախտում:

Ինչպես ակնհայտ է, այս գործը տարբերվում է նախորդից՝ **Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի գործից, մի քանի առանցքային առանձնահատկություններով, որոնք անհրաժեշտաբար պարտադիր է հաշվի առնել, համանման դեպքերում ՄԻԵԿ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտման մասին խոսելիս:**

Մասնավորապես՝ «Ջոզեֆիդեսն ընդդեմ Թուրքիայի» գործով դիմողը բողոքել է, որ իրեն արգելվել է մուտք գործել Կիպրոսի հյուսիսային՝ օկուպացված մաս՝ այցելելու իր կրոնական պաշտամունքի ավանդական վայրեր (եկեղեցիներ, վանքեր)՝ լինելով **կղզու հարավային մասի մշտական**

[1] Ի լրումն, սույն գործով առանձնահատկություն է եղել նաև այն, որ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀԿԹՀ) իշխանությունները հավանություն չեն տվել լրացուցիչ քահանաների նշանակմանը տարածաշրջանում, ինչի հետևանքով ողջ Կարպասի համար եղել է ընդամենը մեկ քահանա:

բնակիչ, ում իր դիմումում ներկայացված պաշտամունքի վայրերի հետ փաստացի[1] «կապը» արտահայտվում էր «ծնողներից ժառանգած մշակովի հողատարածքներ» ունենալով:

Երկրորդ գործով, փաստերի դասավորվածությունը բոլորովին այլ էր. այստեղ արդեն «Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» գործում 9-րդ հոդվածի խախտումը վերաբերում էր **Կիպրոսի հյուսիսային՝ օկուպացված Կարպասի շրջանում փաստացիորեն «արգելափակված» վիճակում ապրող հույն-կիպրացի բնակչությանը, ովքեր բնակվել ու բնակվում էին այդ վայրերում և ունեին «օբյեկտիվ» կապ կրոնական այդ սրբավայրերի հետ:**

6. Հայկական համատեքստը՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ներկայիս իրադրության լույսի ներքո

ա. Ընդհանուր դրույթներ

2020 թ. 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2023 թ. Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացված ռազմական գործողությունների հետևանքով ԼՂ հարյուր հազարից ավել բնակչությունը, որի գերակշիռ, մեծագույն հատվածը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդներ են, բռնի տեղահանության բերումով զրկված է իր մերձավորների գերեզմաններ այցելելու, այնտեղ կրոնական-ծիսական կարգերով պայմանավորված արարողություններ իրականացնելու հնարավորությունից:

Այս առնչությամբ կարևոր է ընդգծել, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին դիտարկում է հանգուցյալների **գերեզմաններ այցելությունը, խնկարկումը** որպես կարևոր և առանձնահատուկ ծիսական արարողակարգ՝ նվիրված հանգուցյալների հիշատակին:

Ողջ տարվա ընթացքում այդ ծիսական արարողակարգերը **պարտադիր են** Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցում ընդգրկված հինգ Տաղավար (կարևորագույն) տոներին հաջորդող օրերին: Ավելին, հայկական եկեղեցու հետևորդների շրջանում ընդունված է նաև հարազատների շիրիմներին այցելել նրանց ծննդյան և մահվան օրերին, նաև քահանաների կամ հոգևոր սպասավորների հետ՝ հոգեհանգստի կարգ կատարելու համար:

բ. Գերեզմաններում կրոնական-ծիսական կարգերի անցկացումը՝ որպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կրոնական ուսմունքի առանցքային բաղադրիչ

[1] Խոսքը, բնականաբար, ոչ թե «հոգևոր և աներևութական» սուբյեկտիվ կապի մասին է, այլ՝ փաստացի այդ վայրերի վանքերի, եկեղեցիների և դիմումատուի փաստացի օբյեկտիվ կապի:

Գերեզմաններում կրոնական-ծիսական կարգերի իրականացումը հայկական կրոնի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կրոնական-ծիսական արարողակարգերի **առանցքային, կարևոր «ավանդական պրակտիկայի մաս է»:**

Հայկական աստվածաբանական գրականության մեջ այս առնչությամբ նշվում է, որ.

«Ըստ քրիստոնեական փրկաբանական ըմբռնման՝ գերեզմանը մահացածի մշտական և անփոփոխ **հանգրվանը չէ,** այլ՝ **նախնական հանգստարանը:** Գերեզմանի հանգիստը մինչև հարություն ժամանակավոր քուն է, իսկ մահացողը՝ **ննջեցյալ և ոչ թե մեռյալ**: Դրա հետ է կապված փրկաբանական այն գաղափարը, որ գերեզմանն ինչ-որ ժամանակ **հարության վայր է դառնում (...) Գերեզմանօրհնեքի նպատակն է հիշել հանգուցյալներին և ավետել նրանց հարության հույսը»:**

(...)

Հայ եկեղեցում հանգուցյալների հիշատակումը կատարվում է հոգեհանգստի միջոցով, ինչպես նաև Տաղավար տոներին հաջորդող գերեզմանօրհնեքի ժամանակ: (...) Քրիստոնեական եկեղեցին ուսուցանում է կենդանի և ննջեցյալ մարդկանց միասնությունը, քրիստոնեական կյանքի սկիզբն ու վերջը շաղկապվում են միմյանց: Հայ եկեղեցու վարդապետության համաձայն, մեռելները **մահից հետո սպասում են Վերջին դատաստանի օրվան**: Հոգեհանգստյան արարողությունն էլ այս իմաստով է կատարվում:

Այն երախտագիտության **արտահայտություն է, ինչպես նաև աղոթք՝ ննջեցյալների համար: Ողջերը, հիշելով նրանց, հոգեհանգստի ընթացքում ողորմություն են հայցում Աստծուց՝ ննջեցյալների հոգիների համար»**[1] (ընդգծումներն իմն են՝ հեղ.):

Ինչպես ակնհայտ է դառնում մեջբերված հատվածից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների համար իրենց հարազատների գերեզմաններ այցելություններն ունեն **կրոնական-ծիսական** արարողակարգերում կարևորագույն նշանակություն, այդպիսի կրոնական արարողությունները հանդես են գալիս իբրև հայկական կրոնի արարողակարգերի առանցքային և կարևորագույն մաս (հատկանիշ), ըստ այդմ՝ հանդիսանում են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների **հոգևոր կյանքի դրսևորման անբաժան մաս**:

[1] Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի գիտխմբագրական խորհուրդ՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբ. տնօրեն) և ուրիշներ: Եր., Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002 թ., էջ 595:

c. Բռնի տեղահանությունը և վերադարձի անհնարինությունը՝ որպես գերեզման այցելելու իրավունքի համակարգային խոչընդոտ

Վերը ասվածի համատեքստում կարևոր է ընդծգել, որ ԼՂ-ում բնակվող խաղաղ բնակչությունը ենթարկվել է բռնի տեղահանման, այսինք՝ ԼՂ-ում բնակվող հայերը ոչ թե կամավոր կերպով են լքել իրենց ծննդավայրը, և որպես հետևանք՝ կամավոր կերպով հրաժարվել իրենց մերձավոր ազգականների գերեզմաններ այցելելուց, այլ նրանք լքել են ԼՂ-ն իրենց կյանքին վտանգի իրական սպառնալիքի առկայության պայմաններում, ուստիև զրկվել են ԼՂ-ում գտնվող գերեզմաններ այցելելու իրավունքից՝ իրենց կամքից անկախ՝ հարկադրանքի պայմաններում:

Բացի այդ, ԼՂ խաղաղ բնակչությանը բռնի տեղահանության ենթարկած Ադրբեջանի Հանրապետությունը անգամ 2020 թ. պատերազմից և 2023 թ. ռազմական գործողություններից հետո՝ տևական ժամանակ որևէ կերպ չի ապահովում ԼՂ բնիկ ազգաբնակչության՝ էթնիկ հայերի վերադարձի հնարավորությունը իրենց բնակավայրեր, ավելին՝ այդպիսին ապահովելու դեպքում անգամ չկա որևէ երաշխիք վերջիններիս **ապահով վերադարձի:** Արդյունքում՝ ԼՂ էթնիկ հայերը, որոնք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդ են, ենթարկված լինելով բռնի տեղահանության և միաժամանակ չունենալով վերադարձի իրական և անվտանգ հնարավորություն, իրենց կամքից անկախ, այդ թվում նաև՝ ՀՀ-ի հետ փակ սահմանների բերումով տևական ժամանակ է զրկված են ԼՂ-ում գտնվող իրենց մերձավորների գերեզմաններ այցելելու որևէ հնարավորությունից:

7. Եզրահանգումներ

Ողջ վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ հիմք ընդունելով ՄԻԵԴ մեջբերված նախադեպային իրավունքը, և հաշվի առնելով այս առումով առանցքային այն հանգամանքները, որ

1) ԼՂ-ից բռնի տեղահանության է ենթարկվել *բնիկ հայ բնակչությունը, որը սերնդեսերունդ և հարյուրամյակներով է ապրել այնտեղ.*

2) բռնի տեղահանության ենթարկած անձինք մինչ 2020 թ. պատերազմն ու 2023 թ. ռազմական գործողություններն *իրենց ամբողջ կյանքի ընթացքում ունեցել են հասանելիություն իրեն մերձավորների գերեզմաններին.*

3) եթե անգամ ԼՂ-ից բռնի տեղահանված անձի կրոնի ազատության իրավունքի՝ կրոնական պաշտամունքի վայրեր այցելելու դրսևորման ձևը, կարող է արտահայտվել նաև ՀՀ-ում գտնվող եկեղեցիներ և վանքեր այցելելով, ապա արդեն նույնը չի կարող ասվել *կրոնի ազատության*

իրավունքից բխող՝ գերեզմաններ այցելելու իրավունքի մասին. ԼՂ-ում բնակված անձինք չունեն ֆիզիկապես որևէ հասանելիություն գերեզմաններին, ընդ որում՝ այդ հասանելիության բացակայությունն իր հերթին անորոշ ժամկետով է.

4) ԱՀ գործողությունների հետևանքով և նրա պատասխանատվությամբ ԼՂ բնակչությանը, ի թիվս այլնի, նաև գերեզման այցելելու իրավունքից զրկումը *չունի (և չի կարող հետապնդել) որևէ իրավաչափ նպատակ,*

ապա՝ վերջիններս արդեն տևական ժամանակ է, ինչ զրկված են դավանած կրոնից բխող և իրենց կրոնական-ծիսական կարգի առանցքային մաս համարվող՝ Տաղավար տոներից հետո գերեզմանօրհնեքի, հոգեհանգստի կարգի, գերեզմանի խնկարկման կրոնական-ծիսական արարողակարգեր իրականացնելու հնարավորությունից՝ առանց ՄԻԵԿ 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ իրավաչափ հիմքի:

Ուստիև պետք է պնդել, որ 2020 թ. 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2023 թ. ռազմական ***գործողությունների հետևանքով արդեն տևական ժամանակ է*** *(շուրջ երկուսից-հինգ տարի (կախված բռնի տեղահանված բնակչի բնակության նախորդ վայրից)), ինչ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետևորդների, որոնց «կրոնական պրակտիկայի առանցքային մաս է» գերեզմաններ այցելելը և այնտեղ կրոնական-ծիսական կարգերի իրականացումը, ԼՂ-ից բռնի տեղահանվելու և իրենց բնակավայրեր անարգել և անվտանգ վերադառնալու իրական հնարավորության բացակայության բերումով ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց՝ ՄԻԵԿ 9-րդ հոդվածով երաշխավորված՝ կրոնի ազատության իրավունքը ենթարկվում է* ***շարունակական խախտման:***

Օգտագործված գրականության ցանկ

1. **Alexy R.** (2015). Human Dignity and Proportionality Analysis, Espaço Jurídico Journal of Law – EJJL, vol. 16, no. 3.

2. **Sajó A. & Uitz R.** (2012). Freedom of Religion, in: Michel Rosenfeld & András Sajó (Eds.), The Oxford Handbook of Comparative Constitutional Law. Oxford: Oxford University Press.

3. **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հե-

տազոտություն: Ընդհ. խմբ.՝ Գ. Դանիելյան: Երևան, 2015, Հայրապետ հրատարակչություն:

4. **Ալեքսանյան Ք.** (2022). Արժանապատվության և համաչափության սկզբունքի հարաբերակցությունը: Պետություն և իրավունք, թիվ 92(1):

5. Европейский суд по правам человека (ЕСПЧ), *S.A.S. v. France* [GC], no. 43835/11, Judgment of 1 July 2014.

6. ՄԻԵԴ, *Izzettin Doğan and Others v. Turkey* [GC], no. 62649/10, Judgment of 26 April 2016:

7. ՄԻԵԴ, *Leyla Şahin v. Turkey* [GC], no. 44774/98, Judgment of 10 November 2005:

8. ՄԻԵԴ, *Kokkinakis v. Greece*, no. 14307/88, Judgment of 25 May 1993:

9. ՄԻԵԴ, *Cipriano Josephides v. Turkey*, no. 21887/93, Decision on Admissibility, 24 August 1999:

10. ՄԻԵԴ, *Cyprus v. Turkey* [GC], no. 25781/94, Judgment of 10 May 2001, ECHR 2001-IV:

11. Избранные решения Федерального Конституционного Суда Германии / Под ред. Ю. Швабе. - Москва: Инфотропик Медиа, 2018, էջ 238:

12. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան: Գիտ. խմբագրական խորհուրդ՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբ. տնօրեն) և ուրիշներ: Երևան: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002:

ЛИШЕНИЕ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕМЕЩЁННЫХ ИЗ НАГОРНОГО КАРАБАХА ЛИЦ ПРАВА ПОСЕЩАТЬ МОГИЛЫ СВОИХ РОДСТВЕННИКОВ, НАХОДЯЩИЕСЯ В НК, КАК ПРОДОЛЖАЮЩЕЕСЯ НАРУШЕНИЕ ПРАВА НА СВОБОДУ МЫСЛИ, СОВЕСТИ И РЕЛИГИИ

Аннотация

Статья посвящена вопросу продолжающегося нарушения права на свободу мысли, совести и религии лиц, насильственно перемещённых из Нагорного Карабаха в результате блокады 2022 г. и военного нападения в сентябре 2023 г. Нарушение рассматривается в контексте невозможности для перемещённого населения посещать могилы своих родственников, находящиеся в НК, и проводить там религиозные и обрядовые церемонии. В статье подчёркивается ключевая роль религии в формировании человека как личности (субъекта), в развитии нравственных представлений и самосознания.

Анализируется юриспруденция Европейского суда по правам человека (ЕСПЧ) относительно статьи 9 Европейской конвенции о защите прав человека и основных свобод (ЕКПЧ), уделяя особое внимание внутреннему (forum internum) и внешнему (forum externum) аспектам свободы религии. Отмечается, что участие в религиозных обрядах и церемониях является ключевой формой выражения религиозных убеждений. Разграничиваются действия, являющиеся неотъемлемой частью религиозного выражения, и действия, лишь вдохновлённые религией, опираясь на прецедентную практику ЕСПЧ.

Подчёркивается, что проживавшие в НК армяне, являясь последователями Армянской Апостольской Святой Церкви, в результате насильственного перемещения лишены возможности посещать могилы своих родственников и совершать там религиозные обряды, что в свете практики ЕСПЧ квалифицируется как продолжающееся нарушение права, гарантированного статьёй 9 ЕКПЧ.

Ключевые слова: Нагорный Карабах, насильственно перемещённые лица, свобода мысли, совести и религии, статья 9 Европейской конвенции о правах человека, право посещать могилы, религиозные обряды, свобода выражения религии, forum internum, forum externum, человеческое достоинство, духовные права.

DEPRIVATION OF THE RIGHT OF PERSONS FORCIBLY DISPLACED FROM NAGORNO-KARABAKH (NK) TO VISIT THE GRAVES OF THEIR RELATIVES LOCATED IN NK AS A CONTINUING VIOLATION OF THE RIGHT TO FREEDOM OF THOUGHT, CONSCIENCE, AND RELIGION

Annotation

The article addresses the continuous violation of the right to freedom of thought, conscience, and religion of persons forcibly displaced from Nagorno-Karabakh as a result of the 2022 blockade and the September 2023 military attack.

The violation is examined in the context of the displaced population's inability to visit the graves of their relatives in Nagorno-Karabakh and perform religious and ritual ceremonies there. The article highlights the crucial role of religion in shaping the individual as a person (subject), particularly in the development of moral perceptions and self-awareness.

It analyzes the case law of the European Court of Human Rights (ECtHR) concerning Article 9 of the European Convention on Human Rights (ECHR), paying special attention to the internal (forum internum) and external (forum externum) dimensions of freedom of religion. It is emphasized that participation in religious rites and ceremonies is a central form of expressing religious beliefs. The article distinguishes between acts that constitute an essential part of religious expression and those merely inspired by religion, relying on ECtHR precedent.
It is stressed that the Armenian population of Nagorno-Karabakh, as followers of the Armenian Apostolic Church, has been deprived - due to forced displacement - of the opportunity to visit the graves of their relatives and perform religious rites there. In light of ECtHR jurisprudence, this is substantiated as a continuing violation of the right guaranteed by Article 9 of the ECHR.
Keywords: Nagorno-Karabakh, forcibly displaced persons, freedom of thought, conscience and religion, Article 9 of the European Convention on Human Rights, right to visit graves, religious rituals, freedom of manifestation of religion, forum internum, forum externum, human dignity, spiritual rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.09.2025 թ., տրվել է գրախոսության 09.09.2025 թ., ընդունվել է տպագրության 19.09.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-89

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ
Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետազոտող դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամփոփագիր

Անձնական տվյալներն իրապես համարվում են արդի թվային տնտեսության հիմնասյունը: Սակայն որպեսզի անձնական տվյալների մշակումը համարվի օրինական, այն, նախևառաջ, պետք է իրականացվի համապատասխան իրավական հիմքի հիման վրա: Տնտեսվարող սուբյեկտները, իրենց հաճախորդների անձնական տվյալները մշակելիս, որպես կանոն, հիմնվում են վերջիններիս համաձայնության վրա:

Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ-ում անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը հարաբերականորեն նոր է, իսկ օրենսդրական նորմերը հաճախ ձևակերպված են ոչ թե հստակ կարգադրագրերի, այլ ստանդարտների տեսքով: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտներն իրենց հաճախորդների անձնական տվյալները մշակում և դրա համար վերջիններիս համաձայնությունը ստանում են՝ ելնելով սեփական պատկերացումներից և ձեռնարկատիրական նկատառումներից, որի պարագայում ֆիզիկական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դառնում է խնդրահարույց:

Հաշվի առնելով հիշյալ խնդիրները՝ սույն հոդվածը կոչված է ուսումնասիրելու համաձայնության՝ որպես անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքի վավերապայմանները՝ հիմնվելով ինչպես ՀՀ իրավակարգավորումների, դատական և իրավակիրառ պրակտիկայի, այնպես էլ՝ ոլորտում առկա լավագույն ստանդարտների, մասնավորապես՝ ԵՄ օրենսդրության և «փափուկ իրավունքի» վրա:

Հիմնաբառեր. անձնական տվյալ, համաձայնություն, տվյալներ մշակող, տվյալների սուբյեկտ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թվայնացման արդի դարաշրջանում տնտեսությունը հիմնված է մեծածավալ տվյալների մշակման վրա, որոնց մաս են կազմում անձնական տվյալները: Անձի մասին մանրամասն տեղեկությունների մշակումը մի կողմից թույլ է տալիս ներկայացնել թիրախավորված գովազդներ, մատուցել անձի նախընտրություններից բխող ծառայություններ, մյուս կողմից, անհրաժեշտ է տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար: Մասնավորապես, անձնական տվյալների մշակումը թույլ է տալիս ստուգել անձի վարկարժանությունը, գնահատել վերջինիս կողմից պարտավորությունների կատարման հավանականությունը և այլն:

Հաշվի առնելով, որ անձի վերաբերյալ տեղեկությունների չհիմնավորված և ոչ թափանցիկ օգտագործումը կարող է հանգեցնել վերջինիս մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման, ինչպես նաև անձնական տվյալների նկատմամբ հսկողության կորստի, ժամանակակից իրավական համակարգերը որդեգրել են այն մոտեցումը, որ անձնական տվյալները կարող են մշակվել, եթե առկա է դա անելու համար համապատասխան իրավական հիմք: ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով, մասնավորապես, ամրագրվեց, որ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, **անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:**

Տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց հաճախորդների անձնական տվյալները մշակելը, որպես կանոն, հիմնված է վերջիններիս համաձայնության վրա: Մասնավորապես, ապահովագրական պայմանագիր կնքելու, մարքեթինգային ծառայություններ մատուցելու, վարկ տրամադրելու նպատակով տնտեսվարող սուբյեկտները մշակում են անձանց կյանքի տարբեր ասպեկտների վերաբերյալ տեղեկություններ՝ ստանալով վերջիններիս համաձայնությունը: Սակայն խնդիրն այն է, որ երկրում անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը հարաբերականորեն նոր է, իսկ ոլորտում առկա «փափուկ իրավունքը» բավականաչափ ձևավորված չէ: Բացի այդ, անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական նորմերը հաճախ ձևակերպված են ոչ թե հստակ կարգադրագրերի, այլ ստանդարտների տեսքով: Արդյունքում ՀՀ-ում համաձայնությունը, որպես անձնական տվյալների մշակման հիմք, հաճախ կիրառվում է տնտեսվարող սուբյեկտի սեփական պատկերացումներից և ձեռ-

նարկատիրական նկատառումներից ելնելով, որի պարագայում ֆիզիկական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը մղվում է երկրորդական պլան:

Հաշվի առնելով հիշյալ խնդիրները՝ սույն հոդվածը կոչված է **ուսումնասիրելու համաձայնության՝ որպես անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքի վավերապայմանները՝** հիմնվելով ինչպես ՀՀ իրավակարգավորումների, դատական և իրավակիրառ պրակտիկայի, այնպես էլ՝ ոլորտում առկա լավագույն ստանդարտների, մասնավորապես՝ ԵՄ օրենսդրության և «փափուկ իրավունքի» վրա: Հոդվածի *տեսական նշանակությունը* տվյալներ մշակելու համաձայնության հատկանիշների, վերջինիս տրամադրելու առանձնահատկությունների վերաբերյալ իրավահամեմատական ուսումնասիրության իրականացումն է: *Գործնական տեսանկյունից* հոդվածում առկա եզրակացություններն ու վերլուծությունները կարող են ունենալ ուղեցուցային նշանակություն՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից անձնական տվյալները մշակելու համաձայնությունը ստանալու համար:

Ընդհանուր դրույթներ

ՀՀ-ում անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը սահմանված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ԱՏՊ օրենք) 8-րդ հոդվածով, որի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե դրանք մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, կամ մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից: Վերոնշյալից բխում է, որ անձնական տվյալների մշակումը կբավարարի իրավական հիմքի պահանջը, եթե մշակումն իրականացվի կա՛մ **անձնական տվյալի սուբյեկտի համաձայնությամբ**, կա՛մ համաձայնության բացակայության դեպքում **մշակումը նախատեսված լինի օրենքով**, կա՛մ **մշակվող տվյալները ձեռք բերվեն անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից**:

Ինչպես նշվեց, անձնական տվյալների մշակման առաջին **հիմքը օրենքով նախատեսված լինելն է:** Վերջինս ենթադրում է, որ անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե դա թույլատրված է օրենքով կամ էլ օրենքով սահմանված է անձնական տվյալներ մշակելու պարտավորություն: Օրինակ, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը *թույլատրում է* բանկերին իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ

ներդրումների վերադարձելիությունը ապահովելու, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով այլ բանկերի հետ փոխանակել միմյանց հաճախորդների վերաբերյալ անձնական տվյալներ: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով վերջինիս *անձնական տվյալներ մշակելու պարտավորություն*:

Անձնական տվյալներ մշակելու մյուս իրավական հիմքը **մշակվող տվյալների հանրամատչելիությունն է:** Հիշյալ հիմքով անձնական տվյալներ կարող են մշակվել, օրինակ, մարքեթինգային կազմակերպությունների կողմից, երբ վերջիններս, ուսումնասիրելով անձանց վերաբերյալ համացանցում բաց հասանելիության ռեժիմի ներքո գտնվող տվյալները, ներկայացնում են թիրախավորված գովազդներ:

Սակայն այն դեպքերում, երբ տվյալների մշակումը սահմանված չէ օրենքով կամ եթե մշակվող տվյալները հանրամատչելի չեն, ապա տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է ստանալ անձի համաձայնությունը: Թեև ԱՏՊ օրենքը սահմանում է համաձայնության մեջ պարտադիր ներառման ենթակա տեղեկությունները, համաձայնությունը տալու ձևը, այնուամենայնիվ, վերջինս չի տալիս համաձայնության հասկացությունը, և ոչ էլ համապարփակ կերպով ներկայացնում է դրա վավերապայմանները: Համաձայնության հասկացությունը տրված է ԵՄ Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (այսուհետ նաև՝ Կանոնակարգ կամ GDPR) նախաբանի 32-րդ կետով, որը սահմանում է, որ համաձայնությունը պետք է տրվի հստակ հաստատական գործողությամբ, որը հանդիսանում է տվյալների սուբյեկտի ազատ կամքով տրված, կոնկրետ (որոշակի), տեղեկացված և միանշանակ հավանությունը՝ իրեն վերաբերող անձնական տվյալները մշակելու համար: Նույնական մոտեցում է որդեգրվել «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիան փոփոխող արձանագրության (այսուհետ՝ 108+ կոնվենցիա) 5-րդ հոդվածի 2-րդ կետով: Այսպիսով, GDPR-ով և 108+ կոնվենցիայով սահմանվել է, որ անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը պետք է լինի՝

1) միանշանակ՝ հստակ հաստատական գործողությամբ,
2) տվյալների սուբյեկտի ազատ կամքով տրված,
3) կոնկրետ (որոշակի),
4) տեղեկացված:

Սույն հոդվածը կոչված է բացահայտելու համաձայնության վերը թվարկված վավերապայմաններից յուրաքանչյուրը:

1. Համաձայնության միանշանակ լինելը

Անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը պետք է լինի միանշանակ: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) կողմից իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում ձևավորված դիրքորոշման համաձայն՝ միանշանակ տրված լինելու չափանիշից բխում է, որ սկզբունքորեն չկան սահմանափակումներ, թե համաձայնությունն ինչ ձևով պետք է վերցվի, սակայն այն պետք է հստակ արտացոլի տվյալների սուբյեկտի կամքը իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Սա նշանակում է, որ չպետք է որևէ կասկած մնա, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն ուղղված է հենց անձնական տվյալների մշակմանը: Այլ կերպ ասած՝ տվյալների սուբյեկտի կամահայտնությունը, որով նա տալիս է իր հավանությունն անձնական տվյալների մշակման վերաբերյալ, պետք է միանշանակորեն վկայի տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել միանշանակորեն տրված[1]: Այս դիրքորոշումն ամբողջությամբ արտացոլում է ԵՄ իրավունքում ձևավորված այն կանոնը, ըստ որի՝ համաձայնությունը պահանջում է տվյալների սուբյեկտի կողմից կատարած հայտարարություն կամ հստակ դրական գործողություն, ինչը նշանակում է, որ այն միշտ պետք է տրվի ակտիվ գործողության կամ հայտարարության միջոցով: Տվյալ իրավիճակից պետք է ակնհայտ լինի, որ տվյալների սուբյեկտը համաձայնություն է տվել իր տվյալները մշակելու համար[2]:

Համաձայնությունը տրամադրելու եղանակները թվարկված են ԱՏՊ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով, որից հետևում է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունը տրվում է՝

1) գրավոր եղանակով. այսպիսի եղանակով համաձայնություն տալու օրինակ է տվյալներ մշակելու համաձայնագրի վրա ստորագրելը, որով տվյալների սուբյեկտը հավանություն է տալիս իր անձնական տվյալների մշակմանը.

2) էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

[1] Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-021/12/18 վարչական գործով:
[2] Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020, p. 75.

3) բանավոր եղանակով՝ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալները օգտագործելու համաձայնության մասին: Որպես օրինակ կարող է ծառայել տվյալների սուբյեկտի կողմից տրված բանավոր համաձայնությունը, որը ձայնագրվել է տվյալներ մշակողի կողմից հեռախոսային խոսակցության ընթացքում[1]: Միանշանակ գործողություն է համարվում նաև համաձայնության համար անհրաժեշտ տեղեկությունները պարունակող «Գաղտնիության քաղաքականությանը» հավանություն տալը՝ համապատասխան վանդակի մեջ նշում կատարելու միջոցով[2]:

Միևնույն ժամանակ, համաձայնություն տալը չի կարող նույնացվել պայմանագիրը կամ դրա ընդհանուր պայմանները ստորագրելու հետ, քանի որ տվյալների սուբյեկտին հնարավորություն չի ընձեռվում ուղղակիորեն արտահայտել ոչ թե պայմանագիրը կամ դրա ընդհանուր պայմաններն ընդունելու, այլ իր անձնական տվյալները մշակելուն ուղղված համաձայնությունը: Հավասարապես միայն տվյալներ մշակողի ինտերնետային կայքն այցելելը չի կարող հավասարեցվել անձնական տվյալների մշակմանը համաձայնվելուն, քանի որ անձը տվյալ պարագայում միանշանակ եղանակով չի հայտնում իր կամքը՝ ընդունելու տվյալների մշակման պայմանները, այլ ընդամենը այցելում է ինտերնետային կայք[3]:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը պետք է տրվի ակտիվ և միանշանակ գործողությունների միջոցով: Միևնույն ժամանակ, ԵՄ իրավունքում ընդունված է, որ օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված դեպքերում տվյալներ մշակողը կարող է չպահանջել տվյալների սուբյեկտի՝ դրական գործողությամբ տրվող համաձայնությունը, եթե վերջինս ի սկզբանե ունեցել է տվյալների մշակումն արգելելու հնարավորություն: Այսպես, «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության մասին» 2002/58/EC դիրեկտիվի 13-րդ հոդվածով սահմանված է, որ մարքեթինգային նպատակներով անձնական տվյալներ մշակելիս տվյալներ մշակողը կարող է չստանալ հաճախորդի ակտիվ գործողությամբ տրվող համաձայնությունը, եթե մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերություններ սկսելը տվյալներ մշակողը հաճախորդին ընձեռել է մարքեթինգային նպատակներով անձնական

[1] Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020, p. 79.

[2] Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-021/12/18 վարչական գործով:

[3] Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-040/08/23 վարչական գործով:

տվյալներ մշակելն արգելելու պարզ և մատչելի հնարավորություն, պայմանով, որ այդ նպատակներով անձնական տվյալների մշակումը վերաբերելու է բացառապես տվյալներ մշակողի կողմից մատուցվող ծառայություններին, և հաճախորդը չի օգտվել այդ նպատակներով անձնական տվյալներ մշակելն արգելելու հնարավորությունից: Նշվածից հետևում է, որ Դիրեկտիվը նախատեսել է տվյալներ մշակողի կողմից մատուցվող ծառայություններ առաջարկելու նպատակով հաճախորդների անձնական տվյալները մշակելու համաձայնությունը ստանալու երկու եղանակ՝ opt-in, երբ հաճախորդը համաձայնություն է տալիս ակտիվ գործողությամբ, և opt-out, երբ հաճախորդի համաձայնությունը համարվում է տրված, քանի դեռ վերջինս չի արգելել իր անձնական տվյալների մշակումը՝ առանց ակտիվ գործողություններ կատարելու անհրաժեշտության:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում նախատեսված չէ opt-out եղանակով համաձայնություն տալու հնարավորությունը: ԱՏՊ օրենքով սահմանված՝ համաձայնության տրամադրման եղանակների ցանկը վկայում է այն մասին, որ ՀՀ իրավունքում համաձայնությունն ընկալվում է որպես բացառապես ակտիվ գործողությամբ արտահայտվող կամահայտնություն:

2. Համաձայնության՝ տվյալների սուբյեկտի ազատ կամքով տրված լինելը

2.1. Համաձայնության՝ տվյալների սուբյեկտի ազատ կամքով տրված լինելու չափանիշները

Համաձայնության՝ «ազատ կամքով» տրված լինելու վավերապայմանը ենթադրում է տվյալների սուբյեկտի համար վերջինիս անձնական տվյալները մշակելը թույլատրելու իրական ընտրության հնարավորություն: Ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ համաձայնությունը կամային ակտ է, և պետք է տրված լինի տվյալների սուբյեկտի *«իրական ընտրությամբ (ազատ, կամավոր որոշմամբ), առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար բացասական հետևանքի»*[1]: GDPR-ը սահմանում է, որ եթե տվյալների սուբյեկտն իրական ընտրություն չունի, ստիպված է տալիս իր համաձայնությունը կամ համաձայնությունը չտալու դեպքում կկրի բացասական հետևանքներ, ապա համաձայնությունը չի համարվի վավեր[2]:

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25649/02/20; ՀՀ Վճռաբեկ դատարան քաղաքացիական գործ թիվ ԵԴ/5278/02/19:

[2] Opinion 15/2011 on the definition of consent (WP187), 2011, p. 12.

Համաձայնության ազատ տրված լինելը նաև ենթադրում է, որ արգելվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու նպատակով տվյալների սուբյեկտի փոխարեն նախապես ընտրություն կատարելը: Օրինակ՝ տնտեսվարող սուբյեկտները հաճախ ինտերնետային կայքում կամ ծրագրային հավելվածում համաձայնություն տալու համար նախատեսված վանդակում տվյալների սուբյեկտի փոխարեն կատարում են նշում, իսկ համաձայնությունը տալու վահանակն ակտիվացնում է տվյալների սուբյեկտը: Նույնիսկ եթե տվյալների սուբյեկտին տրված է իր տվյալները մշակելու համաձայնությունը չտալու հնարավորություն (օրինակ՝ վանդակում կատարած նշումն ապաակտիվացնելու հնարավորություն), ապա այնուամենայնիվ համաձայնությունը չի կարող համարվել ազատորեն տրված, քանի որ տվյալներ մշակողն արդեն իսկ ընտրություն է կատարել անձի փոխարեն:

Համաձայնության ազատ տրված լինելու վավերապայմանի պահպանման անհրաժեշտությունը հատկապես կարևորվում է այն իրավիճակներում, երբ անձնական տվյալները մշակվում են մի քանի նպատակներով, որոնցից ոչ բոլորն են անհրաժեշտ տնտեսվարող սուբյեկտի՝ պայմանագրից բխող իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար: Օրինակ՝ հաճախորդի տվյալները կարող են մշակվել ինչպես նրա ֆինանսական վիճակը գնահատելու, այնպես էլ՝ վերջինիս նախասիրությունների հիման վրա այլ ծառայություն առաջարկելու, այսինքն՝ մարքեթինգային նպատակով: Այս դեպքում տվյալներ մշակողը պետք է ապահովի, որ տվյալների սուբյեկտը հնարավորություն ունենա համաձայնություն տալու/չտալու վերը նշված համաձայնություններից յուրաքանչյուրին և զերծ մնա անուղղակի եղանակով տվյալների սուբյեկտի ընտրությունը սահմանափակելուց[1]: Հակառակ դեպքում, եթե անձը զրկված է այն հնարավորությունից, ապա համաձայնությունը չի համարվի ազատ տրված:

Համաձայնության ազատ տրված լինելու վավերապայմանը ենթադրում է նաև համաձայնությունը ցանկացած պահի հետ կանչելու հնարավորություն[2]: Ավելին, եթե տվյալներ մշակողը ստացել է անձի համաձայնությունը մի քանի նպատակներով անձնական տվյալներ մշակելու համար, ապա պետք է ապահովի ինչպես դրանց յուրաքանչյուրին համաձայնելու, այնպես էլ տրված համաձայնությունը հետ կանչելու հնարավորություն: Օրինակ, քննարկվող օրինակում համաձայնությունը կհամարվի ազատորեն տրված, եթե

[1] Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիայի պաշտոնական պարզաբանումներ, 2018, կետ 42:

[2] Տե՛ս նույն տեղում:

հաճախորդն ունենա ինչպես ֆինանսական վիճակը գնահատելու, այնպես էլ՝ վերջինիս նախասիրությունների հիման վրա այլ ծառայություն առաջարկելու, այսինքն՝ մարքեթինգային նպատակով անձնական տվյալներ մշակելու արդեն իսկ տրված համաձայնությունը հետ կանչելու իրական հնարավորություն:

2.2. Համաձայնության՝ տվյալների սուբյեկտի ազատ կամքով տրված լինելու պահանջի սահմանափակումները ՀՀ իրավունքում

Ինչպես նշվեց, անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը համարվում է ազատորեն տրված, եթե տվյալների սուբյեկտն ունի իր անձնական տվյալները մշակելը թույլատրելու/չթույլատրելու իրական ընտրության հնարավորություն, իսկ նման համաձայնություն չտալու դեպքում վերջինս չի կրի իր համար անբարենպաստ բացասական հետևանքներ: Համաձայնության հիշյալ վավերապայմանի պահպանումը հատկապես խնդրահարույց է ֆինանսական ծառայությունների դեպքում. ֆինանսական կազմակերպությունները, իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից ելնելով, հաճախ ստանում են հաճախորդների անձնական տվյալները մշակելու թույլտվություն: Օրինակ՝ բանկերը և վարկային կազմակերպությունները, վարկի մոնիթորինգի, այսինքն, վարկառուի կողմից իր պարտավորությունները կատարելու և դրա հավանականությունը ստուգելու նպատակով կատարում են հարցումներ վարկային բյուրոյին: Ընդ որում, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վարկային զեկույցների և վարկային տեղեկատվության սուբյեկտին նույնականացնող տվյալներ պարունակող այլ ծառայությունների ստացումը վարկային բյուրոյից իրականացվում է վարկային տեղեկատվության սուբյեկտի գրավոր (այդ թվում՝ էլեկտրոնային) համաձայնությամբ: Սակայն նման համաձայնություն չտրամադրելու դեպքում ֆինանսական կազմակերպությունները հրաժարվում են հաճախորդներին տրամադրել վարկեր, քանի որ չեն կարող վերահսկել վարկային պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը, ինչպես նաև գնահատել անձի վարկարժանությունը: Ստացվում է, որ որոշ դեպքերում համաձայնություն տրամադրելը կրում է պարտադիր բնույթ, քանի որ առանց դրա առհասարակ չեն առաջանում պայմանագրային հարաբերություններ տվյալներ մշակողի, այսինքն՝ ֆինանսական կազմակերպության, և տվյալների սուբյեկտի, այսինքն՝ հնարավոր հաճախորդի միջև:

Քննարկվող առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՏՊ օրենքը, ինչպես նշեցինք, սահմանում է անձնական տվյալներ

մշակելու ընդամենը երեք հիմք. տվյալներ մշակողը կարող է առանց տվյալների սուբյեկտի համաձայնության մշակել վերջինիս անձնական տվյալները, եթե դա նախատեսված կամ թույլատրված է օրենքով կամ էլ մշակվող տվյալները հանրամատչելի են: Ստացվում է, որ անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքն ապահովելու նպատակով տնտեսվարող սուբյեկտներն ապավինում են համաձայնությանը՝ չունենալով տվյալներ մշակելու այլ իրավական հիմքեր:

Հատկանշական է, որ ԵՄ իրավունքում նախատեսված են անձնական տվյալներ մշակելու այլ իրավական հիմքեր ևս: Մասնավորապես, GDPR-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի b կետով սահմանվում է, որ տվյալներ մշակողը կարող է մշակել այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են տվյալների սուբյեկտի հետ կնքված պայմանագիրը կատարելու համար: Միևնույն իրավադրույթի f կետի համաձայն՝ տվյալներ մշակելն օրինական է, եթե դա անհրաժեշտ է տվյալներ մշակողի կամ երրորդ անձի օրինական շահերը պաշտպանելու նպատակով, եթե չեն խախտվում տվյալների սուբյեկտի իրավունքները[1]: Հետևաբար, քննարկվող օրինակում, երբ ֆինանսական կազմակերպությունն իրականացնում է վարկային հարցումներ վարկի մոնիթորինգի նպատակով, ապա այդ իրավիճակին համապատասխանում են GDPR-ի՝ վերը հիշատակված իրավական հիմքերը, մինչդեռ տվյալների սուբյեկտի համաձայնության հիման վրա անձնական տվյալները կարող են մշակվել այն դեպքերում, երբ տվյալներ մշակողը կարող է պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը առանց անձի համաձայնության:

Վերը հիշատակված փաստարկները վերաբերելի են նաև անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը հետ կանչելու դեպքերին: Մասնավորապես, ԱՏՊ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տվյալների սուբյեկտն իրավունք ունի հետ կանչելու իր համաձայնությունը սույն օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով: Խորհրդի ուղեցուցային կանոնները նախատեսում են, որ համաձայնությունը համարվում է ազատորեն տրված, եթե հնարավոր է այն յուրաքանչյուր պահի հետ կանչել՝ առանց տվյալների սուբյեկտի համար բացասական հետևանքների[2]: Մինչդեռ եթե փորձենք կիրառել հիշյալ նորմը

[1] Հիշյալ կետով, մասնավորապես, սահմանված է, որ տվյալներ մշակելն ունի համապատասխան իրավական հիմք, եթե դա անհրաժեշտ է տվյալներ մշակողի կամ երրորդ անձի օրինական շահերը պաշտպանելու նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալների սուբյեկտի շահերը կամ իրավունքներն ու հիմնարար ազատությունները գերակայում են այդ անձանց իրավունքների և շահերի նկատմամբ:

[2] Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020, p. 46.

հայաստանյան իրականությունում, կստացվի հետևյալ իրավիճակը. տնտեսվարող սուբյեկտը ստանում է իր հաճախորդի համաձայնությունը պայմանագրից բխող պարտավորությունները կատարելու և հաճախորդի կողմից նրա պարտավորությունները չկատարելու դեպքում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով (օրինակ՝ պարտքի հավաքագրման, վարկի մոնիթորինգի), սակայն հաճախորդը պայմանագրային հարաբերությունների ընթացքում հետ է կանչում իր համաձայնությունը՝ օգտվելով ԱՏՊ օրենքով ընձեռված հնարավորությունից: Իրավունքի նորմերի տառացի մեկնաբանությունը կհանգեցնի մի թյուր իրավիճակի, որի պարագայում տվյալներ մշակողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը կախվածության մեջ է դրվում տվյալների սուբյեկտի հայեցողությունից: Մինչդեռ տվյալ դեպքում տվյալների մշակմանը նույնպես համապատասխանում են GDPR-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի b և f կետով սահմանված իրավական հիմքերը, որոնց պարագայում անհրաժեշտ չէ ստանալ տվյալների սուբյեկտի համաձայնությունը:

Բերված օրինակները վկայում են այն իրողության մասին, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձնական տվյալները մշակելու իրավական հիմքերը սահմանափակ են և չեն համապատասխանում առկա հասարակական և տնտեսական պահանջներին, որի պայմաններում համաձայնությունը, լինելով դիսպոզիտիվ բնույթի ակտ, երբեմն կրում է պարտադիր, այսինքն՝ իմպերատիվ բնույթ: Մասնավորապես, համաձայնություն տալը կարող է համարվել պարտադիր պայման տվյալներ մշակողի կողմից մատուցվող ծառայությունից օգտվելու համար, եթե դա օբյեկտիվորեն անհրաժեշտ է հաճախորդի հետ պայմանագիր կնքելու, պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու համար (օրինակ՝ վարկ տրամադրելու և գործող վարկի մոնիթորինգի նպատակներով վարկային բյուրո հարցումներ կատարելը):

Ինչ վերաբերում է համաձայնությունը հետ կանչելուն, ապա ԱՏՊ օրենքով գործող իրավական հիմքերի առկայության պայմաններում տվյալներ մշակողը պետք է հնարավորություն ունենա մերժել անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը հետ կանչելու դիմումը, եթե օրինակ, հաճախորդի անձնական տվյալներ մշակելն անհրաժեշտ է հաճախորդի և տվյալներ մշակողի միջև կնքված պայմանագրից բխող պարտավորությունները կատարելու համար, կամ առանց հաճախորդի անձնական տվյալները մշակելու տվյալներ մշակողը չի կարող իրականացնել հաճախորդի հետ հարաբերություններում իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

այդ թվում նաև այն ժամանակ, երբ հաճախորդն ունի չկատարած պարտավորություններ տվյալներ մշակողի նկատմամբ: Այնուամենայնիվ, առաջացած խնդիրների երկարաժամկետ լուծումը ենթադրում է ԱՏՊ օրենքով վերանայել անձնական տվյալներ մշակելու իրավական հիմքերի շրջանակը:

3. Համաձայնության որոշակի լինելը

Համաձայնության որոշակի լինելու չափանիշը մեկնաբանվել է Վճռաբեկ դատարանի կողմից: Այսպես, «որոշակի» լինելու չափանիշը վերաբերում է ինչպես փոխանցման ենթակա անձնական տվյալների, այնպես էլ՝ այն նպատակների հստակ սահմանմանը, ի իրագործումն որոնց՝ պետք է մշակվեն այդ անձնական տվյալները: Այսինքն՝ համաձայնությունից պետք է հստակ լինի և՛ մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, և՛ դրանց մշակման նպատակների շրջանակը[1]: Սույն վերլուծությունը բխում է ԱՏՊ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, որից հետևում է, որ տվյալների սուբյեկտի համար, իր համաձայնությունը տալիս, պետք է ակնհայտ լինեն անձնական տվյալների մշակման նպատակները, ինչպես նաև մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը:

Համաձայնության որոշակի լինելու պահանջի չպահպանման հետևանքներն ակներև են հատկապես ապահովագրական ոլորտում: Այսպես, Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի RL 1-001 (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ) կանոնների 17-րդ կետով սահմանված է, որ ԱՊՊԱ պայմանագրի կնքմամբ ապահովադիրները թույլատրում են ապահովագրողներին և Ավտոապահովագրողների բյուրոյին ինչպես տվյալ պայմանագրի կնքման և գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության ավարտից հետո միմյանց միջև կամ երրորդ անձանց հետ ցանկացած եղանակով և կրիչի վրա շրջանառել (ստանալ և տրամադրել) իրենց վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ՝ ԱՊՊԱ պայմանագրում անհրաժեշտ տվյալների արտացոլման կամ արտացոլված տեղեկությունների ստուգման, ԱՊՊԱ պատահարի և դրա գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների իրականացման, ինչպես նաև հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Բերված օրինակում նկատելի է համաձայնության որոշակիության պահանջի միաժամանակ երկու խախտում. *նախ,*

[1] Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԵԴ/25649/02/20 քաղաքացիական գործով:

ապահովադիրների, այսինքն՝ տվյալների սուբյեկտների համար հիշյալ թույլտվությունը, այսինքն՝ տվյալներ մշակելու համաձայնությունը տրամադրելիս, պարզ չէ, թե որոնք են լինելու մշակվող անձնական տվյալները, քանի որ ապահովագրողները և բյուրոն, որպես տվյալներ մշակողներ, կարող են մշակել նրանց վերաբերյալ ցանկացած տեսակի անձնական տվյալ. *այնուհետև,* ապահովագրողները և բյուրոն նախապես չեն սահմանել ապահովադիրների անձնական տվյալները մշակելու բոլոր նպատակները, քանի որ ըստ հիշյալ կանոնի՝ տվյալները կարող են օգտագործվել ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Նման դեպքում տվյալների սուբյեկտները կորցնում են իրենց անձնական տվյալների մշակման նկատմամբ հսկողությունը, իսկ նպատակների և մշակվող տվյալների անսահմանափակ լինելը կարող է խնդրահարույց լինել անձնական տվյալների մշակման սկզբունքների պահպանման տեսանկյունից: Այսպես, նախ, խախտվում է ԱՏՊ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված տվյալների մշակման օրինականության սկզբունքը, ըստ որի՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, քանի որ «ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար» ձևակերպումն իր բովանդակությամբ որոշակի չէ: Նման ձևակերպումը խնդրահարույց է նաև տվյալների մշակման համաչափության սկզբունքի տեսանկյունից, որի համաձայն՝ տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, իսկ դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր[1]: Խնդիրն այն է, որ քննարկվող օրինակում պարզ չեն տվյալների մշակման բոլոր նպատակները, ինչպես նաև դրանց հասնելու համար օգտագործվող միջոցները, հետևաբար դրանց համաչափությունը ստուգելն առհասարակ անհնարին է:

Համաձայնության որոշակի լինելու քննարկված կանոններն ընդունված են նաև ԵՄ իրավունքում: Միևնույն ժամանակ, GDPR-ով նախատեսված են համաձայնության որոշակիության առավել խիստ պահանջներ: Մասնավորապես, Անձնական տվյալների պաշտպանության եվրոպական խորհուրդը (անգլ.՝ European data protection board, այսուհետ՝ Խորհուրդ), մեկնաբանելով GDPR-ի 7-րդ հոդվածը, եկել է այն եզրակացության, որ համաձայնության որոշակիությունը ենթադրում է, որ տվյալների սուբյեկտի համար պետք է

[1] Համաչափության սկզբունքը սահմանված է ԱՏՊ օրենքի 5-րդ հոդվածով, ինչպես նաև GDPR-ի 5-րդ հոդվածի 1-ին մասի c կետով:

պարզ լինի, թե որ անձնական տվյալը որ նպատակի կամ նպատակների իրագործման համար է մշակվում[1]: Այսինքն, տնտեսվարող սուբյեկտները չեն կարող պարզապես տվյալներ մշակելու համաձայնագրերի մեջ նշել մշակվող տվյալների և դրանց նպատակների սպառիչ ցանկ, այլ նաև պետք է պարզ և մատչելի ձևով ներկայացնեն, թե որ տվյալը որ նպատակի իրագործման համար է մշակվում: Հիշյալ պահանջը վերաբերում է նաև անձնական տվյալները մշակելու ժամկետին: ԱՏՊ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ տվյալների մշակման համաձայնագիրը պետք է պարունակի համաձայնության գործողության ժամկետը: Նման կարգավորումից բխում է, որ տվյալներ մշակողը պետք է սահմանի մեկ միասնական ժամկետ, մինչդեռ անձնական տվյալները, կախված նպատակից, կարող են մշակվել տարբեր ժամկետներով: Գտնում ենք, որ հիշյալ իրավադրույթը պետք է սահմաներ ոչ թե համաձայնության գործողության ժամկետը, այլ անձնական տվյալները մշակելու ժամկետները, որի դեպքում տվյալներ մշակողները կսահմանեն, թե որ անձնական տվյալը որ նպատակի համար և ինչ ժամկետով է մշակվում, այդ թվում՝ պահպանվում:

4. Համաձայնության տեղեկացված լինելը

Անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը պետք է լինի տեղեկացված: Այս պահանջը հիմնված է տվյալների մշակման թափանցիկության սկզբունքի վրա, համաձայն որի՝ տվյալների սուբյեկտները պետք է հասանելի և հասկանալի եղանակով տեղեկացված լինեն, թե ինչպես է իրականացվում նրանց անձնական տվյալների մշակումը[2]: Խորհուրդը, անդրադառնալով համաձայնության «տեղեկացված» լինելու չափանիշին, նշել է, որ անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը պետք է հիմնված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքները և հետևանքները գիտակցելու և հասկանալու, անձնական տվյալների մշակման (մշակվող տվյալների, մշակման նպատակի, այլ անձանց հնարավոր փոխանցման, տվյալների սուբյեկտի իրավունքների և այլնի) վերաբերյալ ճշգրիտ և լիարժեք տեղեկությունների վրա: Ընդ որում, այդ տեղեկությունները պետք է հասանելի, հասկանալի և տեսանելի լինեն տվյալների սուբյեկտի համար[3]:

Ի կատարումն համաձայնության՝ տեղեկացված լինելու պահանջի, ԱՏՊ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ տվյալներ մշակողը

[1] Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020, p. 61.
[2] Article 29 Working Party, Guidelines on transparency under Regulation 2016/679, p. 6.
[3] Opinion 15/2011 on the definition of consent (WP187), 2011, p. 14.

տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու նպատակով ծանուցում է տվյալներ մշակելու մտադրության մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ 1) տվյալների սուբյեկտի ազգանունը, անունը, հայրանունը, 2) անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը, 3) մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, 4) անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը, 5) այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները, 6) անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը հայցող մշակողի կամ նրա ներկայացուցչի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը, 7) տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ, 8) հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները:

Տվյալների սուբյեկտների համաձայնությունը ստանալուց առաջ նրանց անձնական տվյալների մշակման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը կարևոր է, որպեսզի վերջիններս կարողանան իրենց տվյալների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնել, տեղեկացված լինեն, թե ինչպիսի պայմաններով անձնական տվյալների մշակման համար են տրամադրում իրենց համաձայնությունը: Եթե տվյալներ մշակողը տվյալների սուբյեկտին չի տրամադրում հասանելի և անհրաժեշտ տեղեկատվություն, ապա տվյալների սուբյեկտի տրված համաձայնությունը դառնում է պատրանքային[1]: Վճռաբեկ դատարանը գործերից մեկով նշել է, որ համաձայնությունը միշտ ենթադրում է անձնական տվյալի մշակման վերաբերյալ անձնական տվյալների սուբյեկտների իրազեկվածություն: Հենց այս նպատակով օրենսդիրը սահմանել է անձնական տվյալներ մշակողի կողմից տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցման կառուցակարգ, որը կոչված է ապահովելու համաձայնության՝ «տեղեկացված» լինելու չափանիշին համապատասխանությունը[2]:

Տեղեկացվածության վերաբերյալ վերը հիշատակված ստանդարտներից հետևում է, որ վերջինս ենթադրում է բովանդակային և ձևական պահանջների պահպանում: *Բովանդակային առումով* տեղեկացված լինելու պահանջը ենթադրում է տվյալների մշակման վերաբերյալ էական տեղեկությունների

[1] Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020, p. 62.

[2] Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԵԴ/25649/02/20 քաղաքացիական գործով:

տրամադրում[1], որոնց հիման վրա տվյալների սուբյեկտը կայացնում է իր անձնական տվյալները մշակելու համաձայնություն տալու/չտալու մասին որոշում: *Ձևական առումով* այդ տեղեկությունները պետք է հասանելի և մատչելի լինեն տվյալների սուբյեկտի համար: Դա ապահովելու նպատակով տվյալներ մշակողը պետք է տվյալների սուբյեկտին ընձեռի անձնական տվյալների մշակման պայմաններին ծանոթանալու իրական հնարավորություն: Մասնավորապես, համաձայնության տեղեկացված լինելու պահանջը պահպանված չէ այն դեպքում, երբ տվյալներ մշակողը, տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու համար, վերջինիս տեղեկացնում է, որ անձնական տվյալների մշակման՝ ԱՏՊ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները տեղադրված են իր ինտերնետային կայքում[2]: Դրա փոխարեն, տվյալներ մշակողը պետք է ակտիվ գործողությամբ տվյալների սուբյեկտին ներկայացնի պահանջվող տեղեկությունները, այլ ոչ թե դա թողնի տվյալների սուբյեկտի հայեցողությանը: Պրակտիկ տեսանկյունից այդ պարտականությունը կարող է կատարվել անհրաժեշտ տեղեկությունները տվյալների սուբյեկտի էլեկտրոնային հասցեին ուղարկելով, անձնական տվյալներ մշակելու համաձայնագրի մեջ ներառելով և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, սույն աշխատանքի մեջ կատարված վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Թեև անձնական տվյալներ մշակելու համաձայնության վավերապայմանները գրեթե սահմանված չեն ՀՀ օրենսդրությամբ, այնուամենայնիվ, դրանք բխեցվում են օրենսդրական նորմերից իրավակիրառ և դատական պրակտիկայի շրջանակներում կայացված որոշումների միջոցով:

2. ՀՀ իրավունքում ձևավորված անձնական տվյալներ մշակելու համաձայնության վավերապայմանները, որոշ առանձին վերապահումներով հանդերձ, համարժեք են ԵՄ իրավունքում ձևավորված ստանդարտներին: Այնուամենայնիվ, դրանք ունեն զարգացման և հստակեցման կարիք:

3. ՀՀ-ում անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը սակավ են, որի պայմաններում համաձայնություն տալը կարող է համարվել տվյալներ մշակողի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու պարտադիր

[1] Խոսքը գնում է ԱՏՊ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված տեղեկությունների մասին:

[2] Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-040/08/23 վարչական գործով:

նախապայման, իսկ արդեն տրված համաձայնությունը հետ կանչելու պահանջը միշտ չէ, որ իրատեսական է՝ ելնելով տվյալներ մշակողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Նման պայմաններում պրակտիկայում միշտ չէ, որ պահպանվում է համաձայնության՝ ազատ տրված լինելու պահանջը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Օրենսդրություն

1. ՀՀ Սահմանադրություն՝ 06.12.2015 թ. փոփոխություններով:
2. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՕ-49-Ն ՀՀ օրենք՝ ընդունված 18.05.2015 թ.:
3. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՕ-185-Ն ՀՀ օրենք՝ ընդունված 22.10.2008 թ.:
4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 2016 թվականի ապրիլի 27–ի թիվ 2016/679 ԵՄ ընդհանուր կանոնակարգ՝ ընդունված 27.04.2016 թ.:
5. «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիան փոփոխող արձանագրություն»՝ ընդունված 18.05.2018 թ.:
5. «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության մասին» 2002/58/EC դիրեկտիվ՝ ընդունված 12.07.2002 թ.:
6. Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի RL 1-001 կանոններ (ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ):

Դատական և վարչական գործեր

7. Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԵԴ/25649/02/20 քաղաքացիական գործով:
8. Վճռաբեկ դատարանի որոշումը թիվ ԵԴ/5278/02/19 քաղաքացիական գործով:
9. Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-021/12/18 վարչական գործով:
10. Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումը N-040/08/23 վարչական գործով:

Խորհրդատվական որոշումներ և կարծիքներ

11. Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիայի պաշտոնական պարզաբանումներ, 2018:

12. Article 29 Working Party, Guidelines on transparency under Regulation 2016/679.

13. European data protection board, Guidelines 05/2020 on consent under Regulation 2016/679, 2020.

14. Working Party 187, Opinion 15/2011 on the definition of consent, 2011.

УСЛОВИЯ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ СОГЛАСИЯ КАК ПРАВОВОГО ОСНОВАНИЯ ОБРАБОТКИ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ

Аннотация

Персональные данные фактически являются краеугольным камнем современной цифровой экономики. Однако для того чтобы обработка персональных данных считалась законной, она, прежде всего, должна осуществляться на соответствующем правовом основании. Обрабатывая персональные данные своих клиентов, хозяйствующие субъекты, как правило, полагаются на согласие последних. Для заключения договоров страхования, предоставления маркетинговых услуг, выдачи кредитов хозяйствующие субъекты обрабатывают информацию о различных аспектах жизни физических лиц, получая их согласие.

Однако проблема заключается в том, что законодательство о защите персональных данных в стране относительно новое, а правовые нормы часто формулируются не в виде четких предписаний, а в виде стандартов. В результате хозяйствующие субъекты обрабатывают персональные данные своих клиентов, исходя из собственных представлений и предпринимательских соображений, что делает защиту прав и законных интересов физических лиц проблематичной.

Учитывая эти проблемы, данная статья призвана изучить условия действительности согласия как правового основания обработки персональных данных, опираясь как на правовые регулирования Республики Армения, судебную и правоприменительную практику, так и на существующие лучшие стандарты в этой области, в частности на законодательство ЕС и “мягкое право”.

Ключевые слова: персональные данные, согласие, оператор данных, субъект данных.

VALIDITY REQUIREMENTS OF CONSENT AS A LEGAL BASIS FOR PERSONAL DATA PROCESSING

Annotation

Personal data is truly considered the cornerstone of the modern digital economy. However, for personal data processing to be considered lawful, it must first and foremost be carried out on an appropriate legal basis. When processing their customers' personal data, economic entities typically rely on the latter's consent. For purposes such as entering into insurance contracts, providing marketing services, or granting loans, economic entities process information about various aspects of individuals' lives with their consent.

The problem, however, is that personal data protection legislation in the country is relatively new, and legal norms are often formulated not as clear directives but as standards. As a result, economic entities process their customers' personal data based on their own perceptions and entrepreneurial considerations, which makes the protection of individuals' rights and legitimate interests problematic.

Considering these issues, this article aims to examine the validity requirements for consent as a legal basis for processing personal data, drawing upon both Armenian legal regulations, judicial and law enforcement practices, as well as the best existing standards in the field, particularly EU legislation.

Keywords: personal data, consent, data controller, data subject.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 07.07.2025 թ., տրվել է գրախոսության 10.07.2025 թ., ընդունվել է տպագրության 25.07.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-108

ОВАНЕС БАЯНДУРЯН[1]
Член палаты адвокатов РА,
Аспирант кафедры уголовного права
и уголовно-процессуального
права Российско-Армянского университета

ПРЕДЕЛЫ ПРЕЮДИЦИИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ: ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ К ЮРИДИЧЕСКИМ ЛИЦАМ

Аннотация

Статья посвящена исследованию института преюдиции в уголовном судопроизводстве с акцентом на особенности его применения в делах о привлечении юридических лиц к уголовной ответственности. Автор анализирует исторические, сравнительно-правовые и доктринальные аспекты преюдиции, раскрывает её значение для процессуальной экономии, правовой определённости и единообразия судебной практики. Особое внимание уделено коллизионным вопросам, возникающим между принципом обязательности судебных актов и принципом свободы оценки доказательств. На основе анализа законодательства Республики Армения, судебной практики Кассационного и Конституционного Судов, а также международных стандартов (в частности Конвенции ООН против коррупции 2005 г. и практики ЕСПЧ) автор обосновывает вывод о том, что факты, установленные в делах против физических лиц, не могут автоматически иметь преюдициальное значение для уголовного преследования юридических лиц. Подчеркивается необходимость самостоятельного установления признаков состава преступления применительно к организациям, что обусловлено различием целей и предмета доказывания в отношении физических и юридических лиц.

Принимая во внимание тот факт, что принятый 5 мая 2021 г. и вступивший в силу с 1 июля 2022 г. институт уголовной ответственности

[1] Orcid id: 0009-0005-6567-1205

юридических лиц Уголовного кодекса РА еще не стал предметом комплексного исследования и практического применения и многочисленные вопросы по теме требуют разъяснения, можно констатировать, что выбранная тема остается актуальной.

Ключевые слова: преюдиция, юридическое лицо, внутреннее убеждение судьи, пределы преюдиции, неопровержимая преюдиция, предмет доказывания.

1. Введение

На современном этапе уголовного судопроизводства вопрос применения преюдиции в уголовно-процессуальных правоотношениях приобретает особую актуальность в условиях динамично развивающихся экономических отношений. Значимость данного института объясняется тем, что обстоятельства, установленные ранее и обладающие юридическим значением, позволяют существенно упростить процесс доказывания, повысить эффективность расследования и оптимизировать судебное разбирательство. Особенно актуально это в нынешних условиях, когда юридические лица, вовлечённые в сложные экономические отношения, уже признаны полноправными участниками уголовного процесса. Таким образом, преюдиция становится важнейшим средством обеспечения процессуальной экономии, укрепления правовой определенности и формирования единообразной судебной практики при привлечении организаций к уголовной ответственности.

Как справедливо отмечает Г.М. Резник, разрешение сложнейших экономических споров требовало применения арбитражными судами норм корпоративного, финансового, банковского, налогового, таможенного права - причем не только отечественного, но и иностранного. В уголовном же судопроизводстве все более распространённый характер стали приобретать заведение в коррупционных целях уголовных дел в отношении предпринимателей, их обвинение и последующее осуждение по статьям о мошенничестве, присвоении и легализации (отмывании) полученных преступным путем денежных средств или иного имущества[1].

[1] **Резник Г.М.** Стандарты доказанности и межотраслевая преюдиция [Электронный ресурс]. URL: http://www.iuaj.net/node/625

2. Основное исследование

Следует подчеркнуть, что за последние пятнадцать лет институт преюдиции неоднократно становился предметом рассмотрения не только законодателя, но и Конституционного Суда РА, что свидетельствует о его особой значимости в целях доказывания и функционирования уголовного судопроизводства в целом. Сама концепция преюдиции отражает характер соотношения различных видов судопроизводства в государстве, уровень доверия к судебным актам, а также выявляет как сходство, так и различие стандартов доказывания в уголовном, гражданском, арбитражном и административном процессах. В этом контексте преюдициальный аспект выступает не только как законодательная или правоприменительная категория, но и как явление политико-правового характера, поскольку в его рамках преломляются ключевые проблемы уголовно-правовой политики и формирования единого правового пространства.

Правильное разрешение на нормативном уровне вопросов преюдиции обеспечивает стабильность судебных решений и единство судебной системы, позволяет снизить стоимость судопроизводства, обеспечить быстрое рассмотрение дел в разумные сроки. Однако наряду с этим верно подчеркивается проблемность преюдиции, заключающаяся “в том, что при ее применении могут вступать в коллизию два процессуальных принципа: общеобязательная сила судебных постановлений и внутреннее судейское убеждение при оценке доказательств”[1].

Термин “преюдиция” имеет латинское происхождение (от лат. praejudicialis) и означает “относящийся к предыдущему судебному решению”[2]. Одно из первых упоминаний о преюдиции содержится во фрагменте таблицы, являвшейся источником римского права. Также к ранним источникам относятся труды Цицерона, Цезаря, Сенеки, Павла и Ульпиана. Наиболее полное значение, которое римские граждане придавали преюдиции, раскрыто в Институциях Гая и в Своде римского права[3].

В Древнем Риме институт преюдиции не имел абсолютного и неопровержимого характера. При рассмотрении побочного, второстепенного

[1] См. там же.

[2] **Арутюнян А. А., Брусницын Л. В., Васильев О. Л., Головко Л. В. и др.** Курс уголовного процесса / Под ред. Л. В. Головко. - М.: Статут, 2016. - 1278 с.

[3] **Бартошек М.** Римское право: понятия, термины, определения / М. Бартошек. – М., 1989.

вопроса ответчик мог возражать против применения преюдиции, если её использование способно было нанести ему ущерб в последующем процессе по основному спору. Так, например, разбирательству уголовного дела о преступлении, наказуемом смертной казнью, могло предшествовать рассмотрение имущественного спора, и в таком случае сторона имела право оспаривать преюдициальное значение ранее вынесенного решения. Данные положения основывались на норме, закреплённой в Кодексе Юстиниана, где подчёркивалось: “Решение, принятое по спору двоих, никому не должно причинять вред”[1] .

В юридической литературе существует понятие преюдициальности (от лат. praejudicio – предрешение) – в процессуальном праве обязательность для всех судов, рассматривающих дело, принять без проверки и доказательств факты, ранее установленные вступившим в законную силу решением или приговором по какому-либо другому делу[2].

Следует заметить, что понятие преюдиции исторически изменчиво. Интересно, насколько оно изменчиво с “географической” точки зрения. Так, обращаясь к американскому праву, мы можем констатировать, что по их законодательству преюдиция не относится к доказательному праву, а регулируется правилами о процедуре. Res judicata означает эффект предыдущего судебного решения, который не подчиняется логическим правилам, а регламентируется правилами судопроизводства. Res judicata включает в себя: 1) предотвращение иска (claim preclusion) и 2) предотвращение вопроса (issue preclusion).

Предотвращение иска означает, что истец вправе лишь один раз предъявить иск, вытекающий из одних и тех же действий или происшествий. Например, предъявлен иск о возмещении вреда, причиненного вследствие дорожно-транспортного происшествия, где истец настаивает на небрежных действиях ответчика. После вынесения решения по этому делу тот же истец не вправе предъявить иск к тому же ответчику в связи с тем же происшествием, даже если на этот раз он ссылается не на небрежность, а на правило об ответственности без вины. Предотвращение вопроса означает, что

[1] Дигесты Юстиниана [Электронный ресурс]. – URL: http://www.digestaiust.narod.ru/03.html

[2] Постановление Конституционного Суда РФ от 17 марта 2009 г. No5-П “По делу о проверке конституционности положения, содержащегося в абзацах четвертом и пятом пункта 10 статьи 89 Налогового кодекса Российской Федерации, в связи с жалобой общества с ограниченной ответственностью “Варм”. URL: www.ksrf.ru

если какой-то вопрос уже рассматривался в суде (о признании патента недействительным и пр.) и по нему вынесено судебное решение, то в последующих процессах этот вопрос не подлежит установлению. Это вид преюдициальности судебного решения[1].

Т.Н. Радько применяет к понятию преюдиции нормативный (юридический) подход. И в основе этой нормативно-директивной идеи лежит предшествующий исторический опыт правоприменения. Данное обстоятельство в определенной мере сближает преюдицию с презумпциями. При внимательном взгляде можно увидеть, что, по сути, сама идея преюдиции опирается на презумпцию истинности приговора или иного судебного решения.

По мнению А.В. Карданца, "преюдиция - это прием юридической техники, представляющий собой правило доказывания о том, что вступившее в законную силу правоприменительное решение уполномоченного органа, принятое в установленном законом процессуальном порядке о наличии или отсутствии юридического факта, обязательно для всех правоприменительных органов, разрешающих юридическое дело, связанное с ранее разрешенным по поводу этого факта"[2].

По мнению А.С. Березина, "преюдиция в уголовном судопроизводстве – это юридическое правило, устанавливающее специальные условия использования в доказывании вступивших в законную силу приговоров (судебных решений по гражданским делам) с целью устранения противоречий между актами правосудия, связанных единством фактических обстоятельств"[3].

Преюдиция действительно является многогранным институтом и классифицируется по различным основаниям, она может быть межотраслевая, внутриотраслевая, абсолютная (неопровержимая) и относительная (опровержимая).

Абсолютная преюдиция находится в коллизионных отношениях с принципом свободной оценки доказательств, поскольку ограничивает дискрецию суда и обязывает его принимать без проверки выводы, сделанные

[1] **Бабаев В.К.** Презумпции в советском праве. - Горький, 1974. - С. 33-38.

[2] **Карданец А.В.** Преюдиция в российском праве: Проблемы теории и практики: дис. ... канд. юрид. наук. - Н. Новгород, 2002. - С. 30.

[3] **Березин А.С.** Преюдиции в отечественном уголовном судопроизводстве: дис. канд. юрид. наук. - Н. Новгород, 2006. - С. 63-64.

в другом судебном процессе. Суть в том, что принцип свободной оценки доказательств предполагает, что суд самостоятельно исследует и оценивает все представленные доказательства, исходя из внутреннего убеждения, однако неопровержимая преюдиция лишает суд возможности заново исследовать уже установленные факты, навязывая ему обязательные выводы другого суда. Такой баланс должен быть обеспечен посредством установления пределов действия преюдициальности, а также порядка ее опровержения.

Абстрагируясь от тонкостей каждого судопроизводства, можно сделать вывод, что уголовный процесс обладает исключительными отличиями от остальных видов судопроизводств, поскольку в нем решаются вопросы виновности человека, результатом чего выступает назначение наказания, которое ограничивает его конституционные права. Во всех остальных процессах разрешаются вопросы прав и обязанностей физических и юридических лиц. Специфика уголовного процесса предполагает высокие требования к каждому доказательству на предмет их относимости, допустимости и достоверности, когда в остальных судопроизводствах в доказывании наличествует некоторая диспозитивность сторон и дискреционные полномочия судьи.

Учитывая наличие диспозитивности в процедурах доказывания по гражданским, арбитражным и административным делам, наличие некоторых дискреционных полномочий судей по ним и высокие требования к доказыванию в уголовном процессе, мы считаем, что необходимо избавиться от “жесткой» неопровержимости.

Различия между уголовным и гражданским процессами существенны. Ведь базой частноправовых процессов является диспозитивность, в то время как основа уголовного процесса – стремление к материальной истине, а потому “нет ничего удивительного в том, что факт, установленный судом за пределами уголовного процесса, далеко не всегда равнозначен фактам, выявленным по уголовному делу. В первом случае он может всего лишь отражать позицию сторон по определенной проблеме, во втором - должен точно соответствовать реальности”[1].

[1] **Колоколов Н.А.** Преюдиция. Преступления в сфере экономики: факты одни, а их оценки у судов общей юрисдикции и арбитражных судов разные / Н.А. Колоколов // Юрист. 2009. No 6. – С. 56–65.

Мы считаем справедливой и актуальной позицию М.С. Строговича, который утверждал, что истинность гражданского решения суда, которое вступило в законную силу, предусматривает только упрощение доказывания по уголовному делу, и не ограничивает суд в его выводах.

“В уголовном процессе, – пишет Г. Г. Файзуллин, – исследуется истинность самих фактов преступных деяний, с которыми связаны юридические последствия, в гражданском процессе – истинность заявлений сторон о фактах” [Файзуллин 2011: 110][1].

Отмечается также, что “в гражданском судопроизводстве основная задача заключается в разрешении споров между сторонами, а приоритетным является скорее формально-юридическая, чем объективная истина. Поэтому решения суда по гражданскому делу не могут служить безусловным средством познания истины по уголовному делу” [Преюдиция может стать опровержимой 2011] .

По мнению Ф. А. Куприянова, “решения” “неуголовных” судов, вполне правосудные и вступившие в законную силу, не отвечают критериям истинности даже теоретически. Таким образом, любое решение арбитражного или общего суда очевидно неприменимо для уголовного суда” [Куприянов 2011: 36][2].

Законодатель в статье 437 УПК РА устанавливает общие условия производства в отношении юридических лиц:

"1. Положения настоящей главы применяются при производстве по делам о преступлениях, приписываемых юридическому лицу.

2. Производство в отношении юридического лица осуществляется в общем порядке, установленном настоящим Кодексом, с учетом правил, предусмотренных настоящей главой".

Одновременно статья 438 УПК РА предусматривает основания инициирования уголовного производства в отношении юридического лица: производство в отношении юридического лица может быть инициировано только в случае, если в связи с преступлением, предусмотренным частью 1 статьи 123 Уголовного кодекса Республики Армения, имеется: 1)

[1] **Файзуллин Г.Г.** Некоторые особенности реализации принципа состязательности в гражданском судопроизводстве // Аграрное и земельное право. 2011. № 5. - С. 110–114.

[2] **Куприянов Ф.А.** Преюдиция как инструмент манипулирования в уголовном процессе // Уголовный процесс. 2011. № 8. - С. 34–38.

обвинительный приговор, вступивший в законную силу; 2) вступившее в законную силу постановление об отказе в инициировании уголовного преследования или о прекращении уголовного преследования нереабилитационного характера.

Получается, что за одни и те же деяния могут быть привлечены как физические, так и юридические лица. Следует отметить, что в таких случаях могут возникнуть определенные вопросы преюдициальной силы.

Прежде всего, уголовная ответственность юридического лица, как правило, является производной от преступления физического лица, совершенного в интересах или с использованием потенциала (компетенции и полномочий) юридического лица. Полагаю, что при одновременном привлечении к уголовной ответственности в рамках одного уголовного дела, проблема преюдиции не возникнет в силу индивидуализации уголовной ответственности физического и юридического лица в конкретном приговоре суда.

Однако могут быть ситуации привлечения к уголовной ответственности судом только юридического лица за преступное деяние. Например, уголовное дело в отношении физического лица прекращено по нереабилитирующим основаниям либо досудебное расследование прервано или приостановлено производством в суде. В таком случае производство по делу в отношении юридического лица продолжается и завершается вынесением обвинительного приговора с назначением соответствующего уголовного наказания или принудительной меры уголовно-правового воздействия.

УПК РА, в отличие от процессуальных законодательств некоторых зарубежных стран, не содержит понятие и положения о преюдиции, в то же время в прецедентном праве они часто используются.

Справедливо отмечает И.В. Чащина, что в странах СНГ, уголовно-процессуальное право которых опирается на Модельный УПК СНГ, нормативное понятие преюдиции отсутствует.

В процессе изучения уголовно-процессуального законодательства отдельных государств ближнего зарубежья на постсоветском пространстве (Азербайджанской Республики, Республики Армении, Грузии, Кыргызской Республики, Латвийской Республики, Республики Беларусь, Республики Казахстан, Республики Молдова, Республики Узбекистан, Украины) А. Г.

Гореликова приходит к выводу, что в основном наблюдается тенденция к единообразному подходу законодателей к преюдиции, но вместе с тем существуют и некоторые отличия.

Сравнительно-правовой анализ положений о преюдиции в уголовно-процессуальном законодательстве государств-участников СНГ позволил нам сделать выводы о том, что в законодательстве стран СНГ не нашли своего полного отражения касающиеся преюдиции положения, закрепленные в Модельном УПК 1996 г., однако некоторые рекомендации были использованы, в частности признание преюдициального значения как вступившего в законную силу приговора, так и других решений суда.

Ни в одном из рассмотренных уголовно-процессуальных кодексов зарубежных государств на постсоветском пространстве не представлено определение понятия преюдиции, а содержания соответствующих норм имеют различия[1].

Несмотря на то, что нормативная база законодательства РА не содержит понятия “преюдиция”, однако следует отметить, что институт преюдиции в последние десятилетия стал предметом рассмотрения Кассационного и Конституционного Судов РА.

При решении вопроса о допустимости применения преюдиции в уголовном процессе в делах о привлечении юридических лиц необходимо учитывать пределы её действия. В частности, обстоятельства, установленные при рассмотрении уголовного дела в отношении физического лица, могут иметь преюдициальное значение лишь в части подтверждения факта наличия или отсутствия определённого деяния. Однако они не могут подменять собой квалификацию действий юридического лица как преступных. Это связано с тем, что уголовно-правовая оценка юридического лица возможна исключительно в рамках самостоятельного уголовного судопроизводства, в котором устанавливаются все признаки состава преступления, предусмотренные законом, включая форму вины. Без установления этих обстоятельств юридическое лицо не может быть признано субъектом преступления.

Таким образом, если ранее к уголовной ответственности уже был привлечен руководитель организации, то это не может иметь

[1] **Гореликова А.Г.** Преюдиция в уголовном процессе Российской Федерации: автореферат диссертации … кандидата юридических наук: 12.00.09. - М., 2010.

преюдициального значения для последующего дела против самой организации. Это объясняется тем, что в таком случае предметом рассмотрения становится уже не физическое лицо, а юридическое лицо как самостоятельный субъект преступления, что требует отдельного установления признаков состава преступления, применимых именно к нему.

Такое умозаключение соответствует не только международным стандартам, но и косвенным образом - решениям Кассационного суда РА, в которых затрагивается институт преюдиции в доктринальном смысле.

Часть 3 статьи 26 Конвенции ООН против коррупции 2005 года устанавливает, что ответственность юридических лиц должна устанавливаться без ущерба для уголовной ответственности физических лиц, совершивших преступления (такая ответственность применяется без преюдиции уголовной ответственности физических лиц, совершивших данные преступления). Таким образом, ответственность физических лиц, совершивших деяния, дополняет любую корпоративную ответственность и не должна ею затрагиваться. Иными словами, когда физическое лицо совершает преступления от имени юридического лица, должна быть возможность преследования и наказания как физического лица, так и юридического лица[1].

По делу ՎԴ/0275/05/10 (ВД/0275/05/10) Кассационный суд (палата по административным делам) установил, что для участвующих в деле лиц преюдиция означает освобождение от обязанности доказывания в определённых пределах, а также запрет на повторное доказывание или оспаривание аналогичных обстоятельств в последующих процессах. Для суда преюдиция предполагает обязанность включить такое обстоятельство в новый судебный акт. Как правило, преюдициальная связь судебных актов предполагает распространение преюдиции в полном объеме как на участвующих в деле лиц, так и на суд. Следовательно, преюдиция в силу закона имеет однозначно предопределяющее значение для нового судебного акта, а воля участвующих в деле лиц и судебное усмотрение в этом вопросе влияния не имеют. Однако объективные пределы преюдиции судебного акта и возможность выхода за эти пределы создают определённые ситуации,

[1] United Nations General Assembly. United Nations Convention against Corruption (A/RES/58/4), 31 октября 2003 года.

когда преюдициальная связь перестаёт быть предопределяющей и зависит уже от воли участвующих в деле лиц и судебного усмотрения.

По другому гражданскому делу ԵՇԴ/0220/02/11 (ЕШД/0220/02/11) Суд установил: объективные пределы преюдициальной силы судебного акта определяются тем кругом обстоятельств, которые должны быть установлены вступившим в законную силу судебным актом и не подлежат повторному доказыванию или опровержению при рассмотрении другого дела. Данная норма содержит два важных процессуальных правила: 1) суд устанавливает наличие или отсутствие обстоятельств, имеющих значение для разрешения спора, только на основании надлежащим образом полученных и исследованных доказательств (за исключением случаев, прямо предусмотренных законом); 2) суд определяет лишь обстоятельства, которые обосновывают требования и возражения участников процесса и имеют значение для разрешения спора, исходя из предмета и основания иска, которые может изменить исключительно истец.

Кассационный суд указал, что для определения объективных пределов преюдиции ключевое значение имеет соблюдение этих процессуальных правил. Особое внимание было уделено правильному определению предмета доказывания, поскольку произвольное расширение его границ без процессуального основания (без волеизъявления истца) исключает возможность признания преюдициальной силы за обстоятельствами, установленными соответствующим судебным актом.

Аналогичное толкование Кассационный суд дал по делу ՀԴ 3-93 (ВД 3-93): обстоятельства, установленные вступившим в законную силу решением суда по ранее рассмотренному гражданскому делу, имеют преюдициальное значение для рассматриваемого иного дела по смыслу части 2 статьи 52 Гражданского процессуального кодекса Республики Армения, за исключением тех исключительных случаев, когда: а) установленное обстоятельство не относится к предмету иска по ранее рассмотренному гражданскому делу (не входит в число обстоятельств, подлежащих установлению) и/или б) обстоятельство было установлено с грубым нарушением формальных процессуальных правил либо в условиях, когда процессуальные возможности одной из сторон были существенно ограничены.

Апелляционный суд по делу ԵԿԴ/0259/01/16 (ЕКД/0259/01/16)[1] справедливо отметил, что "(…)После того как орган предварительного следствия в порядке статьи 28 Уголовно-процессуального кодекса РА выделяет материалы из уголовного дела, затем составляет обвинительное заключение, а осуществляющий надзор прокурор проверяет законность постановления о выделении и утверждает обвинительное заключение, они должны обратить внимание на то, смогут ли суды обеспечить объективное, полное и всестороннее рассмотрение дела, смогут ли по предъявленному отдельным подсудимым обвинению вынести законный, обоснованный и мотивированный приговор. Также необходимо учитывать, не будет ли в результате деятельности суда поставлена под угрозу независимость и беспристрастность суда по делу, рассматриваемому отдельно, из-за фактически предрешающего значения уже вынесенного приговора, не будут ли нарушены презумпция невиновности лиц, не преданных суду, право на защиту и другие гарантии. Важно учитывать и обстоятельство о том, не приведёт ли это к вынесению противоречащих друг другу приговоров, что в свою очередь поставит под угрозу принцип равенства перед законом и судом, а также правовую определённость с точки зрения недопустимости противоречивых судебных решений (…)".

Учитывая объективные и субъективные пределы действия законной силы судебного решения, обстоятельства, зафиксированные в иных судебных актах, не могут признаваться обязательными при определении уголовной ответственности юридического лица, если такими актами не было окончательно разрешено дело либо они относились к фактам, исследованным исключительно в рамках уголовного преследования физического лица и не составлявшим предмет непосредственного рассмотрения применительно к юридическому лицу как субъекту преступления. Следовательно, привлечение юридического лица к уголовной ответственности предполагает самостоятельное установление совокупности обстоятельств, свидетельствующих о наличии состава преступления именно в его деятельности либо в действиях лиц, выступавших от его имени и в его интересах.

[1] Апелляционный суд рассматривал вопросы, связанные с процедурой выделения материалов из уголовного дела и особенностями их применения в делах о соучастии.

Важно отметить, что в рамках уголовного судопроизводства по делу юридических лиц отличаются не только цели (задачи) наказания, но и предмет (круг вопросов, которые подлежат выявлению со стороны правоприменителя) и предмет доказывания рассматриваемого процесса.

Общепринято, что целями наказания физического лица являются исправление осужденного, восстановление социальной справедливости, предупреждение совершения новых преступлений. Здесь упор делается на личность правонарушителя, его сознание и поведение. Поскольку “исправить” или “ресоциализировать” организацию в привычном смысле невозможно, для юридических лиц акценты смещаются, основными целями наказания являются: пресечение противоправной деятельности, предупреждение новых преступлений (частная превенция), восстановление нарушенных прав и интересов, формирование культуры правомерного поведения. Здесь доминируют превентивные и компенсационные задачи, а не “исправление” в классическом смысле.

Предмет рассмотрения уголовного судопроизводства в отношении физического и юридического лица действительно отличается. Предмет уголовного судопроизводства в отношении юридического лица включает несколько иные аспекты: совершено ли преступление от имени или в интересах юридического лица; кто из физических лиц (орган, представитель, руководитель) действовал от имени организации; имело ли место недостаточное внутреннее управление или контроль внутри организации (корпоративная вина); извлекло ли юридическое лицо выгоду из преступления; имущественные последствия и необходимость возмещения вреда; необходимость ликвидации юрлица либо применения к нему иных мер уголовно-правового характера.

Здесь упор делается не на “личную вину”, а на организационно-структурную вину и выгоду.

Считаем, что в силу того, что предмет и цели отличаются, следовательно, преюдиция не должна иметь место в отношении уголовной ответственности юридического лица по материалам дел, рассмотренных в отношении физических лиц.

Такое суждение полностью соответствует не только международным стандартам, в частности Конвенции ООН против коррупции 2005 года, но и позиции Кассационного суда, где Кассационный суд прямо указал, что

преюдициальная сила судебного акта ограничивается объективными пределами, то есть только теми обстоятельствами, которые составляли предмет рассмотрения по предыдущему делу и были установлены в строгом соответствии с процессуальными правилами.

Применительно к уголовной ответственности юридических лиц это означает, что:

1) обстоятельства, установленные при рассмотрении дела о физическом лице, не могут автоматически переноситься на процесс против юридического лица, если они не являлись предметом непосредственного исследования применительно к нему; 2) суд обязан самостоятельно установить наличие либо отсутствие признаков корпоративной вины, выгодоприобретения организацией от преступления, недостатков контроля и управления.

Таким образом, суд, рассматривая уголовное дело, не вправе выходить за пределы судебного разбирательства при рассмотрении уголовного дела по существу. Суд в каждом виде судопроизводства строго ограничен задачами судопроизводства. В ходе уголовного судопроизводства выводы об обстоятельствах дела, содержащиеся в иных (кроме приговора) судебных решениях, подлежат исследованию и оценке в соответствии с общими процедурами доказывания.

С практической стороны для оценки сущности реализации преюдиции представляет интерес правовая позиция ЕСПЧ, изложенная в Постановлении по делу “Навальный и Офицеров против России”[1].

Изложенные в Постановлении ЕСПЧ по делу “Навальный и Офицеров против России” подходы позволяют прийти к выводу, что реализация преюдиции допускается при соблюдении следующих условий[2]:

[1] Постановление “Navalnyy and Ofitserov v. Russia” от 23.02.2016, жалобы NoNo 46632/13 и 28671/14 // Европейский суд по правам человека: официальный сайт. URL: http://www.echr.coe.int

[2] Анализ постановлений ЕСПЧ позволил выявить ряд наиболее существенных судебных ошибок, связанных с применением преюдиции, в контексте статьи 6 ЕКПЧ: 1) судом признавался преюдициальным вступивший в законную силу окончательный судебный акт (приговор, решение суда), в котором подсудимый по рассматриваемому делу участия не принимал; 2) обстоятельства, установленные вступившим в законную силу приговором или решением суда, не являлись фактическими и (или) не входили в предмет доказывания по делу; 3) преюдициальным признавался судебный акт, в котором судом не предоставлено право подсудимому допросить свидетелей, показавших против него, – признание вины одним соучастником признавалось судом; 4) преюдициально установленным обстоятельством, которое использовалось для доказывания виновности иных соучастников.

– если предъявленное обвинение основано на тех же обстоятельствах, что и обвинение по выделенному уголовному делу, представляющему соучастие в одном преступлении, выделение уголовного дела должно являться исключительным и сопровождаться необходимыми процессуальными гарантиями справедливости последующих судебных разбирательств в отношении соучастников;

– если суд не может обойтись без выводов о соучастии неустановленных лиц в рамках отдельного судопроизводства и эти выводы могут повлиять на решение вопроса о правовой ответственности неустановленных лиц, которые предстанут перед судом отдельно (позднее), такое обстоятельство следует рассматривать в качестве препятствия для выделения дела в отдельное производство, поскольку и всем остальным обвиняемым должна быть предоставлена возможность возражать против выделения уголовного дела в отдельное производство;

– обстоятельства, установленные по выделенному делу, в котором участвуют другие обвиняемые, не имеют преюдициального значения для обвиняемого по основному делу, поскольку статус доказательств по каждому делу является сугубо относительным и их сила ограничена конкретным уголовным делом;

– суд не вправе делать выводы о причастности к преступлению в отношении лиц, которые не являются подсудимыми по данному уголовному делу;

– суд, описывая причастность третьих лиц к преступлению, должен ограниченно отражать только информацию, необходимую для определения правовой ответственности лиц, преданных суду.

По вопросу преодоления преюдиции ЕСПЧ выразил важный принцип: поскольку бремя доказывания лежит на стороне обвинения, а любые сомнения в виновности подсудимого должны толковаться в его пользу, в целях судебного преследования стороне обвинения следует приобщить к делу достаточно доказательств для осуждения обвиняемого.

Л.А. Воскобитова справедливо отмечает, что обвиняемый не виновен в силу презумпции невиновности. Для опровержения этой презумпции сторона обвинения, несущая бремя доказывания своих доводов, обязана доказать все фактические обстоятельства совершенного преступления, которые ставит ему в вину, в том числе опровергнуть доводы, приведенные в защиту обвиняемого. В

этой связи в правоприменительной практике судов имеется важная с научной точки зрения позиция, согласно которой виновность не может быть предрешена только путем применения преюдиции в уголовно-процессуальном доказывании[1].

Преюдиция - это юридическое правило, применяемое в момент возникновения обстоятельств, ранее установленных вступившим в законную силу приговором или иным решением суда (окончательным и не обжалованным в кассационном порядке в установленный срок) при разрешении уголовного дела относительно того, имело ли место событие или действие, и не предрешающее виновность лиц[2].

3. Заключение

Преюдиция, хотя и имеет важное значение в обеспечении процессуальной последовательности, в делах о привлечении юридических лиц к уголовной ответственности не обладает абсолютной предопределяющей силой, а её пределы определяются как международными стандартами, так и национальной судебной практикой.

Анализ положений Конвенции ООН против коррупции 2005 года и практики Кассационного суда Армении позволяет сделать несколько выводов. Во-первых, международный стандарт (ч. 3 ст. 26 Конвенции) закрепляет принцип обособленности ответственности юридических и физических лиц: привлечение организации к уголовной или иной ответственности не исключает и не ограничивает возможность преследования её должностных лиц. Иными словами, ответственность юридического лица осуществляется без преюдиции уголовной ответственности физических лиц, а потому оба вида ответственности являются взаимодополняющими и автономными.

Во-вторых, национальная судебная практика подтверждает, что институт преюдиции направлен на обеспечение стабильности правопорядка и экономии процессуальных ресурсов, однако его применение ограничено объективными и субъективными пределами. Ключевым условием признания

[1] Уголовный процесс: Учебник для бакалавров / Отв. ред. Л.А. Воскобитова. – М.: Проспект, 2013. – С. 173.

[2] **Сибилева Ю.Е.** О современных научных подходах к понятию преюдиции // Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России, no. 22, 2013. - С. 111-114.

преюдициальной силы является то, что обстоятельства должны быть непосредственно предметом рассмотрения по делу, установлены на основе надлежащих доказательств и процессуально значимыми для разрешения спора.

В-третьих, по делам о привлечении юридических лиц к уголовной ответственности особое значение приобретает разграничение предмета доказывания в отношении физического и юридического лица. Факты, установленные в рамках дела против физического лица, не могут автоматически предопределять вину юридического лица как самостоятельного субъекта преступления. Это требует отдельной уголовно-правовой оценки и установления всех признаков состава преступления применительно к юридическому лицу.

В целом, можно заключить, что дальнейшее совершенствование института преюдиции должно идти по пути его дифференцированного применения: с одной стороны, для повышения эффективности правосудия, а с другой — для исключения возможных нарушений прав участников процесса.

Օգտագործված գրականության ցանկ

1. **Арутюнян А.А., Брусницын Л.В., Васильев О.Л., Головко Л.В. и др.** Курс уголовного процесса / Под ред. Л. В. Головко. - М.: Статут, 2016. - 1278 с.
2. **Бабаев В.К.** Презумпции в советском праве. - Горький, 1974.
3. **Бартошек М.** Римское право: понятия, термины, определения / М. Бартошек. – М., 1989.
4. **Березин А.С.** Преюдиции в отечественном уголовном судопроизводстве: дис. канд. юрид. наук. - Н. Новгород, 2006.
5. **Гореликова А.Г.** Преюдиция в уголовном процессе Российской Федерации: автореферат диссертации ... кандидата юридических наук: 12.00.09. М., 2010
6. Дигесты Юстиниана. – URL: http://www.digestaiust.narod.ru/03.html
7. **Карданец А.В.** Преюдиция в российском праве: Проблемы теории и практики: дис. ... канд. юрид. наук. - Н. Новгород, 2002.
8. **Колоколов Н.А.** Преюдиция. Преступления в сфере экономики: факты одни, а их оценки у судов общей юрисдикции и арбитражных судов разные / Н.А. Колоколов // Юрист. – 2009. – No 6.

9. Куприянов Ф.А. Преюдиция как инструмент манипулирования в уголовном процессе // Уголовный процесс. 2011. № 8.

10. Постановление “Navalnyy and Ofitserov v. Russia” от 23.02.2016, жалобы NoNo 46632/13 и 28671/14 // Европейский суд по правам человека.

11. Резник Г. М. Стандарты доказанности и межотраслевая преюдиция.

12. Сибилева Ю.Е. О современных научных подходах к понятию преюдиции // Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России. 2013. no. 22.

13. Уголовный процесс: Учебник для бакалавров / Отв. ред. Л.А. Воскобитова. – М.: Проспект, 2013.

14. Файзуллин Г.Г. “Некоторые особенности реализации принципа состязательности в гражданском судопроизводстве” // Аграрное и земельное право. 2011. № 5. - С. 110–114.

15. United Nations General Assembly. United Nations Convention against Corruption (A/RES/58/4), 31 октября 2003 года.

ՆԱԽԱԴԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է քրեական դատավարությունում նախադատելիության ինստիտուտի ուսումնասիրությանը՝ շեշտարկում կատարելով դրա կիրառման առանձնահատկությունների վրա իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերում: Հեղինակը վերլուծում է նախադատելիության պատմական, համեմատական իրավական և դոկտրինալ ասպեկտները, բացահայտում դրա նշանակությունը դատավարական տնտեսման, իրավական որոշակիության և դատական պրակտիկայի միատարրության համար: Հատուկ ուշադրություն է դարձվում դատական ակտերի պարտադիր բնույթի սկզբունքի և ապացույցների գնահատման ազատության սկզբունքի միջև ծագող հակասական հարցերին: ՀՀ օրենսդրության, Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների դատական պրակտիկայի, ինչպես նաև միջազգային չափորոշիչների (մասնավորապես՝ ՄԱԿ-ի 2005 թվականի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի) վերլուծության հիման վրա՝ հեղինակը հիմնավորում է այն եզրակացությունը, որ ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվու-

թյան ենթարկելու գործերով հաստատված փաստերը չեն կարող ավտոմատ կերպով նախադատելի արժեք ունենալ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համար: Ընդգծվում է իրավաբանական անձի նկատմամբ հանցագործության տարրերի անկախ հաստատման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է անհատների և իրավաբանական անձանց նկատմամբ ապացուցման նպատակների և առարկայի տարբերությամբ:

Նկատի ունենալով, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքում այլևս ներդրված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը, որը դեռևս չի դարձել համալիր հետազոտության և գործնական կիրառության առարկա, ինչով էլ պայմանավորված թեմայի վերաբերյալ առկա են պարզաբանման ենթակա բազմաթիվ հարցեր, ուստի պետք է փաստել, որ ընտրված թեման մնում է արդիական:

Հիմնաբառեր. նախադատելիություն, իրավաբանական անձ, դատավորի ներքին համոզմունք, նախադատելիության սահմանները, անբեկանելի նախադատելիություն, ապացուցման առարկա:

THE LIMITS OF PREJUDICE IN CRIMINAL PROCEEDINGS: ISSUES OF APPLICATION TO LEGAL ENTITIES

Annotation

The article examines the institution of prejudice (preclusion) in criminal proceedings, with a particular focus on its application in cases involving the criminal liability of legal entities. The author analyzes the historical, comparative-legal, and doctrinal aspects of prejudice, highlighting its importance for procedural efficiency, legal certainty, and the uniformity of judicial practice. Special attention is paid to the conflicts arising between the principle of binding judicial acts and the principle of free evaluation of evidence. Based on the analysis of the legislation of the Republic of Armenia, the case law of the Cassation and Constitutional Courts, as well as international standards (in particular, the 2005 UN Convention against Corruption and the practice of the European Court of Human Rights), the author concludes that facts established in cases against natural persons cannot automatically have preclusive effect in criminal proceedings against legal entities. The article emphasizes the necessity of independently establishing the elements of a crime with respect to organizations, which is determined by the differing aims and subject matter of proof concerning natural and legal persons.

Considering the fact that the institution of criminal liability of legal entities as prescribed by the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021 and entered into force on July 1, 2022, has not yet become the subject of a comprehensive study and practical application, and numerous questions on the topic require clarification, it can be stated that the chosen topic remains relevant.
Keywords: prejudice, legal entity, inner conviction of the judge, limits of prejudice, irrefutable prejudice, subject of proof.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 19.09.2025 թ., տրվել է գրախոսության 20.09.2025 թ., ընդունվել է տպագրության 25.09.2025 թ.:



DOI: 10.59560/18291155-2025.3-127

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ[1]
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՉԱՓ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ. ՊՐՈՎՈԿԱՏՈՐԻ ԵՎ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ամփոփագիր

Հոդվածում համակողմանիորեն հետազոտվում են հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը, հանցակցության ինստիտուտից դրա տարանջատման չափանիշները, հանցագործության իրավաչափ պրովոկացիայի գաղափարը, ինչպես նաև պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի քրեական պատասխանատվության առանձնահատկությունները:

Հանցագործության պրովոկացիայի քրեականացման հիմնավոր առաջարկ ներկայացնելու համար հոդվածում առանձին հետազոտման են ենթարկվել հանցագործության պրովոկացիայի հատկանիշները և հանցակցության ինստիտուտից դրա սահմանազատման առանցքային չափանիշները: Առանձին քննարկման առարկա են դարձել հանցագործության պրովոկացիայի՝ որպես առաջարկվող հանցակազմի տարրերը (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) և հանցագործության ավարտման պահի առանձնահատկությունները:

Պայմանավորված հետազոտվող խնդրի գիտագործնական հետաքրքրությամբ՝ հոդվածում քննարկվել են պրովոկատորի արարքի որակման առանձնահատկությունները նաև այն դեպքերում, երբ պրովոկացիայի ազդեցությամբ պրովոկացված անձը պրովոկացված հանցագործությունից բացի այլ հանցանք է կատարում, ինչը գիտակցվում է պրովոկատորի կողմից:

[1] https://orcid.org/0000-0002-5642-7658

Հոդվածում մանրամասն քննարկվել են նաև պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականին վերաբերող հարցերը, հանցագործության պրովոկացիայի՝ պրովոկացիայի ենթարկված անձի քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք լինելու հնարավորությունը և նպատակադրությունը:

Իրականացված հետազոտության արդյունքում հոդվածում առաջարկվել է այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ համապարփակ քրեականացման ենթարկել հանցագործության պրովոկացիան: Միևնույն ժամանակ, արժևորելով իրավաչափ պրովոկացիան՝ առաջարկվել է ամրագրել քրեաիրավական նորմ, որով այն կհամարվի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Հիմնաբառեր. օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, հանցագործության պրովոկացիա, ունիվերսալ և ներառական կարգավորում (նորմ), հանցակցություն, հանցագործության իրավաչափ պրովոկացիա, պրովոկատորի քրեական պատասխանատվություն, պրովոկացիայի ենթարկված անձի քրեական պատասխանատվություն:

Նախաբան

Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման[1] տեսանկյունից հետազոտական հատուկ հետաքրքրություն ունի հանցագործության պրովոկացիայի իրավական էության ուսումնասիրումը: Օպերատիվ-հետախուզական գործունեության իրավաչափությունը գնահատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում օպերատիվ-հետախուզական միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից:

«Հանցագործության պրովոկացիա» երևույթը Քրեական օրենսգրքով[2] սահմանված չէ: Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում լոկ հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորման՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար (հոդված 477): Այս երկու հանցանքների՝ կաշառքի և մասնավոր ոլորտում կաշառքի ընտրությունը պայմանավորված է պետության հակակոռուպցիոն քաղաքականությամբ, քանզի քրեաիրավական նորմերը մեծ մասամբ

[1] Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման մասին առավել մանրամասն տե՛ս **Barseghyan G.** The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions. Պետություն և իրավունք N 2 (99) 2024, էջեր 162-173, https://www.researchgate.net/publication/389314520

[2] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., ՀՕ-199-Ն: Գործում է:

ապահովում են կոնկրետ ոլորտում պետության քաղաքականության իրագործումը: Սակայն, մեր կարծիքով, որևէ երևույթի քրեաիրավական արգելքը պետք է ներառի տվյալ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները, այլ կերպ՝ լինի հնարավորինս ունիվերսալ և ներառական, հետևաբար օրենսդրի մոտեցումը՝ միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասով, արդարացված չէ և վերափոխման կարիք ունի:

Ա. Հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը և հատկանիշները

Հանցագործության պրովոկացիայի քրեականացման համար անհրաժեշտ է որոշել դրա բովանդակային սահմանումը, ինչը հնարավոր է միայն հանցագործության պրովոկացիայի հատկանիշների վերհանմամբ:

Այսպես, հանցագործության պրովոկացիան նյութականացված է: Այն գաղափար կամ մտադրություն չէ, այլ արարք է՝ ուղղված այլ անձի կողմից հանցանքի կատարման պայմաններ ստեղծելուն, այդ թվում՝ դիտավորություն առաջացնելուն: Պրովոկացիոն վարքագիծն արտահայտվում է գործողությամբ: Պրովոկացիայի ենթարկվող անձի համար այն գաղտնի գործունեություն է, այդ իսկ պատճառով նա պրովոկացիան՝ որպես պրովոկատորի նպատակաուղղված գործունեություն, չի ընկալում, հակառակ դեպքում՝ պրովոկացիան չի հաջողվի: Պրովոկացիայի ենթարկվող անձի կողմից պրովոկատորի մտադրությանը մասնակցելը նման է անձի կողմից իրեն վնաս պատճառելուն՝ գիտակցելով, որ այդ վնասը հանգեցնելու է իր համար բացասական հետևանքների: Պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկվող անձի գիտակցված մասնակցությունը միևնույն արարքի կատարմանը, համապատասխան պայմանների առկայության դեպքում, քրեական իրավունքի տեսանկյունից կարող է որակվել որպես հանցակցություն:

Հաջողված պրովոկացիան առաջացնում է միանգամից երկու հանցագործություն՝ հանցագործության պրովոկացիա և հանցանք, որի կատարմանը պրովոկացվել է անձը:

Հանցագործության պրովոկացիան, մեր կարծիքով, կարող է կատարվել միայն գործողությամբ. անգործության տեսքով պրովոկացիան դրսևորվել չի կարող: Պրովոկատորն անգործությամբ չի կարող իրականացնել իր մտադրությունը, քանզի անգործությունը չի կարող հանգեցնել իրադրության և/կամ մտադրության փոփոխության/ձևավորման: Քրեական իրավունքի տեսությունում հանրաճանաչ է այն գաղափարը, ըստ որի՝ հանցանքի

կատարումն անգործությամբ հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձը ունեցել է կոնկրետ պարտականություն, որը չի կատարել, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր կատարել իր պարտականությունը: Այս գաղափարն իր արտացոլումն է գտել Քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածում, համաձայն որի՝ «… *2. Անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե անձի վրա իրավական ակտով դրված է եղել գործողություն կատարելու պարտականություն, կամ այդ պարտականությունը բխել է նրա ստանձնած պարտավորությունից կամ բխել է օրենքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած իր նախորդ վարքագծից: 3. Անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե անձը տվյալ իրադրությունում կարող էր կատարել իր պարտականությունը*»: Սակայն պրովոկատորի վրա հանցագործության պրովոկացիային ուղղված գործողություն կատարելու որևէ պարտականություն, բնականաբար, դրված չէ:

Հանցագործության պրովոկացիան բարդ գործընթաց է և իրագործելի միայն պրովոկատորի ակտիվ գործողությունների դեպքում: Պրովոկատորի ինտելեկտուալ զարգացվածության բարձր մակարդակը, բոլոր քայլերի, հնարավոր ելքերի հաշվարկվածությունը, օրենսդրությանը տեղեկացված լինելը (քրեական պատասխանատվության ենթարկելու համար ապացույցներ ստեղծելու տեսանկյունից) վկայում են պրովոկատորի պլանավորված գործունեության մասին:

Հանցագործության պրովոկացիայի կարևոր հատկանիշներից մեկը հատուկ նպատակի առկայությունն է: Քրեական օրենսգրքի՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար պատասխանատվություն սահմանող 477-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ պրովոկատորի նպատակը հանցագործության կամ դրան անձի մասնակցության արհեստական ապացույց ստեղծելն է կամ շանտաժի ենթարկելը: Հանցագործության պրովոկացիայի համար նման նեղ, թերի և ոչ ճիշտ նպատակի սահմանումն արդարացված չէ:

Հանցագործության պրովոկացիայի նպատակի վերաբերյալ հետազոտողների տեսակետները տարբեր են: Այսպես, Ա.Դ. Նազարովի կարծիքով՝ «հանցագործության պրովոկացիա կատարվում է այլ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու նպատակով»[1]: Ս.Դ. Դեմչուկն ավելի լայն է բնութագրում հանցագործության պրովոկացիայի նպատակը՝ «… անձին քրեական պատասխանատվության ենթարկելու, վարկաբեկելու կամ

[1] Տե՛ս **Назаров А.Д.** Провокации в оперативно-розыскной деятельности. - Москва, 2010, էջ 15:

շանտաժի նպատակով»[1]: Ս.Ա. Բամիչը և Ս.Ն. Ռադանչիսկին կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի նպատակ են համարում նաև «... անձին մեղադրելու համար հանցանքի կատարման արհեստական ապացույցներ ստեղծելը»[2]: Ա.Պ. Դմիտրենկոն առաջարկում է հանցագործության պրովոկացիայի նպատակ համարել «պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելը»[3]: Վ.Վ. Դուդարենկոն առաջարկում է պրովոկատորի նպատակ համարել «անձի հետագա քրեական հետապնդումը կամ այլ անբարենպաստ հետևանքների առաջացումը»[4]:

Այսպիսով, հանցագործության պրովոկացիայի նպատակի վերաբերյալ տեսակետների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որպես հանցագործության պրովոկացիայի նպատակ հիմնականում առանձնացվում են անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, այլ անբարենպաստ հետևանքների առաջացումը և շանտաժը:

Հանցագործության պրովոկացիան, ըստ էության, արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործություն է: Քրեական օրենսգրքի՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար պատասխանատվություն նախատեսող հոդվածն իրավացիորեն զետեղված է «Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլխում: Ըստ այդմ, հանցագործության պրովոկացիայի այնպիսի նպատակը, ինչպիսին շանտաժն է, իր բովանդակությամբ չի համապատասխանում հանցագործության պրովոկացիայի օբյեկտին, քանզի շանտաժը ոտնձգում է անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դեմ, այլ ոչ թե արդարադատության: Շանտաժի նման ընկալման սահմանում ամրագրված է նաև Քրեական օրենսգրքում, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ շանտաժը անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի

[1] Տե՛ս **Демчук С.Д**. И вновь о провокации преступления // Юридическая наука и правоохранительная практика. 2015, № 2, էջեր 103-110:

[2] Տե՛ս **Бабыч С.А.** Провокация взятки либо коммерческого подкупа: уголовно-правовые и криминологические аспекты: автореф. дис. …канд. юрид. наук. - Москва, 2006, էջ 8: Տե՛ս նաև **Радачинский С.Н.** Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики: монография. - Н. Новгород, 2011, էջ 46:

[3] Տե՛ս **Дмитренко А.П.** Провокация преступления в решениях Европейского суда по правам человека // Уголовное и оперативно-разыскное законодательство: проблемы межотраслевых связей и перспективы совершенствования: материалы межведомственной научно-практической конференции (Рязань, 20 октября 2017 г.). - Москва, 2017, էջեր 51-55:

[4] Տե՛ս **Дударенко В.В.** Юридическая природа провокации преступления в уголовном праве: дис. … канд. юрид. наук. - Екатеринбург, 2017, էջ 12:

մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքն է:

Պրովոկատորի բոլոր գործողություններն ուղղված են պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն: «Շանտաժ» բառը բառարանային բացատրությամբ նշանակում է վարկաբեկող տվյալների՝ տեղեկությունների հրապարակման սպառնալիք՝ որևէ նպատակի հասնելու համար, մեկին ահաբեկելը՝ նրա մասին ունեցած վարկաբեկիչ փաստեր՝ տվյալներ հրապարակելու սպառնալիքով[1]: Այսպիսի արարքները առավելապես բնութագրական են շորթողին, և ոչ թե պրովոկատորին: Պրովոկատորի նպատակը անձին կամ նրա մերձավորին վարկաբեկող տվյալների հրապարակմամբ սպառնալը կամ ահաբեկելը չէ, այլ պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելը: Եվ հակառակը, շանտաժիստի նպատակը շանտաժի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չէ, այլ օգուտ (հիմնականում՝ նյութական) ստանալը:

Ինչ վերաբերում է հանցագործության պրովոկացիայի՝ «այլ անբարենպաստ հետևանքների առաջացում» նպատակին, կարծում ենք՝ նման լայն նպատակի սահմանումը խոցելի է իրավական որոշակիության տեսանկյունից: Նման ձևակերպումը պրովոկացիան դարձնում է նաև բազմօբյեկտ հանցագործություն, մինչդեռ այն իր բնույթով արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործություն է:

Կարծում ենք՝ հանցագործության պրովոկացիայի նպատակը պետք է սահմանվի հնարավորինս ճշգրիտ, միևնույն ժամանակ՝ ընդգրկուն և հանցագործության պրովոկացիայի յուրաքանչյուր դեպքի համար կիրառելի (ունենա ունիվերսալ բնույթ): Որպես այս չափանիշներին համապատասխանող նպատակ առաջարկում ենք կիրառել *«պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելը»* սահմանումը:

Հանցագործության պրովոկացիան կատարվում է պրովոկացիայի ենթարկվող անձի համար գաղտնիության պայմաններում: Պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկվող անձի միջև համաձայնության բացակայությունը հնարավորություն է տալիս պրովոկացիան տարանջատելու հանցակցությունից:

[1] Տե՛ս **Աղայան Է.,** Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատարակչություն: Երևան, 1976, հատոր 2, էջ 1097:

Քրեական իրավունքի որոշ մասնագետներ հանցագործության պրովոկացիան դիտարկում են հենց իրավապահ գործունեության պրիզմայով՝ որպես օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդ: Այսպիսի մոտեցումը հակասում է անձի՝ արդար դատաքննության իրավունքին:

Այսպիսով, քրեական իրավունքի տեսությունում չկա հստակորեն ձևավորված պատկերացում «հանցագործության պրովոկացիա» երևույթի վերաբերյալ, ուստի չկա նաև դրա հստակ սահմանումը: Այս հանգամանքը մեծ մասամբ բացատրվում է այս երևույթի ընկալման բարդություններով:

Իրականացված հետազոտության արդյունքներով առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը ենթարկել էական վերափոխման՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 477. Հանցագործության պրովոկացիան**

1. Հանցագործության պրովոկացիան՝ անձին հանցանքի կատարմանը սադրելը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով՝

պատժվում է … :

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է …

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում՝

պատժվում է …

4. Կաշառքի պրովոկացիա չի համարվում օրենքով սահմանված դեպքում առաքինության ստուգման նպատակով սույն հոդվածի 1-ին մասով նկարագրված արարքի կատարումը»:

Հանցագործության օբյեկտը արդարադատության շահերն են՝ դրանց ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Օբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել գործողությամբ, քանի որ հանցակազմում նկարագրված արարքը բարդ գործընթաց է և իրագործելի միայն պրովոկատորի ակտիվ գործողությունների դեպքում:

Հետազոտական հետաքրքրություն է ներկայացնում նաև նկարագրված հանցանքի ավարտի պահի որոշումը: Հանցագործության պրովոկացիան հանցանքի իրականացման մեխանիզմի տեսանկյունից նմանություններ ունի Քրեական օրենսգրքի «Անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը» վերտառությամբ 238-րդ և «Թմրամիջոցների,

հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների գործածմանը հակելը կամ ներգրավելը» վերտառությամբ 402-րդ հոդվածների հետ:

«Հակել», «ներգրավել», «մասնակից դարձնել», ինչպես նաև սադրել (պրովոկացնել) եզրույթներով հանցակազմերի օբյեկտիվը կողմը նկարագրված է բարդ արարքի տեսքով, որը բաղկացած է մի կողմից հակողի, ներգրավողի կամ մասնակից դարձնողի, պրովոկատորի, իսկ մյուս կողմից՝ հակվողի, ներգրավվողի, մասնակից դարձվողի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքներից: Բարդ արարքներ ասելով՝ քրեական իրավունքի տեսությունում ընդունված է հասկանալ անձի կողմից հանցանքի կատարում մեխանիզմների, կենդանիների կամ երրորդ անձանց միջոցով[1]: Սակայն որոշ հեղինակներ երրորդ անձանց արարքները դասում են հանցավոր հետևանքների շարքին[2]: Մինչդեռ, մենք կարծում ենք՝ չկա որևէ հիմնավորում հակվողի, ներգրավվողի, մասնակից դարձվողի կամ պրովոկացված անձի արարքները հանցավոր հետևանք դիտարկելու համար: Ընդ որում, վերջինիս արարքները կարող են նաև հանցավոր չլինել, օրինակ, երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելու կամ ներգրավելու (հոդված 239) կամ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու (հոդված 240) դեպքում: Առանց երրորդ անձի հանցավոր արարքների կարելի է խոսել միայն հանցագործության նախապատրաստության մասին: Այսպիսով, հակելը, ներգրավելը, հանցանքի կատարմանը մասնակից դարձնելը և սադրելը (պրովոկացիան) ավարտված պետք է համարվեն հակվողի, ներգրավվողի, մասնակից դարձվողի կամ պրովոկացված անձի կողմից այն արարքների առնվազն նախապատրաստության կատարման պահից, որոնց համար իրականացվում է հակումը, ներգրավումը կամ դրանց կատարմանը անձը մասնակից է դարձվում կամ պրովոկացվում[3]:

[1] Տե՛ս Советское уголовное право. Общая часть / Под ред. Н.А. Беляева, М.И. Ковалева. - М., 1977. էջ 149: Տե՛ս նաև Советское уголовное право. Общая часть / Под ред. Б.В. Здравомыслова, М.А. Гельфера, П.И. Гришаева. - М., 1982, էջեր 107-109:

[2] Տե՛ս Уголовное право. Особенная часть: Учебник / Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой, Г.П. Новоселова. - М., 2001, էջ 171:

[3] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Բարսեղյան Գ.**, Քրեաիրավական նորմերի մրցակցության առանձնահատկությունները հանցագործությունների բազմակիության և հարակից հանցակազմերի դեպքում: Պետություն և իրավունք: N 1 (95) 2023, էջեր 142-143, https://www.researchgate.net/publication/373218552

Սուբյեկտիվ կողմից հանցագործության պրովոկացիան կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է կոնկրետ նպատակի առկայությունը՝ պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելը:

Հանցակազմի 1-ին մասի սուբյեկտը ընդհանուր է՝ մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը: Հանցակազմի 2-րդ և 3-րդ մասերի սուբյեկտը հատուկ է, 2-րդ մասի դեպքում անձ, որը պրովոկացիան կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ 3-րդ մասի դեպքում՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը:

Բ. Հանցագործության պրովոկացիայի սահմանազատումը հանցակցությունից

Հանցագործության պրովոկացիայի իրավական էության համապարփակ ներկայացման համար առանցքային է դրա սահմանազատումը հանցակցության ինստիտուտից: Այս երկու ինստիտուտների հարաբերակցության հետազոտումը անկյունաքարային նշանակություն ունի հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ նորմի օրենսդրական ամրագրման հիմնավորվածության և գործնականում «հանցագործության պրովոկացիա» երևույթի քրեաիրավական էության ընկալման համար:

Հանցագործության պրովոկացիայի և հանցակցության առանցքային տարբերությունները որոշելու համար անհրաժեշտ է ներկայացնել դրանց բնութագրիչ հատկանիշները: Այսպես, Քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը: Քրեական իրավունքի տեսությունում առանձնացվում են հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները:

Հանցակցության օբյեկտիվ հատկանիշի ներքո ընդունված է առանձնացնել քանակական և որակական տարրերը: Քանակական տարրի ներքո առանձնացվում է քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց մասնակցությունը: Այսինքն՝ հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է հասած լինի քրեական պատասխանատվության ենթակա լինելու տարիքի և հանցանքի իրականացման պահին լինի մեղսունակ: Հանցակցություն չեն

համարվում այն դեպքերը, երբ հանցանքն իրականացվել է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար կամ հանցանքն իրականացրել է (գործել է) անզգուշությամբ: Պրովոկացված հանցագործության և հանցակցության համեմատությունը ցույց է տալիս, որ և՛ պրովոկացված հանցագործությունը, և՛ հանցակցությունը իրականացվում են երկու կամ ավելի անձանց փոխգործունեության արդյունքում և արտաքնապես ունեն նմանություն, սակայն հանցագործության պրովոկացիայի դեպքում երկու կամ ավելի անձանց «մասնակցությունը» անհրաժեշտ է որակել որպես յուրաքանչյուր անձի առանձին ինքնուրույն հանցավոր գործունեություն, քանզի միայն քանակական տարրի առկայությունը չի կարող վկայել հանցակցության մասին:

Հանցակցության օբյեկտիվ հատկանիշի հաջորդ տարրը որակականն է: Այս տարրի ներքո ընդունված է հասկանալ հանցակիցների գործունեության համատեղությունը, ինչը ենթադրում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի արարքները փոխադարձաբար լրացնում են միմյանց և ուղղված են միասնական հանցավոր նպատակի իրականացմանը, և պատճառահետևանքային կապը: Այս համատեքստում միանշանակորեն կարելի է պնդել, որ հանցակցի և պրովոկատորի մտադրությունն ու նպատակը տարբեր են: Այսպես, հանցակիցը գործում է կատարողի հետ համատեղ, աջակցում է հանցանքի կատարմանը, խոչընդոտում է հանցագործության բացահայտմանը, իսկ պրովոկատորը, ընդհակառակը, շահագրգռված է պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում, ինչով էլ պայմանավորված՝ հիմք և պայմաններ է ստեղծում նրան պատասխանատվության ենթարկելու համար: Հարկ է նաև նշել, որ համատեղությունը հանցակցության ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ հատկանիշ է[1]:

Հանցակցության սուբյեկտիվ հատկանիշն ընդգրկում է հետևյալ տարրերը՝ 1. դիտավորյալ համատեղ մասնակցություն 2. մասնակցություն դիտավորյալ հանցագործությանը 3. մտադրության/նպատակի ընդհանրությունը:

Այսինքն, հանցակցության համար առանցքային է միասնական դիտավորությամբ և/կամ նպատակով համակված անձանց դիտավորյալ փոխգործակցային մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը, մինչդեռ այս հատկանիշները հանցագործության պրովոկացիայի դեպքում բացակայում են:

[1] Տե՛ս **Бурчак Ф.Г.** Учение о соучастии по советскому уголовному праву. - Киев, 1969, էջ 39:

Պրովոկատորի իրական մտադրությունները գաղտնի են պրովոկացիայի ենթարկված անձի համար, նրանց միջև բացակայում է երկկողմանի սուբյեկտիվ կապը:

Քրեական օրենքը հանցակցության հասկացությունը սահմանելիս նշում է սուբյեկտիվ կողմի դիտավորյալ ձևը՝ չտարբերակելով դիտավորության տեսակների: Այսպիսի պայմաններում հանցակցությունը հնարավոր է և՛ ուղղակի դիտավորությամբ (անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը), և՛ անուղղակի (անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ու թեև այդ արարքը կատարելը և տվյալ հանցանքն իրականացնելը նրա նպատակը չէ, այնուամենայնիվ կատարում է դա): Իսկ պրովոկացիայի դեպքում, պայմանավորված դրա էությամբ և հետապնդվող նպատակով՝ սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ. պրովոկատորը գիտակցում է իր արարքի՝ հանցակազմի հատկանիշ հանդիսացող փաստական հանգամանքները, և այդ արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոցը: Հատուկ նպատակի առկայությունը ևս վկայում է ուղղակի դիտավորության մասին:

Այսպիսով, հանցագործության պրովոկացիայի դեպքում, ի տարբերություն հանցակցության, երկկողմանի սուբյեկտիվ կապը բացակայում է:

Հանցագործության պրովոկացիան արտաքինից առավել շատ ընդհանրություններ ունի դրդչության հետ. երկու դեպքում էլ հանցագործության կատարողի մոտ հանցանքը կատարելու մտադրությունը/դիտավորությունը առաջանում է այլ անձի կողմից: Սակայն պրովոկատորի և դրդչի մոտիվները տարբեր են: Պրովոկատորը անձին սադրում է հանցանքի կատարմանը՝ նպատակ ունենալով հիմքեր ստեղծելու նրան քրեական պատասխանատվության ենթարկելու: Մինչդեռ դրդիչը անձին՝ հանցագործության կատարողին, դրդում է հանցանքի կատարման ընդհանուր հանցավոր նպատակին հասնելու համար: Դրդչի նպատակը կատարողի իրականացրած հանցանքի արդյունքն է, իսկ պրովոկատորի պարագայում պրովոկացիայի ենթարկված անձի կատարած հանցանքը պրովոկատորի նպատակը չէ, այլ միջոց է կամ փաստական տվյալ իր նպատակին՝ պրովոկացիայի ենթարկված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու համար: Այսինքն, հանցագործության պրովոկատորի նպատակը պրովոկացիայի ենթարկված անձի կատարած հանցանքը բացահայտելն է, իսկ դրդչի

(առհասարակ՝ հանցակցի) նպատակը, ընդհակառակը, կատարված հանցանքը քողարկելն է և ընդհանուր, միասնական դիտավորությամբ ընդգրկված հանցավոր արդյունքին հասնելն է:

Ընդ որում, հաշվի առնելով, որ հանցագործության պրովոկացիան կատարվում է ուղղակի դիտավորությամբ, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում անձին պրովոկացնելուց հետո առաջացած այն իրավիճակները, երբ՝ ա) պրովոկատորը իրավասու մարմիններին մինչև հանցանքն ավարտելը հայտնում է սկսված հանցանքի մասին՝ այդ կերպ ցանկանալով բացառել կամ նվազեցնել հետևանքների առաջացումը, բ) պրովոկատորը իրավասու մարմիններին հայտնում է կատարված հանցանքի մասին դրա ավարտից հետո: Առաջին դեպքում, ըստ արտաքին հատկանիշների, իրավիճակը կարելի է համեմատել հանցագործությունից կամովին հրաժարման հետ: Ստացվում է՝ եթե պրովոկատորի արարքները գնահատվեն որպես հանցագործությունից կամովին հրաժարում, ապա նա քրեական պատասխանատվության չի ենթարկվի: Սակայն պրովոկատորը հանցավոր մտադրությունից հրաժարված հանցակից չէ, այլ մտածված արարքներով իր նպատակին հասած անձ, որը մեկ այլ անձի սադրել է հանցանքի կատարման, իսկ հանցագործության մասին իրավասու մարմիններին հայտնելը ոչ այլ ինչ է, քան պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցավոր մտադրության իրականացման ավարտական մաս:

Գ. Հանցագործության պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը

Հանցագործության պրովոկացիայի դեպքում պրովոկատորի գործողությունները հասարակական հարաբերություններին իրական վնաս են պատճառում, քանզի պրովոկացիայի միջոցով բացահայտվող հանցագործությունը ոչ այլ ինչ է, քան հենց պրովոկատորի գործունեության արդյունք, որն իր սադրող վարքագծով պրովոկացիայի ենթարկված անձի մոտ առաջացրել է հանցանքը կատարելու դիտավորություն: Ընդ որում, պրովոկացիան կարող է ուղեկցվել հոգեբանական ներգործությամբ, այդ թվում՝ ֆիզիկական ներգործության սպառնալիքով: Պրովոկացիայի միջոցները կարող են տարբեր լինել՝ համոզումներ, սպառնալիքներ, անպատժելիության վստահեցում, կաշառք, ատելության, նախանձի հրահրում, հանցանքի կատարման միջոցների և վայրի կամ հանցագործության հետքերը թաքցնելու վերաբերյալ խորհուրդներ և այլն:

Այն փաստարկը, թե հանցագործության պրովոկացիան կատարվում է ավելի մեծ վնասը կանխելու նպատակով, կասկածելի է: Իրավակիրառ պրակտիկան, ընդհակառակը, ցույց է տալիս, որ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է այն հանցագործությունների բացահայտման առնչությամբ, որոնք որպես դինամիկորեն զարգացող բնորոշվել չեն կարող:

Հանցագործության պրովոկատորը պետք է քրեորեն պատժվի, քանզի նա ստեղծում է, առաջին՝ հանցագործություն, երկրորդ՝ հանցագործ[1]: Այս կանոնից, թերևս, բացառություն են հանցագործության իրավաչափ պրովոկացիայի դեպքերը:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ մեկ հանցագործությունը մյուսով կանխելը անթույլատրելի է: Սակայն կարծում ենք՝ ստերեոտիպային պետք է համարել այն մոտեցումը, ըստ որի՝ հանցագործության պրովոկացիան ունի միայն բացասական բնույթ: Հնարավոր են դեպքեր, երբ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը մեկ այլ անձի սադրի իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի համեմատությամբ առավել թեթև հանցանքի կամ վարչական իրավախախտման կամ առհասարակ որևէ տեսակի իրավախախտում չհամարվող արարքի կատարման:

Քրեական իրավունքի գիտությունում, ինչպես արդեն նշել ենք, հանդիպում են նաև այնպիսի դատողություններ, որոնք օպերատիվ ներդրման ընթացքում հանցագործության պրովոկացիան դասում են իրավաչափ արարքների շարքին, երբ դրա կատարումը համարվում է հանցավոր դիտավորության հայտնաբերման, ավելի ծանր հանցանքների կանխման կամ կատարված հանցանքների բացահայտման միակ կամ առավել արդյունավետ միջոցը[2]: Մեր կարծիքով՝ այս առաջարկների իրագործումն արդարացված չէ, առաջին հերթին, սոցիալական դիտանկյունից, քանզի նմանատիպ իրավիճակներում իրական հնարավորություն է ստեղծվում բազմաթիվ անձանց հանցագործության պրովոկացնելու՝ այն արդարացնելով հանցավոր գործունեության բացահայտման միակ կամ առավել արդյունավետ միջոցը լինելու հանգամանքով: Սակայն իրավաչափ պրովոկացիայի արժևորման տեսանկյունից ողջամիտ ենք համարում բացառություն սահմանել: Ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորել է նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի

---

[1] Տե՛ս **Таганцев Н.С.** Русское уголовное право. - Москва, 1994. Т. 1, էջ 349:

[2] Տե՛ս **Радачинский С.Н.** Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики: автореф. дис. ... д-ра юрид. наук. - Н. Новгород, 2011, էջ. 5, 13–14:

թեթև հանցանքի կատարմանը սադրելով: Շարադրվածը առավել պատկերավոր ներկայացնելու համար քննարկենք հետևյալ օրինակը:

Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցն օպերատիվ ներդրում օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում ներդրվել է արգելված զանգվածային հավաք իրականացնող անձանց շրջանում: Հավաքի ժամանակ դրա կազմակերպիչներից մեկը կոչ է անում հավաքվածներին շարժվել Կառավարության շենք, ներխուժել այնտեղ և զավթել իշխանությունը: Ներդրված աշխատակիցը ստեղծված իրավիճակում միջոցներ է ձեռնարկում հավաքի ակտիվ խմբին տարհամոզելու ուղղությամբ՝ նրանց ուղղորդելով փողոցի խանութների ապակիները ջարդելու, կայանած մեքենաները վնասելու և այլն:

Նկարագրված իրավիճակը, ըստ էության, դժվար է հանցագործության պրովոկացիա համարել, թեև ձևական առումով առկա է հանցագործության սադրում: Սակայն այս իրավիճակն ունի տարբերակիչ առանձնահատկություն. օպերատիվ աշխատակիցը գործ է ունեցել այնպիսի անձանց հետ, որոնք արդեն իսկ վճռականորեն որոշել էին հանցանք կատարել: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է թույլատրելի ճանաչել հանցագործություն նախապատրաստող կամ կատարող անձանց իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելը:

Կարծում ենք՝ նմանատիպ դեպքերը պետք է հստակորեն կարգավորվեն քրեական օրենսդրությամբ: Ուստի, առաջարկում ենք այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի[1] հաշվառմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում, որը մեր նախորդ աշխատանքներում իրականացված հետազոտությունների արդյունքներով առաջարկել ենք շարադրել սկզբունքորեն նոր բովանդակությամբ, ամրագրել նորմ հետևյալ բովանդակությամբ՝ «*Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող*

[1] Սույն հոդվածի ուսումնասիրության առարկայից դուրս է այլ պետությունների՝ հանցագործության պրովոկացիային վերաբերող կարգավորումների և պրակտիկայի հետազոտումը, քանի որ այն իրավահամեմատական վերլուծության բավականին լայն թեմա է, որին մենք անդրադառնալու ենք հաջորդիվ: Պարզապես նշենք, որ հանցագործության պրովոկացիան քրեորեն արգելված է մայրցամաքային, ինչպես նաև անգլոսաքսոնական իրավական համակարգի մի շարք երկրներում:

հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելով»:

Անձին կարելի է ցանկացած հանցանք կատարելու պրովոկացիայի ենթարկել, ըստ այդմ, հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության նախատեսումը պայմանավորված է արդարադատության ոլորտում առավել նշանակալի հասարակական հարաբերությունները պաշտպանելու անհրաժեշտությամբ, մինչդեռ քրեաիրավական արձագանքում նախատեսված է միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար:

Քրեական իրավունքի տեսությունում տեսակետ է արտահայտվել այն մասին, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցի կողմից հանցագործության պրովոկացիա իրականացվելու դեպքում արարքը կարող է որակվել պաշտոնական լիազորություններն անցնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով[1]: Ձեռծ մնալով պաշտոնական լիազորություններն անցնելու համար պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի դետալային վերլուծությունից՝ պարզապես նկատենք, որ այն չունի ունիվերսալ բնույթ, բնականաբար չի ընդգրկում այն դեպքերը, երբ նմանատիպ արարքները կատարվում են ոչ պաշտոնատար անձանց կողմից: Կարևոր է նաև այն, որ հանցագործության պրովոկացիան կատարվում է հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հատուկ նպատակով՝ պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով:

Պրովոկատորի արարքը միայն հանցագործության պրովոկացիայի առկայության դեպքում չի կարող որակվել նաև ապացույց կեղծելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ միայն հանցագործության պրովոկացիա իրականացնելով պրովոկատորը ապացույց չի կեղծում կամ կեղծ ապացույց չի ներկայացնում, այլ միայն անձին սադրում է հանցանքի կատարմանը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով: Իսկ այն դեպքերում, երբ պրովոկատորը չի սահմանափակվի միայն հանցագործության պրովոկացիա իրականացնելով և բացի դրանից կկեղծի, կփոխի, կոչնչացնի կամ կթաքցնի ՕՀԳ արդյունքով ստացված տվյալ, փաստաթուղթ կամ առարկա կամ քրեական գործով կամ վարույթով ապացույց կամ քրեական գործով կամ վարույթով կեղծ ապացույց կներկայացնի, ապա համապատասխան հատկանիշների առկայության

[1] Տե՛ս Словарь по уголовному праву / Отв. ред. А.В. Наумов. - М., 1997, էջ 371:

պարագայում նրա արարքը հանցագործությունների համակցության կանոններով կորակվի նաև Քրեական օրենսգրքի՝ «Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծելը, փոխելը, ոչնչացնելը կամ թաքցնելը կամ կեղծ ապացույցներ ներկայացնելը» վերտառությամբ 479-րդ հոդվածի համապատասխան մասով:

Կարծում ենք՝ պրովոկատորի արարքը չի կարող որակվել նաև Քրեական օրենսգրքի՝ «Հանցագործության մասին չհայտնելու» վերտառությամբ 473-րդ հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիայի նպատակը անձին քրեական պատասխանատվության ենթարկելն է, մինչդեռ հանցագործության մասին չհայտնելու նպատակը, ըստ էության, հանցանք կատարած անձին կամա, թե ակամա աջակցելն է, նրա անձի կամ հանցագործության բացահայտմանը խոչընդոտելը: Այլ խոսքերով, հանցագործության պրովոկացիայի հատուկ նպատակի առկայությունը բացառում է պրովոկատորին հանցագործության մասին չհայտնելու համար քրեական պատասխանատվության ենթարկելը:

Քրեական իրավունքում հանցագործությունների որակման համատեքստում գիտագործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես պետք է որակվեն պրովոկատորի արարքները այն դեպքում, երբ պրովոկացված անձը պրովոկացիայի հետևանքով պրովոկացված հանցագործությունից բացի այլ հանցանք է կատարում, ինչը գիտակցում է պրովոկատորը: Միանշանակորեն կարծում ենք, որ այն դեպքում, երբ պրովոկացիայի հետևանքով պրովոկացիայի ենթարկված անձը պրովոկացված հանցագործությունից բացի այլ հանցանք է կատարում, ինչպիսի հանգամանքը գիտակցում է պրովոկատորը, ապա պրովոկատորը հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց բացի պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի նաև այն հանցագործության դրդչության կամ կազմակերպման համար, որին պրովոկացրել (ըստ էության՝ դրդել) էր:

Գիտագործնական հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ պրովոկացված անձը կատարում է ոչ թե հանցանք, այլ համանման վարչական իրավախախտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս պարագայում բացակայում է մեր կողմից առաջարկված հանցակազմի պարտադիր հատկանիշը՝ <u>հանցանքի</u> կատարմանը սադրելը, ինչպես նաև մեր կողմից կատարված այն արձանագրումը, ըստ որի՝ սադրելը հաջողված (ավարտված) կհամարվի պրովոկացված անձի կողմից այն արարքների

առնվազն նախապատրաստության կատարման պահից, որոնց կատարմանը անձը պրովոկացվել է, նմանատիպ դեպքերում պրովոկատորը ենթակա կլինի քրեական պատասխանատվության հանցագործության պրովոկացիայի փորձի համար:

Հանցագործությունների որակման տեսանկյունից հետաքրքրական են նաև այն դեպքերը, երբ հանցագործության պրովոկացիայի արդյունքում պրովոկացված անձը հանցանք է կատարում, որը գիտակցում է պրովոկատորը, սակայն վերջինս հրաժարվում է պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու իր նպատակից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նպատակի իրականացումը դուրս է մեր կողմից առաջարկված հանցակազմի սահմաններից՝ անկախ նպատակի իրագործման հանգամանքից, հանցագործության պրովոկացիա իրականացրած անձը ենթակա կլինի քրեական պատասխանատվության հանցագործության ավարտված պրովոկացիայի համար:

Հանցագործության պրովոկատորի արարքների քրեաիրավական որակման հիմնախնդիրներից զատ քրեական իրավունքի տեսությունում քննարկվում է նաև պրովոկացիայի ենթարկված անձի հանցավոր արարքներին քրեաիրավական գնահատական տալու հարցը: Հանցագործության պրովոկացիային նվիրված վերջին տարիների հրապարակումներում բազմիցս արվել են առաջարկներ առ այն, որ հանցագործության պրովոկացիան անհրաժեշտ է համարել պրովոկացված անձին քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք:

Քննարկվող համատեքստում, սակայն, հարց է առաջանում. պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձը միշտ չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, և ո՞րը պետք է լինի պրովոկացված արարքի իրավաչափության ինդիկատորը:

Պրովոկատորի արարքները պայմաններ են ստեղծում մեկ այլ (պրովոկացված) անձի կողմից հանցանք կատարելու. ստեղծում են հանցանք կատարելու իրադրություն, նպաստավոր պայմաններ, հանցագործության հետքերը թաքցնելու խոստումներ, ձևավորում հանցանքը կատարելու մտադրություն/դիտավորություն: Սակայն պրովոկացված անձը հանցանքը կատարում է ինքնակամ՝ թեև գտնվելով պրովոկատորի ազդեցության տակ: Այս տեսանկյունից պրովոկատոր-պրովոկացված անձ հարաբերությունները նման են դրդիչ-կատարող հարաբերություններին, և ինչպես դրդչության դեպքում կատարողը չի ազատվում քրեական պատասխանատվությունից այն հիմնավորմամբ, որ հանցանքը կատարել է այլ անձի ազդեցության

հետևանքով, այնպես էլ պրովոկացիայի ենթարկված անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից հանցանքը պրովոկատորի ազդեցության տակ գտնվելու հետևանքով կատարելու պատճառաբանությամբ: Կարևոր են նաև պրովոկացիայի ենթարկված անձի հոգեհուզական առանձնահատկությունները հանցանքի կատարման պահին: Եթե անձը հանցանքը կատարելիս գիտակցել է իր արարքի էությունը և կարողացել է այն ղեկավարել, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն եթե քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած անձը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցության հետևանքով չէր կարող գիտակցել կամ ղեկավարել իր արարքը, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Այլ հարց է, որ ՕՀՄ արդյունքները, որոնք ստացվել են պրովոկացիայի արդյունքում, չեն կարող ճանաչվել ապացույց (արտավարութային փաստաթուղթ): Այսպես, Քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի **պատշաճ** ապացույցների բավարար համակցությամբ: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա. այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, **թույլատրելի**, հավաստի ապացույցների ամբողջությամբ: Քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքով ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացույցներ ձեռք բերելիս էական են նաև այն խախտումները, որոնք դրսևորվել են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ոտնահարմամբ կամ քրեական վարույթի սկզբունքների խախտմամբ: Հիշատակված հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պահանջների խախտմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները չեն կարող ապացուցողական գործողության կատարման հիմք լինել:

Պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարելու հանգամանքի գիտակցման արդյունքում հանցակից դարձած պրովոկատոր և պրովոկացիայի ենթարկված անձ-պրովոկացված հանցանքի կատարող հարաբերությունների նկատմամբ, մեր կարծիքով, կիրառելի են նաև

հանցակցի սահմանազանցման վերաբերյալ կարգավորումները: Այսպես, պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձի սահմանազանցման դեպքում պրովոկատորի-դրդիչի (կազմակերպչի) քրեական պատասխանատվության հարցերը պետք է լուծվեն Քրեական օրենսգրքի՝ «Հանցակցի սահմանազանցումը» վերտառությամբ 49-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան, իհարկե եթե պրովոկատորը գիտակցել է պրովոկացիայի հետևանքով պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցանք կատարելու հանգամանքը և գործել է կոնկրետացված դիտավորությամբ. անորոշ (չկոնկրետացված) դիտավորության դեպքում, երբ պրովոկատոր-դրդչի (կազմակերպչի) համար ցանկալի է ցանկացած արդյունք, վերջինս քրեական պատասխանատվության կենթարկվի ըստ փաստացի առաջացած հետևանքի (արդյունքի):

Հանցագործության պրովոկացիայի փաստը կարող է պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք լինել, հետևաբար պրովոկացիայի փաստը համապատասխան ապացույցների առկայության դեպքում դատարանի կողմից կարող է գնահատվել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Գուցե պրովոկացիոն գործողությունների բացակայության պարագայում անձը հանցանքը չկատարեր:

Թյուր է, սակայն, այն կարծիքը, թե հանցագործության պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը միշտ պետք է դիտել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Հանցագործության պրովոկացիայի ուսումնասիրմանը նվիրված իրենց աշխատություններում որոշ հետազոտողներ առաջարկում են հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարած լինելն օրենսդրորեն ամրագրել որպես պրովոկացիայի ենթարկված անձի քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք՝ այդ կերպ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմին պրովոկացիայի ազդեցությունը բոլոր դեպքերում համարել մեղմացնող հանգամանք[1]: Մենք այս կարծիքը չենք կիսում: Հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ պրովոկացված անձը կատարի ավելի ծանր հանցանք, քան այն, որի կատարմանը պրովոկացվել էր: Նմանատիպ դեպքում արդարացված չէ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը դիտել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Այլ

[1] Տե՛ս **Жарких И.** Провокация преступления в уголовном праве России, диссертация на соискание учёной степени кандидата юридических наук. - Москва, 2021, էջ 14:

խոսքերով՝ պրովոկացիայի ազդեցությունը որպես մեղմացնող հանգամանք գնահատելը պետք է վերապահել վարույթն իրականացնող մարմնին, որպեսզի դրա ազդեցության՝ քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող բնույթը հաստատվի գործի համակողմանի և օբյեկտիվ քննությամբ: Ասվածի համատեքստում հիշատակման է արժանի Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը առ այն, որ Քրեական օրենսգրքում ուղղակիորեն չամրագրված քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը, բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները[1]:

Եզրակացություն

Իրականացված հետազոտության արդյունքներով սույն հոդվածում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական հատուկ հետաքրքրություն ունի հանցագործության պրովոկացիայի իրավական էության ուսումնասիրումը: Օպերատիվ-հետախուզական գործունեությաուն իրավաչափությունը գնահատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում օպերատիվ-հետախուզական միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից:

2. «Հանցագործության պրովոկացիա» երևույթը Քրեական օրենսգրքով սահմանված չէ: Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում լոկ հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորման՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար (հոդված 477): Այս երկու հանցանքների՝ կաշառքի և մասնավոր ոլորտում

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Պարույր Բայրամյանի վերաբերյալ 01.06.2007 թ. № ՎԲ-84/07 որոշումը, կետ 4-րդ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905401023 (23.02.2025):

կաշառքի ընտրությունը պայմանավորված է պետության հակակոռուպցիոն քաղաքականությամբ, քանզի քրեաիրավական նորմերը մեծ մասամբ ապահովում են կոնկրետ ոլորտում պետության քաղաքականության իրագործումը: Սակայն, մեր կարծիքով, որևէ երևույթի քրեաիրավական արգելքը պետք է ներառի տվյալ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները, այլ կերպ՝ լինի հնարավորինս ունիվերսալ և ներառական, հետևաբար օրենսդրի մոտեցումը՝ միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասով, արդարացված չէ և վերափոխման կարիք ունի:

3. Առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը ենթարկել էական վերափոխման՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 477. Հանցագործության պրովոկացիան**

1. Հանցագործության պրովոկացիան՝ անձին հանցանքի կատարմանը սադրելը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով՝

պատժվում է … :

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է …

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում՝

պատժվում է …

4. Կաշառքի պրովոկացիա չի համարվում օրենքով սահմանված դեպքում առաքինության ստուգման նպատակով սույն հոդվածի 1-ին մասով նկարագրված արարքի կատարումը»:

4. Իրականացված հետազոտության արդյունքում եկել ենք այն փաստարկված եզրահանգման, որ հանցագործության պրովոկացիան չի կարելի դիտարկել հանցակցության ինստիտուտի շրջանակներում և ներկայացվել հանցագործության պրովոկացիայի և հանցակցության էական տարբերակիչ հատկանիշները:

5. Հանցագործության պրովոկատորը պետք է քրեորեն պատժվի, քանզի նա ստեղծում է, առաջին, հանցագործություն, երկրորդ, հանցագործ: Այս կանոնից, թերևս, բացառություն են հանցագործության իրավաչափ պրովոկացիայի դեպքերը:

6. ՕՀԳ իրականացնող մարմնի աշխատակցի կողմից հանցագործության պրովոկացիա իրականացվելու դեպքում արարքը չի կարող որակվել պաշտոնական լիազորությունները անցնելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիան կատարվում է հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հատուկ նպատակով՝ պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելու նպատակով:

7. Պրովոկատորի արարքը միայն հանցագործության պրովոկացիայի առկայության դեպքում չի կարող որակվել նաև ապացույց կեղծելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, քանի որ միայն հանցագործության պրովոկացիա իրականացնելով պրովոկատորը ապացույց չի կեղծում կամ կեղծ ապացույց չի ներկայացնում, այլ միայն անձին սադրում է հանցանքի կատարմանը՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

8. Պրովոկատորի արարքը չի կարող որակվել նաև Քրեական օրենսգրքի՝ «Հանցագործության մասին չհայտնելու» վերտառությամբ 473-րդ հոդվածով, քանի որ հանցագործության պրովոկացիայի նպատակը անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքեր ստեղծելն է, մինչդեռ հանցագործության մասին չհայտնելու նպատակը, ըստ էության, հանցանք կատարած անձին կամա, թե ակամա աջակցելն է, նրա անձի կամ հանցագործության բացահայտմանը խոչընդոտելը:

9. Արժևորելով հանցագործության իրավաչափ պրովոկացիայի գաղափարը՝ առաջարկում ենք Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում ամրագրել նորմ հետևյալ բովանդակությամբ՝ «*Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելով*»:

10. Պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձը միայն պրովոկացիայի ազդեցության հանգամանքով պայմանավորված չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից:

10.1. Պրովոկատորի արարքները պայմաններ են ստեղծում մեկ այլ (պրովոկացված) անձի կողմից հանցանք կատարելու, սակայն պրովոկացված

անձը հանցանքը կատարում է ինքնակամ՝ թեև գտնվելով պրովոկատորի ազդեցության տակ: Այս տեսանկյունից պրովոկատոր-պրովոկացված անձ հարաբերությունները նման են դրդիչ-կատարող հարաբերություններին:

11. Կարևոր են պրովոկացիայի ենթարկված անձի հոգեհուզական առանձնահատկությունները հանցանքի կատարման պահին: Եթե անձը հանցանքը կատարելիս գիտակցել է իր արարքի էությունը և կարողացել է այն ղեկավարել, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն եթե քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած անձը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցության հետևանքով չէր կարող գիտակցել կամ ղեկավարել իր արարքը, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

12. Պրովոկացիայի հետևանքով պրովոկացված անձի կողմից հանցանք կատարելու դեպքում, ինչպիսի հանգամանքը պրովոկատորը գիտակցում է, պրովոկատորը, հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց բացի, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի նաև այն հանցագործության դրդչության կամ կազմակերպման համար, որին պրովոկացրել (ըստ էության՝ դրդել) էր:

13. Պրովոկացիայի հետևանքով հանցանք կատարելու հանգամանքի գիտակցման արդյունքում հանցակից դարձած պրովոկատոր և պրովոկացիայի ենթարկված անձ-պրովոկացված հանցանքի կատարող հարաբերությունների նկատմամբ, մեր կարծիքով, կիրառելի են նաև հանցակցի սահմանազանցման վերաբերյալ կարգավորումները:

14. Հանցագործության պրովոկացիայի փաստը կարող է պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարած անձի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք լինել, հետևաբար պրովոկացիայի փաստը համապատասխան ապացույցների առկայության դեպքում դատարանի կողմից կարող է գնահատվել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

14.1. Սակայն հանցագործության պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը չի կարող իմպերատիվ կերպով համարվել քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք. պրովոկացիայի ազդեցությունը որպես մեղմացնող հանգամանք գնահատելը պետք է վերապահել վարույթն իրականացնող մարմնին, որպեսզի դրա ազդեցության՝ քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող բնույթը հաստատվի գործի համակողմանի և օբյեկտիվ քննությամբ: Պրովոկացված հանցանքի համեմատությամբ ավելի ծանր հանցանք կատարելու դեպքում

արդարացված չէ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը դիտել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., ՀՕ-199-Ն: Գործում է:
2. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Պարույր Բայրամյանի վերաբերյալ 01.06.2007 թ. № ՎԲ-84/07 որոշումը, կետ 4-րդ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905401023 (23.02.2025):
3. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, հատոր 2:
4. **Բարսեղյան Գ.**, Քրեաիրավական նորմերի մրցակցության առանձնահատկությունները հանցագործությունների բազմակիության և հարակից հանցակազմերի դեպքում: Պետություն և իրավունք N 1 (95) 2023, https://www.researchgate.net/publication/373218552
5. **Barseghyan G.** The Concept of Criminal-Legal Provision of Operational-Search Activities and a Brief Description of Its Directions. Պետություն և իրավունք N 2 (99) 2024, էջեր 162-173, https://www.researchgate.net/ publication/389314520
6. **Бурчак Ф.Г.** Учение о соучастии по советскому уголовному праву. - Киев, 1969.
7. **Демчук С.Д.** И вновь о провокации преступления // Юридическая наука и правоохранительная практика. 2015, № 2.
8. **Дмитренко А.П.** Провокация преступления в решениях Европейского суда по правам человека // Уголовное и оперативно-разыскное законодательство: проблемы межотраслевых связей и перспективы совершенствования: материалы межведомственной научно-практической конференции (Рязань, 20 октября 2017 г.). Москва, 2017.
9. **Дударенко В.В.** Юридическая природа провокации преступления в уголовном праве: дис. … канд. юрид. наук. - Екатеринбург, 2017.
10. **Жарких И.** Провокация преступления в уголовном праве России. Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук. - Москва, 2021.
11. **Назаров А.Д.** Провокации в оперативно-розыскной деятельности. - Москва, 2010.

12. **Радачинский С.Н.** Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики: монография. - Н. Новгород, 2011.

13. **Радачинский С.Н.** Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики: автореф. дис. … д-ра юрид. наук. - Н. Новгород, 2011.

14. **Бабыч С.А.** Провокация взятки либо коммерческого подкупа: уголовно-правовые и криминологические аспекты: автореф. дис. …канд. юрид. наук. - Москва, 2006.

15. Словарь по уголовному праву / Отв. ред. А.В. Наумов. - М., 1997.

16. Советское уголовное право. Общая часть / Под ред. Б.В. Здравомыслова, М.А. Гельфера, П.И. Гришаева. - М., 1982.

17. Советское уголовное право. Общая часть / Под ред. Н.А. Беляева, М.И. Ковалева. - М., 1977.

18. **Таганцев Н.С.** Русское уголовное право. – М., 1994, Т. 1.

19. Уголовное право. Особенная часть: Учебник / Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой, Г.П. Новоселова. - М., 2001.

ПРАВОВАЯ СУЩНОСТЬ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ. ПРАВОМЕРНАЯ ПРОВОКАЦИЯ ПРЕСТУПЛЕНИЯ. УГОЛОВНО-ПРАВОВАЯ ОЦЕНКА ДЕЙСТВИЙ ПРОВОКАТОРА И ЛИЦА, ПОДВЕРГШЕГОСЯ ПРОВОКАЦИИ

Аннотация

В статье всесторонне исследуются правовая сущность провокации преступления, критерии её разграничения с институтом соучастия, концепция правомерной провокации преступления, а также особенности уголовной ответственности провокатора и лица, подвергшегося провокации.

С целью обоснования предложения о криминализации провокации преступления в статье отдельно исследуются признаки провокации преступления и ключевые критерии её разграничения с институтом соучастия. Отдельным предметом рассмотрения становятся элементы предлагаемого состава преступления провокации (объект, объективная сторона, субъект, субъективная сторона) и особенности момента окончания преступления.

Учитывая научно-практическую значимость исследуемой проблемы, в статье рассмотрены особенности квалификации деяния провокатора также в

тех случаях, когда подвергшееся провокации лицо под влиянием провокации, кроме спровоцированного преступления, совершает иное преступление, которое осознаётся провокатором.

В статье также детально рассматриваются вопросы уголовно-правовой оценки действий лица, подвергшегося провокации, возможность и целесообразность наличия обстоятельства, смягчающего уголовную ответственность или наказание лица, подвергшегося провокации.

По результатам проведённого исследования в статье предлагается криминализировать провокацию преступления с учётом успешного международного и зарубежного опыта. В то же время, придавая значение правомерной провокации, предлагается закрепить уголовно-правовую норму, согласно которой она будет признаваться обстоятельством, исключающим уголовную ответственность.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, провокация преступления, универсальное и инклюзивное регулирование (норма), соучастие, правомерная провокация преступления, уголовная ответственность провокатора, уголовная ответственность лица, подвергшегося провокации.

THE LEGAL NATURE OF CRIME PROVOCATION: LAWFUL PROVOCATION OF A CRIME: CRIMINAL-LEGAL ASSESSMENT OF THE ACTS COMMITTED BY THE PROVOCATEUR AND THE PROVOKED PERSON

Annotation

The article provides a comprehensive analysis of the legal nature of crime provocation, the criteria for distinguishing it from the institution of complicity, the concept of lawful provocation of a crime, and the specific features of criminal liability for both the provocateur and the individual subjected to provocation.

In order to present a well-founded proposal for the criminalization of crime provocation, the article separately examines the characteristics of crime provocation and the key criteria for distinguishing it from the institution of complicity. The article also specifically addresses the elements of crime provocation as a proposed criminal offense (object, objective element, subject, subjective element), as well as the particularities concerning the moment of completion of the offense.

Driven by the scholarly and practical relevance of the issue under study, the article also examines the particularities of qualifying the act of the provocateur in cases where, under the influence of provocation, the provoked individual commits not only the intended offense but also another crime, which is foreseen by the provocateur.

The article also provides a detailed discussion of the criminal-legal assessment of the acts committed by the provoked individual, including the possibility and rationale for considering crime provocation as a circumstance that may mitigate the individual's criminal liability or punishment.

Based on the research conducted, the article proposes the comprehensive criminalization of crime provocation, taking into account successful international practices and the experiences of other states. At the same time, recognizing the value of lawful provocation, the article proposes the adoption of a criminal-legal provision under which it would be considered a circumstance excluding criminal liability.

Keywords: operational-search activity, operational-search measure, crime provocation, universal and inclusive regulation (norm), complicity, lawful provocation of a crime, criminal liability of the provocateur, criminal liability of the provoked person.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.06.2025 թ., տրվել է գրախոսության 10.06.2025 թ., ընդունվել է տպագրության 25.06.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-155

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերություն,
ԲՇՊ բաժնի իրավաբան,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետ,
մագիստրատուրայի ուսանող,
Քրեական արդարադատություն և
փաստաբանություն, 2-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ ***Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ***
Իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԻՔ

Ամփոփագիր

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ քրեական դատավարության որոշ ինստիտուտներ ենթարկվել են մի շարք էական փոփոխությունների, որոնք ոլորտի հասարակական հարաբերությունների և օրենսդրության կատարելագործման արդյունք էին: Քրեական հետապնդման ինստիտուտը ևս փոփոխությունների է ենթարկվել: Օրենսդիրն ամրագրել է քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելը, ինչպես նաև քրեական հետապնդումը նորոգելը, որոնք հայրենական քրեական դատավարական օրենսդրության մեջ նորույթ են: Օրենսդրության մեջ առաջին անգամ սահմանվեցին քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ՝ կախված տվյալ քննվող հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից: Սույն աշխատության մեջ մանրամասն ուսումնասիրվել են քրեական հետապնդման ժամկետները՝ որպես մեղադրյալի ողջամիտ ժամկետի երաշխիք: Ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում վեր են հանվել իրավակիրառ պրակտիկայում առաջացող հիմնախնդիրներ և դրանցից բխող առաջարկներ են կատարվել՝ օրենսդրական բացերը լրացնելու համար:

Պրակտիկայում առաջանում է այնպիսի խնդիր, որ փաստացի առկա է լինում քրեական հետապնդում, սակայն քրեական հետապնդման քրեադատավարական ժամկետների ընթացքն ավելի ուշ սկսվելու նպատակով մեղադրանք չի առաջադրվում, այսինքն քրեական հետապնդում չի հարուցվում: Վերոնշյալ խնդրի լուծման համար առաջարկել ենք, որ եթե անձի նկատմամբ փաստացի առկա է քրեական հետապնդում, ապա ժամկետների հաշվարկը սկսվի փաստացի կասկածի օրվանից:

Հիմնաբառեր. քրեական հետապնդում, քրեական հետապնդման ժամկետներ, ողջամիտ ժամկետ, մեղադրյալ, քրեական հետապնդման դադարեցում, դատախազ, քրեական վարույթ:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդիր մարմինը, ընդունելով Քրեական դատավարության նոր օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), էական փոփոխությունների է ենթարկել քրեադատավարական մի շարք ինստիտուտներ, որոնք ուղղված են քրեական գործերով վարույթի կատարելագործմանը, պրակտիկայում նախկինում առաջացած խնդիրների լուծմանը, առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև համապատասխանեցվել է միջազգային իրավական չափանիշներին: Օրենսգիրքը հիմնվել է ՀՀ վճռաբեկ դատարանի ու Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև առաջադեմ միջազգային փորձի վրա:

Պետք է նշենք, որ օրենսդրության կատարելագործումն ինքնին կարևոր քայլ է, սակայն մի կողմից այլ հարց է իրավական նորմերի, դրանց իրացման մեխանիզմների ամրագրումը, մյուս կողմից՝ այդ նորմերի իրացումը պրակտիկայում: Ուստի՝ այստեղ կարող են առաջանալ որոշ հիմնախնդիրներ, որոնց կարող են առնչվել իրավակիրառողներն իրենց գործունեության ընթացքում:

Օրենսգրքի ընդունմամբ էական փոփոխությունների է ենթարկվել նաև քրեական հետապնդման ինստիտուտը: Քրեական հետապնդման իրավահարաբերությունների շարքում, ի տարբերություն նախկին իրավակարգավորումների, օրենսդիրն ամրագրել է քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելը, ինչպես նաև քրեական հետապնդումը նորոգելը[1]: Հիմնվելով Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված՝

[1] Տե՛ս ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=200673 , հոդված 192-198:

քրեական հետապնդում հարուցելու բացառիկ իրավունքի վրա[1], օրենսդիրը դատախազին է վերապահել նաև քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու լիազորությունը, այսինքն՝ մինչդատական վարույթում քրեական հետապնդման տնօրինումը դատախազի բացառիկ իրավասությունն է: Որպես դատախազության անկախ գործառույթ՝ քրեական հետապնդումը քրեական դատավարությանը դատախազի մասնակցության հիմնական ուղղությունն է, որը բաղկացած է դատավարական գործողություններից:

Քրեական հետապնդումը հարուցվում է կոնկրետ անձի նկատմամբ (in personam)[2]: Քրեական հետապնդման հարուցումը **դատախազի** կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելն է:

Հայրենական դատավարական օրենսդրության շրջանակներում առաջին անգամ սահմանվեցին քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ՝ կախված տվյալ քննվող հանցանքի բնույթից և ծանրության աստիճանից: Նման իրավակարգավորման նախատեսումը նշանակալի քայլ է վարույթի ողջամիտ ժամկետի, հետևաբար նաև՝ դատավարության մասնավոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից: Վարույթի ողջամիտ ժամկետի պահպանմանն ուղղված դրույթ օրենսդիրը նախատեսել է քրեադատավարական սկզբունքի մակարդակով[3]: Նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել **պատշաճ ջանասիրություն վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար**: Մեղադրյալն ունի **ողջամիտ ժամկետում** դատարանի առջև կանգնելու իրավունք: Անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի **ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով**: Վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակներում գործելիս առաջնորդվել ինչպես քրեական դատավարության վերոնշյալ, այնպես էլ մյուս սկզբունքներով: Օրենսգիրքը հստակ սահմանել է ժամկետային սահմանափակումներ՝ ելնելով մեղսագրվող արարքի

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն: Երևան 2015, https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723 , 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ:

[2] Տե՛ս **Ղամբարյան Ա.Ս.**, Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): ՀՀ Քննչական կոմիտե, 2016, էջ 29:

[3] Տե՛ս Օրենսգրքի 24-րդ հոդված:

(հանցագործության) ծանրության աստիճանից[1]: Համաձայն Օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

1. 3 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
2. 5 ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
3. 8 ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով,
4. 10 ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով:

Կարծում ենք, որ քրեական հետապնդման ժամկետների սահմանումն արդարացված է, քանի որ քրեական վարույթի ընթացքում կարող են սահմանափակվել մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները, որոշ դեպքերում՝ տևական ժամանակով: Ընդ որում, ժամկետներ սահմանելով՝ օրենսդիրը մի կողմից երաշխիք է ստեղծել մեղադրյալի համար, որպեսզի նրա իրավունքներն ու ազատությունները կամայականորեն չսահմանափակվեն երկար ժամանակով, իսկ մյուս կողմից մեխանիզմ է ստեղծել, որ վարույթն իրականացնող մարմինը գործի բարեխղճորեն և դրսևորի պատշաճ ջանասիրություն: Ժամկետների սահմանումը կարևորվում է նաև նրանով, որ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե քրեական հետապնդման առավելագույն ժամկետը լրացել է, և դրա ընթացքում դատախազի կողմից վարույթի նյութերը դատարանին չեն հանձնվել[2]: Ընդ որում, այդ հիմքը դասվում է քրեական հետապնդումը դադարեցնելու արդարացնող հիմքերի թվին՝ բացառելով արդարացման ենթակա դեպքերում վարույթը արհեստականորեն ձգձգելու միջոցով քրեական հետապնդումը ժամկետի հիմքով դադարեցնելու՝ քրեական հետապնդման մարմինների մոտիվացիան:

Քրեական գործերով վարույթների քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն ուղղված օրենսդրական նման կարգավորումը բխում է վարույթի ողջամիտ ժամկետի քրեադատավարական սկզբունքից: Սակայն պետք է նշենք, որ քրեական հետապնդման ժամկետների կարգավորումը բացառապես հանցագործության դասակարգման հիման վրա միանշանակ չէ և ոչ բոլոր դեպքերում է կարող նպաստել կոնկրետ գործով ողջամիտ ժամկետի պահպանմանը: Բացի այդ՝ բացառված չեն դեպքեր, երբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների ժամանակ պահանջվեն ավելի երկար ժամկետներ, սակայն վարույթն իրականացնող մարմինները կաշկանդված լինեն վերոնշյալ ժամկետներով:

[1] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 1-ին մաս:
[2] Տե՛ս նույն տեղում, 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ:

Օրենսդիրը նախատեսել է նաև քրեական հետապնդման ժամկետների երկարաձգման հնարավորությունը, սակայն միայն բացառիկ դեպքերում, և երբ դա է պահանջում արդարադատության շահը[1]: Վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու **ոչ մեծ կամ միջին** ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով հանրային քրեական հետապնդման ժամկետները՝ **առավելագույնը մեկ ամսով**, իսկ **ծանր կամ առանձնապես ծանր** հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետները՝ **առավելագույնը երկու ամսով**: Այն դեպքում, երբ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցված տարբեր ծանրության մեկից ավելի հանցանքների համար, ապա կիրառվում է առավել ծանր հանցանքի համար Օրենսգրքով սահմանված ժամկետը[2]:

Մեղադրյալի համար ևս մեկ իրավական երաշխիք է ստեղծվել ավելի ծանր հանցանքի (հանցանքների) համար հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու, կամ նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխվելու դեպքում[3]: Այս դեպքում կիրառվում է այն հանցանքի (հանցանքների) համար՝ Օրենսգրքով սահմանված ժամկետը, որով (որոնցով) հանրային քրեական հետապնդումը շարունակվում է: Այդ ժամկետը լրացած կամ մեկ ամսից պակաս լինելու դեպքում քրեական հետապնդումը չի կարող տևել ավելի, քան մեկ ամիս: Օրենսդիրը իրավական երաշխիք է նախատեսել վերոնշյալ նորմով, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը կամայականորեն չգործի և չկարողանա հաղթահարել քրեական հետապնդման ժամկետը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արարքի իրավական գնահատականի փոփոխման միջոցով: Օրինակ՝ մեղադրյալի նկատմամբ ծանր հանցանքով 6 ամիս քրեական հետապնդում իրականացնելուց հետո, եթե նրան վերագրվող արարքի նոր որակման արդյունքում այն առանձնապես ծանր հանցագործություն է, ապա այն կարող է տևել 4 ամիս, իսկ նույն օրինակում 7 ամիս քրեական հետապնդում իրականացնելուց հետո՝ այն չի կարող տևել 1 ամսից ավել: Օրենսգրքով սահմանված ժամկետներն ընդհատվում են քրեական հետապնդումը դադարեցնելու պահից և շարունակվում են քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու կամ քրեական հետապնդումը նորոգելու դեպքում:

[1] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 2-րդ մաս:
[2] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 3-րդ մաս:
[3] Տե՛ս նույն տեղում, 192-րդ հոդվածի 4-րդ մաս:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելը կարող է տեղի ունենալ ինչպես անորոշ ժամանակահատվածով, այնպես էլ հստակ սահմանված ժամկետներով: Քրեական հետապնդման ժամկետը կասեցված է համարվում քննիչի միջնորդության հիման վրա հսկող դատախազի կողմից որոշում կայացնելու պահից: Համաձայն Օրենսգրքի 193-րդ հոդվածի՝ քրեական հետապնդման ժամկետների կասեցման հիմք են հանդիսանում՝

1. քննությունից խուսափելու կամ այլ պատճառներով մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ է,

2. մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով զրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից,

3. մեղադրյալը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով չի կարող մասնակցել վարույթին,

4. մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր,

5. գործում է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է վարույթի հետագա իրականացմանը[1]:

Եթե առանց նշանակված փորձաքննության եզրակացությունը կամ առանց քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը ստանալու հնարավոր չէ լուծել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու կամ այն դադարեցնելու հարցը, ապա յուրաքանչյուր դեպքում քրեական հետապնդման ժամկետը՝

1. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով կարող է կասեցվել 2 ամսից ոչ ավելի,

2. ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով՝ 4 ամսից ոչ ավելի ժամկետով:

Ամեն դեպքում, սույն մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման կասեցման ընդհանուր ժամկետը նույն մեղադրյալի նկատմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով չի կարող գերազանցել Օրենսգրքի 192-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդման առավելագույն ժամկետները, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով՝ նույն հոդվածով նախատեսված քրեական հետապնդման առավելագույն ժամկետների կրկնապատիկը: Քրեական հետապնդման ժամկետը կասեցվում է մինչև դրա համար հիմք ծառայած հանգամանքների վերանալը, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր: Տվյալ պարագայում քրեական հետապնդման ժամկետի կասեցումը դադարեցվում է

[1] Տե՛ս նույն տեղում, 193-րդ հոդվածի 2-րդ մաս:

մինչև համագործակցությունը դադարեցնելը կամ մինչև մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելը:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումն ընդունվում է մեղադրյալի բացակայությամբ հնարավոր և անհրաժեշտ բոլոր վարութային գործողությունները կատարելուց հետո, սակայն չի սահմանափակում նախաքննության ընթացքում վարութային այլ գործողությունների կատարումը, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է քրեական հետապնդման ժամկետը կասեցնելուց հետո[1]: Այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք քրեական հետապնդման ժամկետի կասեցման ընթացքում ձեռք բերված ապացույցները թույլատրելի են, թե ոչ: Օրենսդիրը շահագրգիռ անձանց հնարավորություն է ընձեռել հետագայում այդ ապացույցների թույլատրելիությունը վիճարկել[2]:

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին միջնորդությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին: Հսկող դատախազը միջնորդությունն ստանալու պահից ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում որոշում է կայացնում քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին կամ որոշմամբ մերժում է միջնորդությունը: Այդ որոշումներն անհապաղ ուղարկվում են քննիչին: Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումն ստանալուց հետո քննիչը դրա պատճեններն անհապաղ հանձնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց գրավոր պարզաբանելով որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական հետապնդման ժամկետի կասեցումը կարող է խախտել որոշակի անձանց (օրինակ՝ մեղադրյալի) իրավունքները և օրինական շահերը՝ օրենսդիրը սահմանել է նաև շահագրգիռ անձի կողմից հսկող դատախազի որոշման բողոքարկման հնարավորությունը՝ ինչպես վերադաս դատախազին, այնպես էլ դատական կարգով: Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշումը վարույթի մասնավոր մասնակիցը կարող է բողոքարկել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում: Վերադաս դատախազը բողոքը ստանալու պահից 15-օրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին[3]:

[1] Տե՛ս նույն տեղում, 194-րդ հոդված:

[2] Տե՛ս նույն տեղում, 97-րդ, 320-րդ և 335-րդ հոդվածներ:

[3] Տե՛ս նույն տեղում, 194-րդ հոդվածի 4-րդ մաս, 299-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

Քրեական հետապնդման նման ոչ ճկուն ժամկետների սահմանումը գործնականում կհանգեցնի նրան, որ վարույթն իրականացնող մարմիններն արհեստականորեն կարող են ձգձգել անձին մեղադրյալի կարգավիճակ տալը, որպեսզի քրեական հետապնդման ժամկետները չհոսեն: Չեն բացառվի իրավիճակներ, որ քրեական հետապնդման մարմինները նախաքննություն կատարելու առավել երկար ժամկետներ ունենալու նպատակով անձին կարող են մեղադրանք առաջադրել առավել ծանր հոդվածով, որոնց համար նախատեսված են քրեական հետապնդման առավել երկար ժամկետներ:

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ ներպետական և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դատական նախադեպերի, որոնք վերաբերելի են ուսումնասիրվող թեմային, հատկապես՝ անձի նկատմամբ իրականացվող փաստացի քրեական հետապնդմանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանը ***Գագիկ Միքայելյանի*** գործով արտահայտված իրավական դիրքորոշմամբ հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Մասնավորապես, **«քրեական մեղադրանք»** հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium) գործով վճիռ, 1980 թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44)[1]: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ***«ողջամիտ ժամկետը» սկսվում է անձին «մեղադրանք առաջադրելու» պահից***, դա կարող է տեղի ունենալ գործն առաջին ատյանի դատարան ուղարկելուն նախորդող օրը, օրինակ՝ ձերբակալման օրը, այն օրը, երբ շահագրգիռ անձը պաշտոնապես ծանուցվել է նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին, կամ այն օրը, երբ սկսվել է նախաքննությունը: Այսինքն, անձի նկատմամբ «**մեղադրանքի**» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ***ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն***, ինչպես նաև ***էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա[2]:***

Վճռաբեկ դատարանը ***Նորիկ Պողոսյանի*** գործով կայացված որոշմամբ եկել է այն եզրահանգման, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ն. Պողոսյանն ապօրինի

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գագիկ Միքայելյանի* գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 21-րդ կետը:

[2] Տե՛ս ՄԻԵԴ-ի *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982 թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007 թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004 թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98:

թմրամիջոց է իրացրել, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ն. Պողոսյանին մերկացնող հարցեր[1]:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներով արձանագրել է, որ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է, այն նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք է: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքելու իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է՝ դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու[2]:

Վճռաբեկ դատարանն ***Արթակ Վարոսյանի*** գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ փաստացի քրեական հետապնդման ներքո գտնվող անձին կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերելի իրավունքների մասին ծանուցելը վերջինիս դե յուրե կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նորիկ Պողոսյանի* գործով 2010 թ. մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշման 21-րդ կետը:

[2] Տե՛ս *Նորիկ Պողոսյանի* գործով 2010 թ. մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշման 25-րդ կետ, *Հեղինե Գալստյանի* գործով 2015 թ. հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետ, Հայկ Սիմոնյանի գործով 2017 թ. օգոստոսի 30-ի թիվ ԵԱԴԴ/0027/01/15 որոշման 13-րդ կետ, *Արթուր Մամաջանյանի* գործով 2017 թ. նոյեմբեր 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշման 21-րդ կետ:

կարգավիճակ շնորհելու ընթացակարգ չի ենթադրում[1]: Դա կոչված է ապահովելու, մասնավորապես հարցաքննության պարագայում, մերկացնող հարցեր տալու և դրանով իսկ փաստացի քրեական հետապնդում իրականացնելու մասին պատշաճ ծանուցումը և կոնկրետ քննչական գործողության ընթացքում, անկախ դե յուրե կարգավիճակից, կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքից բխող դատավարական երաշխիքներից օգտվելու հնարավորության ընձեռումը:

Փաստորեն, կարող ենք եզրակացնել, որ Օրենսգրքի համաձայն՝ կախված անձին վերագրվող հանցանքի աստիճանից, քրեական վարույթի համար սահմանվում է վերջնաժամկետ (եթե քրեական վարույթում կա մեղադրյալ, այսինքն հարուցված է քրեական հետապնդում), որի ավարտից հետո քրեական գործը կա՛մ պետք է ուղարկվի դատարան, կա՛մ էլ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման: Մինչև վարույթում մեղադրյալին ներգրավելը գործը կարող է քննվել առանց ժամկետի սահմանափակման, սակայն երբ հայտնվում է մեղադրյալը, սկսում է գործել Օրենսգրքով սահմանված ժամկետների ընթացքը: Այս ամենի նպատակն այն է, որ անհիմն չսահմանափակվեն մեղադրյալի իրավունքներն ու ազատությունները և մեղադրյալի կարգավիճակով անձը երկար ժամանակ չմնա: Օրենսդրորեն նման ամրագրումը նպաստել է և ծառայելու է որպես մեղադրյալի ողջամիտ ժամկետի իրավունքի երաշխիք:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրենք, որ պրակտիկայում առաջանում է այնպիսի խնդիր, երբ փաստացի քրեական հետապնդում լինում է, սակայն մեղադրանք չի առաջադրվում, այսինքն քրեական հետապնդում չի հարուցվում, որպեսզի քրեական հետապնդման քրեադատավարական ժամկետների սահմանափակումը հաղթահարվի ու ժամկետների ընթացքն ավելի ուշ սկսվի: Վերոնշյալ հիմնախնդրի լուծման համար Վճռաբեկ դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո առաջարկում ենք, որ եթե անձի նկատմամբ փաստացի առկա է քրեական հետապնդում, ապա ժամկետների հաշվարկը պետք է կատարել փաստացի կասկածի օրվանից: Վերոնշյալը հիմնավորում ենք նրանով, որ Եվրոպական դատարանը հստակ սահմանել է, որ իրավունքը պետք է լինի իրական և գործնականում կիրառվի, այդ իսկ պատճառով պետք է կիրառվի փաստացի քրեական հետապնդման կարգավորումը: Եթե կա

[1] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արտակ Վարոսյանի* գործով 2024 թ. ապրիլի 15-ի թիվ ԵԴ/0009/11/20 գործով կայացված որոշման 14-րդ կետը:

փաստացի կասկած, որի մասին անձը պատշաճ տեղեկացել է, ապա քրեական հետապնդումը պետք է գործի այդ օրվանից:

Մյուս կողմից, երբ առկա է փաստացի կասկած, սակայն անձը չի տեղեկացվել դրա մասին վարույթն իրականացնող մարմնի կողմից, ապա ժամկետի սկիզբը ևս պետք է համարվի փաստացի կասկածի օրը, այսինքն այն օրը, երբ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր հայտնել: Այս իրավական խնդրին օրենսդիրն արդեն իսկ անդրադարձել է Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, այն է՝ Օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, որի նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու: Օրենսդիրը միայն ապացուցման իրավունքի շրջանակներում է անդրադարձել վերոնշյալ խնդրին, սակայն այն պետք է գործի նաև քրեական հետապնդման ժամկետների դեպքում: Առաջարկում ենք, որ ժամկետի հաշվարկը կատարվի առավելագույնի սկզբունքով, այսինքն փաստացի կասկածի օրվանից, երբ անձը տեղյակ չէ դրա մասին՝ սկսի հոսել առանձնապես ծանր հանցագործության համար սահմանված առավելագույն՝ 10 ամիսը: Վերոնշյալ փոփոխությունները կարող են կատարվել ինչպես օրենսդրական լրացում կատարելով, այնպես էլ նախադեպային իրավունք ձևավորելով:

Կարծում ենք նաև, որ քննարկվող ինստիտուտի ժամկետների վերաբերյալ իրավակարգավորումներում կարելի է նախատեսել քրեական հետապնդման ժամկետի երկարաձգման այլ կառուցակարգ: Առաջարկում ենք Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ կերպ.

«Բացառիկ դեպքերում, վարույթի բարդությունից և երբ դա է պահանջում արդարադատության շահը, վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 2 ամսով»:

Ընդ որում, ժամկետի երկարաձգումը չպետք է կախված լինի անձին վերագրվող հանցանքի ծանրությունից, այլ վարույթի բարդությունից, ինչպես նաև այլ բացառիկ հանգամանքներով պայմանավորված: Սա թույլ կտա մի կողմից զերծ մնալ վարույթն իրականացնող մարմինների կամայականություններից ու չարաշահումներից՝ ապահովելով մեղադրյալի ողջամիտ ժամկետի իրավունքը, իսկ մյուս կողմից կապահովի վարույթի բնականոն ընթացքն ու արդյունավետությունը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
2. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=200673
3. *Գագիկ Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում:
4. *Նորիկ Պողոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08 որոշում:
5. *Հեղինե Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշում:
6. *Հայկ Սիմոնյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԴԴ/0027/01/15 որոշում:
7. *Արթուր Մամաջանյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբեր 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշում:
8. *Արփակ Վարոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ԵԴ/0009/11/20 որոշում:
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982 թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78:
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007 թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04:
11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004 թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97:
12. **Ղամբարյան Ա.Ս.,** Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): ՀՀ Քննչական կոմիտե 2016, էջ 29:

СРОКИ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ КАК ГАРАНТИЯ ПРАВА ОБВИНЯЕМОГО НА РАЗУМНЫЙ СРОК ПРЕСЛЕДОВАНИЯ

Аннотация

С принятием нового Уголовно-процессуального кодекса РА некоторые уголовно-процессуальные институты претерпели ряд существенных изменений, которые явились следствием совершенствования общественных отношений и законодательства в данной сфере. Претерпел изменения и институт уголовного преследования. Законодатель закрепил сроки привлечения к уголовной ответственности, их приостановление, а также возобновление уголовного преследования, являющиеся новшеством в отечественном уголовно-процессуальном законодательстве. Впервые в законодательстве были определены максимальные сроки уголовного преследования в зависимости от характера и тяжести данного расследуемого преступления. В данной работе подробно изучены сроки уголовного преследования как гарантия обеспечения права обвиняемого на разумный срок. В результате исследований и анализов были выделены проблемы, возникающие в юридической практике, и внесены предложения по восполнению законодательных пробелов.

На практике возникает такая проблема, что уголовное преследование по факту есть, однако в целях более позднего начала исчисления уголовно-процессуальных сроков уголовного преследования обвинение не предъявляется, то есть уголовное преследование не возбуждается. Для решения вышеуказанной проблемы мы предложили, чтобы в случае наличия в отношении лица уголовного преследования исчисление сроков начиналось с даты возникновения фактического подозрения.

Ключевые слова: уголовное преследование, сроки уголовного преследования, разумный срок, обвиняемый, прекращение уголовного преследования, прокурор, уголовное производство.

TERMS OF CRIMINAL PROSECUTION AS A GUARANTEE OF THE RIGHT OF THE ACCUSED TO A REASONABLE PERIOD OF PROSECUTION

Annotation

With the adoption of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, some criminal procedure institutions have undergone a number of significant changes, which were the result of improvements in public relations and legislation in this area. The institution of criminal prosecution has also undergone changes. The legislator established the terms for bringing persons to criminal responsibility, their suspension, and the resumption of criminal prosecution, which are an innovation in domestic criminal procedure legislation. For the first time, the legislation defined maximum terms for criminal prosecution, depending on the nature and severity of the crime under investigation. In this paper, the terms of criminal prosecution are studied in detail as a guarantee of a reasonable time for the accused. As a result of research and analysis, problems that arise in legal practice were identified, and proposals were made to fill the legislative gaps.

In practice, there is a problem where criminal prosecution exists in fact, but for the purpose of delaying the start of the criminal procedural period of criminal prosecution, no charge is brought; that is, no criminal prosecution is initiated. To solve the above problem, we proposed that if there is actually a criminal prosecution against a person, then the calculation of terms should begin from the date the actual suspicion arose.

Keywords: criminal prosecution, terms of criminal prosecution, reasonable time, accused, termination of criminal prosecution, prosecutor, criminal proceedings.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.08.2025 թ., տրվել է գրախոսության 10.08.2025 թ., ընդունվել է տպագրության 20.08.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-169

NAREK BALYAN[1]
Legal adviser at the Legal Department
of the Ministry of Finance
of the Republic of Armenia,
4th-year student at the Department of
Theory of Law and Constitutional Law
at the Institute of Law of the Russian-Armenian
(Slavonic) University

Scientific Supervisor: EDGAR SHATIRYAN
Justice of the Constitutional Court
of the Republic of Armenia
PhD in Law, Associate Professor

[2] Տե՛ս **UNODC,** Global Report on Trafficking in Persons 2024 (United Nations publication, Sales no.: E.24.XI.11), https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/2024/GLOTIP2024BOOK.pdf

Կրթության ցածր մակարդակը ևս մեծացնում է թրաֆիքինգի զոհ դառնալու ռիսկը: Կրթության պակաս ունեցող անձինք հաճախ չունեն բավարար տեղեկացվածություն իրենց իրավունքների մասին և դժվարանում են տարբերակել օրինական և կեղծ աշխատանքային առաջարկները: Սա նրանց դարձնում է թիրախ թրաֆիքերների համար, ովքեր օգտվում են նրանց անտեղյակությունից: UNODC-ի զեկույցում նշվում է, որ թրաֆիքինգի զոհերի զգալի մասը՝ մոտ 40%, ունեն միայն տարրական կամ ավելի ցածր կրթություն: Կրթության պակասը սահմանափակում է ոչ միայն անձի մասնագիտական աճը, այլև՝ նրա իրավական պաշտպանվածության մակարդակը, ինչն էլ հեշտացնում է թրաֆիքերների կողմից նրանց շահագործումը:

Սեռային անհավասարությունն ու կանանց նկատմամբ խտրականությունը թրաֆիքինգի հիմնական գործոններից են: Ըստ UNODC-ի տվյալների՝ կանայք և աղջիկները կազմում են թրաֆիքինգի զոհերի 65%-ը: Նրանք ավելի հաճախ են ենթարկվում սեռական շահագործման, հարկադիր ամուսնությունների և տնային ստրկության: Որոշ երկրներում կանանց իրավական պաշտպանությունը թույլ է, ինչը նպաստում է թրաֆիքինգի տարածմանը:

Սոցիալական խտրականությունն ու խոցելի խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքը ևս թրաֆիքինգի պատճառներից է: Փոքրամասնությունները, էթնիկ խմբերը, հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ենթարկվում են թրաֆիքինգի, քանի որ նրանք տնտեսական կայունության և իրավական պաշտպանության ավելի քիչ հնարավորություններ ունեն:

Զոհերի հավաքագրման մեթոդները բազմազան են: Հաճախ զոհերը ճանաչում և վստահում են իրենց թրաֆիքերներին: Միջազգային միգրացիոն կազմակերպության տվյալներով՝ 41%-ը թրաֆիքինգի է ենթարկվում ընտանիքի անդամների կողմից, 14%-ը՝ մտերմական գործընկերների, իսկ 11%-ը՝ ընկերների կողմից: Այսպիսով, թրաֆիքինգի դեպքերի ծանրակշիռ մասում զոհերը ճանաչում են իրենց թրաֆիքերներին[1]:

Նրանք առաջարկում են այլ երկրներում կամ քաղաքներում բարձր վարձատրվող աշխատանքներ, կրթական հնարավորություններ կամ ավելի լավ կենսապայմաններ ունենալու հնարավորություններ: Սակայն, երբ զոհերը համաձայնվում և տեղափոխվում են, նրանք հայտնվում են շահագործման պայմաններում՝ առանց ազատության և իրավունքների: Աղքատությունը, կրթության պակասը և զինված հակամարտությունները կարող են առաջացնել

[1] Տե՛ս https://reliefweb.int/report/world/counter-trafficking-data-brief-family-members-are-involved-nearly-half-child

հուսահատություն և անօգնականության զգացում: Այս հոգեբանական վիճակները նվազեցնում են մարդկանց դիմադրողականությունը ռիսկային որոշումների նկատմամբ, ինչն էլ թրաֆիքերներին հնարավորություն է տալիս հեշտությամբ շահագործել նրանց:

Այս երևույթը չի սահմանափակվում որևէ տարածաշրջանով կամ սոցիալական խմբով. այն գլոբալ խնդիր է, որի դեմ պայքարը պահանջում է համապարփակ մոտեցում՝ ներառելով կանխարգելիչ միջոցառումներ, իրավական բարեփոխումներ և հանրային իրազեկվածության բարձրացում:

Հանցավոր խմբերի ներսում ներգրավված անձանց կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է տարբեր տարիքային խմբեր, սոցիալական և քրեական անցյալ ունեցող անձանց: Թույլ իրավական համակարգերը և կոռուպցիան ստեղծում են բարենպաստ միջավայր մարդկանց թրաֆիքինգի համար՝ նպաստելով դրա տարածմանը և խոչընդոտելով դրա արդյունավետ կանխարգելմանը: Շատ դեպքերում այս հանցագործություններում ներգրավված են լինում ոչ միայն կազմակերպված հանցավոր խմբերը, այլև պետական կառույցների ներկայացուցիչներ՝ մաքսային ծառայությունների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնատար անձինք, որոնք կոռուպցիոն սխեմաների միջոցով ապահովում են թրաֆիքինգի անխոչընդոտ իրականացումը: Արդյունքում ստեղծվում է փակ շրջան, որտեղ իրավական անորոշությունը և վերահսկողության բացակայությունը թույլ են տալիս շահագործել առավել խոցելի խմբերին՝ խաթարելով արդարադատության համակարգի արդյունավետությունը:

Ի տարբերություն զոհերի, ովքեր հաճախ սոցիալապես խոցելի խմբերից են և ունեն ցածր կրթական մակարդակ, հանցավոր խմբերի առաջնորդները, որպես կանոն, բավականին կրթված են: Նրանք ունեն բարձր իրավաբանական, ֆինանսական կամ տեխնիկական գիտելիքներ, ինչը հնարավորություն է տալիս հմտորեն կազմակերպել հանցավոր սխեմաները, խուսափել պատասխանատվությունից և մոլորեցնել ինչպես զոհերին, այնպես էլ իրավապահ մարմիններին: Այսպիսով, հանցավոր ցանցերի ներսում կրթական և սոցիալական խզվածությունը խորացնում է շահագործման մեխանիզմները՝ ուժեղացնելով հանցավոր խմբերի ազդեցությունը:

Հանցավոր խմբերում ներգրավված անձանց տարիքային բաշխվածությունը զգալիորեն տարբեր է՝ կախված հանցագործության բնույթից: Ըստ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի (UNODC) 2022 թվականի զեկույցի՝ կազմակերպված հանցավոր խմբերում ներգրավված անձանց մեծ մասը 26-40 տարեկան են և կազմում են ընդհանուրի 40-45%-ը:

18-25 տարեկանները կազմում են 30-35%, մինչդեռ 12-17 տարեկան անչափահասները՝ 10-15%: Անչափահասների ներգրավվածությունը հատկապես նկատվում է թմրանյութերի վաճառքի, ավազակային հարձակումների, փողերի լվացման և գողությունների դեպքերում: Մեքսիկայի, Կոլումբիայի, Բրազիլիայի և Աֆրիկյան որոշ երկրներում անչափահասները կազմում են նույնիսկ հանցավոր խմբերի 20%-ը, իսկ Եվրոպական երկրներում՝ Իտալիայում, Իսպանիայում և Ֆրանսիայում, այդ ցուցանիշը միջինը 12-15% է :

Հանցավոր խմբերի անդամները հիմնականում գալիս են սոցիալապես անապահով շերտերից, որտեղ գործազրկությունը, կրթական հնարավորությունների բացակայությունը և աղքատությունը առավել տարածված են: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հանցավոր խմբերի անդամների 45-50%-ն ունի միայն հիմնական կրթություն (մինչև 9-րդ դասարան), 30-35%-ն ավարտել է միջնակարգ դպրոց, 10-15%-ն ունի մասնագիտական կրթություն, իսկ բարձրագույն կրթությամբ անձինք կազմում են ընդամենը 5%-ը: Կրթական ցածր մակարդակ ունեցող անձինք առավել հակված են ներգրավվելու հանցավոր խմբերի մեջ, քանի որ նրանց համար այլընտրանքային ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են:

Չնայած կանայք համեմատաբար քիչ են ներգրավված հանցավոր խմբերում, նրանց դերը զգալի է որոշակի հանցագործությունների, հատկապես մարդկանց թրաֆիքինգի մեջ: Հաճախ հենց նախկինում թրաֆիքինգի զոհ դարձած կանայք են ներգրավվում այս հանցավոր գործունեության մեջ՝ երբեմն հարկադրանքով, երբեմն էլ՝ սոցիալական կամ ֆինանսական ծանր իրավիճակի պատճառով: Նրանք կարող են գործել որպես միջնորդներ, հավաքագրողներ կամ վերահսկողներ՝ օգտագործելով սեփական փորձը նոր զոհերին մոլորեցնելու և թրաֆիքինգի ցանց ներգրավելու համար: Այս երևույթը ձևավորում է թրաֆիքինգի փակ շղթա, որտեղ երբեմնի զոհերը վերածվում են շահագործման գործիքների՝ հաճախ առանց այլընտրանքի հնարավորություն ունենալու:

Մարդկանց թրաֆիքինգի նման քրեական ոլորտի դեմ պայքարի արդյունավետ միջոցների թվում կարելի է նշել ազգային քրեական օրենսդրության կատարելագործումը, որը նախատեսում է պատասխանատվություն մարդկանց թրաֆիքինգի համար: Սա ոչ միայն ապահովում է վերոնշյալ հանցագործության դեմ ուղղված ռեպրեսիվ միջոցների իրավական հիմքը, այլև ինքնուրույն կանխարգելիչ և դաստիարակչական ազդեցություն է ունենում հասարակության վրա:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում նախատեսված են հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

1. իրազեկման բարձրացում,
2. կրթական ծրագրերի իրականացում,
3. սոցիալական աջակցության ծրագրեր,
4. իրավական բարեփոխումներ և խստացված վերահսկողություն,
5. իրավապահ մարմինների կարողությունների զարգացում,
6. միջազգային համագործակցության ուժեղացում,
7. հետազոտությունների և տվյալների հավաքագրման իրականացում,
8. օժանդակության կենտրոնների ստեղծում և զարգացում:

Այս միջոցառումները նպատակ ունեն համապարփակ մոտեցմամբ կանխարգելել մարդկանց թրաֆիքինգը և ապահովել դրա դեմ արդյունավետ պայքար Հայաստանի Հանրապետությունում[1]:

Կարևոր է նշել նաև, որ թրաֆիքինգի կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը ոչ թե քրեական օրենսդրության առկայությունն է, այլ այդ հանցագործությունների համար անխուսափելի քրեական պատասխանատվությունը:

Միևնույն ժամանակ, չի կարելի չհամաձայնել Բ. Սվիրիդովի կարծիքի հետ, որ «միայն քրեական մեթոդներով մարդկանց թրաֆիքինգի շղթան ոչնչացնելու փորձը ուտոպիա է: Քանի որ այս տեսակի քրեական բիզնեսը չափազանց մեծ եկամուտ է ապահովում, քրեական օրենքի ընդհանուր և մասնավոր կանխարգելիչ մեխանիզմները բավարար չեն գործելու համար: Անհրաժեշտ է համալիր կանխարգելիչ միջոցառումների համակարգ՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում»[2]:

Օրենսդիրը պետք է գնա շատ ավելի հեռուն, քան Քրեական օրենսգրքում պարզապես համապատասխան հոդվածների կատարելագործումը: Թրաֆիքինգի զոհերին պետական պաշտպանություն ապահովող հատուկ օրենքները թույլ կտան համակարգային մոտեցում ցուցաբերել այս խնդրի իրավական լուծմանը՝ համատեղելով մեղավորներին պատժելու և տուժածների իրավունքները վերականգնելու խնդիրները:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը, https://www.irtek.am /views/act.aspx?aid=156465

[2] Տե՛ս **Свиридов Б.** Борьба с торговлей людьми и проституцией // Юридическая практика. № 18, 2006, էջ 23:

Իրավապահ մարմինները պետք է ակտիվորեն բացահայտեն մարդկանց թրաֆիքինգի զոհերին, քանի որ այս հանցագործության կատարման համար բնորոշ են բռնությունը (ֆիզիկական և հոգեբանական) և սպառնալիքները, ինչի հետևանքով զոհերը հաճախ հրաժարվում են իրենց նույնականացումից և չեն հայտարարում իրենց նկատմամբ կատարված հանցագործության մասին: Հանցագործները սովորաբար զոհերին ներշնչում են, որ նրանք պետք է վախենան ինչպես իրավապահ մարմիններից, այնպես էլ՝ ոչ կառավարական կազմակերպություններից: Եթե շահագործման ենթարկվողները անչափահասներ են, ապա թրաֆիքինգի կազմակերպիչները և մարմնավաճառության վայրերի ղեկավարները ստիպում են նրանց ներկայանալ որպես չափահասներ, ովքեր իբր իրենց ցանկությամբ են ներգրավվել սեռական շահագործման մեջ[1]:

Իրավապահ մարմինները պետք է ներդնեն մարդկանց թրաֆիքինգի զոհերի նույնականացման հատուկ ընթացակարգ, ինչպես նաև կանխարգելիչ աշխատանքներ իրականացնեն ռիսկային խմբերում, ներառյալ՝ ներգաղթի, մարմնավաճառության և մուրացկանության մասին օրենքները խախտած անձանց, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության խախտման մեջ ներգրավված մարդկանց շրջանում: Չի կարելի սպասել, որ թրաֆիքինգի զոհերը ինքնուրույն կհայտնվեն, նրանց պետք է հայտնաբերել օպերատիվ-հետախուզական միջոցների կիրառմամբ:

Հաջորդ կարևոր քայլը իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստումն է: Անհրաժեշտ է բարձրացնել իրավապահների որակավորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ այս հանցագործությունն արագ է փոփոխվում և դառնում ավելի բարդ: Բացի այդ, մարդկանց թրաֆիքինգի դինամիկ բնույթը պահանջում է իրավապահների հմտությունների շարունակական զարգացում: Այս խնդրի արդյունավետ լուծման կարևոր պայման է նաև միջազգային համագործակցությունը: ՌԴ ներքին գործերի մարմինները պետք է սերտորեն համագործակցեն այլ երկրների իրավապահ մարմինների հետ՝ միջազգային մակարդակով պայքար կազմակերպելու համար:

Իրավապահ մարմինները, դատախազները և դատավորները պետք է հասկանան մարդկանց թրաֆիքինգի գլոբալ բնույթը և ազգային օրենս-

[1] Տե՛ս **Гетман И.Б.**. Превентивные меры борьбы с торговлей людьми на современном этапе // Омская академия МВД РФ.

դրության շրջանակներում գործեն այնպես, որ դա համահունչ լինի միջազգային պատժիչ միջոցառումների համակարգին:

Մարդկանց թրաֆիքինգի և երեխաների, պատանիների ու երիտասարդների սեռական շահագործման վտանգի մասին տեղեկատվությունը պետք է տարածվի հնարավորինս լայն շրջանակներում: Առանձնահատուկ ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի այդ տեղեկատվությունը հասնի սոցիալապես անապահով խավերին, նրանց երեխաներին, պատանիներին ու երիտասարդներին, ովքեր դուրս են մնացել կրթական համակարգից:

Կարծում ենք, որ զանգվածային լրատվամիջոցներում իրազեկման քարոզարշավները կլինեին երկարաժամկետ և կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կօգնեին հանրությանը տեղեկացնել մարդկանց թրաֆիքինգի մասին: Հանցագործները հաճախ օգտվում են հասարակության տեղեկացվածության պակասից՝ իրենց զոհերին գրավելով հեշտ վաստակի և բարեկեցիկ կյանքի խոստումներով: Քանի որ մարդկանց թրաֆիքինգի զոհերը հաճախ թակարդն ընկնում են խաբեության միջոցով, ընդհանուր իրազեկվածության բարձրացումը կօգնի նրանց հասկանալ, որ իրենց դեմ հանցագործություն է կատարվում: Արդյունքում, նրանք ոչ միայն կկարողանան խուսափել նվաստացնող փորձառությունից, այլև կկարողանան աջակցել իրավապահ մարմիններին՝ այս հանցագործությունների դեմ պայքարում:

Համոզված ենք, որ վերը նշված կանխարգելիչ միջոցառումները կլինեն մարդկանց թրաֆիքինգի կանխման ամենակարևոր և արդյունավետ միջոցներից, քանի որ, ճիշտ այնպես, ինչպես պատվաստանյութերը կանխում են հիվանդությունները, այս կանխարգելիչ քայլերը կարող են արմատից վերացնել այս խնդրի պատճառները: Մարդկանց թրաֆիքինգի խնդիրը հաղթահարելի է, սակայն դրա դեմ պայքարի համար անհրաժեշտ են հսկայական ջանքեր:

Եզրակացություն

Մարդկանց թրաֆիքինգը շարունակում է մնալ միջազգային կազմակերպված հանցագործության ամենաշահութաբեր և դաժան դրսևորումներից մեկը՝ ուղղակիորեն խաթարելով հազարավոր մարդկանց կյանքեր: Վիճակագրական տվյալների և միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ թրաֆիքինգի հիմնական զոհերը սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչներն են, որոնց թիրախավորումը պայմանավորված է նրանց տնտեսական, իրավական և սոցիալական անապահովությամբ: Խոցելիության այս գործոնները հմտորեն օգտագործվում են հանցավոր ցանցերի կողմից՝

հարկադիր աշխատանքի, սեռական ստրկության և շահագործման այլ ձևերով շահույթ ստանալու նպատակով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավական բացերը, կոռուպցիան, թույլ վերահսկողությունը և զոհերի վաղ հայտնաբերման բացակայությունը զգալիորեն նպաստում են թրաֆիքինգի տարածմանը, մինչդեռ պատժամիջոցների և կանխարգելման միջոցառումների կիրառման մակարդակը շարունակում է մնալ անբավարար: Ուստի անհրաժեշտ է ոչ միայն խստացնել օրենսդրական պատասխանատվությունը և ուժեղացնել իրավապահ մարմինների արձագանքը, այլև ներդնել արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր՝ բարձրացնելով հանրային իրազեկվածությունը, ապահովելով սոցիալական պաշտպանություն խոցելի խմբերի համար և խորացնելով միջազգային համագործակցությունը հանցավոր ցանցերի դեմ պայքարում:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ սույն աշխատանքում գիտական նորույթ է առաջարկվում՝ թրաֆիքինգի կանխարգելման ուղղությամբ **խոցելի խմբերի ռիսկերի գնահատման և վաղ հայտնաբերման միասնական թվային հարթակի ստեղծումը**, որը կօգտագործի արհեստական բանականության հնարավորությունները: Հարթակի նպատակն է բարելավել տեղեկատվության փոխանակումը, կանխատեսել ռիսկերը և արագ նույնականացնել պոտենցիալ զոհերին՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO, 2022) և Պալերմոյի արձանագրության (United Nations, 2000) դրույթներին համապատասխան:

Նման համալիր և նորարարական մոտեցումը հնարավորություն կտա զգալիորեն բարձրացնել թրաֆիքինգի կանխարգելման արդյունավետությունը և ապահովել խոցելի անձանց պաշտպանությունը՝ ամրապնդելով իրավական և սոցիալական մեխանիզմները թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականություն ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: ՀՀՊՏ 01.07.2022,
URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=204754

2. Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը: ՀՀՊՏ 30.06.2015,

URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=163101

3. Protocol to Prevent, Suppress and Punish Trafficking in Persons Especially Women and Children, supplementing the United Nations Convention against Transnational Organized Crime/ adopted 15 November 2000, URL:https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol prevent- suppress-and-punish-trafficking-persons

4. Hedva Eyal. "Reproductive Trafficking", URL:https://web.archive.org/web/20131203005235/http://www.councilforresponsiblegenetics.org/genewatch/GeneWatchPage.aspx?pageId=313

5. "Organ Removal", URL: https://fightslaverynow.org/why-fight-there-are-27-million-reasons/otherformsoftrafficking/organ-removal/

6. Mark Chaplin. "Agents in the UEFA spotlight" URL:https://web.archive.org/web/20090430123308/http://www.uefa.com/uefa/keytopics/kind%3D2048/newsid%3D462974.html

7. The Guardian, "British-born teenagers being trafficked for sexual exploitation within UK, police say" URL:https://www.theguardian.com/society/2008/jul/03/childprotection.internationalcrime

8. International Labour Standards on Forced Labour URL: https://www.ilo.org/topics-and-sectors/forced-labour-modern-slavery-and-trafficking-persons

9. "Trafficking for Organ Trade" URL:https://web.archive.org/web/20141109112345/http://www.ungift.org/knowledgehub/en/about/trafficking-for-organ-trade.html

10. Interpol, "The Issues of human trafficking" URL:https://www.interpol.int/Crimes/Human-trafficking-and-migrant-smuggling/The-issues

11. Nishat Hyder-Rahman. "Commercial Gestational Surrogacy: Unravelling the threads between reproductive tourism and child trafficking" DOI: 10.14197/atr.201221168 URL:https://www.antitraffickingreview.org/index.php/atrjournal/article/view/542/416

12. Лапин И.В. Торговля людьми и суррогатное материнство: Проблема разграничения.

13. U.S. Department of Health & Human Services, "Fact sheet: identifying victims of human trafficking", URL:https://www.acf.hhs.gov/archive/otip/fact-sheet/fact-sheet-identifying-victims-human-trafficking

14. "Who are the victims of human trafficking?" URL: https://theexodusroad.com/human-trafficking-victims/

15. Human trafficking includes both sex trafficking and labor trafficking. URL:https://humantrafficking.umich.edu/about-human-trafficking/who-are-the-victims/

16. UNODC, Global Report on Trafficking in Persons 2024 (United Nations publication, Sales no.: E.24.XI.11), URL: https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/2024/GLOTIP2024_BOOK.pdf

17. https://reliefweb.int/report/world/counter-trafficking-data-brief-family-members-are-involved-nearly-half-child

18. https://home-affairs.ec.europa.eu/news/newly-released-data-show-increase-trafficking-human-beings-2024-02-28_en

19. Свиридов Б. Борьба с торговлей людьми и проституцией // Юридическая практика. № 18, 2006.

20. Гетман И.Б. Превентивные меры борьбы с торговлей людьми на современном этапе // Омская академия МВД РФ.

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРЕДУПРЕЖДЕНИЕ ТРАФФИКИНГА

Аннотация

Траффикинг или эксплуатация людей считается проявлением современного рабства, предполагающим эксплуатацию уязвимых лиц. Хотя исторически рабство воспринималось как открытый правовой статус, сегодня оно выражается в принудительном труде, сексуальной эксплуатации и других формах порабощения.

Причины торговли людьми многообразны: в одних случаях она обусловлена социально-экономической необеспеченностью, в других – слабостью правовых систем и деятельностью международных преступных сетей и т. д. Борьба с этим явлением требует комплексного подхода, включающего профилактические меры, законодательные реформы и сотрудничество правоохранительных органов.

В данной статье рассматривается криминологическая характеристика жертв траффикинга, отмечаются их социальные, возрастные, гендерные и психологические особенности, а также механизмы их выбора преступниками.

Кроме того, проведён анализ статистических данных о торговле людьми, выявлены тенденции её распространения, а также предложены правовые, социальные и правоохранительные механизмы её предотвращения.

Ключевые слова: торговля людьми, современное рабство, принудительный труд, сексуальная эксплуатация, профилирование жертв, преступные сети, антитраффиковое законодательство.

CRIMINOLOGICAL CHARACTERISTICS AND PREVENTION OF HUMAN TRAFFICKING

Annotation

Human trafficking is considered a manifestation of modern slavery, involving the exploitation of vulnerable individuals. While historically, slavery was recognized as an explicit legal status, today it manifests in forms such as forced labor, sexual exploitation, and other types of servitude.

The causes of human trafficking are diverse: in some cases, they stem from socio-economic insecurity, while in others, they are linked to weak legal systems and the operations of international criminal networks. Combating this phenomenon requires a comprehensive approach, including preventive measures, legislative reforms, and cooperation among law enforcement agencies.

This article examines the criminological profile of human trafficking victims, highlighting their social, age, gender, and psychological characteristics, as well as the mechanisms used by criminals to select their victims.

Additionally, the article analyzes statistical data on human trafficking, identifies trends in its prevalence, and proposes legal, social, and law enforcement mechanisms for its prevention.

Keywords: human trafficking, modern slavery, forced labor, sexual exploitation, victim profiling, criminal networks, anti-trafficking legislation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.09.2025 թ., տրվել է գրախոսության 10.09.2025 թ., ընդունվել է տպագրության 25.09.2025 թ.:

DOI: 10.59560/18291155-2025.3-201

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ Սահմանադրական դատարանի
նախագահի օգնական,
Ռուս-հայկական համալսարանի դասախոս

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամփոփագիր

Հոդվածում պետությունների ճանաչման ազգային մեխանիզմների ձևավորման համատեքստում ուսումնասիրվել և վեր են հանվել ճանաչման միջազգային ու ազգային մեխանիզմների ներդաշնակեցման ու դրանց համադրման որոշ ասպեկտներ, այդ գործընթացի առանձին խնդիրներ: Միաժամանակ եզրահանգումներ են արվել առ այն, որ պետությունների ճանաչման հարցը, լինելով միջազգային իրավունքի և քաղաքականության հատման կետում, պահանջում է ներպետական իրավական մեխանիզմի ստեղծման անհրաժեշտություն:

Հիմնաբառեր. պետություն, միջպետական հարաբերություններ, ճանաչում, ազգային մեխանիզմ, օրենք, պետության իրավասուբյեկտություն:

Պետությունների ճանաչումը, միջազգային իրավունքի և դիվանագիտական հարաբերությունների հիմնարար ինստիտուտ լինելուց բացի, միաժամանակ նաև իրավաքաղաքական ակտ է, որը որոշում է ճանաչող պետության կամքը՝ հաստատելու իրավական և քաղաքական հարաբերություններ տվյալ նորաստեղծ կամ փաստացի գոյություն ունեցող միավորի հետ: Պրակտիկան ցույց է տալիս, որ այդ հարցում հստակ ներքին իրավական մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է նրան, որ պետությունների ճանաչումը երբեմն դառնում է քաղաքական կամ կոնկրետ իրավիճակների արձագանք:

Ներկա պայմաններում ճանաչման ինստիտուտի հետ կապված մի շարք հարցեր կարգավորվում են միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով և

սկզբունքներով, որոնք ամրագրված են 20-րդ դարում ընդունված միջազգային մի շարք փաստաթղթերում[1]:

ՄԱԿ-ի կառուցվածքում գործող Գլխավոր վեհաժողովը առանձին դեպքերում զբաղվում է նաև միջազգային իրավունքի սուբյեկտների ճանաչման հարցերով և իր բանաձևերում պարտավորեցնում է պետություններին ճանաչել որպես ինքնիշխան կառույցներ[2]: Սակայն, այնուամենայնիվ, միջազգային ճանաչման ինստիտուտի էության ու իրավական բովանդակության միատեսակ ըմբռնման համար այն ակնհայտորեն բավարար չէ:

Ասվածից կարող ենք ենթադրել, որ միջպետական հարաբերությունների առավել ամբողջական և համապարփակ լուսաբանման, կանոնակարգման և միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման նորմերի ամրագրման նպատակով անհրաժեշտ է մշակել միասնական համալիր իրավական փաստաթուղթ, որը կարող է արտացոլել պետությունների ճանաչման բոլոր տեսակների, չափանիշների և ձևերի առանձնահատկությունները:

Դեռևս 1949 թվականին նման եզրահանգման է եկել միջազգային համայնքը, երբ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը որոշեց պետությունների ու կառավարությունների ճանաչման հարցն ընդգրկել այն թեմաների ցանկում, որոնք ենթակա են առաջնային միավորման[3]: Սակայն այդ խնդիրը դեռևս չի ստացել իր համարժեք զարգացումը և լուծումը:

Արդյունքում, ինչպես նշում են մի շարք տեսաբաններ, «մինչև ներկա ժամանակաշրջանը՝ ճանաչման տարրերը, տեսակներն ու եղանակները, նոր պետությունները ճանաչելու իրավունքն ու պարտականությունը, իրավական հետևանքները և ճանաչման ինստիտուտի կիրառման մի շարք այլ ասպեկտներ կարգավորվում են որոշ դեպքերում՝ միջազգային սովորույթով, այլ դեպքերում՝ օրենքի սովորական նորմով, երրորդ դեպքում՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներով: Ճանաչման որոշ ասպեկտներ արտացոլվում են երկկողմ և բազմակողմ պայմանագրերում,

[1] Տե՛ս օրինակ, 1945 թ ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագիրը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. եզրափակիչ ակտը և այլն:

[2] Այս դեպքում որպես օրինակ կարող է ծառայել «Պաղեստինի հարցով» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3236 բանաձևի 6-րդ կետը (XXIX) (ընդունվել է 22.11.1974 թ.), ըստ որի՝ «կոչով դիմում է բոլոր պետություններին և միջազգային կազմակերպություններին աջակցել Պաղեստինի ժողովրդին իր պայքարում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով վերականգնել իր իրավունքները»:

Տե՛ս Действующее международное право // Сборник документов в 3 т. Т. 1. - М., 1996, էջ 139-140:

[3] Տե՛ս Курс международного права. В 7 т. Т. 3. Основные институты международного права. - М., 1990, էջ 105 – 106:

միջազգային կազմակերպությունների բանաձևերում և առանձին պետությունների դիվանագիտական նոտաներում: Դժվարությունը կայանում է նրանում, որ ճանաչման վերաբերյալ պետությունների պրակտիկան հեռու է միասնական լինելուց, և ճանաչման, որպես «համընդհանուր պրակտիկայի» կիրառման մասին խոսելու անհրաժեշտությունը բացակայում է»[1]:

Ելնելով այն հանգամանքից, որ ճանաչման միջազգային ինստիտուտը դեռևս մնում է չկոդավորված, իսկ ճանաչման չափանիշներ սահմանող պրակտիկան չափազանց բազմազան է, պետք է համաձայնել Վ.Ռ. Սեդենյոյի այն կարծիքին, ով իր միջազգային իրավունքի հանձնաժողովի պետությունների միակողմանի գործողությունների վերաբերյալ զեկույցում մատնանշել է, որ «ճանաչման ակտին... չեն ներկայացվում ինչ-որ որոշակի չափանիշներ»[2]:

Վերը նշվածի համատեքստում պետության իրավասուբյեկտությունից բխող խնդիրը կապված է չճանաչված կամ ինքնահռչակ պետությունների գոյության հետ:

Պետությունները՝ որպես միջազգային հարաբերությունների մասնակիցներ, օժտված են որոշակի իրավունքներով և պարտականություններով: Նրանց ընդհանուր խնդիրն է խաղաղության և անվտանգության պահպանումը, պետությունների հետ համագործակցությունը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում: Ելնելով դրանից՝ կարող ենք ասել, որ այսօր գոյություն ունեն մի շարք պետություններ, որոնք զրկված են բազմաթիվ հարցերի շուրջ համագործակցություն հաստատելու և իրականացնելու հնարավորությունից, քանի որ վերջիններիս միջազգային իրավասուբյեկտության չափանիշները սահմանափակ են: Այդ պետություններին բնութագրական է միջազգային մակարդակում կարգավիճակի անորոշությունը, այլ պետությունների հետ համագործակցության սահմանները զգալիորեն սահմանափակ են, այսինքն նրանք հնարավորություն չունեն լիարժեք մասնակցելու իրավահարաբերություններին, չնայած, ինչպես նշվեց վերևում, դա չպետք է հիմք հանդիսանա նրանց իրավասուբյեկտության սահմանափակման համար:

«Ցանկացած պետություն ունի իրավահարաբերությունների մեջ մտնելու իրավունք, և նման իրավունքը չպետք է կախված լինի այլ պետությունների կողմից ճանաչումից, որը հաստատվում է պետությունների անկախության և

[1] Տե՛ս **Фельдман Д.И., Курдюков Г.И., Кофман Б.И., Мингазов Л.Х.** Признание в современном международном праве (признание новых государств и правительств). - М., 1975, էջ 6:

[2] Տե՛ս Шестой доклад об односторонних актах государств, подготовленный специальным докладчиком Виктором Родригес Седеньо [Электронный ресурс] // Док. ООН. Электрон. дан. Женева: ООН, 2003, էջ 11:

ինքնիշխան հավասարության սկզբունքի իրագործմամբ»[1] : Առանձին դեպքերում պետություններն իրենք են միջազգային պայմանագրերին միակողմանիորեն միանալու կամք դրսևորում: Այս տեսանկյունից, անդրադառնալով օրինակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից միջազգային համընդհանուր բնույթի պայմանագրերին միանալու կամ դրանց իրավազորությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հաստատելու իրավական խնդրին՝ պրոֆեսոր Ա.Հ. Խաչատրյանն իրավացիորեն նշել է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրության համաձայն՝ միջազգային իրավունքի նորմերն ունեն պրիմատ նշանակություն ներպետական իրավական համակարգի նկատմամբ, ինչը ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին և 2-րդ հոդվածներով ամրագրված նպատակների ու սկզբունքների արդյունավետ իրագործման տեսանկյունից ուղղված է նպաստելու, հատկապես, միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը, ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, ուստի՝ այդ հիմնավորմամբ պայմանավորված, կարծում ենք, որ ԼՂՀ-ն կարող է լիարժեք մասնակցություն ցուցաբերել միջազգային հարաբերություններին, օժտված լինել միջազգային իրավասուբյեկտությամբ, հետևաբար՝ նրա կողմից համընդհանուր և տարածաշրջանային բնույթի միջազգային պայմանագրերին ցանկացած ձևով ու եղանակով մասնակցությունն ինքնին իրավաչափ է և բխում է հենց Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի բովանդակությունից»[2] :

Մեկ այլ հեղինակ Ա.Գ. Բոլշակովը նշել է, որ «Չճանաչված պետական կազմավորումները ներկա փուլում դառնում են մեծ աշխարհաքաղաքական խաղի օբյեկտ՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի և որոշ ասիական պետությունների միջև: Այս գործընթացի պաշտոնական արտահայտությունը Կոսովոյի վերաբերյալ որոշումն է, որը ռուսական տեսանկյունից պետք է դառնա նախադեպ հետխորհրդային տարածքի բոլոր նմանատիպ տարածքների համար: Արևմտյան երկրները, հակառակը, պնդում են Կոսովոյի դեպքի բացառիկությունը, և դեմ են Աբխազիայի, Մերձդնեստրի, Հարավային

[1] Տե՛ս **Александрова Н.В.** Правовой институт признания государств: дис. канд. юрид. наук. – Н. Новгород, 2009, էջ 119:

[2] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Գիտական հոդվածների ժողովածու: Երևանի «Մանց» համալսարան, 2013, էջ 20-21:

Օսիայի անկախության ճանաչմանը, որոնք գտնվում են Ռուսաստանի ազդեցության ոլորտում»[1]:

Մեկ այլ հեղինակ՝ Քրոուֆորդը, հիմնավորելով պետության ձևավորման «Մոնտեվիդեոյի չափանիշները» (բնակչություն, տարածք, կառավարություն, միջազգային հարաբերությունների ունակություն), ընդգծել է, որ «ճանաչումը հաստատում է այդ փաստական իրողությունները, բայց չի ստեղծում պետություն իրավական առումով»[2]:

Պետությունների ճանաչման խնդրի հետ կապված առանձնահատուկ իրադարձություններից մեկը Կոսովոյի միակողմանի ճանաչումն էր 2008թ. փետրվարի 17-ին: Սակայն արդյո՞ք Կոսովոն դրանից հետո դադարել է լինել չճանաչված պետություն: «Միջազգային իրավական տեսությունը միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին, թե երբ կարող ենք խոսել ինքնիշխան պետության առկայության մասին՝ դրա առաջացմա՞ն, թե՞ միջազգային համայնքի կողմից ճանաչման պահից: Ճանաչումը ենթադրում է նոր առաջացող պետության համար միջազգային իրավունքի նորմերից և, առաջին հերթին, ՄԱԿ-ի կանոնադրությունից բխող պարտավորություններ՝ հարաբերությունների կառուցում ինքնիշխան հավասարության սկզբունքի հիման վրա, ձեռնպահ մնալու ուժի կիրառումից կամ դրա կիրառման սպառնալիքից՝ ուղղված ինչպես տարածքային անձեռնմխելիության, այնպես էլ քաղաքական անկախության դեմ, ներքին գործերին չմիջամտելու, համագործակցություն և այլն»[3]: Այս հարցերին պատասխանելիս առաջացող խնդիրները ցույց են տալիս սույն հոդվածում նկարագրված խնդրի խորությունը:

Սերբիայի Սահմանադրության համաձայն՝ Կոսովոն հանդիսանում է ինքնավար մարզ[4]: Այս առումով թերևս տեղին է հիշատակել, որ «Կոսովոյի կարգավիճակի որոշումը համընդհանուր է որպես միջազգային իրավունքի նախկին համակարգի քայքայման տեսանելի ցուցիչ, և հատուկ՝ կոնկրետ

[1] Տե՛ս **Большаков А.Г.** Непризнанные государственные образования постсоветского пространства: Казус Нагорного Карабаха // Ученые записки Казанского университета. 2007. № 3. էջ 130:

[2] **Crawford, James.** The Creation of States in International Law. Oxford University Press, 2006, էջ 750-780:

[3] Տե՛ս **Лялина И.С.** Признание непризнанных: что дальше? События в Южной Осетии и Абхазии – очередной повод задуматься о несовершенстве международных взаимоотношений // Человек и закон – Общенациональный правовой журнал. 2008. № 10. էջ. 12 – 16:

[4] Տե՛ս Конституция Сербии [Электронный ресурс] // Интернет-библиотека конституций Романа Пашкова. Электрон. дан. [Б.м., б.г.]. URL: http://worldconstitutions.ru/?p=369

քաղաքական խնդրի լուծման առումով»[1]: Կոսովոյի ճանաչման եզակի բնույթը կարելի է բնութագրել մասնավորապես հետևյալ կերպ՝

- միջազգային իրավունքում XX և XXI դարերի սկզբին գրեթե բոլոր հեղինակավոր պետություններն առաջնորդվել են պետության տարածքային ամբողջականության իրավունքով: Սակայն, Կոսովոն օգտվել է ժողովրդի ինքնորոշման իր իրավունքից, որն ամրագրված է պետության տարածքային ամբողջականության իրավունքին հավասար: Կոսովոյի օրինակը հստակ ցույց տվեց վերը նշված երկու սկզբունքների հավասարությունը, և

- Կոսովոյի ճանաչումը հերքեց այն տեսությունը, որ նույն ժողովուրդը չի կարող ինքնորոշվել մեկից ավելի անգամ:

Վերլուծելով տեղի ունեցած իրադարձությունները՝ կարող ենք ասել, որ Կոսովոյի օրինակը զգալի ներդրում է ինքնորոշման իրավունքի իրացման գործում, որոնք կարող են նախադեպային դառնալ նաև մի շարք այլ ինքնահռչակ, բայց դեռ չճանաչված պետություններ համար: Բայց մյուս կողմից, այդ ճանաչումը կարող է «հեռուն գնացող» հետևանքներ առաջացնել տվյալ տարածաշրջանում քաղաքական շահեր ունեցող մի շարք երկրների համար: Չնայած տասնյակ պետությունների կողմից Կոսովոյի ճանաչմանը, այն դեռևս չի հանդիսանում ՄԱԿ-ի անդամ, հետևաբար, վերջինիս կարգավիճակը դեռևս միանշանակ որոշված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ պետք է ասել, որ Կոսովոյի դեպքում չստացվեց անվերապահ, ամբողջական ճանաչում:

Ճանաչման մեկ այլ օրինակ կարելի է համարել Հարավային Օսիայի և Աբխազիայի ճանաչմանը վերաբերող իրադարձությունները: Ըստ Ռուսաստանի Դաշնության այն ժամանակվա նախագահ Դ. Մեդվեդևի՝ «վրացական ղեկավարությունը, խախտելով ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային համաձայնագրերով ստանձնած իր պարտավորությունները, հակառակ ողջախոհության, սանձազերծեց զինված հակամարտություն, որին զոհ գնացին խաղաղ մարդիկ: Նույն ճակատագիրն էր սպասվում Աբխազիային (...) ելնելով ստեղծված իրավիճակից՝ անհրաժեշտ է որոշում կայացնել: Հաշվի առնելով օսեթ և աբխազ ժողովուրդների ազատ կամարտահայտությունը, առաջնորդվելով ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներով, «Պետությունների միջև բարեկամական հարաբերություններին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» 1970 թ. հռչակագրով, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. եզրափակիչ ակտով, այլ հիմնարար փաստաթղթերով՝ ես հրամանագրեր եմ ստորագրել Ռուսաստանի

[1] Տե՛ս **Александрова Н.В.** Նույն աշխատությունը: Էջ 122:

Դաշնության կողմից Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչման մասին»[1]:

Այս օրինակները շատ հստակ ցույց են տալիս, որ պետությունների կողմից այս կամ այն պետության ճանաչումը միշտ սերտորեն կապված է տեղի ունեցող կոնկրետ հանգամանքների և համաշխարհային ասպարեզում ձևավորվող քաղաքական իրադրության հետ:

Վերոնշյալ սուբյեկտներին որպես պետություն ճանաչելու հարցում տարբերություններն ակնհայտ են: Այսպես, Աբխազիան և Հարավային Օսիան ճանաչելիս Ռուսաստանը մատնանշել է տվյալ տարածաշրջաններում իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը: Իսկ Կոսովոյի դեպքում Արևմուտքը եկել է այն եզրակացության, որ բանակցությունները մտել են փակուղի, և գոյություն ունեցող հակամարտության լուծման միակ ճանապարհը տարածաշրջանի անկախության ճանաչումն է:

Բազմաթիվ պետությունների կողմից Կոսովոյի ճանաչումից հետո աշխարհում աշխարհաքաղաքական իրավիճակը զգալիորեն փոխվել է: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հիշատակել, որ «ցանկացած իրավական որոշում ձեռք է բերում համընդհանուր բնույթ, որքան էլ եզակի լինեն դրան նախորդած իրադարձությունները»[2]:

Վերոնշյալ սուբյեկտների ճանաչումը նոր փուլի սկիզբ հանդիսացավ ինքնահռչակ պետությունների ճանաչման հարցերի իմաստավորման գործում:

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև միջազգային դատարանի իրավական պրակտիկային:

Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի դիմումով Միջազգային դատարանը 2010 թ. հուլիսի 22-ի խորհրդատվական կարծիքով արձանագրեց, որ «Կոսովոյի անկախության հռչակումը չի խախտել միջազգային իրավունքը, քանի որ միջազգային իրավունքը չի պարունակում արգելք անկախության հռչակման վերաբերյալ»[3]:

Այս որոշումը ցույց տվեց, որ միջազգային իրավունքը չի կարգավորում ճանաչման պարտականության հետ կապված հարաբերությունները և այդ հարցը փաստորեն մնում է պետությունների իրավական և քաղաքական

[1] https://ria.ru/20080826/150696936.html

[2] Международное признание независимости Абхазии послужит миру и стабильности на Кавказе: Обращение к Генеральному секретарю ООН, главам государств и парламентов СНГ и стран мира о признании государственной независимости Республики [Электронный ресурс] // Информационное агентство REGNUM. Электрон. дан. [Б.м., б.г.]. URL: www.regnum.ru/news/698711.html

[3] ICJ, Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion, ICJ Reports 2010, p 403.

հայեցողությանը: Սա ևս մեկ փաստարկ է այն հիմնավորման, որ ճանաչման գործընթացը պետք է կարգավորվի նաև ազգային մակարդակում՝ հստակ ընթացակարգով:

Մարդու իրավունքների դատարանը մեկ այլ՝ *Loizidou v. Turkey* (1996) և հետագա գործերում նաև արձանագրել է, որ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը ճանաչված չէ որևէ այլ պետության կողմից, բացի Թուրքիայից, և այդ չճանաչված կարգավիճակը հանգեցնում է նրա իրավական կարգավիճակի ոչ լեգիտիմության[1]:

Այս մոտեցումը վկայում է, որ ճանաչման բացակայությունը ոչ միայն քաղաքական, այլև իրավական հետևանքներ ունի՝ կապված տարածքային իրավազորության և միջազգային պարտավորությունների հետ: Հետևաբար, ազգային իրավակարգում ճանաչման հստակ մեխանիզմների առկայությունը կարող է կանխել նման հակասական իրավիճակները:

Միջազգային դատարանը իր մեկ այլ *Namibia (South West Africa)* խորհրդատվական կարծիքում նշել է, որ պետությունները պարտավոր են չճանաչել այն իրավիճակները, որոնք առաջացել են միջազգային իրավունքի խախտման միջոցով:

Այս դիրքորոշումը, ըստ երևույթին, ձևավորեց չճանաչելու պարտականության սկզբունքը, որը նույնպես մեր գնահատմամբ պետք է արտացոլվի ճանաչման ազգային մեխանիզմում՝ որպես իրավական արգելք անօրինական պետությունների ճանաչման դեպքում:

Վերլուծելով վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ ակնհայտ է դառնում, որ մի շարք պետությունների կարգավիճակը համաշխարհային ասպարեզում բավականին անկայուն է: Ընդհանուր առմամբ ներքին կառուցվածքի գործոնները, ինչպես նաև միջազգային հարաբերությունների հակասական բնույթը ծառայում են որպես այդ պետությունների կարգավիճակի անկայունության պատճառներ: Ուստի ներկա փուլում, աշխարհի փոխկախվածության աճի պայմաններում, իրավունքի տեսությունում զգացվում է այն բացը, որն անարժանորեն մնացել է առանց պատշաճ ուշադրության, այն է պետությունների իրավական ճանաչման ինստիտուտը:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է առանձնացնել մի քանի կարևոր կետեր՝

- պետությունների ճանաչման ինստիտուտի գոյությունն ու զարգացումը միջպետական հարաբերությունների զարգացման կարևոր և անհրաժեշտ պայման է,

[1] ECHR, *Loizidou v. Turkey*, Judgment of 18 December 1996, Reports 1996-VI.

- պետությունների ճանաչման արդյունավետության չափանիշների որոշման և հետագա կիրառման պրակտիկան պետք է լինի օբյեկտիվ, որը պետք է արտացոլի պետության ճանաչումից բխող բոլոր առանձնահատկություններն ու իրավական հետևանքները:

Վերոգրյալից ակնհայտ է այն եզրահանգումը, որ պետությունների ճանաչման խնդիրը ներկայումս արդիական է: Խնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դրա լուծման ուղիներ գտնելն ուղղակիորեն կազդի միջպետական հարաբերությունների կայունության վրա: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշված իրավական ինստիտուտի, այդ թվում ներպետական, հետևողական և փուլային մշակում ու կատարելագործում: Այստեղ կարևոր նշանակություն կունենան ինչպես ներպետական իրավունքի, այնպես էլ միջազգային նորմերը: Նոր պետությունների ճանաչման հետ կապված խնդիրների արդյունավետ լուծման համար նախ և առաջ անհրաժեշտ է մշակել արդյունավետ գործող նորմատիվ-իրավական բազա և դրա իրավակիրառ մեխանիզմներ՝ դրանք սկսելով կիրառել ճանաչման կարիք ունեցող պետությունների նկատմամբ: Անհրաժեշտ է, որպեսզի պետությունների կողմից մշակվի և ընդունվի ներպետական նորմատիվ իրավական ակտ, որը լուծում է ճանաչման ոլորտի հարցերը, որը պայմանականորեն կարող է ունենալ «Նոր պետությունների (պետական կազմավորումների) ճանաչման մասին» օրենք անվանումը: Առաջարկվող օրենքում կարևոր է հստակ սահմանել պետությունների ճանաչման հայեցակարգը, այն հիմնական չափանիշները, որոնց պետք է բավարարի ճանաչման հավակնող պետական կազմավորումը, ճանաչման ընթացակարգը և դրա իրավական հետևանքները:

Ճանաչման իրավական ինստիտուտի բնույթի բարդությունը կայանում է նրանում, որ միջազգային հարաբերությունների մշտական բարդացման հետ մեկտեղ մեծանում է նաև դրանց շուտափույթ իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Այստեղ գլխավոր դերը, համապատասխան իրավական խնդիրները լուծելու համար, իհարկե, պետք է պատկանի ՄԱԿ-ի մակարդակով իրականացված կոդիֆիկացմանը՝ հաշվի առնելով զարգացման որոշակի փուլում առկա քաղաքական իրավիճակը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է պետությունների ճանաչման գործընթացի իրավաքաղաքական բնույթը և դրա կարգավորման ազգային մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությունը: Վերլուծվում են ճանաչման ինստիտուտի երկակի՝ միջազգային և ներազգային իրավական բնույթը: Հեղինակը մատ-

նանշում է, որ միջազգային իրավունքը պետություններին չի պարտադրում հստակ ընթացակարգեր՝ թողնելով լայն դիսկրետ իրավունք ազգային իրավակարգերին՝ ինքնուրույն սահմանելու ճանաչման մեխանիզմներ:

Հոդվածում մատնանշվել է, որ ազգային օրենսդրական համակարգում բացակայում է ճանաչման հստակ իրավական ընթացակարգ, ինչն իր հերթին առաջացնում է իրավաքաղաքական անորոշություններ արտաքին քաղաքական որոշումների կայացման ոլորտում:

Հեղինակի կողմից հիմնավորվում է, որ պետությունների ճանաչման ազգային մեխանիզմի ձևավորումը կնպաստի պետական կամքի իրավական ինստիտուցիոնալացմանը և միջազգային հարաբերություններում պետության ինքնուրույնության դրսևորմանը: Առաջարկվում է մշակել հատուկ օրենք, որով կսահմանվի պետությունների ճանաչման հայեցակարգը, այն հիմնական չափանիշները, որոնց պետք է բավարարի ճանաչման հավակնող պետական կազմավորումը, ճանաչման ընթացակարգը և դրա իրավական հետևանքները, ինչն ընդհանուր հաշվով կապահովի գործընթացի իրավական կանխատեսելիությունն ու թափանցիկությունը: Միաժամանակ կարևորելով ՄԱԿ-ի դերը համապատասխան իրավական խնդիրները լուծելու գործում՝ ընդգծվել է ՄԱԿ-ի մակարդակով իրականացված կոդիֆիկացման կարևորությունը՝ հաշվի առնելով զարգացման որոշակի փուլում առկա քաղաքական իրավիճակը:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. 1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրություն:

2. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագիր:

3. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975 թ. եզրափակիչ ակտ:

4. «Պաղեստինի հարցով» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3236 բանաձևի 6-րդ կետ (XXIX) (ընդունվել է 22.11.1974 թ.):

5. Действующее международное право // Сборник документов в 3 т. Т. 1. - М., 1996.

6. Курс международного права. В 7 т. Т. 3. Основные институты международного права. - М., 1990.

7. **Фельдман Д.И., Курдюков Г.И., Кофман Б.И., Мингазов Л.Х.** Признание в современном международном праве (признание новых государств и правительств). - М., 1975.

8. Шестой доклад об односторонних актах государств, подготовленный специальным докладчиком Виктором Родригес Седеньо [Электронный ресурс] // Док. ООН. Электрон. Дан. Женева: ООН, 2003.

9. **Александрова Н.В.** Правовой институт признания государств: дис. канд. юрид. наук.. – Н. Новгород, 2009.

10. **Ա. Խաչատրյան**, Գիտական հոդվածների ժողովածու: Երևանի «Մանց» համալսարան, 2013:

11. **Большаков А.Г.** Непризнанные государственные образования постсоветского пространства: Казус Нагорного Карабаха // Ученые записки Казанского университета. 2007. № 3.

12. **James Crawford**, The Creation of States in International Law. Oxford: Oxford University Press, 2006.

13. **Лялина И.С.** Признание непризнанных: что дальше? События в Южной Осетии и Абхазии – очередной повод задуматься о несовершенстве международных взаимоотношений // Человек и закон – Общенациональный правовой журнал. 2008. № 10.

14. Конституция Сербии [Электронный ресурс] // Интернет-библиотека конституций Романа Пашкова. Электрон. дан. [Б.м., б.г.]. URL: http://worldconstitutions.ru/?p=369

15. https://ria.ru/20080826/150696936.html

16. Международное признание независимости Абхазии послужит миру и стабильности на Кавказе: Обращение к Генеральному секретарю ООН, главам государств и парламентов СНГ и стран мира о признании государственной независимости Республики [Электронный ресурс] // Информационное агентство REGNUM. Электрон. дан. [Б.м., б.г.]. URL: www.regnum.ru/news/698711.html

17. ICJ, Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion, ICJ Reports 2010,p 403

18. ECHR, *Loizidou v. Turkey*, Judgment of 18 December 1996, Reports 1996-VI.

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛЬНЫХ МЕХАНИЗМОВ ПРИЗНАНИЯ ГОСУДАРСТВ

Аннотация

В статье в контексте формирования национальных механизмов признания государств были изучены и подняты некоторые аспекты гармонизации и сопоставления международных и национальных механизмов признания, отдельные проблемы этого процесса. В то же время были сделаны выводы о том, что вопрос признания государств, находясь на пересечении международного права и политики, требует необходимости создания внутригосударственного правового механизма.

Ключевые слова: государство, межгосударственные отношения, признание, национальный механизм, закон, юрисдикция государства.

ON SOME PROBLEMS OF FORMATION OF NATIONAL MECHANISMS FOR STATE RECOGNITION

Annotation

In the context of formation of national mechanisms for state recognition, the article examines and addresses certain aspects of harmonizing and aligning international and national mechanisms for state recognition, as well as specific problems in this process. At the same time, it concludes that the issue of state recognition, situated at the intersection of international law and politics, necessitates the establishment of a domestic legal mechanism.

Keywords: state, interstate relations, recognition, national mechanism, law, state jurisdiction.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.09.2025 թ., տրվել է գրախոսության 10.09.2025 թ., ընդունվել է տպագրության 20.09.2025 թ.:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 20 մայիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

դատավորներ՝ Արման Դիլանյանի (նախագահող),
Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 30-ի N 509-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի մարտի 18-ին՝ տարածաշրջանային շարժունակությունը բարելավելու և հասանելիությունը բարձրացնելու նպատակով:

2. Դիմումին կից ներկայացված՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակա-

ռուցվածքների նախարարության տեղեկանք-հիմնավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթություն համարվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի 4-րդ հերթի Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ նոր ճանապարհահատվածի (ներառյալ՝ Բարգուշատի թունելը) ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել ըստ 3 ենթահատվածների՝

- 27.12 կմ երկարությամբ Հյուսիսային ենթահատված, կմ0+000 ÷ կմ27+125,
- 8.65 կմ երկարությամբ Բարգուշատի թունելի ենթահատված, կմ27+125 ÷ կմ35+775,
- 24.25 կմ երկարությամբ Հարավային ենթահատված, կմ35+775 ÷ կմ60+022 (այսուհետ՝ Ծրագիր):

3. Համաձայնագիրն ունի չորս հավելված՝ Հավելված 1. **«Ծրագրի նկարագրությունը»**, Հավելված 2. **«Մարման ժամանակացույցը»**, Հավելված 3. **«Վարկային միջոցների հատկացումը և առհանումը»** և Հավելված 4. **«Ծրագրի իրականացումը»**:

4. Համաձայն Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնի՝ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ կամ Վարկատու)՝ 2022 թվականի հունվարի 1-ի՝ Սովորական գործառնությունների վարկավորման կանոնների (Վարկավորման կանոններ) բոլոր դրույթները Համաձայնագրի նկատմամբ կիրառելի են նույն ուժով և գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ ձևակերպված լինեին Համաձայնագրում, այնուամենայնիվ, Համաձայնագրի I հոդվածի 1.02 բաժնով նախատեսված փոփոխություններով:

5. Ծրագիրը ներառում է՝

ա. կլիմային և աղետներին դիմակայուն ճանապարհային կոմունիկացիաների բարելավում՝ 27,1 կիլոմետր (կմ) երկարությամբ երկու գոտի ունեցող նոր ճանապարհի կառուցում՝ դանդաղ երթևեկության համար նախատեսված վերընթաց ուղիներով, կամուրջներով և թունելներով, կլիմային դիմակայուն շինարարության մեթոդների, կանաչ ճանապարհների սկզբունքների և շահագործման ու սպասարկման լավագույն փորձի ներդրում, և կայանատեղիների ու հանգստի գոտիների բարեկարգման հայեցակարգի մշակում՝ էլեկտրոնային լիցքավորման կայաններով և ավտոբուսի կանգառներով, որը

ներառում է գենդերային և ներառական նախագծման առանձնահատկություններ, և կայանատեղիների և հանգստի գոտիների կառուցում. և

բ. ՃԴՀ-ի (Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1298-Ա որոշման համաձայն ստեղծված «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ կամ դրա՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ) կարողությունների բարելավում՝ ընդլայնելով ՃԴՀ-ի գիտելիքները խոշոր նախագծերի մշակման և իրականացման վերաբերյալ, բարձրացնելով ՃԴՀ-ի գիտելիքները կամուրջների կառավարման համակարգի ստեղծման և ճանապարհների սպասարկման գործում, բարելավելով մարդկային ռեսուրսների կառավարման գործելակերպը՝ աջակցելու տեխնիկական պաշտոններում կին անձնակազմի աշխատանքի ընդունմանը, պահպանմանը և առաջխաղացմանը, և կազմակերպելով ստաժավորման ծրագրեր՝ տեխնիկական մասնագիտացմամբ կին ուսանողների կամ վերջին շրջանավարտների համար՝ աջակցելու կանանց ներկայացվածությանը ճանապարհային ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման գործում:

6. Համաձայնագրի նախաբանի «Գ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը դիմել է նաև Եվրոպական ներդրումային բանկին (ԵՆԲ) վարկ ստանալու խնդրանքով, և ակնկալվում է, որ Հայաստանի Հանրապետության և ԵՆԲ-ի միջև կնքվելիք վարկային համաձայնագրով (ԵՆԲ-ի վարկային համաձայնագիր) ԵՆԲ-ն Վարկառուին կտրամադրի իննսունինը միլիոն եվրո (99,000,000 եվրո) (ԵՆԲ վարկ) գումարի չափով վարկ՝ Ծրագրի ծախսերի մի մասի համաֆինանսավորման նպատակներով:

7. Համաձայն Համաձայնագրի նախաբանի «Բ» կետի և VII հոդվածի 7.01 բաժնի՝ Ծրագիրն իրականացնելու են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ)՝ որպես կատարման գործակալություն, և ՃԴՀ-ն՝ որպես Ծրագրի իրականացման գրասենյակ, իսկ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը՝ Վարկավորման կանոնների 12.02-ի բաժնի նպատակներով նշանակվում է որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ:

8. ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել երկու հարյուր երեսունվեց միլիոն (236,000,000) եվրո վարկ (այսուհետ՝ Վարկ), ընդ որում՝ նշված գումարը

կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի 2.06 բաժնի դրույթների համաձայն: Վարկի մայր գումարի մարման ժամկետը 12.5 տարի է, իսկ արտոնյալ ժամանակահատվածը՝ մինչև 2036 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածն է, որը Վարկի մայր գումարի մարման առաջին ամսաթիվն է: Վարկի մայր գումարի մարումն ավարտվում է 2048 թվականի դեկտեմբերի 15-ին: Ծրագիրն ակնկալվում է ավարտել մինչև 2033 թվականի դեկտեմբերի 31-ը: Վարկի փակման օրը 2034 թվականի հունիսի 30-ն է կամ այնպիսի այլ ամսաթիվ, որը ժամանակ առ ժամանակ պետք է համաձայնեցվի Հայաստանի Հանրապետության և ԱՋԲ-ի միջև:

9. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

9.1. պարբերաբար՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին՝ ԱՋԲ-ին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված և չվճարված Վարկի մայր գումարի դիմաց՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն դրույքաչափով, որը հավասար է հետևյալ գումարին՝ Եվրիբոր, 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով սահմանված կարգով, հանած 0.10%-ը՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով սահմանված կարգով, և ըստ մարման ժամկետների ապահովագրավճար՝ [0.30%]-ի չափով, ինչպես նախատեսված է Վարկավորման կանոնների 3.03 բաժնով (հոդված II, բաժիններ 2.02 և 2.04),

9.2. սկսած Համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից՝ վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած պարբերաբար առհանվող գումարները) (հոդված II, բաժին 2.03),

9.3. սկսած 2036 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2048 թվականի դեկտեմբերի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին, մարել Վարկային հաշվից առհանված վարկի մայր գումարը 4.000000% մասնաբաժիններով (հոդված II, բաժիններ 2.04 և 2.05, Հավելված 2, կետ 1),

9.4. վարկային միջոցները Ծրագրի կատարման գործակալության համար հասանելի դարձնել ԱՋԲ-ին գոհացնող պայմաններով և ապահովել, որ Ծրագրի կատարման գործակալությունն այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Համաձայնագրում սահմանված դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

9.5. վարկային միջոցներն առհանել Համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթների համաձայն, ընդ որում՝ նշված հավելվածը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ ԱԶԲ-ի և Հայաստանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնությամբ (հոդված III, բաժին 3.02),

9.6. բացառությամբ այն դեպքերի, երբ ԱԶԲ-ն այլ որոշում է կայացնում, իրականացնել կամ ապահովել Վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա ծախսային հոդվածներով կատարվող գնումները՝ Համաձայնագրի 4-րդ հավելվածի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.03),

9.7. Ծրագիրն իրականացնելիս և Ծրագրի օբյեկտները շահագործելիս կատարել Համաձայնագրի 4-րդ հավելվածով սահմանված պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, բաժին 4.01),

9.8. ապահովել, որ Ծրագրի կատարման գործակալությունը՝ Ծրագրի համար վարի առանձին հաշիվներ և գրառումներ, Ծրագրի համար պատրաստի տարեկան ֆինանսական հաշվետվություններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն, ինչպես նաև ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն ապահովի այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն այնպիսի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, և որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովի, որ աուդիտորները պատրաստեն զեկույց, որը ներառում է աուդիտորական եզրակացություն(ներ)ը ֆինանսական հաշվետվությունների և վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ և Ծրագրի կառավարման մասին գրություն (որտեղ սահմանվում են աուդիտի ընթացքում բացահայտված՝ Ծրագրի ներքին հսկողության հետ կապված թերությունները, եթե առկա են), և յուրաքանչյուր համապատասխան հարկաբյուջետային տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին տրամադրի այդ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների պատճենները, աուդիտորական եզրակացությունը և կառավարման մասին գրությունը՝ բոլորն անգլերենով, և այդ փաստաթղթերի և դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որն ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել, և ի լրումն վերոնշյալ տարեկան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների՝ ապահովել, որ Ծրագրի կատարման գործակալությունը տրամադրի իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված ԱԶԲ-ի համար ընդունելի՝ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն, ինչպես նաև ապահովի ԱԶԲ-ի կողմից ընդունելի աուդիտի ստանդարտների

համաձայն այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտն այնպիսի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, և որպես յուրաքանչյուր այդպիսի աուդիտի մաս ապահովի, որ աուդիտորները պատրաստեն զեկույց, որը ներառում է աուդիտորական եզրակացություն(ներ)ը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, և համապատասխան մարմնի կողմից աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության (եզրակացությունների) պատճենները հաստատվելուց հետո ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին տրամադրի այդ պատճենները՝ բոլորն անգլերենով, և այդ փաստաթղթերի և դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որն ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել (հոդված IV, բաժին 4.02, «ա» և «գ»),

9.9. ապահովել, որ Ծրագրի կատարման գործակալությունն ԱԶԲ-ի պահանջով վերջինիս հնարավորություն ընձեռի Համաձայնագրի IV հոդվածի 4.02 բաժնի «ա» (iii) և «գ» (ii) ենթաբաժինների համաձայն նշանակված աուդիտորների հետ քննարկել Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և Ծրագրի կատարման գործակալության գործունեությունը և դրա ֆինանսական խնդիրներն այնքանով, որքանով դրանք առնչվում են Ծրագրին, և ապահովել, որ Ծրագրի կատարման գործակալությունը թույլատրի և պահանջի այդ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի մասնակցությունն ԱԶԲ-ի պահանջով իրականացվող այդպիսի քննարկումներին այն պայմանով, որ այդ քննարկումներն անցկացվեն միայն Ծրագրի կատարման գործակալության լիազորված աշխատակցի ներկայությամբ, եթե Ծրագրի կատարման գործակալությունն այլ համաձայնություն չի տվել (հոդված IV, բաժին 4.02, «դ»),

9.10. ԱԶԲ-ի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել ստուգելու Ծրագիրը, Ապրանքները, Աշխատանքները և Ծառայությունները, ինչպես նաև ցանկացած համապատասխան գրառում և փաստաթուղթ (հոդված IV, բաժին 4.03),

9.11. եթե Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա վերադարձնել Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին կետի համաձայն (Հավելված 2, կետ 2, ենթակետ «ա»),

9.12. եթե Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվանից հետո ցանկացած առհանված գումար վերադարձնել այդ առհանմանը հաջորդող՝ Վարկի մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը՝ ԱՋԲ-ի կողմից սահմանված գումարների չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Համաձայնագրի 2-րդ հավելվածի 1-ին կետի աղյուսակում նշված՝ վարկի մայր գումարի տվյալ վճարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող՝ վարկի մայր գումարի վճարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է. ընդ որում, մարման ենթակա այդ գումարները, ըստ անհրաժեշտության, ճշգրտվում են Համաձայնագրի 2-րդ հավելվածի 4-րդ կետում նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը (Հավելված 2, կետ 2, ենթակետ «բ»),

9.13. Վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրը միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվան նախորդող 2 օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները համարել առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվա դրությամբ առհանված և չվճարված, և մարել առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվանից սկսած մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը (Հավելված 2, կետ 3),

9.14. բացառությամբ այն դեպքերի, երբ ԱՋԲ-ն այլ համաձայնության է գալիս, Վարկի միջոցները մասհանել Աղյուսակում նշված յուրաքանչյուր ծախսային հոդվածի համար առհանման տոկոսի հիման վրա (Հավելված 3, կետ 2),

9.15. բացառությամբ ԱՋԲ-ի կողմից համաձայնեցված այլ դեպքերի՝ վարկային միջոցները մասհանել Վարկի մասհանումների ձեռնարկի համաձայն (Հավելված 3, կետ 4),

9.16. չհակասելով Համաձայնագրի որևէ այլ դրույթի՝ Վարկային հաշվից առհանումներ չկատարել, քանի դեռ չեն տրամադրվել ձևի և բովանդակության առումով ԱՋԲ-ի համար բավարար ապացույցներ, որոնք հաստատում են Բարգուշատի թունելի կառուցման ֆինանսավորումը (Հավելված 3, կետ 5):

10. Վարկավորման կանոնների 10.01 բաժնի «զ» կետի նպատակներով Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման են՝ ԵՆԲ վարկային համաձայնագրի պատշաճ ձևակերպումն ու տրամադրումը և այն ուժի մեջ մտնելուն նախորդող բոլոր պայմանների (բացի Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը պահանջող պայմանից) կատարումը (հոդված VI, բաժին 6.01):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

20 մայիսի 2025 թվականի
ՍԴՈ-1781

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1781 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1781 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1781 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դա-

տարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1781 որոշմամբ 2025 թվականի մարտի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև դիմակայուն և ներառական ճանապարհային հատվածի բարելավման ծրագրի

համար Ասիական զարգացման բանկի միջոցներից վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն,

թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային

ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում

իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«23» մայիսի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 418-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 20 մայիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահ՝ Արման Դիլանյանի (նախագահող),

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Արմեն Ավագյանի (այսուհետ՝ Դիմող)

ներկայացուցիչ՝ փաստաբան Լուսինե Գրիգորյանի,

պատասխանող՝ Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող)

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արմեն Ավագյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի՝ **«Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը»** վերտառությամբ 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

«1. Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք բերած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի սուտ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն փոփոխվել/լրացվել:

Գործի քննության առիթը Դիմողի՝ 2025 թվականի հունվարի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Գործի դատավարական նախապատմությունը

1. Կարեն Սավզյանը 2016 թվականի հուլիսի 14-ին դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Դիմողին սնանկ ճանաչելու պահանջով:

2. Դատարանի 2016 թվականի օգոստոսի 22-ի վճռով Դիմողը ճանաչվել է սնանկ: Դատարանի 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ հաստատվել է Դիմողի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

3. Դիմողի սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը (այսուհետ նաև՝ Կառավարիչ) 2017 թվականի մայիսի 15-ին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու թույլտվության մասին, որը Դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բավարարվել է:

4. 2021 թվականի հունիսի 17-ին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչի որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) թիվ 09172219 քրեական գործով վարույթը կարճվել է և որոշվել՝ Հայկ Աղասու Կոշեցյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնել՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով: Սույն որոշմամբ, ի թիվս այլնի, նշվել է.

«(...) ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը, պարտավորված լինելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ պարտատերերի ժողով անցկացնելու և դրան կից արձանագրություն կազմելու, կազմել է ժողովին կից կեղծ արձանագրություն (...):

(...)

Բացի այդ, ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը (...) կազմել և հետագայում Արմեն Ավագյանի և Վահե Մելքոնյանի ստորագրությանն է ներկայացրել 24.03.2017թ. թվագրմամբ կեղծ գույքագրման ակտ (...)»:

5. Դիմողի ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) է ներկայացրել վերաքննիչ բողոք Դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի որոշման դեմ՝ որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչելով Որոշմամբ արձանագրված այն հանգամանքը, որ Հայկ Կոշեցյանը, թիվ

ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում հանդիսանալով սնանկության գործով կառավարիչ, կեղծել է ապացույցներ ու ներկայացրել Դատարանին:

6. Վերաքննիչ դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

7. 2021 թվականի հոկտեմբերի 25-ին Վերաքննիչ դատարանը թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործով որոշել է Դիմողի վերաքննիչ բողոքը բավարարել՝ վերացնելով Դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը՝ հարցն ուղարկելով Սնանկության դատարան՝ նոր քննության:

8. Վերաքննիչ դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ արձանագրել է. «(...) 17.06.2021 թվականի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ հաստատված է համարվել, որ Հայկ Կոշեցյանը, թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործի շրջանակներում հանդիսանալով սնանկության գործով կառավարիչ, կեղծել է ապացույցներ և ներկայացրել թիվ ԵԱՔԴ/0231/04/16 սնանկության գործը քննած դատարանին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, քանի որ թե՛ բողոք բերող անձին և թե՛ Դատարանին հայտնի չեն եղել սնանկության գործով կառավարչի կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու հանգամանքները, որոնք տվյալ գործի լուծման համար ունեցել են էական նշանակություն»:

9. Վերաքննիչ դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Կառավարիչը և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը:

10. Վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունվարի 5-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի որոշման դեմ Կառավարչի ներկայացրած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

11. Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մայիսի 18-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի որոշման դեմ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

12. Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ բավարարել է «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության վճռաբեկ բողոքը՝ արձանագրելով, որ «(...) վերաքննիչ բողոքում նշված հանգամանքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետի իմաստով չէր կարող որակվել որպես «նոր երևան եկած հանգամանք», քանի որ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու արդյունքում ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելու հանգամանքն օրենսդիրը նախատեսել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և այդ հիմքով դատական ակտը վերանայելու համար անհրաժեշտ պայման է նախատեսել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով այդ հանգամանքները հաստատված լինելը, մինչդեռ տվյալ դեպքում առկա է նախաքննական մարմնի որոշում, որը հանդիսանալով ինքնուրույն դատավարական փաստաթուղթ, չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող մեկ այլ դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չէր կարող ղեկավարվել ՀՀ քաղաքացիական դատավարության [օրենսգրքի] 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով նախաքննական մարմնի որոշումը՝ վերացնել Դատարանի 22.05.2017 թվականի «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումն ու հարցն ուղարկել Սննանկության դատարան՝ նոր քննության»:

13. Վերաքննիչ դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 2017 թվականի մայիսի 22-ին կայացրած՝ «Պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելու վերաբերյալ կառավարչի միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողել օրինական ուժի մեջ:

14. Վերաքննիչ դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ Դիմողի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

15. Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ մերժել է Վերաքննիչ դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի որոշման դեմ Դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Դիմողի դիրքորոշումները

16. Դիմողը, ներկայացնելով բարձրացված հարցադրման կապակցությամբ ներպետական իրավակարգավորումները, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վիճարկվող նորմին Վճռաբեկ դատարանի կողմից տրված նեղ,

նորմի սահմանադրաիրավական բովանդակությունից չբխող մեկնաբանումը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին՝ հաշվի առնելով Սահմանադրության 1-ին, 3, 75 և 80-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով վիճարկվող նորմը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, չի նախատեսում դատավճռից տարբերվող այլ դատավարական փաստաթղթերով հաստատված հանգամանքներ:

17. Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթներին տրված «(...) նեղ մեկնաբանման պայմաններում ստացվում է, որ եթե հանցագործության փաստի առկայությունը չի հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա առկա չէ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետերի ուժով դատական ակտի վերանայման հիմք, քանի որ ըստ Վճռաբեկ դատարանի, գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու արդյունքում ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելու հանգամանքն օրենսդիրը նախատեսել է ոչ թե Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, այլ 2-րդ կետով, որն էլ պահանջում է պարտադիր դատավճռի առկայություն:

(...) Քրեադատավարական օրենսդրությունը կոնկրետ հիմքերի առկայության դեպքում պահանջում է կայացնել քրեական վարույթը կարճելու մասին որոշում և բացառում է դատավճիռ կայացնելու իրավական ու իրական հնարավորությունը ու այս պայմաններում Դիմողը և նրա նման տուժած անձիք հնարավորություն չեն ունենում վերականգնել իրենց խախտված իրավունքները և կրում են օրենքով չնախատեսված և իրենց վարքագծով չպայմանավորված ծանր բեռ, իսկ որոշ դեպքերում նաև՝ անդառնալի հետևանք»:

18. Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից քննարկվող նորմին տրված գնահատականը հակադրվում է իրավունքի գերակայության կարևոր բաղադրատարր հանդիսացող և Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված՝ Դիմողի արդար դատական քննության և դատական պաշտպանության իրավունքներին: Այլ կերպ ասած՝ վիճարկվող իրավանորմին տրված մեկնաբանությունը բավարար չափով և հստակությամբ չի ծառայում արդար դատաքննությանը, քանի որ դատական ակտի վերանայման ինստիտուտի ներդրումն ուղղված է կեղծ, անարժանահավատ ապացույցների հիմքով կայացված դատական ակտի վերացմանը և դատավարության մասնակիցների խախտված իրավունքների վերականգնմանը:

19. Ըստ Դիմողի՝ երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով պարզվում է, որ գրավոր ապացույցը կեղծված է, ապա անթույլատրելի է

դատական ակտի վերանայումը մերժելը միայն այն պատճառաբանությամբ, որ գրավոր ապացույցի կեղծված լինելը հաստատել է քննիչը՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ, այլ ոչ թե դատարանը՝ դատավճռով:

20. Դիմողը եզրահանգում է, որ Օրենսգրքի վիճարկվող 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին՝ հաշվի առնելով նաև Սահմանադրության 1-ին, 3, 75 և 80-րդ հոդվածների պահանջներն այնքանով, որքանով դրանով չի ապահովվում նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն այն դեպքում, երբ քրեական գործի շրջանակներում հաստատվել է գրավոր ապացույցի կեղծված լինելը, հանցագործության համար մեղադրվող անձն ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, և միայն վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարճվել է քրեական գործը, և վաղեմության ժամկետն ավարտված լինելու հիմքով առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

21. Դիմողը խնդրում է «(…) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին պահանջներին հակասող և անվավեր՝ **այնքանով, որքանով այն չի ապահովվում նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն այն դեպքում, երբ քրեական գործի շրջանակներում հաստատվել է հանցագործության փաստի առկայությունը**, իսկ եթե Բարձր Դատարանը կգա եզրահանգման, որ ՀՀ վճռաբեկ դատարանը իր լիազորությունների շրջանակում չի կարող նման լայն մեկնաբանություն տալ նորմին և նման մեկնաբանություն տալու արդյունքում կստանձնի օրենսդրի լիազորություններ՝ այդ կերպ խախտելով իշխանության ճյուղերի միջև առկա սահմանադրական հավասարակշռումը, ապա խնդրում ենք Բարձր դատարանին վերը նշված նույն հիմնավորումներով արձանագրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր՝ **այնքանով, որքանով օրենսդիրը չի նախատեսել վարույթ իրականացնող մարմնի կողմից հաստատված հանցագործության փաստի առկայությունը, որպես նոր երևան եկած հանգամանք»** (ընդգծումը՝ Դիմողի):

Պատասխանողի դիրքորոշումները

22. Պատասխանողը, ներկայացնելով Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթը, նշում է. «(…) Օրենսգրքի 418-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է ելնել նորմի **կարգավորիչ նպատակից**: Օրենսգրքի 418-րդ հոդվածը վերաբերում է ոչ պատշաճ իրականացված արդարադատության ուղղմանը: Այս նորմի նպատակն է ապահովել, որ իրավական սխալները կամ թերությունները ուղղվեն՝ գործով ճշմարտությունը բացահայտելու և անձի խախտված իրավունքները վերականգնելու միջոցով, որը կհանգեցնի գործի ճիշտ և հիմնավորված լուծմանը: Այսպիսով, նորմը վերաբերում է ոչ միայն դատավարական սխալներին, այլ ավելի խորությամբ նպատակ ունի վերականգնել մարդու իրավունքները, եթե դրանք որևէ պատճառով խախտվել են:

(…)

Հիմք ընդունելով այն, որ Օրենսգրքի 418-րդ հոդվածը ուղղված է արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության նպատակներին, նրա լայն մեկնաբանությունը ոչ միայն անհրաժեշտ է, այլև կենսական կարևորություն ունի, որպեսզի օրենքի իրացման ընթացքում ապահովվի այնպիսի արդարադատություն, որը հաշվի է առնում ոչ միայն օրենքի բառացի պահանջները, այլ նաև արդարադատության և մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները» (ընդգծումը՝ Պատասխանողի):

23. Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումների «(…) նեղ մեկնաբանության արդյունքում, անձը ոչ միայն զրկվում է ոչ պատշաճ արդարադատություն իրականացվելու հետևանքով իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, այլև կեղծ ապացույցների վրա հիմնված դատական ակտը շարունակում է օրինական ուժի մեջ մնալ՝ միայն այն մեկնաբանությամբ, որ դատավարական բավարար գործիքակազմ «առկա չէ», ինչը նշանակում է, որ դատական ակտը շարունակելու է մնալ օրինական ուժի մեջ՝ առանց վերանայման հնարավորության, ինչն էլ կասկածի տակ է դնում դրա հիմնավորվածությունը և օրինականությունը»:

24. Պատասխանողն արձանագրում է, որ «(…) թեև Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսվել է որպես դատական ակտի վերանայման առանձին հիմք, այդուհանդերձ դա չի բացառում դատական ակտը Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վերանայելու հնարավորությունը: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ առկա է

գրավոր կամ իրեղեն ապացույցները կեղծված լինելու հանգամանք, որը, սակայն, չի հաստատվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով (…), որի արդյունքում անձը կարող է զրկվել իր դատական պաշտպանության իրավունքից, ինչը հակասում է արդար դատաքննության սկզբունքներին»:

25. Ըստ Պատասխանողի՝ «(…) նոր երևան եկած հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հնարավորության ապահովումը, մասնավորապես, երբ հաստատվում է գրավոր ապացույցների կեղծումը, էական նշանակություն ունի դատական գործընթացի ամբողջականությունը պահպանելու համար: Եթե անգամ մեղադրյալն ընդունել է մեղադրանքը, և գործը կարճվել է վաղեմության ժամկետը լրանալու պատճառով, և առկա չէ դատավճռով հաստատված փաստաթղթերի կեղծված լինելու հանգամանք, ապա ապացույցների կեղծումը կասկածի տակ է դնում դատաքննության արդարությունը և վճռի հիմնավորվածությունը»:

26. Պատասխանողը պնդում է, որ «(…) օրենսդիրը 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով **մեղքի** կամ **մեղավորության** դատավճռով հաստատված լինելու պահանջ չի սահմանել:

(…) Օրենսգրքի 418-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է առաջնորդվել այն սկզբունքից, որ այդ նորմը ունի «**նորոգիչ**» բնույթ՝ ոչ պատշաճ իրականացված գործի քննությունը շտկելու, արդարադատությունը շտկելու, անձի խախտված իրավունքները վերականգնելու արդյունավետ հնարավորություն: Վճռաբեկ դատարանի կողմից նշված նորմին դրա նպատակից չբխող, ինչպես նաև անձի արդար դատաքննության իրավունքի և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի էությունից չբխող մեկնաբանության արդյունքում սահմանափակվել է անձի սահմանադրորեն երաշխավորված հիմնարար իրավունքները» (ընդգծումը՝ Պատասխանողի):

27. Պատասխանողը նաև նշում է, որ «(…) Օրենսգրքի 418-րդ հոդվածը հանդիսանում է մարդու խախտված իրավունքները վերականգնելու նշանակալի երաշխիք, հետևաբար՝ վիճարկվող դրույթն իր իրավակարգավորիչ դերով և հետապնդվող նպատակներով սահմանադրականության խնդիր չի հարուցում՝ այն սահմանում է արդար և արդյունավետ դատաքննություն իրականացնելու և անձանց խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունը: Վիճարկվող նորմերին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը, գտնում ենք, որ սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է»:

28. Պատասխանողը խնդրում է սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

29. Սահմանադրական դատարանը նախևառաջ արձանագրում է, որ սույն դիմումում բարձրացված հանգամանքները, ըստ էության, վերաբերում են Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ուստի՝ Սահմանադրական դատարանը չի անդրադառնում նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին: Վերոգրյալի հաշվառմամբ՝ սույն գործով վիճարկվող նշյալ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրմանը.

1. արդյո՞ք Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ **մինչդատական վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշումը (համապատասխանաբար՝ քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն), որում ամրագրված են քաղաքացիական/սնանկության գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման հիմքում ընկած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը վկայող հանգամանքները, որոնք գոյություն են ունեցել տվյալ գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին,** Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով չի կարող որակվել որպես «նոր երևան եկած հանգամանք»՝ հաշվի առնելով Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումը, որը դատական ակտը վերանայելու համար անհրաժեշտ պայման է նախատեսում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը, ապահովում է քաղաքացիական դատավարության շրջանակներում նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման միջոցով անձի՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված համապատասխանաբար՝ արդյունավետ

դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

30. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

31. Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

32. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով երաշխավորված վերոնշյալ երկու հիմնական իրավունքներն օժտված են մեկ միասնական սահմանադրաիրավական առաքելությամբ և գտնվում են փոխադարձ օրգանական կապի մեջ:

33. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ միայն դատական պաշտպանության իրավունքի գործադրմամբ է հնարավոր հասնել արդար դատաքննության իրավունքի կենսագործմանը, և, միաժամանակ, միայն գործի արդարացի քննության պայմաններում է ապահովվում դատական պաշտպանության իրավունքի կենսական հատկանիշը՝ արդյունավետությունը:

34. Այս համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ենթադրում են նաև դատական ակտի վերանայման իրավունքի կենսագործմանը միտված համապատասխան օրենսդրական երաշխիքների առկայություն, քանզի ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտը, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, գործուն երաշխիք է մարդու խախտված իրավունքների վերականգնմանը միտված իրավական գործիքակազմի համալիրում: Ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ այս առումով առանցքային է ոչ միայն պատշաճ օրենսդրական կառուցակարգերի ամրագրումը, այլև դրանց՝ Սահմանադրությանը համահունչ մեկնաբանություն հաղորդելը, քանզի միայն այդ պայմաններում կարող է երաշխավորվել սույն ինստիտուտի նպատակային նշանակությամբ կենսագործումը:

35. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված

իրավունքները վերականգնելու բացառիկ արդարադատական գործիքակազմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1712 և այլն): Մասնավորապես՝ 2015 թվականի հունիսի 26-ի ՍԴՈ-1222 որոշմամբ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով նոր երևան եկած հանգամանքի սահմանադրաիրավական բնույթին և դրա հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման ինստիտուտի իրավական բովանդակությանը, նշել է.

«(…)

- նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

- այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր.-ի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)՝ նորահայտ են,

- իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

- դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հան-

գամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

- ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

- ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված»:

36. Սահմանադրական դատարանը 2024 թվականի հունվարի 23-ի ՍԴՈ-1712 որոշմամբ արձանագրել է, որ «(...) օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքից բացառություն կարող է լինել միայն ծանրակշիռ հիմնավորումներով, քանի որ հիշյալ հիմնարար սկզբունքի իրավական արժեքը պայմանավորված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դրա հասցեատերերի համար ստեղծված իրավական վիճակի կայունությունն ապահովելու (դրանով իսկ իրավական որոշակիությունը երաշխավորելու) սահմանադրական հրամայականով:

Իր հիմնարար իրավական արժեքով հանդերձ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքը բացարձակ չէ, և դրանից կարող է լինել բացառություն՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով՝ արդարադատության այնպիսի թերության ուղղման նպատակով, որի բացա-

հայտմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անհամատեղելի է դառնում արդար դատաքննության բուն էության հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքը պահանջում է օրենքով նախատեսված հանգամանքների և պայմանների առկայության պարագայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավաչափության ստուգման հնարավորություն, որի իրականացումը, միաժամանակ, չի կարող հանգեցնել վերջնական դատական ակտի՝ վերաքննության կամ վճռաբեկության ընդհանուր կարգով բողոքարկման քողարկված հնարավորության»:

37. Սահմանադրական դատարանը 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշմամբ արձանագրել է.

«79. (...) օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնականության սկզբունքը չունի բացարձակ բնույթ, և դրանից հնարավոր են բացառություններ, եթե այդ սկզբունքից շեղումը պայմանավորված է էական և ծանրակշիռ հիմնավորումներով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հիմնավորումներ են, մասնավորապես, այնպիսիք, որոնց անտեսումը կարող է բերել հիմնական իրավունքի կամ ազատության պաշտպանության շրջանակին վերաբերող իրավական վեճերով դրանց խախտումների նկատմամբ Սահմանադրության գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի հանդուրժողականության:

80. Սահմանադրական դատարանը շեշտում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերջնականության սկզբունքից ցանկացած բացառություն պետք է ունենա այնպիսի ծանրակշիռ հիմնավորումներ, որոնց առկայությունն անհատական իրավունքի կամ ազատության պաշտպանության և արդարադատության համակարգի կայունության մրցակցող շահերի պայմաններում բացառում է որևէ կասկածի հնարավորությունն առ այն, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության սկզբունքից նահանջը կարող է արդարացված լինել»:

38. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը կարող է իրականացվել դատական պաշտպանության իրավունքի կարևորագույն երաշխիքներից՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերջնականության (*res judicata*) սկզբունքի հաղթահարմամբ, որն ածանցվում է իրավական որոշակիությունից՝ ապահովելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի որոշակիությունն ու դրանց իրավական հետևանքների կայունությունը:

39. Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական ակտերի վերջնականության սկզբունքը բացարձակ չէ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով այս սկզբունքի նշանակությանը, արձանագրել է, որ *res judicata* սկզբունքից հնարավոր են շեղումներ, երբ դրա անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի էական, անհերքելի և անհաղթահարելի հանգամանքներով, ինչպիսիք են, օրինակ, արդարադատության այնպիսի թերության ուղղման անհրաժեշտությունը, որի բացահայտմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անհամատեղելի է դառնում արդար դատաքննության բուն էության հետ:

40. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *res judicata* սկզբունքի հաղթահարումը թույլատրելի է համարել որոշակի հանգամանքների առկայության պարագայում. վերջնական դատական ակտի վերանայումն իրավունքի պաշտպանության արտակարգ միջոցով ու այնպիսի նոր կամ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ, որոնք նախկինում հայտնի չեն եղել: Սակայն նման վերանայումը, ըստ էության, չպետք է վերածվի վերջնական դատական ակտերի քողարկված բողոքարկման (Pravednaya v. Russia, Application no. 69529/01. FINAL, 30.03.2005, §§27-33; Ryabykh v. Russia, Application no. 52854/99, FINAL 03.12.2003, §52; Şamat v. Turkey, Application no. 29115/07, FINAL 22.06.2020, §62):

41. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չի կարող դիտարկվել որպես սահմանադրահեն արդարադատության վերջնարդյունք, եթե ողջամիտ կասկածից վեր է, որ ի հայտ է եկել այնպիսի բացառիկ հանգամանք, որը հավաստում է դրա օրինականության, հիմնավորվածության և արդարության պահանջներին համահունչ կայացված չլինելը: Միևնույն ժամանակ, անթույլատրելի է սույն կառուցակարգի շղարշով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումը: Հետևաբար՝ և՛ օրենսդիրը՝ համապատասխան իրավակարգավորումներ սահմանելիս, և՛ իրավակիրառը՝ դրանք կյանքի կոչելիս, պետք է առաջնորդվեն հիշատակյալ սահմանադրահիրավական հրամայականներով:

42. Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի՝ «Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ 6-րդ բաժնում արտացոլված համանուն 58-րդ գլխում սահմանվում են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերը, վերանայող դատարանը, համա-

պատասխան բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև, ի շարս այլնի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը:

43. Այս առումով Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ քաղաքացիական դատավարությունում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ապահովմանն ուղղված նշանակալի իրավական մեխանիզմ է, որն առանցքային դեր է կատարում՝ նպաստելով արդարադատության սահմանադրաիրավական բովանդակության հետ անհամատեղելի դատական սխալների վերացմանը և անձանց խախտված իրավունքների վերականգնմանը՝ վերջնարդյունքում հանգեցնելով սահմանադրաիեն արդարադատության իրականացմանը, որը հանրային վստահության շարունակական ամրապնդման գրավականն է:

44. Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող իրավակարգավորումների դատավարական բովանդակության ու սահմանադրաիրավական առաքելության պատշաճ վերհանման անհրաժեշտությունն անառարկելիորեն պայմանավորում է քրեական հետապնդումը բացառող հանգամանքների հետ դրանց միասնության մեջ ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով իրողությունն առ այն, որ, օրինակ, քրեական վարույթը (քրեական գործով վարույթը) կարող է ավարտվել նաև դրա՝ նախաքննության մարմնի կողմից կարճմամբ՝ չհանգուցալուծվելով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի (դատավճռի կամ այլ վերջնական որոշման) կայացմամբ:

45. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետությունը՝ ի դեմս օրենսդիր մարմնի, իրավասու է սահմանել սահմանադրաիրավական արժեբանությանը համահունչ քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ կանոններ, ամրագրել քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, սակայն չի կարող հրաժարվել տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը երաշխավորելուց, նրանց արդարադատության մատչելիությունն ու պատճառված վնասի փոխհատուցումն ապահովելուց՝ նրանց իրավունքների իրացման **համարժեք դատավարական երաշխիքների տրամադրմամբ:** Ըստ այդմ՝ նշված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ քրեական վարույթի՝ եզրափակիչ դատական ակտի (սույն պարագայում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի) կայացմամբ չհանգուցալուծվելու պատճառով չի կարող ինքնին բացառվել

քաղաքացիական/սնանկության գործով կայացված արդարադատության սահմանադրաիրավական բովանդակության հետ անհամատեղելի դատական ակտերի վերանայման գործիքակազմի հնարավորությունը:

46. Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն գործով կիրառված 1998 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթն ավարտվում է՝

1) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով.

2) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելով, եթե այն չի պահանջում դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում.

3) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ի կատար ածելու մասին հաստատում ստանալով, եթե այն պահանջում է դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում:

47. 1998 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

48. Վերոգրյալ իրավանորմերի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին փաստելու, որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական վարույթի շարունակությունն օրենսդիրը պայմանավորել է **մեղադրյալի առարկությամբ:**

49. Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ **գործնականում չեն բացառվում իրավիճակներ, երբ քրեական վարույթի շրջանակներում փաստվեն անձի կողմից ոչ իրավաչափ վարքագծով պայմանավորված այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի լուծման պահին, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն (ընդ որում՝ հիշատակված պահանջները բավարարելու հարցը**

յուրաքանչյուր գործով ենթակա է ստուգման և գնահատման իրավասու դատարանի կողմից):

50. Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե, օրինակ, ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը հավաստվել է նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը կարճելու որոշմամբ, ապա այն մեկնաբանությունը, թե նման փաստի հաստատումն **ինքնին բացառում է Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի փաստակազմի համատեքստում դրա գնահատումը, խնդրահարույց է: Ուստիև՝ յուրաքանչյուր այդպիսի դեպքում՝** նման որոշման (այդ թվում՝ նախաքննական մարմնի որոշման) առկայության և համապատասխան բողոքի պայմաններում **դատարանների բացառիկ իրավասությունն է** գնահատման առարկա դարձնել այդ հանգամանքները՝ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի փաստակազմի տարրերի համատեքստում՝ ինքնուրույնաբար գնահատելով նաև այն հարցերը, թե՝

1) արդյո՞ք նման որոշմամբ (այդ թվում՝ նախաքննության մարմնի որոշմամբ) փաստվող հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին (բացառելու համար վերանայման այս կառուցակարգի՝ դատական սխալների շտկման վերաքննության և վճռաբեկության կարգով իրականացվող կառուցակարգերի հետ միախառնումը), և

2) արդյո՞ք այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

51. Վերոգրյալը հիմք է տալիս Սահմանադրական դատարանին եզրահանգելու, որ մի կողմից՝ քրեադատավարական ընթացակարգերի բացակայությունը, մյուս կողմից՝ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինքնին բացառում են ենթադրաբար ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած՝ իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը **մինչդատական վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշմամբ (համապատասխանաբար քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն)** հավաստված լինելու պայմաններում նշված հանգամանքները դիտարկել Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված փաստակազմի լույսի ներքո՝ **անձին (քաղաքացիական**

դատավարության/սնանկության վարույթի համապատասխան մասնակցին) դնելով դատավարական անելանելիության վիճակում:

52. Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուցիոնալ և ընթացակարգային պայմանները պետք է համապատասխանեն դատական պաշտպանության և արդար դատաքննության սկզբունքներին, ապահովեն դատական ակտի արդարությունը և, միաժամանակ, իրավական որոշակիությունը, այդ թվում և՝ դրա օրինական ուժի և անհերքելիության ճանաչումը, առանց որի անհասանելի է **հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը:**

53. Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմերին տրված մեկնաբանությունը հանգեցնում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունը խաթարող բացառիկ հանգամանքների առկայության պայմաններում դրա՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայման վարույթի անհնարինության, **ինչն առաջ է բերում սահմանադրորեն ճանաչված արժեքների հավասարակշռության խախտման, քանզի անձը ոչ միայն զրկվում է իր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, այլև արդարադատության սահմանադրաիրավական էության հետ անհամատեղելի դատական ակտը շարունակում է օրինական ուժի մեջ մնալ՝ այն վերանայելու քրեադատավարական գործիքակազմի բացակայության հիմքով:**

54. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթն անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացման միակ կառուցակարգային հնարավորությունն է, որի արգելափակման պարագայում անձը, ըստ էության, զրկվում է իր հայցած դատական պաշտպանության հնարավորությունից, ինչն անհամատեղելի է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ, որի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան կազմակերպաիրավական միջոցների ձևական-իրավական առկայությունը, այլ նաև իրավակիրառ հարթությունում դրանց սահմանադրաիրավական առաքելության համահունչ ընկալումը, մեկնաբանումն ու կիրառումը:

55. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական կառուցակարգերին չպետք է տրվի այնպիսի ձևապաշտական մեկնաբանություն, որը կխաթարի արդարադատության իրականացումը. Իրավա-

կիրառ մարմնի կողմից նորմի պատշաճ իմաստավորման պարագայում է հնարավոր ապահովել նորմով հետապնդվող սահմանադրական նպատակների անխափան իրացումն ու արդյունավետ դատական պաշտպանության իրական հասանելիությունը:

56. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարական նորմերն իրավակիրառ պրակտիկայում չպետք է մեկնաբանվեն և կիրառվեն այնպես, որ հանգեցնեն դատավարական անելանելիության, իսկ դատավարական կառուցակարգերի այդօրինակ մեկնաբանումները հանգեցնեն նորմի սահմանադրաիրավական նշանակության ձևախեղմանն ու անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտման:

57. Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ թեև գրավոր կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելու հանգամանքն Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվել է որպես դատական ակտի վերանայման առանձին հիմք, այդուհանդերձ, դա չի բացառում դատական ակտն Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերանայելու հնարավորությունը, եթե բողոք բերած անձը նշված հիմքով վարույթ հարուցելու պայմաններում ապացուցում է, որ գրավոր կամ իրեղեն ապացույցների՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը գոյություն է ունեցել գործի լուծման պահին, հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին և գործի լուծման համար ունի էական նշանակություն, ընդ որում՝ նշված հանգամանքը կարող է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնող անձի կողմից հիմնավորվել նաև նախաքննության մարմնի՝ քրեական վարույթը (քրեական գործի վարույթը) կարճելու մասին որոշմամբ:

58. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, դատավճռից բացի, քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ դատավարական ակտերով հաստատվող փաստերին նոր երևան եկած հանգամանքի կարգավիճակ տալը թույլ է տալիս վերսկսել քաղաքացիական վարույթը և դրա շրջանակներում կայացնել հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր: Ի տարբերություն դատավճռի, սակայն, որով հաստատված փաստական հանգամանքները նախադատելի են քաղաքացիական գործ քննող դատարանի համար և չեն ենթարկվում հետագա ապացուցման, դատավճռից բացի, քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը քննվում են քաղաքացիական գործով ձեռք բերված այլ ապացույցների

հետ միասին: Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումն ընդամենը չի զրկում դատարանին այդ հնարավորությունից՝ շահագրգիռ կողմի համար ապահովելով ոչ միայն քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը, այլ նաև հենց նման ակտերի կայացման փաստը որպես ապացույց դիտարկելը՝ գործով հիմնավորված և պատճառաբանված ակտ կայացնելու համար:

59. Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ բոլոր դեպքերում վերոնշյալ պայմանների պահպանումը ենթակա է դատարանի կողմից ստուգման և գնահատման՝ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու մասին դիմումը քննելիս՝ հաշվի առնելով նաև վերանայման համար հիմք հանդիսացած հանգամանքի նշանակությունը, համապատասխան գործի փաստական հանգամանքները: Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա հանգամանքների գոյության բացահայտումը, դրանց՝ օրենսդրական պահանջները բավարարելու հարցի գնահատումն արդեն իրավասու դատարանի իրավասության տիրույթում են:

60. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ նախաքննության մարմնի խնդրո առարկա որոշումը չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող դատական ակտի՝ դատավճռի հետ: Այլ կերպ՝ այն չի կարող կրել մեղադրական դատավճռի կայացմամբ ծագող հետևանքներին բնորոշ հատկանիշներ:

61. Վերոնշյալ հանգամանքները գնահատելիս դատարանը պետք է օգտագործի այնպիսի ձևակերպումներ, որոնք իրենց բովանդակությամբ որևէ կերպ կասկածի տակ չեն դնի, չեն վտանգի և չեն խաթարի Սահմանադրության 66-րդ հոդվածով երաշխավորված անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական բովանդակությունը:

62. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչդատական վարույթում քննիչի, իրավասու դատախազի համապատասխան որոշումը (համապատասխանաբար՝ քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և այլն), որում ամրագրված են քաղաքացիական/սնանկության գործի լուծման համար էական նշանակություն ունեցող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման հիմքում ընկած իրականությանը չհամապատասխանող գրավոր կամ իրեղեն ապացույցների առկայությունը վկայող հանգամանքները, որոնք գոյություն են ունեցել տվյալ գործի լուծման պահին, հայտնի չեն

եղել և չէին կարող հայտնի լինել բողոք բերած գործին մասնակցող անձին ու դատարանին, Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով պետք է դիտարկվեն որպես նոր երևան եկած հանգամանք, եթե որպես այդպիսին ստուգվել և գնահատվել են իրավասու դատարանի կողմից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 170-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով կայացված եզրափակիչ դատավարական ակտերը հիմք են նոր երևան եկած հանգամանքի ուժով դատական ակտերը վերանայելու համար:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

20 մայիսի 2025 թվականի
ՍԴՈ-1782

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՆՈՒՆԵ ԱԹՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 396-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 20 մայիսի 2025 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահի՝ Արման Դիլանյանի (նախագահող),
դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակում)՝

դիմողի՝ Նունե Աթոյանի (այսուհետ նաև՝ Դիմող)
ներկայացուցիչ՝ փաստաբան Գենյա Պետրոսյանի,

պատասխանողի՝ Ազգային ժողովի (այսուհետ սույն որոշման մեջ նաև՝ Պատասխանող),

ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մարի Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Նունե Աթոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի՝ **«Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը»** վերտառությամբ 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

(…)

6) չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ.

(…)»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը չի փոփոխվել և (կամ) լրացվել:

Գործի քննության առիթը Նունե Աթոյանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴԱՈ-75 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 396-րդ հոդվածի 2-րդ մասի մասերով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի օրինադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Էմմա Մնացականի Վարդանյանը 06.02.2015 թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Անժելա Աթոյանի՝ ժառանգատու Մանուշակ Աթոյանի ժառանգական գույք հանդիսացող Երևանի Արշակունյաց 36ա շենք 30 հասցեի բնակարանի ¼-րդ բաժնեմասի նկատմամբ Մարլեն Աթոյանի պարտադիր բաժնի իրավունքը ճանաչելու, Մարլեն Աթոյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Էմմա Վարդանյանի կողմից ժառանգատու Մառլեն Աթոյանին պատկանող Երևանի Արշակունյաց 36ա շենք 30 հասցեի բնակարանի ¼-րդ բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Անժելա Աթոյանի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, դրա հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ կողմից տրված հա. 0113187 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 06.02.2015 թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և նշանակվել քննության (**թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործ**):

Դատարանի 29.05.2015 թ. վճռով Էմմա Մնացականի Վարդանյանի հայցն ընդդեմ Անժելա Աթոյանի՝ ժառանգատու Մանուշակ Աթոյանի ժառանգական գույք հանդիսացող Երևանի Արշակունյաց 36ա շենք 30 հասցեի բնակարանի ¼-րդ բաժնեմասի նկատմամբ Մարլեն Աթոյանի պարտադիր բաժնի իրավունքը ճանաչելու, Մարլեն Աթոյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Էմմա Մնացականի Վարդանյանին ժառանգատու Մարլեն Աթոյանին պատկանող Երևանի Արշակունյաց 36ա շենք 30 հասցեի բնակարանի ¼-րդ բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Անժելա Աթոյանի անվամբ տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժվել է, իսկ Անժելա Աթոյանի՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ կողմից 26.05.1999 թ. տրված հա. 0113187 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճվել՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

Վերոնշյալ վճիռը բողոքարկվել է վերաքննության և վճռաբեկության կարգով, թողնվել է անփոփոխ և մտել օրինական ուժի մեջ:

1.2. Վճռաբեկ դատարանը, քննելով Էմմա Վարդանյանի ներկայացուցիչ Գենյա Պետրոսյանի վճռաբեկ բողոքը՝ թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի

25.11.2015 թ. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ, 07.04.2017 թ. որոշել է. «1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.11.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը:

2. Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2015 թվականի որոշման՝ Մարլեն Աթոյանի պարտադիր բաժնի իրավունքը Մանուշակ Աթոյանի ժառանգական գույքի՝ Երևանի Արշակունյաց փողոցի թիվ 36ա շենքի 30-րդ բնակարանի 1/4 բաժնի նկատմամբ ճանաչելու, Մարլեն Աթոյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Էմմա Վարդանյանին այդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Անժելա Աթոյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասերով հայցը մերժելու մասին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 29.05.2015 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասերը և այդ մասերով գործն ուղարկել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության»:

1.3. Դատարանի 23.09.2017 թ. որոշմամբ թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.04.2019 թ. որոշմամբ հիշատակված քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև գործով հայցվոր Էմմա Մնացականի Վարդանյանի իրավահաջորդության հարցի լուծումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 25.08.2020 թ. որոշմամբ թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է, իսկ հայցվոր Էմմա Մնացականի Վարդանյանը փոխարինվել է նրա իրավահաջորդով՝ ***Նունե Մարլենի Աթոյանով:***

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Նունե Մարլենի Աթոյանն ընդդեմ Անժելա Միխայելի Աթոյանի, Արփինե Սլավիկի Գևորգյանի և Վարազդատ Աշոտի Մաթևոսյանի՝ Էմմա Վարդանյանին Մարլեն Աթոյանին պատկանող ժառանգության՝ պարտադիր բաժնի (ք. Երևանի Արշակունյաց 36ա շենքի թիվ 30 բնակարանի ¼ բաժին) նկատմամբ, փաստացի տիրապետման եղանակով, ժառանգությունն ընդունած ժառանգ և այդ հիմքով վերջինիս սեփականության իրավունքը ճանաչելու, Նունե Աթոյանին Էմմա Վարդանյանին պատկանող բաժնի նկատմամբ, փաստացի

տիրապետման եղանակով, ժառանգությունն ընդունած ժառանգ և այդ հիմքով վերջինիս սեփականության իրավունքը ճանաչելու, որպես հետևանք Անժելա Աթոյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ ¼ բաժնի մասով, 10.08.2016 թ. կնքված առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին. 11.03.2022 թ. վճռել է հայցը մերժել:

1.4. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 24.01.2024 թ. որոշել է. «(...)Նունե Աթոյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի. թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով ՀՀ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 11.03.2022 թվականի վճիռը մասնակի՝ Մարլեն Աթոյանի պարտադիր բաժնի իրավունքը Մանուշակ Աթոյանի ժառանգական գույքի՝ Երևանի Արշակունյաց փողոցի թիվ 36ա շենքի 30-րդ բնակարանի 1/4 բաժնի նկատմամբ ճանաչելու, Մարլեն Աթոյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Էմմա Վարդանյանին այդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Նունե Աթոյանին այդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Անժելա Աթոյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի ¼ մասով անվավեր ճանաչելու պահանջների և դրանց նկատմամբ հաշվարկվող դատական ծախսերի մասով, բեկանել և համապատասխան մասով գործն ուղարկել նույն դատարան նոր քննության՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով»:

1.5. Վճռաբեկ դատարանը, քննելով ըստ Էմմա Վարդանյանի հայցի ընդդեմ Անժելա Աթոյանի, Արփինե Գևորգյանի և Վարազդատ Մաթևոսյանի՝ իրավունքը ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու ու ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2024 թ. որոշման դեմ Նունե Աթոյանի անունից բերված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 03.04.2024 թ. որոշել է վերադարձնել բերված վճռաբեկ բողոքը՝ արձանագրելով հետևյալը.

«Տվյալ դեպքում բողոք բերած անձը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք վկայակոչելով նաև բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը՝ պայմանավորված նաև իրավունքի զարգացման խնդրի առկայությամբ, վճռաբեկ բողոքում չի

նշել, թե Վերաքննիչ դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի կոնկրետ որ նորմերի կապակցությամբ է առկա իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև այդ հիմքի հիմնավորումը:

Բացի այդ, բողոք բերած անձը, որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք վկայակոչելով նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առկայության հանգամանքը՝ պայմանավորված բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ թույլ տալու հանգամանքով, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը, վճռաբեկ բողոքում չի նշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված հիմքի հիմնավորումը:

(...)

Տվյալ դեպքում ***Վերաքննիչ դատարանի 24.01.2024 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունե Աթոյանը, որի անունից որպես ներկայացուցիչ հանդես է եկել Գենյա Պետրոսյանը, մինչդեռ բողոքին կից չի ներկայացրել, ինչպես նաև քաղաքացիական գործում առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված լիազորագիրը:*** *Ինչ վերաբերում է քաղաքացիական գործում առկա՝ Նունե Աթոյանի կողմից Գենյա Պետրոսյանին տրված լիազորագրին (հատոր 5-րդ, գ. թ. 166), ապա այն տրվել է 14.09.2020 թվականին երեք տարի ժամկետով, որի գործողության ժամկետը վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահի՝ 04.03.2024 թվականի դրությամբ դադարած է եղել:*

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ***վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման:***

Միաժամանակ ***Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 3-րդ մասով, սույն որոշմամբ սահմանում է հնգօրյա ժամկետ՝ վերը նշված թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:***

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություններին, ապա այն Վճռաբեկ դատարանը տվյալ պահին քննության առարկա չի դարձնում՝ վճռաբեկ բողոք բերելու համար լիազորությունը հավաստող ապացույցի բացակայության պատճառաբանությամբ» (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

1.6. Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.01.2024 թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու և Նունե Աթոյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցերը, 29.05.2024 թ. որոշել է.

«1. Վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին Նունե Աթոյանի միջնորդությունը բավարարել. վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնել:

2. Մերժել պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ Նունե Աթոյանի միջնորդությունը:

3. Թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24. 01. 2024 թվականի որոշման դեմ Նունե Աթոյանի բերած **վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության (...)»** (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

Սույն որոշմամբ արձանագրվել է. *«Վճռաբեկ բողոք բերած անձը, **սահմանված ժամկետում շտկելով վճռաբեկ բողոքում առկա թերությունները,** 02.05.2024 թվականին փոստային առաքման եղանակով կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք ու պատճառաբանելով, որ Վերաքննիչ դատարանի 24.01.2024 թվականի որոշումն ստացվել է 02.02.2024 թվականին, միջնորդել է վերականգնել վճռաբեկ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը:*

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և հիմք է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:

Տվյալ դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 03.04.2024 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Նունե Աթոյանի նախկինում բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ սահմանելով ժամկետ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Այժմ Նունե Աթոյանը, շտկելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 03.04.2024 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված վերը նշված

թերությունները, կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ այն ներկայացնելիս թույլ տալով նոր խախտում: *Այսպես՝*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից (...): Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: (...):

Տվյալ դեպքում բողոք բերած անձը, վճռաբեկ բողոքին չկցելով օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից ու միջնորդելով պետական տուրքի վճարման գծով սահմանել արտոնություն, չի հիմնավորել համապատասխան արտոնությունը սահմանելու «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում նշված հիմքի առկայությունը՝ իր համապատասխան գույքային դրությունը, ուստի հարուցված միջնորդությունը ենթակա է մերժման:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության» (ընդգծումները՝ Սահմանադրական դատարանի):

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ներկայացնելով թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, նշում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից՝ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելիս որպես նոր խախտում թույլ տալու և բողոքն առանց քննության թողնելու հիմք է դիտարկվել պետական տուրքի վճարման գծով արտոնություն կիրառելու միջնորդությունը Վճռաբեկ դատարանի կողմից մերժվելու հանգամանքն այն դեպքում, երբ այն առաջին անգամ քննության առարկա է դարձել Վճռաբեկ դատարանի կողմից՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու որոշմամբ (նույն միջնորդությունը ներառված է եղել նաև առաջին անգամ ներկայացված

վճռաբեկ բողոքում, որին Վճռաբեկ դատարանը, սակայն, որոշել է չանդրադառնալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշմամբ և առաջին անգամ այն քննարկման առարկա է դարձրել վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու որոշմամբ):

Դիմողի համոզմամբ՝ Վճռաբեկ դատարանը, առաջին անգամ քննության առարկա դարձնելով պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը, միայն բողոքը կրկին ներկայացնելուց հետո՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ, զրկել է անձին՝ իր կողմից ներկայացված պետական տուրքի վճարման գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվելու դեպքում պետական տուրք վճարելու և Վճռաբեկ դատարան համապատասխան բողոք ներկայացնելու հնարավորությունից՝ «դիտարկելով ներկայացված միջնորդության մերժումը որպես Դիմողի կողմից նոր խախտում թույլ տալու հիմք (...), հետևաբար՝ զրկելով Դիմողին դատարանի մատչելիության իրավունքից Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի պահանջների ակնհայտ խախտմամբ»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը «(...) հանգեցրել է Վճռաբեկ դատարանի կողմից ինքն իրեն այնպիսի իրավասություն վերապահելուն, որը հնարավորություն է տալիս վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշմամբ չպատճառաբանել ներկայացված պետական տուրքի վճարման գծով միջնորդությունը մերժելու և բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը (...)»: Նման պայմաններում, Դիմողի գնահատմամբ, Օրենսգրքի վերոնշյալ դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որը զրկել է անձին իր գույքային դրությունը հաստատող ապացույցների ներկայացված լինելու պայմաններում՝ իր միջնորդությունը մերժելու և պատճառաբանված որոշում ստանալու իրավունքից:

Դիմողն արձանագրում է, որ կրկին ներկայացված բողոքով վերջինիս կողմից շտկվել են Վճռաբեկ դատարանի կողմից մատնանշված բոլոր թերությունները, իսկ պետական տուրքի վճարման գծով արտոնության կիրառման միջնորդությունը նույն բովանդակությամբ, առանց փոփոխության պահպանվել է վերստին ներկայացված բողոքում, սակայն Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու որոշմամբ, առանց որևիցե պատճառաբանության, մերժել է ներկայացված միջնորդությունը՝ դիտարկելով այն Դիմողի կողմից բողոքը կրկին ներկայացնելիս նոր խախտում թույլ տալու և բողոքն առանց քննության թողնելու հիմք:

Ամփոփելով ողջ վերոգրյալը՝ Դիմողը խնդրում է. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ դրան դատական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ և 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող), մեջբերելով Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի ու 63-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և համադրելով դրանք Օրենսգրքի 395 և 396-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների հետ, գտնում է. «(...) վճռաբեկ վարույթի առաջացումը կախված է մի կողմից՝ անձի մոտ վճռաբեկ բողոքարկման իրավունքի առկայությունից, մյուս կողմից՝ այդ իրավունքի իրացման դատավարական օրենքով սահմանված կարգից: Սա նշանակում է, որ վճռաբեկ վարույթի հարուցման համար բավարար չէ ունենալ բողոքարկման իրավունք, անհրաժեշտ է նաև սահմանված կարգով այն իրացնել»:

Պատասխանողը պնդում է. «Արդար դատաքննության իրավունքը չի սահմանափակվում միայն գործի հիմքում դրված փաստերի և օրենքների վրա, այլ ներառում է նաև ընթացակարգային սխալների ուղղումը, որոնք կարող են խաթարել դատաքննության արդարությունը»: Ըստ Պատասխանողի՝ օրենսդիրն այդ նպատակով սահմանել է բողոքը դատարանի կողմից վերադարձնելու, բողոքաբերի կողմից թույլ տրված սխալներն ուղղելու և նորից ներկայացնելու իրավական հնարավորություն, ինչը կոչված է ապահովելու դատարանի մատչելիության իրավունքի գործնական իրացումը:

Մեջբերելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) առանձին դիրքորոշումները՝ Պատասխանողն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում դիմումը վերադարձնելու կարգը՝ հնարավորություն տալով Դիմողին շտկելու բողոքում առկա թերությունները և կրկին ներկայացնելու վճռաբեկ բողոքը:

Մեջբերելով Օրենսգրքի 395-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումը՝ Պատասխանողը նշում է, որ Վճռաբեկ դատարանի համար օրենսդիրը պարտականություն է սահմանել բողոքը վերադարձնելու դեպքում նշել «առկա թերությունները»: Վերջինս, ըստ Պատասխանողի, ելնելով

իրավակարգավորման նպատակից, ակնհայտորեն ընդգրկում է բողոքում առկա բոլոր թերությունները նշելու դատարանի պարտականությունը:

Պատասխանողի համոզմամբ՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները չեն վերացվում, վճռաբեկ բողոքը, Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, թողնվում է առանց քննության: Այսինքն՝ օրենսդիրը, սահմանափակելով անձի վճռաբեկ բողոք ներկայացնելու արդյունավետ հնարավորությունը, միևնույն ժամանակ ապահովում է այնպիսի ընթացակարգեր, որոնք կնպաստեն գործերի արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննությանը:

Պատասխանողն արձանագրում է, որ Դիմողը չէր կարող կանխորոշել, որ իր կողմից ներկայացված միջնորդությունը մերժվելու էր, և, միաժամանակ, դա որակվելու էր որպես բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ տրված նոր խախտում: Ավելին, Պատասխանողը նշում է, որ պետական տուրքի մասով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելն ինքնին խախտում չէ, հետևաբար՝ բոլոր դեպքերում այն մերժվելու դեպքում անձը պետք է ունենա բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Եզրափակելով Պատասխանողը գտնում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցը ենթադրում է ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատում, այլ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված դատական ակտերի իրավաչափության ստուգում:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո Պատասխանողը խնդրում է. «Նունե Աթոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել կամ սույն գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող դրույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, որի համաձայն՝ վիճարկվող դրույթի իմաստով նոր խախտում է դիտարկվում վճռաբեկ բողոքը վերա-

դարձնելու մասին որոշման մեջ չնշված այն ենթադրյալ թերությունը, որն առկա է եղել վճռաբեկ բողոքն առաջին անգամ դատարան ներկայացնելիս՝ հանգեցնելով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելուն՝ առանց տվյալ ենթադրյալ թերությունը շտկելու հնարավորություն ընձեռելու, համապատասխանում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ **«Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը»** վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի արժեբանական հիմքում ընկած է մարդու իրավունքների և ազատությունների՝ դատական կարգով պաշտպանության սահմանադրաիեն գաղափարը, ուստի՝ խնդրո առարկա սահմանադրական իրավունքը հանդես է գալիս որպես այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը միտված ուրույն սահմանադրական իրավունք-երաշխիք, որը թույլ չի տալիս դրանք վերածել երևութական արժեքների: Այս առումով հիշյալ սահմանադրական իրավունքի իրացման մեկնակետը դատարանի մատչելիության իրավունքի երաշխավորումն է:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում բացահայտել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստում դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ նշելով.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով:

(...)

(...) Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում),

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել [2005թ. փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում),

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

Այսպիսով՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը հիմնաքարային սահմանադրական իրավունք է, որը հնարավորություն է ընձեռում անձին դիմելու դատարան՝ հայցելով իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանություն: **Ուստի՝ դատարանի մատչելիության իրավունքը կոչված է ապահովելու յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումները վերացնելուն ուղղված համապատասխան դատական ընթացակարգեր նախաձեռնելու ռեալ (իրական) իրավական հնարավորություն: Դատարանի մատչելիության իրավունքը պետք է երաշխավորվի դատական բոլոր ատյաններում. այս գաղափարը պետք է ուղենշային լինի նաև իրավակիրառ պրակտիկայի զարգացման շրջանակներում:**

5.2. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի վերանայմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը բացահայտվում է Սահմանադրության 171-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հայաստանի

Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանի հիմնարար սահմանադրական առաքելությունն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, որն ուղղված է, ի թիվս այլնի, ապահովելու դատական ակտերի արդարացիությունը, կանխատեսելիությունը և որոշակիությունը: Վճռաբեկության կարգով բողոքարկումը բնութագրվում է որոշակի նպատակային նշանակությամբ, որից և բխում են վերջինիս համապատասխան գործառութային առանձնահատկությունները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով.

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի, վերջինով պայմանավորված՝ գործառութային լիազորությունների, բողոքաբերների համար, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի զարգացման առումով Վճռաբեկ դատարանի դատական ակտերի կարևորության բացահայտման տեսանկյունից հատկանշական է Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը: Նշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է.

«(...) ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն.

այն պետք է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

որպես սահմանադրորեն նախատեսված շրջանակներում բարձրագույն դատական ատյան՝ վճռաբեկ դատարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդարության, հավասարության պայմաններում և ողջամիտ ժամկետում դատաքննության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

(...)

*(...) ՀՀ վճռաբեկ դատարանի գործունեության՝ օրենքով նախանշված նպատակները պայմանավորված են այդ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Օրենքի միատեսակ կիրառությունը, ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային փոխկապակցված գործառույթներ են, հետապնդում են իրավաչափ նպատակներ և երաշխիք են վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու ընթացակարգային լիազորությունների իրականացման համար: **Այդպիսի երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացում»:***

Հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ *«(...) նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն»:*

Առաջնորդվելով վերոնշյալ դիրքորոշմամբ՝ Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ **վճռաբեկ բողոք ներկայացրած անձն իրավունք**

ունի ակնկալելու Վճռաբեկ դատարանի՝ օրենսդրական կանոնների մեկնաբանման արդյունքում առաջադրած բողոքի ընդունելիության կանխատեսելի գործնական չափանիշներ ու պահանջներ *(տե՛ս Սահմանադրական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴՈ-1707 որոշումը)*:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2015 թվականի մարտի 3-ի ՍԴՈ-1192 որոշման շրջանակներում, արձանագրել է.

«Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

(…) Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ»:

Սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1363 որոշման մեջ արձանագրված է.

*- «ՄԻԵԴ-ը բազմաթիվ վճիռներում նշել է, որ վճռաբեկ դատարան դրվող գանգատին ներկայացվող պահանջները կոչված են ապահովելու արդարադատության լավագույն կառավարում, սակայն ազգային դատարանների կողմից գանգատների ձևակերպման նկատմամբ **չափազանց ձևական մոտեցումը** վճռաբեկ գանգատների ընդունման հարցում կարող է հանգեցնել*

դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Վճռաբեկ գանգատի՝ հստակ ձևակերպված չլինելու հիմքով վարույթ չընդունելը, ըստ ՄԻԵԴ-ի, կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման (Case of Reichman v. France, application no. 50147/11, 12/07/2016)»,

*- «(...) ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ պետք է խուսափել ավելորդ ձևականությունից, **«բայց միաժամանակ չլինել չափազանց ճկուն, որպեսզի վճռաբեկ գանգատին ներկայացվող պահանջները չդառնան անիմաստ»** (Case of Dumitru Gheorghe v. Romania, application 33883/06, 12/04/2016)»*:

ՄԻԵԴ-ը իր նախադեպային պրակտիկայում հայտնել է, որ Գերագույն դատարաններ դիմելու սահմանափակումների համաչափության վերաբերյալ որոշում կայացնելիս Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում երեք չափանիշների՝ (i) սահմանափակման կանխատեսելիությանը, (ii) այն հարցին, թե ով պետք է կրի դատավարության ընթացքում թույլ տրված սխալների անբարենպաստ հետևանքները (նույն տեղում, §§ 90-95), և (iii) արդյոք վիճարկվող սահմանափակումները կարող են համարվել «չափազանց ֆորմալիստական» (Case of Willems and Gorjon v. Belgium, nos. 74209/16 and 3 others, § 80, 21/09/2021), Case of Vachik Karapetyan and others v. Armenia, nos. 15736/16) and 2 others, § 87, 15/05/ 2025:

Այսպիսով՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական առաքելությունը՝ Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ վերջինիս է վերապահված նաև ստորադաս դատարանների համար *ուղղորդող և կանխորոշիչ նշանակություն ունեցող մեկնաբանություններ տալու սահմանադրաիրավական գործառույթը, որի՝ Սահմանադրությանը համահունչ կենսագործումը **մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման գրավականն է:***

5.3. Ողջ վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի սպառիչ ցանկը, որի 6-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն առանց քննության է թողնվում նաև այն դեպքում, *երբ **չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները**, կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում **թույլ են տրվել նոր խախտումներ**:*

Տվյալ դեպքում օրենսդիրը վճռաբեկ բողոք բերած անձին տվել է վերադարձված բողոքում առկա թերությունները վերացնելու և *կրկին (առանց նոր թերությունների) ներկայացնելու իրավական հնարավորություն:* Նշվածից ակնհայտ է դառնում, որ թերությունները վերացնելու համար վերադարձված վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար բողոք բերած անձի համար գործում են ոչ միայն ժամկետային, այլև քանակական սահմանափակումներ: Ուստի՝ օրենքով նախատեսված դեպքերում անձի կողմից համապատասխան դատավարական գործողության կատարման իրավունքը կարող է կախվածության մեջ դրվել օրենքով սահմանված նաև այլ, մասնավորապես՝ քանակական պայմաններից. կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը **նոր թերություններով** բերված լինելու դեպքում, թողնվում է առանց քննության[1]: Համապատասխան քանակական սահմանափակումների նախատեսումն օրենսդրի կողմից կոչված է երաշխավորելու/կանխելու վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքի չարաշահումները, ինչպես նաև համապատասխան ժամկետների արհեստական երկարաձգումները:

Ուսումնասիրելով թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանը 03.04.2024 թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ նշելով.

Ինչպես հետևում է սույն որոշման 1.6-րդ կետում շարադրված գործի դատավարական նախապատմությունից՝ Վճռաբեկ դատարանի 29.05.2024 թ. վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման հիմք է հանդիսացել **Վճռաբեկ դատարանի կողմից պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը մերժելը, և, միաժամանակ, բողոքը կրկին ներկայացնելիս դա որպես թույլ տրված *նոր խախտում* որակելը:**

5.4. Պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականությունը դիտարկելով դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ սերտ կապի մեջ՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշմամբ փաստել է. «*Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝*

[1] Նման սահմանափակում գործում է ոչ միայն վճռաբեկ, այլ նաև վերաքննիչ բողոքների նկատմամբ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 371-րդ հոդվածը, սահմանելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի սպառիչ ցանկը, 5-րդ մասով սահմանում է. *«(...) Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում»*:

*դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է **երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև**: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ*»:

2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1423 որոշմամբ Սահմանադրական դատարանը, ելնելով պետական տուրքի՝ օրենքով որոշված իրավական բովանդակությունից և նպատակային նշանակությունից, գտել է, որ *«(…) պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականխել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ **նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը***»:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի հուլիսի 1-ի ՍԴՈ-1655 որոշման համաձայն՝ *«(…) դատարանում պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու և պետական տուրքի գծով այլ արտոնություններն ունեն հավասարակշռող ազդեցություն և ինքնին միտված են երաշխավորելու անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը՝ հաշվի առնելով անձանց սոցիալական դրությունը, ֆինանսական հնարավորությունների բացակայությունը և այլն: Արտոնությունների համակարգի ճկունությունը հնարավորություն է ընձեռում երաշխավորելու այն անձանց իրավունքները, որոնք զրկված են գույքային դրության պատճառով*

արդարադատություն հայցելու հնարավորությունից: Պետական տուրքի գանձման և դատարանի մատչելիության իրավունքի ապահովման հավասարակշռության գործում ընդգծելի է իրավակիրառ մարմինների՝ տվյալ դեպքում՝ դատարանների դերը: Այս մարմիններին օրենսդրությամբ ընձեռված է մեծ հայեցողություն՝ համապատասխան իրավիճակում չսահմանափակելու անձի դատական պաշտպանության իրավունքը՝ վերջինիս գույքային հնարավորության բացակայությամբ պայմանավորված»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականությունն **արդեն իսկ հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի իրացման բավական զգալի նախապայման,** իսկ պետական տուրքի գծով արտոնություններն ունեն հավասարակշռող ազդեցություն և ինքնին միտված են երաշխավորելու անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ուստի՝ դատարանի կողմից **առաջին անգամ** պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդության մերժումը չի կարող **անմիջապես զրկել** անձին իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքից: Հակառակ իրավիճակը դուրս է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավական հնարավորության ողջ տրամաբանությունից:

Բացի դրանից, վիճարկվող դրույթի նման մեկնաբանությունը, այսինքն՝ երբ դատարանների կողմից նոր խախտում է դիտարկվում և, ըստ այդմ՝ կիրառվում է վիճարկվող դրույթով նախատեսված՝ բողոքն առանց քննության թողնելու, այլ ոչ թե բողոքը կրկին վերադարձնելու դատավարական գործիքը բոլոր այն դեպքերի համար, երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ չի լինում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին, ձևավորվում է անհավասար մոտեցում դատավարական միևնույն կարգավիճակ ունեցող սուբյեկտների նկատմամբ: Մասնավորապես՝ մի սուբյեկտի պարագայում (երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ է կատարվում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին) պետտուրքից ազատելու վերաբերյալ միջնորդությունը մերժվելուց հետո բողոքը վերադարձվում է բողոքաբերին՝ այն շտկելու և կրկին դատարան ներկայացնելու հնարավորությամբ, իսկ մյուսի դեպքում (երբ սկզբնական բողոքը վերադարձնելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ անդրադարձ չի լինում սկզբնական բողոքում առկա վերադարձման բոլոր հիմքերին)՝ նույն միջնորդությունը, ըստ էության, առաջին անգամ քննվում և մերժվում է՝

առանց բողոքը վերադարձնելու և ըստ այդմ՝ բողոքաբերին այդ թերությունը շտկելու և այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորություն ընձեռելու: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նշված տարբերակված մոտեցումը զուրկ է որևէ իրավաչափ հիմքից, և նախորդիվ նկարագրված իրավիճակներից վերջինում հայտնված սուբյեկտն առհասարակ անհամաչափորեն զրկվում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

Վճռաբեկ դատարանին վճռաբեկ բողոքը վերադարձնելու իրավասություն վերապահելն իրավական գործուն մեխանիզմ է՝ ուղղված ներկայացված բողոքում առկա թերությունները, մասնավորապես՝ պետական տուրքի առնչությամբ մատնանշելուն, իսկ հաջորդիվ՝ բողոքաբերի կողմից դրանք **շտկելուն/վերացնելուն**՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից ածանցվող՝ սահմանված կարգով և ժամկետում վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքը՝ երաշխավորելով վճռաբեկ ատյանի մատչելիության իրավական հնարավորությունը:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 393-րդ հոդվածը սահմանում է, որ վճռաբեկ բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է **պետական տուրքի վճարման գծով արտոնություն**, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է **դրա վերաբերյալ միջնորդությունը**, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից:

Օրենսգրքի 395-րդ հոդվածի ուժով **վճռաբեկ բողոքը վերադարձվում է**, եթե, ի թիվս այլնի, դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ առկա իրավակարգավորումները՝ իրենց համակարգային ամբողջության մեջ, ինչպես նաև դատական պրակտիկան զարգացել են այն տրամաբանությամբ, որ դատարանի կողմից առաջին անգամ պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդության մերժումը տվյալ փուլում **անձին չի զրկում դատական պաշտպանության իրավունքից**: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն, որ դատարանի կողմից առաջին անգամ նշված միջնորդության մերժումը հանդիսանում է **վճռաբեկ բողոքը վերադարձնելու (այլ ոչ դրա վարույթ ընդունելը մերժելու, կամ այն առանց քննության**

թողնելու) հիմք, նման պարագայում անձն իրավասու է **շտկելու առկա թերությունը և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու:** Մասնավորապես՝ վերջինս օժտված է իր ընտրությամբ կամ կրկին նման միջնորդություն ներկայացնելու (առավել հիմնավոր և/կամ նոր ապացույցներով), կամ, առհասարակ, պետական տուրքը վճարելու հնարավորությամբ:

Տվյալ դեպքում, թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդությունը Վճռաբեկ դատարանի կողմից **առաջին անգամ** քննության առարկա է դարձել կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցը որոշելիս, ինչի արդյունքում միջնորդությունը մերժվել է, իսկ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը՝ թողնվել առանց քննության: Այնինչ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանի կողմից պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը մերժելն **Օրենսգրքի 395-րդ հոդվածի իմաստով վճռաբեկ բողոքը վերադարձնելու *ինքնուրույն հիմք է***:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **դատարանի կողմից պետական *տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդության անհիմն լինելը չէր կարող մեկնաբանվել որպես կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում առկա նոր թերություն և հիմք հանդիսանալ այդ հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու համար՝ հանգեցնելով Դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման՝ հաշվի առնելով նաև, որ Դիմողին սույն ենթադրյալ թերությունը շտկելու որևէ իրավական հնարավորություն չի ընձեռվել:***

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 395-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների ուժով՝ *օրենսդիրը չի բացառել նաև այնպիսի իրավիճակ, երբ արդեն իսկ վերադարձված և կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում կարող են ի հայտ գալ վերադարձման հիմք հանդիսացող* ***այլ թերություններ:***

Այսպես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1363 որոշման շրջանակներում, անդրադառնալով նախկին՝ 1998 թվականի խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, նշել է, որ *«(…) վերադարձված բողոքը կրկին ներկայացվելուց հետո հայտնաբերված* ***նոր թերությունները ոչ բոլոր***

***դեպքերում է, որ կարող են թույլ տրված լինել բողոքաբերի մեղքով**, և այդ պարագայում **բողոքն առանց քննության թողնելը կարող է անարդարացիորեն զրկել բողոքաբերին դատական պաշտպանության իր իրավունքների լիարժեք իրականացման հնարավորությունից**»:*

Վերահաստատելով վերոնշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքը ներկայացնելու (առաջին անգամ դատարան մուտք անելու) պահի դրությամբ, սակայն Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցը որոշելիս դրանց անդրադարձ չի կատարել, Օրենսգրքի վիճարկվող դրույթի իմաստով որպես *նոր խախտում* մեկնաբանվել չեն կարող:**

Անդրադառնալով սույն գործին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթը թիվ ԵՇԴ/0331/02/15 քաղաքացիական գործով Դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի շրջանակներում կիրառվել է վերոգրյալից տարբերվող մեկնաբանությամբ. ***սույն պարագայում պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին Դիմողի միջնորդությունը մերժելը և այդ հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը՝ առանց տվյալ ենթադրյալ թերությունը շտկելու հնարավորության ընձեռման, զրկել է անձին վճռաբեկության կարգով բողոք ներկայացնելու իրավունքից՝ հանգեցնելով վերջինիս արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման:***

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ***ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքը ներկայացնելու (առաջին անգամ դատարան մուտք անելու) պահի դրությամբ, սակայն Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի վերադարձման հարցը որոշելիս դրանց անդրադարձ չի կատարել, նշյալ դրույթի իմաստով որպես նոր խախտում մեկնաբանվել չեն կարող, հետևաբար՝ դրանց նկատմամբ պետք է կիրառվի ոչ թե վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, այլ այն կրկին վերադարձնելու դատավարական գործիքը:***

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորելու և վճռաբեկ ատյանի մատչելիությունն ապահովելու տեսանկյունից խնդրահարույց է ոչ թե այն, որ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության, քանի որ մերժվել է պետական տուրքի մասով

արտոնություն կիրառելու մասին միջնորդությունը, այլ այն, որ մինչ այդ՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ, Վճռաբեկ դատարանն այդ միջնորդությանն ըստ էության չի անդրադարձել: Այլ կերպ՝ խնդրահարույց պրակտիկան չէր առաջանա, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն ըստ էության անդրադառնար տվյալ բողոքի վերադարձման բոլոր հիմքերին, կամ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումը կայացվեր կրկին ներկայացված բողոքներում տեղ գտած վերադարձման ենթակա այն հիմքերի առնչությամբ միայն, որոնց վերաբերյալ ըստ էության անդրադարձ էր կատարել բողոքի վերադարձի վերաբերյալ առաջին որոշման մեջ:

Վճռաբեկ դատարանի կողմից իրավակիրառական նման պրակտիկայի զարգացումը, առհասարակ, բավական արդյունավետ գործիք կլիներ ինչպես արդյունավետ դատական պաշտպանության անձի իրավունքի երաշխավորման, այնպես էլ դատարանի և դատավարության մասնակիցների ռեսուրսների խնայողության տեսանկյունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքի բոլոր այն թերությունները, որոնք առկա են եղել վճռաբեկ բողոքն առաջին անգամ ներկայացնելիս և ի սկզբանե հանդիսացել են վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք, սակայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ դրանց անդրադարձ չի կատարվել, նշյալ դրույթի իմաստով նոր խախտումներ չեն:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

20 մայիսի 2025 թվականի
ՍԴՈ-1783

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչներ՝ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի, Ֆինանսների նախարարի տեղակալ Վահան Սիրունյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 3-ի N 361-Ա որոշմամբ հավանություն է տվել 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում:

2. Համաձայնագրով նախատեսվում է ԱԶԲ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 45,310,000 (քառասունհինգ միլիոն երեք հարյուր տասը հազար) եվրո վարկ՝ բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացմանն աջակցելու նպատակով:

3. Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝ Ծրագրի նպատակն է խթանել բարեփոխումները հետևյալ ուղղություններով՝

1) առողջապահական հաստատությունների կառուցում ու բարելավում,

2) առողջապահական ծառայությունների որակի գնահատում և հաշվետվողականության թվայնացում ու ինստիտուցիոնալացում,

3) բժշկական հաստատությունների լիցենզավորում,

4) առողջապահության ոլորտի մարդկային կապիտալի զարգացում,

5) հեռաբժշկության պիլոտային ծրագրի իրականացում,

6) էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում:

4. Համաձայնագիրն ունի չորս հավելված՝ Հավելված 1. **Ծրագրի նկարագրությունը,** Հավելված 2. **Մարման ժամանակացույցը,** Հավելված 3. **Վարկային միջոցների հատկացումը և առհանումը** և Հավելված 4. **Ծրագրի իրականացումը:**

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. պատրաստել Ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ ԱՋԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվողականության ստանդարտների համաձայն (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.2. ապահովել այդ ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի անցկացումն անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձը և բանիմացությունն ընդունելի են ԱՋԲ-ի համար՝ ԱՋԲ-ի կողմից ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.3. ապահովել յուրաքանչյուր նման աուդիտի շրջանակներում աուդիտորների կողմից այնպիսի հաշվետվության պատրաստումը, որը ներառում է աուդիտորների կարծիքը (կարծիքները)՝ ֆինանսական հաշվետվությունների և վարկային միջոցների օգտագործման մասին, և ղեկավարությանն ուղղված նամակը (որով ներկայացվում են Ծրագրի ներքին հսկողության թերությունները, որոնք բացահայտվել են աուդիտի ընթացքում, այդպիսիք լինելու դեպքում) (հոդված 4, բաժին 4.02, կետ ա),

5.4. ներկայացնել ԱԶԲ-ին համապատասխան յուրաքանչյուր հարկաբյուջետային տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո աուդիտի ենթարկված այդ ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի հաշվետվության և ղեկավարությանն ուղղված նամակի օրինակները, բոլորն անգլերենով, ինչպես նաև այդ փաստաթղթերի և դրանց աուդիտի վերաբերյալ ցանկացած այնպիսի տեղեկատվություն, որն ԱԶԲ-ն ողջամտորեն պարբերաբար կպահանջի (հոդված 4, բաժին 4.02,, կետ ա),

5.5. հնարավորություն ընձեռել ԱԶԲ-ին՝ աուդիտորների հետ քննարկելու Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները և Ծրագրին առնչություն ունեցող ֆինանսական հարցերը (հոդված 4, բաժին 4.02, կետ գ),

5.6. ԱԶԲ-ին ներկայացնել կամ ապահովել, որ ԱԶԲ ներկայացվեն՝

1) Ծրագրի իրականացման վերաբերյալ, այդ թվում նաև՝ ՄԿՑ-ների իրականացման, Ծրագրի գործողությունների իրականացման և թույլատրելի ծախսերի վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները և

2) ԱԶԲ-ի կողմից ողջամիտ կերպով պահանջվելու դեպքում՝ վերոհիշյալ «ա» ենթակետում նշված հաշվետվությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ տեղեկատվություն (հոդված 4, բաժին 4.03),

5.7. հնարավորություն ընձեռել ԱԶԲ-ի ներկայացուցիչներին՝ ստուգելու Ծրագիրը և դրան առնչվող ցանկացած գրառում և փաստաթուղթ (հոդված 4, բաժին 4.04),

5.8. ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Ծրագրի իրականացման փաստաթղթում սահմանված մանրամասն միջոցառումների համաձայն (Հավելված 4, կետ 1),

5.9. ապահովել, որ Ծրագրի ողջ ընթացքում ապահովվի համապատասխանությունը Ծրագրի շրջանակներում ապահովված մասհանումների հետ կապված յուրաքանչյուր ցուցանիշի (Հավելված 4, կետ 3),

5.10. ապահովել, որ գնումների ոլորտում Ծրագրի բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին և արդյունավետ կերպով (Հավելված 4, կետ 9),

5.11. թարմացնել իր հանրային կայքէջը՝

1) Ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն տրամադրելու,

2) Ծրագրին առնչվող՝ աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները հասանելի դառնալուն պես դրանք հրապարակելու,

3) Ծրագրի իրականացման վերաբերյալ համապատասխան այլ տեղեկատվություն տարածելու համար (Հավելված 4, կետ 18):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1784

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1784 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1784 որոշմամբ որոշել է, որ 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1784 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ

կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Սույն հատուկ կարծիքի շրջանակում նախևառաջ քննարկման առարկա կդարձնեմ քննարկվող միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցը՝ բովանդակային տեսանկյունից, այնուհետև նաև՝ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումը պատշաճ ներկայացված չլինելու հարցի տեսանկյունից:

ԲԱԺԻՆ I

Սահմանադրությամբ, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախատեսված են Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերի պարտադիր ճանաչելուն ուղղված երկու ներպետական ընթացակարգ՝ միջազգային պայմանագրերի հաստատման կամ վավերացման եղանակով: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագրի իրավաբանական ուժ ստանալը, ըստ այդմ՝ իրավական հետևանքների առաջացումը,

կախվածության մեջ է դրվում վերը նշված երկու ընթացակարգերից[1]: Միաժամանակ թե՛ Սահմանադրությամբ[2], թե՛ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով[3] որոշակիացվել են միջազգային պայմանագրերի առանձին տեսակներ, որոնք իրավաբանական ուժ կարող են ստանալ բացառապես վավերացման ընթացակարգով. այդպիսիք են համարվում այն միջազգային պայմանագրերը՝

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին,

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ,

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը,

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ,

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր,

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում,

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր:

Միաժամանակ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժ ստանալու վերը նշված՝ վավերացման ընթացակարգի առնչությամբ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանին օժտել է այնպիսի լիազորությամբ, ինչպիսին է՝ մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը՝ դրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը ստուգելը[4]: Նշված լիազորության առկայությունը սահմանադրական նախնական վերահսկողության մոդելի դրսևորումն է[5]: Մասնավորապես՝ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նշվել է, որ նախքան միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը Կառավարությունը, Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, դիմում է Սահմանադրական դատարան՝

[1] «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս:

[2] Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մաս:

[3] «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մաս:

[4] Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

[5] Այս լիազորությունն առավել մանրամասն կարգավորված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 74-րդ հոդվածում:

միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով[1]:

Ամփոփելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ հարկ է նշել, որ միջազգային պայմանագիրն իր պարտադիրությունը դրսևորում է ուժի մեջ մտնելու պահից[2], որն էլ արտահայտվում է միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման եղանակով: Ընդ որում, Սահմանադրությամբ միջազգային պայմանագրերի վավերացումը ներառվել է Ազգային ժողովի լիազորությունների շարքում: Հատկանշական է, որ վավերացում պահանջող միջազգային պայմանագրերի առնչությամբ նախատեսվել է առանձնահատկություն, մասնավորապես՝ թե՛ Սահմանադրությամբ և թե՛ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով սահմանվել են կոնկրետ նախապայմաններ, որոնց առկայության պարագայում միայն միջազգային պայմանագրերը պետք է անցնեն վավերացման ընթացակարգով: Ավելին՝ նշված միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանվել է պարտադիր փուլ՝ սահմանադրական նախնական վերահսկողության կառուցակարգի տեսքով: Ընդ որում, Սահմանադրական դատարանի կողմից նման վերահսկողական գործառույթի իրականացումը կազմում է սահմանադրական արդարադատության բովանդակության բաղկացուցիչ մասը: Ըստ այդմ՝ վերոնշյալ նախապայմանները չպարունակող միջազգային պայմանագրերը պետք է անցնեն հաստատման ընթացակարգով, որն էլ հանդիսանում է Հանրապետության Նախագահի լիազորությունը:

Այսպիսով, վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ թե՛ սահմանադրի և թե՛ օրենսդրի կողմից նախատեսվել է սահմանադրական նախնական վերահսկողության պարտադիր ընթացակարգ բացառապես վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի դեպքում: Սահմանադիրը, ելնելով ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերի նշանակությունից, դրանք դիտարկել է որպես նախնական սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Հիմք ընդունելով միջազգային պայմանագրերի առնչությամբ նախնական սահմանադրական վերահսկողության կառուցակարգի նշանակությունն ու կարևորությունը՝ գտնում եմ, որ սահմանադրի կողմից ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու համար վավերացման ընթացակարգի նախատեսումն ինքնանպատակ չէ. այն ուղղված է բովանդակային առումով միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների սահմանադրականության գնա-

[1] «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս:
[2] «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս:

հատմանը և դրանով իսկ Սահմանադրության գերակայության ապահովմանը՝ նկատի ունենալով, որ միջազգային պայմանագրերը վավերացման ընթացակարգն անցնելուց հետո դառնում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Բացի այդ, այս ընթացակարգի նախատեսումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական նախնական վերահսկողության միջոցով պետք է գնահատման առարկա դարձնի նշված պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակահարմարությունը սահմանադրականության տեսանկյունից: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարանը պետք է ոչ միայն բացահայտի միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակը, այլ նաև գնահատի այդ պարտավորություններից բխող նպատակի համապատասխանությունը Սահմանադրությանը: Հետևաբար Սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանադրական նախնական վերահսկողության լիազորությունը լիարժեքորեն իրացված կարելի է համարել այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակը բացահայտելիս կանդրադառնա նաև այդ նպատակների սահմանադրականության հարցին: Հակառակ պարագայում Սահմանադրական դատարանի՝ միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանադրական նախնական վերահսկողության լիազորությունը կիմաստազրկվի՝ վերածվելով ֆիկտիվ բնույթ կրող լիազորության: Բացի այդ, առանց միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ֆինանսական կամ գույքային պարտավորությունների նպատակի սահմանադրականությունը գնահատելու՝ անհնար է պատկերացնել իրավիճակ, երբ նշված պայմանագրով ամրագրված պարտավորություններն ինքնին կհանգեցնեն Սահմանադրության որևէ կոնկրետ նորմի հետ անհամապատասխանելիության, այն դեպքում, երբ նման միջազգային պայմանագրերը որպես կանոն սահմանում են վարկի չափ, վարկի տրամադրման ժամկետ, վարկի օգտագործման համար հաշվարկվող տոկոսներ և վարկավորման նպատակ (այդ թվում նաև՝ վարկի օգտագործման ուղղությունները), ինչը ևս վկայում է այն մասին, որ սահմանադրի կողմից նշված միջազգային պայմանագրերի առնչությամբ նախնական սահմանադրական վերահսկողության կառուցակարգերը պետք չէ ենթարկել նեղ մեկնաբանության: Ուստի գտնում եմ, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վավերացման ենթակա միջազգային պայմանագրով ամրագրված պարտա-

վորությունների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պարտավոր է բովանդակային առումով գնահատման առարկա դարձնել համապատասխան միջազգային պայմանագրով ամրագրված բոլոր պարտավորությունները, մասնավորապես՝ թե որքանով են այդ պարտավորությունները բխում դրա սահմանադրական նպատակից և որքանով են այդպիսի պարտավորություններն ի զորու ապահովելու այդ նպատակի կենսագործումը: Այլ կերպ ասած, Սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրությամբ ամրագրված իր սահմանադրական առաքելության իրականացումը կհամարվի ապահովված միայն վերը նշված հանգամանքները գնահատելու պարագայում:

Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով քննության առարկա գործով միջազգային պայմանագրի առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշմանը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Այսպես, Սահմանադրական դատարանը 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1784 որոշմամբ 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող:

Իմ գնահատմամբ՝ վերոնշյալ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար նախևառաջ պետք է պարզվեր այն հանգամանքը, թե արդյո՞ք քննարկման առարկա միջազգային պայմանագրից բխող պարտավորությունների նպատակը սահմանադրականության տեսանկյունից խնդիր չի հարուցում, որպիսի հարցի առնչությամբ պատասխան ստանալու պարագայում միայն Սահմանադրական դատարանը կարող էր գալ պայմանագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ եզրահանգման: Մինչդեռ Սահմանադրական դատարանը, անհրաժեշտ չհամարելով բովանդակային առումով բացահայտելու սույն գործի քննության առիթ հանդիսացող միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների նպատակի սահմանադրականությունը, այդ միջազգային պայմանագրի վավերացման նպատակահարմարության հարցի գնահատումն, ըստ էության, դիտարկել է որպես Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություն՝ անտեսելով սահմանադրի կողմից միջազ-

գային պայմանագրի վավերացման առնչությամբ Սահմանադրական դատարանին վերապահված լիազորության էությունն ու նշանակությունը:

Հարկ եմ համարում արձանագրել նաև, որ թե՛ դիմումին կից ներկայացված փաստաթղթերով, թե՛ Սահմանադրական դատարան ներկայացված գրավոր բացատրությամբ և թե՛ Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի հարցմանն ի պատասխան ներկայացված գրությամբ Կառավարությանը չի հաջողվել հիմնավորել նշված միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների նպատակահարմարությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն հատուկ կարծիքի 1-ին բաժնում տեղ գտած պատճառաբանությունները՝ գտնում եմ, որ սույն գործի քննության առիթ հանդիսացող միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանը պետք է բովանդակային առումով քննարկման առարկա դարձներ 2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրով սահմանված նպատակների համապատասխանությունը Սահմանադրության 1-ին հոդվածին, 85-րդ հոդվածի 1-ին մասին, 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և 87-րդ հոդվածի 1-ին մասին: Ընդ որում, Սահմանադրական դատարանի հետևությունը պետք է հիմնված լիներ հիշյալ համաձայնագրով ստանձած բոլոր պարտավորությունների գնահատման վրա հետապնդվող նպատակին հասնելու հնարավորության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների նպատակահարմարության տեսանկյունից:

Ամփոփելով վերը նշվածը՝ գտնում եմ, որ միայն վերոնշյալ պարագայում Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված առաքելությունը կարող էր համարվել լիարժեքորեն կատարված, որպիսի պարագայում և գտնում եմ, որ խնդրահարույց է քննարկվող միջազգային պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

ԲԱԺԻՆ II

Բացի վերոնշյալից, հարկ եմ համարում անդրադառնալ նաև սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումի պատշաճ ներկայացված չլինելու հանգամանքին.

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն,

թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու

պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման

փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Սույն հատուկ կարծիքի 2-րդ բաժնի՝ վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո էլ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«19» հունիսի 2025թ.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1784 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննության առնելով «2025 թվականի փետրվարի 28-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 17-ին ընդունել է ՍԴՈ-1784 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ Որոշման վերաբերյալ հատուկ (համընկնող) կարծիք՝ ներքոհիշյալ հիմնավորմամբ:

Սահմանադրահիրավական վեճն ունի այն բովանդակությունը, թե արդյոք Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին:

Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության մասով հարկ եմ համարում ընդգծել, որ դրանց սահմանադրաչափության հիմնական չափանիշ եմ դիտարկում Սահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսված՝ արտաքին քաղաքականության փոխշահավետության սկզբունքը:

Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Վերոգրյալի լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրվել են Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների գործունեության հետևյալ հիմնարար սկզբունքները՝ արտաքին քաղաքականության բարիդրացիականություն, այլ պետությունների հետ հարաբերությունների փոխշահավետություն և միջազգային իրավունքի նորմերով կանոնակարգվածություն:

Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 13-րդ և 1-ին հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը՝ որպես սահմանադրաիրավական ինստիտուտ, իրավասու պետական մարմինների կողմից իրացվում է Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ պետության բնույթը կանխորոշող սկզբունքների հիման վրա և միջպետական հարաբերություններում այդ սկզբունքների հետևողական կենսագործման նպատակով:

Արտաքին քաղաքականության ոլորտում իրավունքի գերակայությունն ընդգծելու համար Սահմանադիրը կանխորոշել է արտաքին քաղաքականության ուղենշվածությունը միջազգային իրավունքի նորմերով, ինչը մի կողմից՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև հարաբերությունների կառուցում փոխադարձ իրավական պարտավորությունների հիման վրա, իսկ մյուս կողմից՝ միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին: Միևնույն ժամանակ, արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը սահմանադրորեն Կառավարության լիազորություններն են, ինչը ենթադրում է պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, զարգացման, համագործակցության ոլորտների ընտրության, արտաքին քաղաքականության գերակայությունների սահմանման, միջազգային կազմակերպություններին անդամակցության քաղաքական նպատակահարմարության և բովանդակային ուղղությունների որոշման՝ Կառավարության բացառիկ իրավասություն: Վերոնշյալի

լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության քննությունը պետք է սահմանափակվի հետևյալ հարցադրմանը համահավաք պատասխան տալով. արդյո՞ք տվյալ միջազգային պայմանագրով սահմանված պարտավորություններն առերևույթ համապատասխանում են բարիդրացիականության և փոխշահավետության սահմանադրական սկզբունքներին:

Անդրադառնալով Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության չափանիշների կիրառման առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվելիք միջազգային իրավական պարտավորությունների սահմանադրաչափության նշյալ չափանիշներից ֆինանսական բնույթի միջազգային պայմանագրերի դեպքում, ինչպիսին է Համաձայնագիրը, առարկայական նշանակություն ունի փոխշահավետության սահմանադրական սկզբունքը:

Նախ՝ անհրաժեշտ է վերլուծել վարկային միջոցների ներգրավման նպատակը, որը բացահայտվում է Համաձայնագրին կից Հավելված 1-ի 2-րդ կետով: Վերջինիս վերլուծությամբ արձանագրվում է, որ վարկային միջոցները ներգրավվում են հետևյալ նպատակներով.

1. կլիմայական, գենդերային հարցերի առումով պատասխանատու ներառական առողջապահական հաստատություններ՝ առողջապահական որակյալ ծառայությունների մատուցում (առողջապահական հաստատությունների նախագծման, կառուցման, վերանորոգման և սարքավորումների հագեցման միջոցով, որոնք համապատասխանում են կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ներառական նախագծման և գենդերազգայուն հարցերին արձագանքման չափանիշներին, որակյալ բնութագրերով առողջապահական հաստատությունների լիցենզավորում և ընտրված հեռավոր վայրերում հեռաբժշկության պիլոտավորում),

2. բժշկական օգնության և սպասարկման որակի համար կարողությունների և կազմակերպությունների ամրապնդում (ինստիտուցիոնալ կառուցվածք, առաջնորդություն, որակյալ բժշկական օգնության և սպասարկման միջոցառումների համար ֆինանսավորում և կարողությունների ապահովում, բժշկական օգնության որակի, էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում և որակավորված բուժաշխատողների հասանելիության բարձրացում),

3. բուժսպասարկման որակի չափման և հաշվետվողականության ինստիտուցիոնալացում՝ բարելավելով բուժհաստատությունների կարողությունները,

ամրապնդելով և ինստիտուցիոնալացնելով բուժսպասարկման որակի մոնիթորինգը և հաշվետվողականությունը և հրապարակելով բուժսպասարկման որակի ցուցանիշների և տվյալների տարեկան վերլուծությունները:

Գտնում եմ, որ ֆինանսական (վարկային) միջազգային պայմանագրի փոխշահավետության հիմնական ցուցիչներից մեկը միջազգային պայմանագրի նպատակն է, այսինքն՝ այն վերջնակետը, որին ուղղված են պետության կողմից ներգրավվող ֆինանսական միջոցները: Հետևապես՝ միջազգային պայմանագրի նպատակը պետք է ձևակերպվի այնպիսի որոշակիությամբ, որը թույլ կտա գնահատել ներգրավվող (վերադարձման ենթակա) ֆինանսական միջոցների՝ պետության համար առերևույթ շահավետությունն ու ծախսման արդյունավետությունը: Այլ կերպ՝ եթե ֆինանսական միջազգային պայմանագրի նպատակը սահմանված է անորոշ, ընդհանրական և (կամ) տարընկալումներ կամ տարամեկնաբանություններ հարուցող ձևով, խնդիր է առաջանում պետական վարկի ներգրավման շահավետության և նպատակահարմության առումով:

Սույն պարագայում հարաբերական որոշակիություն առկա է Համաձայնագրի՝ վերոթվարկյալ երկրորդ և երրորդ նպատակների մասերով: Մինչդեռ առաջին նպատակի մասով առկա է որոշակի անորոշություն թե՛ եզրույթների իրավաբանական ձևակերպման և թե՛ ամրագրված նպատակների բովանդակության առումներով:

Նախ՝ ըստ էության բացահայտված չեն առողջապահական հաստատությունների՝ կլիմայական և գենդերային պատասխանատվության, ինչպես նաև ներառականության հատկանիշները, ինչի արդյունքում հստակ չեն ո՛չ ի սկզբանե ընտրված ծախսման ուղղությունների և ո՛չ էլ ֆինանսավորման հետագա արդյունավետության գնահատման չափանիշները:

Արդյունքում՝ թեպետ առկա է վստահության կանխավարկած առ պետության սահմանադրական պոզիտիվ պատասխանատվություն և որոշակի վստահություն վարկառու միջազգային բանկի բարի համբավի հանդեպ, սակայն բոլոր դեպքերում Համաձայնագրով վարկային ֆինանսավորման ընտրված նպատակի իրավաբանական ձևակերպման և բովանդակային համարժեքության չպահպանման պայմաններում (գերազանցապես վերոթվարկյալ առաջին նպատակի մասով) ստվերվում է Սահմանադրության 13-րդ հոդվածով հռչակված՝ արտաքին քաղաքականության փոխշահավետության սկզբունքի կիրարկումը:

Մտահոգիչ եմ համարում Համաձայնագրի 1-ին հոդվածի «գ կետով» վարկային ծրագրի կատարման համար որպես պատասխանատու մարմին Ծրագրի իրականացման գրասենյակի ճանաչումը, որը, ըստ էության, ձևավորվում և գործում է Համաձայնագրով սահմանված ֆինանսական հոսքերը տնօրինելու և ուղղորդելու համար՝ ըստ սահմանման, ապահովելով վարկային մասհանումների նպատակաուղղված ծախսն ու անհրաժեշտ արդյունքների գրանցման ուղղությամբ համակարգումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ինչպես վարկատուի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ ի դեմս, մասնավորապես, Առողջապահության նախարարության: Մինչդեռ, վերջինս օրենսդրորեն ունի անհրաժեշտ իրավասություն՝ իր կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներով ապահովելու Համաձայնագրով նախատեսված ծրագրային միջոցառումների իրականացումը: Փոխարենը՝ Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծմամբ վարկային միջոցների մի մասն ուղղվելու է այդ գրասենյակի աշխատակազմի պահման վարչական ծախսերին, գրասենյակի պահպանմանն ուղղված վարչական և կապիտալ ծախքերին այն դեպքում, երբ Ծրագրի իրականացման գրասենյակի գործառույթները կրկնորդելու են Առողջապահության նախարարության օրենսդրական գործառույթները, ինչն իմաստազուրկ և չհիմնավորված ծախսատար է դարձնում դրա ստեղծումը:

Անշուշտ, ասվածը չի նշանակում բացասական կանխավարկածի կիրառում Ծրագրի իրականացման գրասենյակի գործունեության նկատմամբ: Միևնույն ժամանակ, Համաձայնագրի նպատակների արդյունավետ գործիքայնացումը ևս փոխշահավետության սահմանադրական սկզբունքի շարունակական և հետևողական իրացման գրավականներից մեկն է: Այլ կերպ՝ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության համար շահավետությունը կարող է որոշվել դրա նպատակների և վերջիններիս իրացման երաշխիքների համադրման արդյունքում, երբ նշյալ երկու բաղադրիչներն ունեն հավասար նշանակություն:

Խնդրահարույց է նաև Համաձայնագրի «լեզուն», մասնավորապես՝ օգտագործվում են ոչ միանշանակ իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող եզրույթներ, ծրագրային բաղադրիչներն ու ֆինանսական փոփոխականները շարադրված են աղյուսակների ձևով՝ մատրիցային բովանդակությամբ, ինչը բնորոշ է առավելապես հաշվապահական հաշվառման և աուդիտորական փաստաթղթերին, սակայն չի կարող կազմել միջազգային պայմանագրի բովանդակային առանցքը:

Նշյալի կապակցությամբ հարկ եմ համարում ընդգծել, որ Համաձայնագրի լեզվական առանձնահատկությունները և, մասնավորապես, տեքստի դյուրըմբռնելի լինելն էական նշանակություն ունեն Համաձայնագրում տեղ գտած պարտավորությունների սահմանադրաիրավական համարժեք մեկնաբանման համար: Վերջինս պատշաճ իրացնելու համար Սահմանադրական դատարանի յուրաքանչյուր դատավոր, նախ՝ պետք է իր համար բացահայտի Համաձայնագրի նորմատիվ բովանդակությունը և դրանից հետո միայն այդ իմաստը պարզաբանի հանրությանը՝ իրավական մեկնաբանման և իմացաբանության համարժեք մեթոդաբանության կիրառմամբ ընդունվող դատական ակտի ձևով:

Սրանով է պայմանավորված նաև իրավական որոշակիության սկզբունքի համակողմանի կիրառման անհրաժեշտությունը, որի թերի կենսագործումը կարող է հանգեցնել տվյալ դեպքում միջազգային պայմանագրի տեքստի միանշանակ ընկալման խնդիրների, որոնց հետ հետևանքային ազդեցությամբ կապված է միջազգային պայմանագրի շահավետությունը պայմանադիր պետության համար:

Անշուշտ, վերոշարադրյալը որևէ կերպ չպետք է ընկալվի որպես Համաձայնագրի հակասահմանադրականության վերաբերյալ ձևավորված դիրքորոշում: Համաձայնագիրը բավարարում է սահմանադրականության նվազագույն պահանջները, սակայն վերջինիս՝ սահմանադրաիրավական իմաստով խնդրահարույց կողմերի վրա իրավաստեղծի և իրավակիրառի ուշադրությունը բևեռելը Սահմանադրական դատարանի և վերջինիս դատավորների սահմանադրական առաքելության ծավալում ընդգրկված հանձնառություն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՍԱՖԱՐՅԱՆ**

24 հունիսի 2025 թվականի

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«ԱՂԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 30-ի N 504-Ա որոշմամբ հավանություն է տվել «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կանոնադրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիա» կազմակերպությունը (այսուհետ՝ ԱԴԵԿ) հիմնադրվել է 2019 թվականին՝ կլիմայի փոփոխության և աղետների կանխարգելման դիմակայության ուժեղացմանն ուղղված նոր և գոյություն ունեցող ենթակառուցվածքների զարգացման ու կատարելագործման նպատակով:

«Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) ստեղծվում է աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիան: ԱԴԵԿ-ն ազգային կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալությունների և ծրագրերի, բազմակողմ զարգացման բանկերի և ֆինանսական մեխանիզմների, մասնավոր ոլորտի, գիտական և կրթական հաստատությունների համաշխարհային գործընկերություն է, որի նպատակն է բարձրացնել ենթակառուցվածքային համակարգերի դիմակայունությունը կլիմայի և աղետների ռիսկերի նկատմամբ՝ դրանով իսկ ապահովելով կայուն զարգացում:

2. Կանոնադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ քարտուղարության կառավարման մեխանիզմները ներառում են երեք հիմնական մարմին, մասնավորապես՝ ղեկավարների խորհուրդ, գործադիր կոմիտե և քարտուղարություն:

Կանոնադրության 9-րդ հոդվածով սահմանվում են ԱԴԵԿ-ի ծրագրերը, որոնք են՝ տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում, հետազոտությունների և գիտելիքների կառավարում, ինչպես նաև քարոզչական գործունեություն և համագործակցություններ:

3. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անդամ պետություն, պարտավորվում է իրավական փաստաթղթերի հիման վրա, ուղղակիորեն կամ Հայաստանի Հանրապետության զարգացման գործակալությունների/մարմինների միջոցով կատարել կամավոր ֆինանսական կամ բնաիրային ներդրումներ ԱԴԵԿ-ում, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ազգային կառույցներից ԱԴԵԿ-ի քարտուղարությանը տրամադրել փորձագետներ, անցկացնել թեմատիկ աշխատաժողովներ և հանդիպումներ և փոխհատուցել ճանապարհային ծախսեր (հոդված 8, մաս 8.1):

4. Կանոնադրության 10-րդ հոդվածի 10.2-րդ մասով սահմանված է. «Ապագա անդամներն իրենց կողմից կանոնադրությունը հաստատելու մասին կարող են հայտնել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ղեկավարների խորհրդի համանախագահներին»:

Երկրները և մյուս շահագրգիռ կողմերը, որոնք հաստատել են Կանոնադրությունը, ԱԴԵԿ-ի հիմնադիր անդամներ են (հոդված 2, մաս 2.1):

Կանոնադրության 5-րդ հոդվածի 5.9-րդ մասի «iii» կետի համաձայն՝ Ղեկավարների խորհուրդը հաստատում է ԱԴԵԿ-ում նոր անդամների ընդգրկումը, ինչպես նաև կոնսենսուսի հիման վրա փոփոխություններ է կատարում Կանոնադրության մեջ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1785

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ««ԱՂԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1785 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով ««Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1785 որոշմամբ որոշել է, որ «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1785 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝

հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1785 որոշմամբ «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմա-

նադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

<u>Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:</u>

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ

համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված

փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր

ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«19» հունիսի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,
Դավիթ Խաչատուրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի մայիսի 8-ի N 539-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում՝ առևտրատնտեսական և մշակութային երկկողմ փոխգործակցության ամրապնդման նպատակով:

Կոնվենցիան ունի արձանագրություն, որի դրույթները կոնվենցիայի անբաժանելի մասն են կազմում:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Կոնվենցիայով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

2.1. ՀՀ ձեռնարկության շահույթը հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունն իր

ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է Ճապոնիայում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով (հոդված 7, կետ 1),

2.2. Ճապոնիայի ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը չենթարկել հարկման Հայաստանի Հանրապետությունում. վերոհիշյալ դրույթները կիրառել նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ տրանսպորտային միջոցների շահագործմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ (հոդված 8, կետեր 1 և 3),

2.3. այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ ձեռնարկության շահույթում ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ Ճապոնիայի ձեռնարկությունը ենթարկվել է հարկման Ճապոնիայի տարածքում, և այդ ձևով ներառված շահույթի բոլոր տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ ՀՀ ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, այդ դեպքում կատարել շահույթից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, իսկ այդ ճշգրտումը որոշելիս հաշվի առնել Կոնվենցիայի մյուս դրույթները՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի իրավասու մարմինների միմյանց հետ անհրաժեշտության դեպքում խորհրդակցությունը (հոդված 9, կետ 2),

2.4. ապահովել, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում գանձված հարկերը չգերազանցեն տոկոսի համախառն գումարի 5 տոկոսը. անկախ վերոհիշյալից՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքերում հարկումից ազատել տոկոսները, որոնք առաջանում են Հայաստանի Հանրապետությունում և վճարվում Ճապոնիայում. վերոհիշյալ դրույթները չկիրառել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կիրառելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները (հոդված 11, կետեր 1, 2, 3 և 5),

2.5. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում վճարումների ավելցուկային մասը հարկել Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով Կոնվենցիայի մյուս դրույթները (հոդված 11, կետ 7),

2.6. ապահովել, որ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում գանձվող հարկերը չգերազանցեն ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը (հոդված 12, կետեր 1 և 2),

2.7. Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերում չկիրառել Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դրույթները՝ կիրառելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները (հոդված 12, կետ 4),

2.8. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին, 2, 3 և 4-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը հարկել միայն, եթե գույքն օտարողը Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է (հոդված 13, կետ 5),

2.9. հաշվի առնելով Կոնվենցիայի 15, 17 և 18-րդ հոդվածների դրույթները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները, հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում, եթե այդ վարձու աշխատանքը չի կատարվում Ճապոնիայում (հոդված 14, կետ 1),

2.10. չհակասելով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին, Հայաստանի Հանրապետությունում հարկել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից Ճապոնիայում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը, եթե ստացողը դիտարկվող հարկային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է Ճապոնիայում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և վարձատրությունը վճարվում է Ճապոնիայի ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և վարձատրության ծախսերը չի կրում գործատուի՝ Ճապոնիայում գտնվող մշտական հաստատությունը (հոդված 14, կետ 2),

2.11. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չհարկել Ճապոնիայի ռեզիդենտի կողմից ստացված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունը (հոդված 17),

2.12. Հայաստանի Հանրապետությունում չհարկել Ճապոնիայի, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից Ճապոնիային կամ վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը և համանման այլ վարձատրությունները (հոդված 18, կետ 1, ենթակետ «ա»),

2.13. չհարկել Ճապոնիայի ռեզիդենտ հանդիսացող կամ անմիջապես մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը Ճապոնիայի ռեզիդենտ հանդիսացող ուսանողի կամ փորձնակի՝ իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումները, որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջացել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող աղբյուրներից (հոդված 19),

2.14. եթե Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը ստանում է եկամուտ, որը, Կոնվենցիայի դրույթների համաձայն, կարող է հարկվել Ճապոնիայում, ապա թույլատրել կատարել այդ ռեզիդենտի եկամուտներից գանձվող հարկից նվազեցում Ճապոնիայում վճարված ճապոնական հարկին հավասար գումար, սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված հայկական հարկի այն մասը, որը վերագրվում է այն եկամտին, որը կարող է հարկվել Ճապոնիայում (հոդված 22, կետ 1, ենթակետ «ա»),

2.15. Ճապոնիայի քաղաքացիներին չենթարկել որևէ այլ կամ առավել ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները. վերոհիշյալ դրույթները, չհակասելով Կոնվենցիայի 1-ին հոդվածի դրույթներին, կիրառվում են նաև այն անձանց նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետության կամ Ճապոնիայի կամ երկուսի ռեզիդենտ չեն (հոդված 23, կետ 1),

2.16. Ճապոնիայի ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիություն չունեցող անձանց չենթարկել որևէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միևնույն հանգամանքներում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (հոդված 23, կետ 2),

2.17. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Ճապոնիայի իրավասու մարմինների հետ կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի կամ նրանց վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող

ցանկացած տեսակի և բնույթի հարկերի առնչությամբ Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների կիրառման կամ կատարման համար այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Կոնվենցիային (հոդված 25, կետ 1),

2.18. երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն կհամարվի գաղտնի այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստացված տեղեկությունը, և կբացահայտվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ՝ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ հավաքագրմանը, բռնագանձմանը կամ հետապնդմանը, բողոքների քննմանը կամ վերոնշյալի վերահսկմանը, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը կօգտագործեն միայն այդ նպատակներով (հոդված 25, կետ 2):

3. Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ. շահութահարկ և եկամտային հարկ Հայաստանում, եկամտային հարկ, կորպորատիվ հարկ, հատուկ եկամտային հարկ վերակառուցման համար, տեղական կորպորատիվ հարկ և տեղի բնակիչներից գանձվող հարկեր՝ Ճապոնիայում:

Կոնվենցիան կիրառվում է նաև նմանատիպ կամ էապես նման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին: Կոնվենցիայի ոչ մի դրույթ ազդեցություն չի ունենում դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆինանսական արտոնությունների վրա:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու մարմիններն են՝ Հայաստանում՝ Ֆինանսների նախարարությունը և Պետական եկամուտների կոմիտեն կամ դրանց լիազորված ներկայացուցիչները, Ճապոնիայում՝ Ֆինանսների նախարարը կամ նրա լիազորված ներկայացուցիչը:

Կոնվենցիան հաստատվում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետության իրավական ընթացակարգերին համապատասխան և ուժի մեջ է մտնում այդ

հաստատման մասին նշում պարունակող դիվանագիտական հայտագրերի փոխանակման օրվանից հետո երեսուներորդ օրը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1786

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1786 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1786 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1786 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը

կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի հունիսի 17-ի ՍԴՈ-1786 որոշմամբ 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորու-

թյունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն,

թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային

ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում

իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«19» հունիսի 2025թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան — 24 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի, Հրայր Թովմասյանի, Դավիթ Խաչատուրյանի, Երվանդ Խունդկարյանի, Հովակիմ Հովակիմյանի, Էդգար Շաթիրյանի, Սեդա Սաֆարյանի, Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 30-ի N 499-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում:

2. Համաձայնագրի նպատակներն են՝ միգրացիայի ոլորտում Կողմերի երկկողմ համագործակցության համար իրավական հիմքի ստեղծումը և միգրացիայի ոլորտում գործընկերային համագործակցության ճանապարհով հարաբերությունների ամրապնդումը՝ երկու պետությունների համագործակցության հետագա զարգացման համար:

3. Համաձայնագիրը կազմված է նախաբանից և տասնյոթ հոդվածից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. իրականացնել համագործակցություն հետևյալ ուղղություններով՝ վիճակագրական, իրավական և գիտամեթոդական տեղեկատվության փոխանակում, Կողմ պետությունների տարածքում գտնվող Կողմ պետությունների քաղաքացիների մասին տեղեկությունների փոխանակում, փորձի փոխանակում և գործնական օգնության ցուցաբերում համագործակցության գործընթացում ի հայտ եկող հարցերում, Կողմ պետությունների քաղաքացիների իրավունքների, այդ թվում՝ իրենց ընտանիքների անդամների բնակության իրավունքի պաշտպանություն՝ բնակության համար տրված թույլտվության ժամկետների ընթացքում, Կողմ պետությունների տարածքում գտնվելու (կացության) հիմքեր ունեցող անձանց իրավական կարգավիճակի հարցերի քննարկում (հոդված 3, մաս 1),

4.2. անհրաժեշտության և փոխադարձ պայմանավորվածության դեպքում իրականացնել տեղեկատվության և տեղեկությունների փոխանակում միգրացիոն օրենսդրության խախտումների և հայտնաբերված անօրինական միգրացիայի ուղիների, Կողմ պետությունների տարածքներում գործող անօրինական միգրացիայի կազմակերպմանը և իրականացմանը մասնակից իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց, անօրինական միգրացիայի նպատակով մուտքի արտոնագրերի և այլ փաստաթղթերի ստացման և դրանց օգտագործման միջոցների, Կողմ պետությունների միգրացիոն օրենսդրության, այդ թվում՝ միգրացիոն գործընթացների կարգավորման, ապաստանի և քաղաքացիության տրամադրման կարգի, անօրինական միգրացիայի դեմ պայքարի կազմակերպման, ինչպես նաև նշված օրենսդրության ոլորտներում փոփոխությունների, անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի և միջոցների և արտաքին միգրացիայի կարգավորման մեթոդների մասին (հոդված 4),

4.3. անօրինական միգրացիային հակազդման և իր քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով փոխանակել Կողմ պետությունների քաղաքացիների մասին հետևյալ կատեգորիաների տեղեկություններ՝ Կողմ պետությունների քաղաքացիների հաշվառման (գրանցման), գտնվելու (կացության) վայրի մասին, հատուկ, մշտական և ժամանակավոր կացության կարգավիճակ, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքում աշխատանքի իրավունք ունեցող՝ Կողմ պետությունների քաղաքացիների մասին, մի Կողմ պետության քաղաքացիների՝ մյուս Կողմ պետության քաղաքացիության ստացման կամ վերականգնման, ինչպես նաև Կողմերից մեկի

քաղաքացիության պատկանելության մասին, Կողմ պետությունների քաղաքացիների ստացած՝ անձը հաստատող փաստաթղթերի մասին (հոդված 5, մաս 1),

4.4. փոխանակել Կողմ պետությունների տարածք մուտք գործելու (կամ իրենց տարածքից դուրս գալու) սահմանափակման առկայության և հիմքերի, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքներից վտարված անձանց մասին տեղեկություններ (հոդված 5, մաս 2),

4.5. սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցել հետևյալ ձևերով՝ Կողմ պետությունների՝ միգրացիոն հարցերով զբաղվող իրավասու մարմինների աշխատակիցների պատրաստում և որակավորման բարձրացում, ներառյալ տվյալ ոլորտում սեմինարների և որակավորման կազմակերպում, համագործակցության ընթացքում ծագող հարցերով աշխատանքային խմբերի ստեղծում և փորձագետների փոխանակում, գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների անցկացում և միասնական գործողություններ պահանջող համագործակցության այլ ձևերի կիրառում, Կողմ պետությունների տարածքային մարմինների, ենթագերատեսչական կազմակերպությունների և իրավասու հիմնարկների աշխատանքներին ծանոթացում և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ միասնական ծրագրերի իրականացում (հոդված 7),

4.6. սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնել շահագրգիռ Կողմի՝ աջակցություն ցուցաբերելու մասին գրավոր հարցումների հիման վրա՝ այդ թվում տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ (այսուհետ՝ նաև հարցում) (հոդված 8, մաս 1, հոդված 9, մաս 1, պարբերություն 1),

4.7. հարցումների ստորագրման իրավասություն ունեցող անձանց ցուցակների կամ ձևաթղթերի փոփոխության դեպքում մյուս Կողմին անհապաղ տեղեկացնել այդ մասին (հոդված 9, մաս 4),

4.8. անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման արագ և լիարժեք իրականացումն ապահովելու համար (հոդված 10, մաս 1, պարբերություն 1),

4.9. անհապաղ ծանուցել հարցում կատարող Կողմին հարցման կատարմանը խոչընդոտող կամ դրա կատարումն էապես հետաձգող պայմանների մասին (հոդված 10, մաս 1, պարբերություն 3),

4.10. հնարավոր սեղմ ժամկետներում հարցում կատարող Կողմին տեղեկացնել հարցման կատարման արդյունքների մասին (հոդված 10, մաս 3),

4.11. ապահովել, որ հարցման ժամկետը չգերազանցի 30 (երեսուն) օրացուցային օրը՝ դրա ստացման ամսաթվից սկսած (հոդված 10, մաս 3),

4.12. հարցում կատարող Կողմին գրավոր ծանուցել հարցման կատարման ամբողջական կամ մասնակի մերժման մասին՝ մերժման պատճառների նշումով (հոդված 10, մաս 4, պարբերություն 2),

4.13. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հարցման, դրա բովանդակության և կից փաստաթղթերի ստացման, ինչպես նաև օգնություն ցուցաբերելու փաստի գաղտնիության ապահովման համար (հոդված 11, մաս 1, պարբերություն 1),

4.14. հարցման կատարման գաղտնիության պահպանման անհնարինության դեպքում այդ մասին տեղեկացնել հարցում կատարող Կողմին (հոդված 11, մաս 1, պարբերություն 2),

4.15. առանց դրանք տրամադրած Կողմի համաձայնության՝ սույն Համաձայնագրի հիման վրա ստացված հարցման իրականացման արդյունքները չկիրառել այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք հարցվել և տրամադրվել են (հոդված 11, մաս 2),

4.16. առանց այն տրամադրած Կողմի լրացուցիչ գրավոր համաձայնության՝ ստացված տեղեկությունը չփոխանցել երրորդ Կողմին (հոդված 11, մաս 3),

4.17. առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով՝ իրականացնել անհրաժեշտ կազմակերպչական-տեխնիկական միջոցներ՝ ուղղված սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության պաշտպանությանը՝ անսպասելի կամ անօրինական ոչնչացումից, փոփոխությունից կամ տարածումից, ինչպես նաև ցանկացած այլ չարտոնված մուտքից կամ կիրառումից (հոդված 11, մաս 4),

4.18. Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը պահպանել ոչ ավել, քան դա պահանջում են այն նպատակները, որոնց համար այն փոխանցվել է, և այն ոչնչացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 11, մաս 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1787

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1787 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի հունիսի 24-ի ՍԴՈ-1787 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի հունիսի 24-ի ՍԴՈ-1787 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը

կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2025 թվականի հունիսի 24-ի ՍԴՈ-1787 որոշմամբ 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավո-

րությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում

էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706, ՍԴՈ-1734, ՍԴՈ-1746 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Ընդ որում, էլեկտրոնային ստորագրությունը կարող է էլեկտրոնային փաստաթղթին տալ իրավական նշանակություն այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրությունը տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով արտահայտվում է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը,

ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«25» հունիսի 2025թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 5-Ը ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՕՐՆ Է

2025 թվականի հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում նշվել է Սահմանադրության ընդունման 30-րդ տարեդարձը: 1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնմամբ անխուսափելի դարձավ նոր՝ ազգային Սահմանադրության ընդունումը, որն իրականացվեց 1995 թ. հուլիսի 5-ի համաժողովրդական հանրաքվեով: Սահմանադրության 30-ամյակի միջոցառմանը ելույթներով

հանդես են եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՍԴ նախագահ Արման Դիլանյանը: *«Հայոց պետականության վերականգնման 34 տարիներից 30-ը մենք միասին անցել ենք՝ Սահմանադրության պատվարով ամուր պաշտպանված: Ուզում եմ նշել, որ ո՛չ անկախության վերականգնմամբ և ո՛չ էլ Սահմանադրության ընդունմամբ մեր ժողովրդի ու պետության առջև ծառացած մարտահրավերներն ինքնաբերաբար չեն վերացել: Ավելին, անկախության վերականգնումն ու հայոց պետականության ամրապնդումը որոշ առումներով նոր մարտահրավերներ են առաջ բերել: Բայց անգամ այս պարագայում, ցանկացած տեսակի և ձևի մարտահրավերների հաղթահարումն էլ ուղղակիորեն կապված է Սահմանադրության, դրանում ամրագրված արժեքների գործնականում պահպանման և ամուր ժողովրդավարական պետություն կառուցելու հետ»*, - իր պաշտոնական ելույթում նշել է Սահմանադրական դատարանի նախագահը Սահմանադրության 30-ամյակի հանդիսավոր միջոցառման ժամանակ:

Արման Դիլանյանն ընդգծել է, որ *«Սահմանադրությունը բացառիկ հնարավորություն է տալիս՝ ձևավորելու այնպիսի հանրային իրավագիտակցություն, որի համար մերժելի կլինեն անարդարությունն ու խտրականությունը, և որն անտարբեր չի լինի իր պետության բարեկեցության ու սահմանադրական արժեքների նկատմամբ, որտեղ իրավունքի գերակայությունը կընկալվի որպես կայուն ու անփոփոխ, որևէ միջամտության համար անհասանելի մի իրողություն, որը չի ճանաչում այլ ազատություն կամ հավասարություն, քան այն ազատությունն ու հավասարությունը, որը գալիս է իրավական օրենքից»*: Սահմանադրական դատարանի նախագահի խոսքով՝ թեև Սահմանադրությունը չունի մեզ հուզող բոլոր հարցերի ուղիղ պատասխանները, բոլոր խնդիրների լուծումները, սակայն այն պարունակում է դրանց լուծման բանաձևերը և բոլորիս համար հավասար հնարավորություն է ստեղծում՝ մեր կարողություններին համապատասխան կերտելու ազատ քաղաքացու մեր սեփական պատկերը: *«Վերստին շնորհավորելով բոլորիս՝ ուզում եմ ևս մեկ անգամ ընդգծել, որ այս օրը լավ հնարավորություն է, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուրս վերահմաստավորենք Սահմանադրության, ինքնիշխան պետականության և քաղաքացիական համերաշխության բարձր արժեքը: Սահմանադրական արժեքներն իրական կյանք բերելն է մեր Հայրենիքի հզորացման, բարգավաճման, սերունդների ազատության և ընդհանուր բարեկեցության բանալիներից մեկը: Ասկված պահապան մեր ժողովրդին ու պետությանը»*,- իր շնորհավորական խոսքը եզրափակել է ՍԴ նախագահ Արման Դիլանյանը:

Միջոցառմանը ներկա են եղել օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ներկայացուցիչներ, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, կրթության և մշակույթի գործիչներ:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԸՆՏԻՐ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏԱԿ ՋԵՅՆԱԼՅԱՆԻՆ

2025 թվականի հուլիսի 8-ին տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը ստանձնած դատավոր Արտակ Ջեյնալյանի ներկայացումը Բարձր դատարանի դատավորներին և աշխատակազմին:

Արարողակարգային միջոցառման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացնելով դատավորին, մաղթեց արդյունավետ պաշտոնավարում, ինչպես նաև հույս հայտնեց, որ դատավոր Արտակ Ջեյնալյանն իր ամենօրյա գործունեությամբ կնպաստի մեր երկրում սահմանադրական արդարադատության, իրավունքի գերակայության և սահմանադրականության ամրապնդմանը:

Արտակ Ջեյնալյանն իր խոսքում նշեց, որ իր համար պատիվ է ՍԴ դատավորի բարձր պաշտոնում և մյուս դատավորների գործընկերությամբ մասնագիտական գործունեությունը շարունակել Սահմանադրական դատարանում՝ իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնելով սահմանադրական արդարադատության խնդիրների լուծմանը:

Միջոցառման ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Արտակ Ջեյնալյանին հանձնվեցին Սահմանադրական դատարանի դատավորի հատուկ համազգեստը՝ պատմուճանը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի թղթապանակը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՀ-ՈՒՄ ԻՐ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՀԵՏ

2025 թվականի հուլիսի 31-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Իրաքի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Դոկտոր Ալի Աբդուլքարեմ Ութավիին, որն ավարտում է դիվանագիտական առաքելությունը ՀՀ-ում:

Ողջունելով հյուրին՝ Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել սահմանադրական արդարադատության ոլորտում Իրաքի Դաշնային գերագույն դատարանի հետ հարաբերություններն ակտիվացնելու, փոխայցերի և փորձի փոխանակման գործում Դոկտոր Ալի Աբդուլքարեմ Ութավիի ներդրած ջանքերն ու այդ ուղղությամբ իրականացրած աշխատանքները:

Դոկտոր Ալի Աբդուլքարեմ Ութավին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար, նշելով, որ Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական ծառայության ընթացքում ջանք չի խնայել՝ նպաստելու երկու բարեկամ երկրների միջև հարաբերությունների ամրապնդմանը, այդ թվում, սահմանադրական արդարադատության ոլորտում համագործակցության ակտիվացմանն օժանդակելու միջոցով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

2025 թվականի օգոստոսի 6-ին Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Հայ-ռուսական համալսարանի և Բեռլինի Հումբոլդտի համալսարանի համագործակցության շրջանակներում իրականացվող <<Network East-West>> փոխանակման ծրագրի մասնակիցները, որոնց ընդունել է ՍԴ անհատական դիմումների վերլուծության բաժնի վարիչ Մարինե Ավագյանը:

Այս տարվա ծրագրի թեման է՝ Իրավունքի գերակայությունը թվային դարաշրջանում (Rule of Law in Digital Era):

ՍԴ անհատական դիմումների վերլուծության բաժնի վարիչ Մարինե Ավագյանը միջազգային ծրագրի մասնակիցներին ծանոթացրել է Բարձր դատարանի գործունեությանը, պատասխանել նրանց հետաքրքրող մի շարք հարցերի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԱԺ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ

2025 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կազմակերպած ամառային դպրոցի շրջանակներում Սահմանադրական դատարան են այցելել Հանրապետության տարբեր դպրոցների սովորողներ: Բարձր դատարանում դպրոցականների հետ հանդիպել է ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանը, ով Ամառային դպրոցի սաներին ներկայացրել է Սահմանադրական դատարանի լիազորություններն ու դերը ՀՀ արդարադատության համակարգում:

ՍԴ դատավորը խոսել է իրավաբանի մասնագիտության առանձնահատկությունների մասին, նշել մարդկային և մասնագիտական այն հատկանիշներն և հմտությունները, որոնք անհրաժեշտ են իրավաբանի, և, մասնավորապես՝ դատավորի պատասխանատու աշխատանքում, կիսվել է իր փորձով:

Հանդիպումն ամփոփվել է հարցուպատասխանով: Արթուր Վաղարշյանը պատասխանել է պատանիներին հետաքրքրող մի շարք հարցերի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԵՊՀ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

2025 թվականի օգոստոսի 25-ին Սահմանադրական դատարան են այցելել Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի կազմակերպած «Իրավունքի ամառային դպրոցի» մասնակիցները: Ճանաչողական այցի շրջանակներում Ամառային դպրոցի սաներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը: Երիտասարդների հետ հանդիպում-դասախոսությանը ՍԴ նախագահը խոսել է Սահմանադրության դերի և կարևորության մասին, ներկայացրել Սահմանադրական դատարանի գործունեության առանձնահատկությունները, ՀՀ դատաիրավական համակարգում Բարձր դատարանի դերն ու առաքելությունը:

Հանդիպման ավարտին ՍԴ նախագահ Արման Դիլանյանը պատասխանել է Ամառային դպրոցի սաներին հետաքրքրող մի շարք հարցերի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

2025 թվականի օգոստոսի 28-ից 31-ը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է Ղազախստանի մայրաքաղաք Աստանա՝ մասնակցելու Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը և «Սահմանադրություն և պետականություն. իրավունքի և ապագայի երկխոսություն» խորագրով միջազգային գիտագործնական ժողովին:

Օգոստոսի 28-ին Աստանայում մեկնարկած միջազգային գիտաժողովի առանցքային թեմաներն էին.

- Սահմանադրությունը՝ որպես արդարադատության ոլորտում պետական քաղաքականության հիմք, դրա դերը կարգուկանոնի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման գործում:
- Սահմանադրական դատարանը՝ որպես քաղաքացիների սահմանադրական իրավունքների երաշխավոր, բողոքարկման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:
- Լսող պետության մոդելի ներդրումը դատական վարույթի ոլորտում, դատական համակարգի բացության և թափանցիկության բարձրացումը:
- Դատավարության ընթացքում կողմերի դատավարական հավասարության երաշխիքները, մարտահրավերներ և նորարարական լուծումները:
- Թվայնացման ազդեցությունը արդարադատության արդյունավետության և մատչելիության վրա, հիմնական նվաճումները և զարգացման հեռանկարները:

Գիտաժողովի ընթացքում ելույթ է ունեցել նաև ՍԴ նախագահ Արման Դիլանյանը: Շնորհավորելով իր ղազախ գործընկերներին ու ողջ ղազախ ժողովրդին պետական կարևոր տոնի կապակցությամբ՝ Ա. Դիլանյանն իր ելույթում անդրադարձել է ժողովրդավարական պետություններում Սահմանադրության կենսագործման կարևորության և այս գործում սահմանադրական դատարանների անփոխարինելի դերակատարության հարցերին: Ի մասնավորի՝ նշվել է, որ սահմանադրական դատարանների առաքելությունն է սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել Սահմանադրության գերակայությունը, առանձնաբար, ժողովրդավարական, իրավական պետության կայացման նախադրյալների ապահովումը, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդումը, Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծումը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդումը: Հատուկ խոսվել է կոնկրետ սահմանադրական վերահսկողության բացառիկ նշանակության մասին՝ մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության, Սահմանադրության գերակայության ապահովման, Սահմանադրությանը համահունչ իրավական մշակույթի ձևավորման գործում, առանց որի մարդու իրավունքների պաշտպանության համակարգը լիարժեք չէր լինի, իսկ Սահմանադրությանը համահունչ իրավական համակարգի և իրավակիրառ պրակտիկայի զարգացումը թերի կլիներ, եթե Սահմանադրության առաջնային շահառուները՝ անհատները, չունենային Սահմանադրական դատարան ուղիղ դիմում ներկայացնելու իրավունք:

Սահմանադրության 30-ամյակին նվիրված գիտաժողովին հաջորդել է հանդիսավոր միջոցառումը:

Ղազախստանի Անկախության պալատում ելույթ են ունեցել Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևը և Ղազախստանի Սահմանադրական դատարանի նախագահ Էլվիրա Ազիմովան: Այնուհետև տեղի է ունեցել Սահմանադրության 30-ամյակին նվիրված հոբելյանական հուշադրամի ներկայացումը, ապա՝ նամականիշի մարման արարողությունը:

Այցի շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հանդիպել է Աստանայի միջազգային համալսարանի ռեկտոր Սերիկ Իրսալիևի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են գիտության և կրթության ոլորտում համագործակցության հնարավորությունները՝ իրավական ոլորտում լավագույն փորձի փոխանակման համատեքստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի հրավերով Աստանա կատարած այցի շրջանակներում 2025 թվականի օգոստոսի 29-ին Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության սահմանադրական դատարանների նախագահներ Արման Դիլանյանը և Էլվիրա Ազիմովան, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի (ք. Աստանա) միջազգային ընդունելությունների սրահում ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության Բարձր դատարանների միջև:

Հուշագրի նպատակն է նպաստել իրավական ոլորտում փոխգործակցության և համագործակցության շրջանակի ստեղծմանը, սահմանադրական արդարադատության ոլորտում փորձի փոխանակմանը, երկու երկրներում սահմանադրական իրավունքի և դրա գործնական կիրառման ուսումնասիրությանը՝ սահմանադրական իրավունքի ոլորտում վեճերի լուծման համատեքստում՝ ձգտելով խթանել սահմանադրական արդարադատությունը և երաշխավորել համընդհանուր ճանաչում ունեցող ժողովրդավարական սկզբունքները, ինչպես նաև մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության երաշխիքները:

Կարևորելով հուշագրի ստորագրմամբ հարաբերությունների նոր փուլի մեկնարկը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի

նախագահ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ Հուշագրով նախանշված դրույթները գործնականում կիրականացվեն՝ դառնալով սահմանադրական արդարադատության ոլորտում հայ-ղազախական արդյունավետ համագործակցության գրավական:

Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Էլվիրա Ազիմովան նշել է, որ իրենց համար շատ հետաքրքիր է սահմանադրական արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկան՝ համոզմունք հայտնելով, որ Հուշագրի ստորագրումը կարևոր հիմք է երկու երկրների Բարձր դատարանների միջև հարաբերությունների առավել զարգացման համար:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել համագործակցությունն ընդլայնել նաև երկու երկրների Սահմանադրական դատարանների աշխատակազմերի միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ

Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևի հրամանագրով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը պարգևատրվել է «Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյակի» հոբելյանական հուշամեդալով:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՉԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 04.11.2025թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
http://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(120)2025
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(120)2025
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(120)2025

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am